ԳԶՈՅԱՆ ԷԴԻՏԱ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ

ԵՐԵՎԱՆ – 2013

9168722
941.925

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԶՈՅԱՆ ԷԴԻՏԱ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2013

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Գ 549

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պ.գ.դ.պրոֆ. Է. Ա. Զոհրաբյան
Գրախոսներ՝
պ.գ.դ. Վ.Հ. Մելիքյան, պ.գ.թ. Գ.Լ. Կիրակոսյան

Գզոյան Է.
Գ 549 Հայաստանի առաջին հանրապետությունը և ազգերի
լիգան – Եր.: «Գիտություն» հրատ., 2013, – 218 էջ:

Աշխատությունը նվիրված է Հայաստանի առաջին Հանրապետության և Ազգերի լիգայի առնչություններին: Լուսաբանվում են Ազգերի լիգային առաջադրված Հայաստանի մանդատի հարցը, կազմակերպությանը անդամագրվելու Հայաստանի Հանրապետության փորձերը և 1920թ. թուրք-հայկական պատերազմը դադարեցնելուն ուղղված Ազգերի լիգայի ջանքերը:

Աշխատանքը նախատեսված է պատմաբանների, միջազգայնագետների և ընթերցողների լայն շրջանակների համար:

Ուսումնասիրությունը կատարվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից երիտասարդ գիտնականներին տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ № SCS 11B-6a057 «Հայաստանը և Ազգերի լիգան 1920-1929թթ.» գիտական թեմայի շրջանակներում:

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-5-8080-1020-8
© Գզոյան Էդիտա, 2013

# ԱՌԱՋԱԲԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմը նոր էջ բացեց միջազգային հարաբերությունների պատմության մեջ: Կործանարար պատերազմի ավարտը նշանավորվեց միջազգային կազմակերպության՝ Ազգերի լիգայի ստեղծմամբ, որն իր առջև նպատակ էր դրել հասնել ազգերի միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը և խաղաղ ճանապարհով պետությունների միջև առաջացած վեճերի լուծմանը[1]: Գրեթե ողջ միջազգային հանրությունը ձգտում էր անմասն չմնալ այդ նոր կառույցից: Բացառություն չէր նաև Հայաստանի առաջին հանրապետությունը: Ազգերի լիգային անդամագրվելը եզակի առիթ էր Հայաստանի Հանրապետության համար՝ պաշտոնական ճանաչում ստանալու, միջազգային հանրությանն ինտեգրվելու, ինչպես նաև կազմակերպության ընձեռած այլ հնարավորություններից օգտվելու համար:

Ազգերի լիգայի կանոնադրության համաձայն՝ կազմակերպության առաջին անդամները Գերմանիայի դեմ պատերազմող և Վերսալյան պայմանագիրը[2] ստորագրած պետություններն էին: Երկրորդ՝ «հրավիրված» երկրների խումբը կազմեցին չեզոք պետությունները, որոնք կարող էին դառնալ Ազգերի լիգայի անդամ՝ անդամության վերաբերյալ հռչակագիր ընդունելու միջոցով[3]: Թեև Հայաստանը որպես դաշնակից պետություն ստորագրել էր Ազգերի լիգայի կանոնադրությունը՝ դրանով իսկ մտնելով Ազգերի լիգայի անդամների նախնական ցուցակի մեջ, սակայն, ինչպես ցույց տվեց պատմության հետագա ընթացքը,

---

[1] Տե՛ս Palais Des Nations, Aristide Briand: le pe`lerine de la paix, Gene`va, 2000, էջ 2-8:

[2] Տե՛ս Palais Des Nations, Exposition de Versailles a` Locarno (28 Juin 1919 – 16 Octobre 1925). D'une paix impose'e a` une paix ne'gocie'e, Gene`va, 2000, էջ 16.

[3] Տե՛ս **Илюхина Р.** Лига Наций 1919-1934 гг. М. 1982, էջ 94, Ազգերի լիգայի մասին տե՛ս նաև **Хорватский В.** Лига Наций, Москва, 1937.

Հայաստանի Հանրապետությանը վիճակված չէր դառնալու Ազգերի լիգայի անդամ:

Մենագրության առաջին գլուխը նվիրված է Ազգերի լիգայում Հայաստանի մանդատի խնդրի ուսումնասիրության խնդրին, ինչպես նաև մանդատի մերժման հիմքերին ու պատճառներին, մերժման օրինականությանը: Երկրորդ գլուխն անդրադառնում է Ազգերի լիգային Հայաստանի Հանրապետության անդամակցության գործընթացին, անդամության մերժման պատճառներին, քննարկվում է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը Ազգերի լիգայում, ինչպես նաև Ազգերի լիգայի կազմակերպած Բրյուսելի միջազգային ֆինանսական կոնֆերանսին Հայաստանի Հանրապետության մասնակցության խնդրին: Երրորդ գլխում խոսվում է թուրք-հայկական պատերազմի շուրջ Ազգերի լիգայում տեղի ունեցած քննարկումների, պատերազմը դադարեցնելու ուղղությամբ կազմակերպության ձեռնարկած քայլերի մասին, ինչպես նաև ներկայացվում են պատերազմի ավարտից հետո Ազգերի լիգայի իրականացրած գործողություններն ու որդեգրած քաղաքականությունը հայկական խնդրի նկատմամբ:

Մերօրյա պատմագիտությունը լայն հնարավորություններ է ընձեռում պատմության նորովի ուսումնասիրության համար: Թոթափելով անցյալի գաղափարախոսական լուծը, անցնելով անկախությունից հետո սկսված մերժողականության փորձաշրջանը՝ վերջապես հնարավորություն է ստեղծվել ուսումնասիրելու և բարձրաձայնելու պատմական ճշմարտությունը: Պատմական ճշմարտության բացահայտումը հատկապես էական է հայ ժողովրդի համար, որը դեռևս կանգնած է պատմական անցյալից ժառանգած մի շարք խնդիրների լուծման, ինչպես նաև ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտության առջև: Թեման արդիական է և ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական նշանակություն: Ազգերի լիգան դարձավ այն նախատիպը, որի հիման վրա այսօր միջազգային հարաբերություններում գործում են մի շարք կազմակերպություններ: Հայաստանի Հանրապետությունը ձգտում է ինտեգրվել միջազգային հանրությանը և դառնալ միջազգային կազմակերպությունների լիիրավ անդամ, հետևաբար, առաջին նմանատիպ միջազգային կազմակերպության հետ Հայաստանի Հանրապետության

առնչությունները կարող են ուղեցույց դառնալ մի շարք հարցերում: Ժամանակակից միջազգային հարաբերությունները հիմնված են նաև այն սկզբունքների վրա, որոնք մշակվել են դեռևս Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Այս առումով ևս Ազգերի լիգայի պատմության ուսումնասիրությունը խիստ այժմեական է:

Ձեռնարկելով թեմայի ուսումնասիրությունը՝ մենք նպատակ ենք դրել ներկայացնել և լուսաբանել հետևյալ հարցերը.

1) Հայաստանի մանդատի հարցի քննարկումները Ազգերի լիգայում.

2) Ազգերի լիգային Հայաստանի Հանրապետության անդամակցության պատմությունը, դրա պատճառները և հիմքերը.

3) Հայաստանի Հանրապետության անդամակցության մերժման շարժառիթները.

4) Բրյուսելյան միջազգային ֆինանսական կոնֆերանսին Հայաստանի Հանրապետության մասնակցությունը, կոնֆերանսի արդյունքները, դրանց կարևորությունն ու նշանակությունը Հայաստանի Հանրապետության համար.

5) Ազգերի լիգայում թուրք-հայկական պատերազմի շուրջ քննարկումները և դրանց հնարավոր ազդեցությունը Հայաստանի Հանրապետության անդամության հարցի քննարկումների վրա.

6) Հայկական խնդրի ուղղությամբ Ազգերի լիգայի ձեռնարկած քայլերն ու դրանց դրդապատճառները Վեհաժողովի առաջին նստաշրջանի ավարտից հետո (1920 թ. դեկտեմբեր–1921 թ. փետրվար):

Սույն աշխատության ժամանակագրական միջանկյալը 1920 թ. մարտից մինչև 1921 թ. փետրվարի վերջն ընկած հատվածն է: Թեև ուսումնասիրության բուն թեման ներառում է ավելի կարճ ժամանակաշրջան, սակայն առաջ քաշված հիմնահարցերը ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ էին ավելի խոր դիտարկումներ՝ ուսումնասիրել անցյալը, գտնել դեպքերի ու իրադարձությունների նախադրյալները, դրանց պատճառահետևանքային կապը, ինչպես նաև անհրաժեշտություն կար հետևելու դրանց զարգացման ուղղություններին՝ հասնելով որոշակի հանգուցալուծման:

Մենագրությունը ներառել է Ազգերի լիգային Հայաստանի Հանրապետության անդամակցության խնդիրը: Մինչև այսօր պատմագիտությունը նշյալ ուղղությամբ հիմնարար փորձեր չի արել, չկա թեմային վերաբերող ամբողջական աշխատություն: Հրապարակի վրա են մի քանի աշխատություններ, որոնք որոշակիորեն անդրադարձել են այս թեմային վերաբերող մի շարք փոքր հիմնահարցերի: Սակայն ներկայացված նյութը հիմնականում տեղեկատվական բնույթ է կրում:

Ուսումնասիրության համար օգտագործվել են հիմնականում արխիվային նոր փաստաթղթեր, որոնք բերվել են հենց Ազգերի լիգայի արխիվից (Ժնև, Շվեյցարիա): Բերված նյութերը ամբողջովին նոր լույս են սփռում շուրջ 90 տարվա վաղեմության դեպքերի վրա, վեր հանում հայոց պատմության՝ դեռ մինչև այսօր անհայտ դրվագներ և էջեր: Այս առումով լիովին նորություն էին Հայաստանի մանդատի հարցը մասնավոր ընկերության միջոցով լուծելու Ազգերի լիգայի ձեռնարկած քայլերի մասին տեղեկությունները, նշյալ ուղղությամբ Ազգերի լիգայի քարտուղարության իրավական բաժնի մշակած նախագիծը: Առաջին անգամ հիշատակվում և քննարկվում է նաև Բրյուսելի միջազգային ֆինանսական կոնֆերանսի աշխատանքներին Հայաստանի Հանրապետության անդամակցության փաստը: Բերված նյութերի հիման վրա կատարվել է պատմագրության մեջ առկա տվյալների վերագնահատում, ըստ այդմ բացահայտվել են նույնիսկ լիովին հակասական տվյալներ: Օրինակ՝ մինչև վերջերս մեր պատմագիտության մեջ նշվում էր, որ Ազգերի լիգան թույլատրել է Հայաստանի Հանրապետությանը մասնակցել իր տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին, սակայն արխիվային նյութերի և Ազգերի լիգայի Վեհաժողովի և Խորհրդի նիստերի արձանագրությունների ուսումնասիրությունից պարզվում է, որ իրականում Հայաստանին թույլ չեն տվել մասնակցել վերոնշյալ հանձնաժողովների աշխատանքներին: Մեկ այլ օրինակ, մինչև օրս մենք գիտեինք, որ Ազգերի լիգային անդամության վերաբերյալ Ադրբեջանի դիմումը նույնպես ընդունել ու քննարկել է անդամության հարցերի քննարկման համար ստեղծված հատուկ հանձնաժողովը, և ավելին՝ իբր Ադրբեջանին ևս թույլ են տվել մասնակցելու Ազգերի լիգայի տեխնիկական կազ-

մակերպությունների աշխատանքներին: Մինչդեռ իրականությունը բոլորովին այլ է. Ադրբեջանի դիմումը հենց սկզբից մերժվել է և ընդունելության վերաբերյալ բացասական կարծիքով ներկայացվել Ազգերի լիգայի Վեհաժողովի քվեարկությանը: Իսկ այս ապատեղեկատվությունները թույլ են տալիս ադրբեջանական կողմին պնդել, որ Ազգերի լիգան նույնիսկ ընդունել է, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի անբաժան մասն է, և այս տեղեկատվությունը տեղադրված է ադրբեջանական պաշտոնական կայքերում[4]: Ճշմարտության բացահայտումը թույլ կտա պայքարել հանուն մեր ազգային շահերի իրականացման:

Հենվելով Ազգերի լիգայում Հայաստանի անդամակցության խնդրի դիտարկման, դրա հետ կապված փաստերի և նյութերի ուսումնասիրության վրա՝ կարևորվել է Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման դերը Հայաստանի անդամակցության մերժման հարցում: Ուսումնասիրվել է նաև Թուրքիայի և 1920թ. թուրք-հայկական պատերազմի դերը Հայաստանի Հանրապետության անդամակցության խնդրում: Աշխատությունը կարող է օգտագործել ուսումնասիրողների լայն շրջանակը: Այն հատկապես կարևոր կլինի Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությամբ, ինչպես նաև միջազգային հարաբերությունների և միջազգային կազմակերպությունների ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների համար: Թեման կարող է ներառվել միջազգային իրավունքին, միջազգային հարաբերություններին վերաբերող առանձին դասընթացներում: Այն կհետաքրքրի նաև Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն ուսումնասիրողներին և մշակողներին, ինչպես նաև ընթերցասեր լայն հասարակությանը:

Թեմայի ուսումնասիրության համար օգտագործվել են բազմաթիվ նյութեր, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբի:

---

[4] Մանրամասն տե՛ս Քոթանջյան Հ. Ս., Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ, ԽՍՀՄ վերակառուցում– Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս–Աֆղանստան, Ե., 2009, էջ 141:

Առաջինն արխիվային սկզբնաղբյուրներն են, որոնց մեջ գլխավոր տեղը զբաղեցնում են Ազգերի լիգայի արխիվի նյութերը[5], որոնք հնարավորություն են տվել անաչառ, բազմակողմանի և ամենակարևորը՝ ամբողջությամբ ներկայացնելու ուսումնասիրվող նյութը: Ընդ որում, դրանց զգալի մասը շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ: Ազգերի լիգայի արխիվային նյութերում ներառված են ինչպես Ազգերի լիգայի Վեհաժողովի և Խորհրդի նիստերի արձանագրությունները, այնպես էլ նամակներ, տեղեկություններ գաղտնի հանդիպումների մասին և այլն: Ազգերի լիգայի արխիվային նյութերը վերաբերում են ընդգրկուն մի ժամանակահատվածի (1920-1929 թթ.) և պարունակում են բացառիկ կարևորություն ունեցող նյութեր ու տեղեկություններ:

Օգտագործվել են նաև Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի նյութերը. հատկապես կարևորվում են ֆ. 430-ը (այստեղ պահպանված են Ազգերի լիգային և Հայաստանին վերաբերող նյութերը) և ֆ. 412-ը (այստեղ զետեղված են հայկական ազգային պատվիրակության անդամ Արշակ Սաֆրաստյանի նյութերը): Ա. Սաֆրաստյանի հուշերում տեղեկություններ կան Ազգերի լիգայի և Հայաստանի մասին: Ազգերի լիգայի հետ հարաբերություններում հայկական պատվիրակության գործունեության մասին նյութեր կան նաև ֆ. 200-ում: Օգտագործված նյութերի երկրորդ խմբում են տպագիր սկզբնաղբյուրները՝ փաստաթղթերի ժողովածուներ[6], տպագիր մամուլ[7]: Աշխատանքի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն է ունեցել հատկապես Յուրի Բարսեղովի «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий» փաստաթղթերի ժողով-

[5] League of Nations Archives and Historical Collections Section, United Nations Library, Geneva (այսուհետև՝ LNA), Class. 11, dossier 3421.

[6] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923թթ.), Ե., 1972, The League of Nations and Armenia, Beirut, 1993, Pamphlets League of Nations and Armenia, Geneva, 1924.

[7] Օգտագործված տպագիր մամուլի ցանկը տե՛ս օգտագործված աղբյուրների և գրականության ցանկում:

ծուն[8], որի առաջին հատորում հեղինակը ներկայացրել է Ազգերի լիգային և Հայաստանին վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր: Նյութեր կան նաև Հայաստանի վերաբերյալ դաշնակիցների և ԱՄՆ-ի որդեգրած քաղաքականության մասին: Երրորդ խումբը պատմագիտական բազմալեզու գրականությունն է: Ինչպես արդեն նշվեց, ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություն չկա: Իսկ այն աշխատանքները, որոնք անդրադարձել են ուսումնասիրվող նյութին, ներգրավված են թեմայի լուսաբանման մեջ:

Ազգերի լիգայի և Հայաստանի միջև հարաբերությունները քննարկվել են Ա. Եսայանի «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը»[9] և մասամբ նաև «Հայաստանի միջազգային-իրավական դրությունը 1920-22 թթ.»[10] աշխատություններում: Առաջին գրքում հեղինակը խոսում է Ազգերի լիգային Հայաստանի Հանրապետության անդամակցության, ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի ընդունման և թուրք-հայկական պատերազմում Ազգերի լիգայի ունեցած դերի մասին: Ա. Եսայանն իր աշխատանքում ուսումնասիրել է հարցերի լայն շրջանակ, սակայն գիրքը գրվել է խորհրդային տարիներին, ունի հստակ հակաարևմտյան կողմնորոշում, օգտագործվել են միայն այն նյութերը, որոնք պետք է ոչ միայն չհակասեին խորհրդային գաղափարախոսությանը, այլև նպաստեին վերջինիս տարածմանը: Հետևաբար կաղում է Ա. Եսայանի աշխատանքի օբյեկտիվությունը, և սահմանափակվում է պատմական եղելությունը ճիշտ գնահատելու հնարավորությունը: Գրքում տեղ են գտել նաև մի շարք անճշտություններ և մեծ թվով բացթողումներ:

Ուսումնասիրվող նյութին վերաբերող որոշ հարցերի մասին է խոսում նաև պատմաբան Գայանե Մախմուրյանը, որի գիրքը վերնագրված է «Лига Наций, Армянский вопрос и Республика

---

[8] Барсегов Ю. Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, т. 1, М., 2002.

[9] Եսայան Ա., Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Ե., 1965:

[10] Եսայան Ա., Հայաստանի միջազգային-իրավական դրությունը 1920-22 թթ., Ե., 1967:

Армения»[11]: Աշխատությունն հանգամանորեն ներկայացնում է Հայկական հարցում մեծ տերությունների և հատկապես Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը: Ազգերի լիգայի հետ կապված՝ Գ. Մախմուրյանը անդրադարձել է Ազգերի լիգային առաջարկված Հայաստանի մանդատի խնդրին, որտեղ հիմնական շեշտը դրվել է Հայկական հարցում մեծ պետությունների քաղաքականության վրա: Հեղինակը խոսել է Ազգերի լիգայի ստեղծման, միջազգային հարաբերություններում վերջինիս դերի մասին՝ անդրադառնալով նաև Ազգերի լիգային Հայաստանի Հանրապետության անդամակցության հարցին:

Ժամանակակից հեղինակներից թեմային անդրադարձել է պատմական գիտությունների դոկտոր Վանիկ Վիրաբյանը: Հեղինակն իր «Հայաստանի Հանրապետությունը 1918-20 թթ. Կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները»[12] գրքում անդրադարձել է Ազգերի լիգային Հայաստանի Հանրապետության անդամակցության խնդրին, նաև թուրք-հայկական պատերազմի վերաբերյալ կազմակերպության ներսում տեղի ունեցած քննարկումներին: Վ. Վիրաբյանը իրավացիորեն մատնանշում է, որ Ազգերի լիգան իրականում Անտանտի մեծ տերությունների գործիքն էր:

Մ. Արզումանյանն իր «Նանսենը և Հայաստանը»[13] գրքում միայն մակերեսորեն է անդրադարձել խնդրո առարկային, քանի որ հեղինակի ուսումնասիրության հիմնական օբյեկտը գաղթականության հարցն է: Դեպքերին մասնակից և ականատես հեղինակները բավական քիչ են անդրադարձել կամ ընդհանրապես չեն անդրադարձել Ազգերի լիգայի ու Հայաստանի պատմությանը: Որոշ տեղեկություններ հնարավոր եղավ գտնել Վահան Փափազյանի «Իմ յուշերը»[14] գրքի երրորդ հատորում, որտեղ հեղինակն անդրադառնում է Ազգերի լիգա ներկայացված Հա-

---

[11] Махмурян Г. Лига Наций, Армянский вопрос и Республика Армения, Е., 1999.

[12] Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետությունը 1918-20 թթ. Կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Ե., 1999:

[13] Արզումանյան Մ., Նանսենը և Հայաստանը, Ե., 1986:

[14] Փափազյան Վ., Իմ յուշեր, հատոր 3, Գահիրէ, 1957:

յաստանի մանդատի նախագծին, ինչպես նաև Շվեյցարիայի և Անգլիայի հայանպաստ մարմինների մշակած մանդատի նախագծերին: Առանձին էջերում հեղինակը խոսել է Ազգերի լիգային և Հայաստանին վերաբերող այլ հարցերի շուրջ: Ազգերի լիգայի և Հայաստանի առնչություններին զարմանալիորեն քիչ է անդրադարձել նաև դեպքերի անմիջական մասնակից, Փարիզի հաշտության կոնֆերանսի հայկական պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանը, որը Հայաստանի Հանրապետության կառավարության անունից իրականացնում էր կապը Ազգերի լիգայի հետ: Ավ. Ահարոնյանն իր «Սարդարապատից մինչև Սևր և Լոզան (քաղաքական օրագիր 1919-1927)»[15] գրքում ներկայացրել է Ազգերի լիգայի առանձին գործիչների և ներկայացուցիչների հետ հայկական պատվիրակության հանդիպումներն ու բանակցությունները՝ մատնանշելով երկու կողմերի դիրքորոշումները: Դեպքերին ականատես մյուս հեղինակները հարցի վերաբերյալ տեղեկություններ կա՛մ չեն տալիս, կա՛մ դրանք ներկայացված են մի քանի տողով: Թուրք-հայկական պատերազմում Ազգերի լիգայի դերին է անդրադարձել պրոֆ. Է. Զոհրաբյանը[16]: Նա իր «Թուրք-հայկական պատերազմը և տերությունները» գրքում անդրադարձել է պատերազմի օրերին հայկական կառավարության՝ Ազգերի լիգային ուղղած կոչերին, քննարկել Ազգերի լիգայում այդ ուղղությամբ ձեռնարկված քայլերը, բացատրել Հայաստանի հանդեպ Ազգերի լիգայի և մեծ տերությունների որդեգրած քաղաքականության իրական հիմքերը:

Ազգերի լիգայի և Հայաստանի հարաբերությունների հարցերին անդրադարձել են նաև մի շարք օտարերկրյա հեղինակներ: Ազգերի լիգային Հայաստանի Հանրապետության անդամակցության հարցը լայնորեն լուսաբանվել է Անդրե Մանդելշտամի «La Socie'te' des Nations et les Puissances devant le proble`m

---

[15] Ահարոնյան Ավ., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան (քաղաքական օրագիր 1919-1927), Ե., 2001:

[16] Զոհրաբյան Է., Թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Ե., 1997:

Armenie'nne» գրքում[17]: Ա. Մանդելշտամն անդրադարձել և քննարկել է Հայաստանի Հանրապետության անդամության մերժման հարցում Ազգերի լիգայի կանոնադրության 10-րդ հոդվածի դերը, դրա բովանդակության իրավական կողմն ու հնարավոր իրավական հետևանքները: Հեղինակը հպանցիկ անդրադարձել է նաև Հայաստանի և Ազգերի լիգայի այլ առնչություններին, մասնավորապես մանդատի խնդրին և թուրք-հայկական պատերազմին, որոնց հանդեպ, սակայն, որևէ տեսակետ չի արտահայտվել:

Ազգերի լիգայի և Հայաստանի հարաբերություններին է անդրադարձել նաև Ռիչարդ Հովհաննիսյանն իր «The Republic of Armenia» գրքում: Հեղինակը գրքի երրորդ և չորրորդ հատորներում ներկայացրել է Հայաստանի մանդատը Ազգերի լիգայի կողմից ընդունման հարցը, քննարկել դաշնակիցների կողմից Հայաստանի մանդատն Ազգերի լիգային առաջարկելու դրդապատճառներն ու հիմքերը[18]: Ռ. Հովհաննիսյանն իրավացիորեն մատնանշում է Հայաստանի մանդատը Ազգերի լիգային առաջարկելու Գերագույն խորհրդի որոշման անհեռանկարությունը, այդ ձեռնարկի ձախողման պատճառները: Գրքի չորրորդ հատորում հեղինակն անդրադարձել է Ազգերի լիգային Հայաստանի Հանրապետության անդամակցության հարցին, ինչպես նաև թուրք-հայկական պատերազմին ու դրա հնարավոր ազդեցությանը Ազգերի լիգայում Հայաստանի ընդունելության հարցի վրա[19]:

Ռ. Հովհաննիսյանը նշում է, որ Ազգերի լիգային Հայաստանի անդամակցության մերժման պատճառը թուրք-հայկական պատերազմն էր և դրա հետ պայմանավորված՝ Ազգերի լիգայի անդամ պետությունների մտավախությունը՝ կապված կազմակերպության Կանոնադրության 10-րդ հոդվածը կիրառելու անհրաժեշտության հետ: Սակայն մենք համամիտ չենք հեղինա-

---

[17] **Mandelstam A.** La Socie'te' des Nations et les Puissances devant le proble'm Armenie'nne, Beirut, 1957.

[18] **Hovannisian R.** The Republic of Armenia, Volume III (from London to Sevres. February-August, 1920), London, 1996.

[19] **Hovannisian R.** The Republic of Armenia, Volume IV (between crescent and sickle: partition and sovietization), London, 1996.

կի կարծիքին այս հարցում և կփորձենք ապացուցել այլ տեսակետ՝ կապված Ազգերի լիգային Հայաստանի անդամակցության մերժման պատճառների հետ:

Ուսումնասիրվող նյութի որոշ հատվածներ ներկայացված են նաև Հ. Թուրաբյանի «L'Arme'nie et la question Arme'nienne avant, pendant et depuis la guerre» աշխատությունում[20]: Հեղինակն անդրադարձել է թուրք-հայկական պատերազմի դադարեցման ուղղությամբ Ազգերի լիգայի ձեռնարկած քայլերին, հատկապես 1920 թ. նոյեմբերի 22-ի բանաձևի քննարկմանը: Հ. Թուրաբյանը մասամբ խոսել է նաև Ազգերի լիգային Հայաստանի Հանրապետության անդամակցության հարցի մասին:

Խնդրո առարկային անդրադարձել են նաև մի շարք ռուս հեղինակներ, որոնցից հատկապես պետք է ընդգծել Ա. Սաբանինին[21]: Թեև հեղինակի գիրքը հիմնականում վերաբերում է Ազգերի լիգայի և Խորհրդային Ռուսաստանի միջև հարաբերություններին, սակայն այնտեղ բավական մանրակրկիտ ներկայացված են նաև նախկին Ցարական Ռուսաստանի մաս կազմած երկրների հետ Ազգերի լիգայի հարաբերությունները, որոնց շարքում Վրաստանի, Ուկրաինայի և Բալթյան երկրների կողքին էր նաև Հայաստանը: Հեղինակը շատ ճիշտ է նկատել և ներկայացրել Խորհրդային Ռուսաստանի դերը Բալթյան ու Կովկասյան երկրների՝ Ազգերի լիգային անդամակցության հարցում:

Հայաստանի և Ազգերի լիգայի հարաբերություններին վերաբերող մի քանի հարցեր լուսաբանել է նաև Լ. Իվանովը իր «Лига Наций» գրքում[22]: Շատ հեղինակներ Ազգերի լիգայի և Հայաստանի հարաբերություններին անդրադարձել են շատ հակիրճ՝ ներկայացնելով լոկ առանձին դրվագներ: Աշխատության համար օգտագործվել է նաև խնդրո առարկա ժամանակաշրջանում տպագրված մամուլը, որը թեև օգնել է ավելի լայն պատկերացում կազմել ուսումնասիրվող նյութի վերաբերյալ, սակայն էական ազդեցություն աշխատանքի վրա չի ունեցել:

---

[20] **Turabian H.** L'Arme'nie et la question Arme'nienne avant, pendant et depuis la guerre, Paris, 1922.

[21] **Сабанин А.** Россия и Лига Наций 1920-21-22 гг., М., 1924.

[22] **Иванов Л.** Лига Наций, М., 1929.

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԴԱՏԻ ՀԱՐՑԸ ԵՎ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ

### 1.1. Հայաստանի մանդատի հարցի քննարկումները Ազգերի լիգայում 1920 թ. մարտ-ապրիլ ամիսներին

Փարիզում 1919 թ. հունվարի 30-ին Հաշտության վեհաժողովի պաշտոնական նիստում ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ներկայացուցիչների բանակցությունների ժամանակ որոշում էր ընդունվել, որ Փարիզի վեհաժողովը թուրքական կայսրության որոշ տարածքներ, այդ թվում՝ Հայաստանը (ներառյալ՝ Կիլիկիան), դնելու է առանձին պետությունների հովանավորության ներքո, որոնք պետք է գործեին որպես Ազգերի լիգայի մանդատարներ[23]: Իսկ մանդատի գաղափարն իր իրավական ձևակերպումն էր ստացել Ազգերի լիգայի կանոնադրության 22-րդ հոդվածում. *«Բոլոր այն գաղութների և տարածքների ժողովուրդների բարեկեցությունը և զարգացումը, որոնք վերջին պատերազմի հետևանքով դադարել են մնալ նախկինում իրենց կառավարած պետությունների իշխանության ներքո և որոնք չեն կարող ինքնուրույն ղեկավարվել ստեղծված ծանր պայմաններում, հանդիսանում է քաղաքակրթության գերխնդիրը»*[24]: Որպես այս սկզբունքի լավագույն կիրառում՝ մատնանշվում էր տվյալ ժողովրդի նկատմամբ մանդատի (խնամակալության) հաստատումը որևէ պետության կողմից, որն իր ռեսուրսների, փորձի և աշխարհագրական դիրքի շնորհիվ կարող էր Ազգերի լիգայի անունից իր վրա վերցնել այդ պատասխանատվությունը: Եվ քանի որ առկա էին մի շարք տարբե-

---

[23] Մանրամասն տե՛ս **Махмурян Г.** Лига Наций, Армянский вопрос и Республика Армения, Е., 1999:

[24] Covenant of the League of Nations, ՀԱԱ Ֆ. 412, ց.1, գ. 2286, նաև՝ **Herbert Adams Gibbons**, The Defects of the System of Mandates, *Annals of the American Academy of Political and Social Science*, Vol. 96, The Place of the United States in a World Organization for the Maintenance of Peace (Jul., 1921), p. 88, նաև **Афанасьева О.** Краткий очерк истории Лиги наций, М. 1945.

րությունններ ժողովուրդների զարգացման աստիճանի, տարածքների աշխարհագրական դիրքի, տնտեսական վիճակի և այլ հարցերում, մտցվեց մանդատի բնույթի տարբերակում: Ըստ այդմ՝ մանդատները բաժանվեցին 3 տեսակի՝ A, B և C[25]: A տեսակի մանդատում ներառվեցին նաև Թուրքահայաստանը և Կիլիկիան: Այդ մանդատի բնույթը հետևյալն էր. «Որոշ համայնքներ, որոնք նախկինում պատկանում էին թուրքական կայսրությանը, հասել են զարգացման այնպիսի աստիճանի, երբ նրանց գոյությունը որպես անկախ ժողովրդի կարող է պայմանականորեն ճանաչվել: Սակայն քանի դեռ նրանք ի վիճակի չեն ինքնուրույն կառավարվելու ստեղծված դժվարին պայմաններում, այդ իսկ պատճառով մանդատար պետության խորհուրդները և աջակցությունը պետք է տրամադրվեն վերջիններիս մինչև ի վիճակի կլինեն ինքնուրույն կառավարվելու»[26]: Նշենք նաև, որ համայնքի ցանկությունը որոշիչ էր լինելու մանդատար պետության ընտրության հարցում: B և C տեսակի մանդատներն իրենց բնույթով լիովին տարբերվում էին առաջինից և վերաբերում էին Կենտրոնական, Հարավարևմտյան Աֆրիկայի և խաղաղօվկիանոսյան ավազանի որոշ երկրների: Այստեղ ինքնակառավարման մասին խոսք անգամ չկար և, նույնիսկ ավելին, մանդատար պետությունը հանդես էր գալու կարգ ու կանոն հաստատողի, ստրուկների, զենքի վաճառքը կանխողի և նմանատիպ այլ դերերում[27]: Բացի այդ, B և C տեսակի մանդատի դեպքում կատարվելու էր մանդատար պետության անմիջական կառավարումը, մինչդեռ A-ի ժամանակ խոսքը միայն տեղական կառավարությանն օգնելու մասին էր:

Հենց Կանոնադրության 22-րդ հոդվածի հիմքի վրա էլ տեղի ունեցան Հայաստանի մանդատի վերաբերյալ քննարկումներն Ազգերի լիգայում: Հոդվածի բովանդակությունից բխում էր, որ

---

[25] Տե՛ս **Кечекян С.** Мандаты Лиги Наций в странах Арабского востока, Баку, 1930, с. 10-12:

[26] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 412, ց.1, գ. 2286, Covenant of the League of Nations, նաև՝ The League of Nations: a pictorial survey. League of Nations, Geneva, p.11.

[27] Տե՛ս Quincy Wright, Sovereignty of the Mandates, *The American Journal of International Law*, Vol. 17, No. 4 (Oct., 1923), pp. 69:.

հայ ժողովուրդը, առանց երկմտանքի, այն ժողովուրդներից էր, որոնց վրա տարածվում էր 22-րդ հոդվածը: Հայ ժողովուրդն ապրում էր այնպիսի տարածքում, որը պատերազմի հետևանքով դադարել էր մնալ թուրքական պետության իշխանության ներքո: Բացի այդ, լիովին ակնհայտ էր, որ այդ ժողովուրդը ստեղծված բարդ պայմաններում ի վիճակի չէր ինքնուրույն կառավարվելու: Իսկ որ հայ ժողովրդի բարեկեցությունն ու զարգացումը բազմիցս հայտարարվել էր որպես քաղաքակիրթ երկրների մտահոգության առարկա, ոչ ոքի համար գաղտնիք կամ նորություն չէր[28]: Եվ ելնելով հայ ժողովրդի հանդեպ 22-րդ հոդվածի համապատասխանությունից՝ տերությունները պարտավորված էին վերջինիս մանդատը հանձնել զարգացած պետություններից որևէ մեկին: Փաստորեն, հայերի նկատմամբ Կանոնադրության 22-րդ հոդվածի կիրառումը Գերագույն խորհրդի ոչ միայն իրավունքն էր, այլև պարտավորությունը:

Լոնդոնի կոնֆերանսի ընթացքում (1920 թ. մարտ) քննարկվում է նաև Հայաստանի և Կիլիկիայի մանդատների խնդիրը: Լորդ Քերզոնն առաջարկում է, քանի որ ԱՄՆ-ն չի կարող հանդես գալ որպես մանդատար պետություն, Հայաստանի մանդատը հանձնել Ազգերի լիգային. «Հայաստանի հարցը, իսկապես, միջազգային հանրության մտահոգության առարկա է: Այդ իսկ պատճառով հայ ժողովրդի ապագան չի կարող ընկնել որևէ մեկ երկրի խնամակալության և պատասխանատվության ներքո»[29]: Չնայած առկա մտավախություններին և կասկածներին՝ Գերագույն խորհուրդը, այնուամենայնիվ, համաձայնում է Քերզոնի առաջարկին, և 1920 թ. մարտի 12-ին լորդ Քերզոնը Գերագույն խորհրդի անունից դիմում է Ազգերի լիգային՝ Հայաստանի ապագայի հարցը Ազգերի լիգայի հովանու ներքո դնելու խնդրանքով[30]: Հեռագրում մասնավորապես նշվում էր, որ Գերագույն

---

[28] Տե՛ս The Armenians – yesterday and today, *The contemprorary review*, v. CXXXVII January-june 1930, London, 1930, pp. 462-468:

[29] **Hovannisian R.** The Republic of Armenia, Volume III (from London to Sevres. February-August, 1920), p. 48-49.

[30] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 176, թ. 63, նաև **Махмурян Г.**, նշվ. աշխ., էջ 42:

խորհուրդը միաժամանակ որոշում է ընդունել ազատ և անկախ Հայաստան ստեղծելու վերաբերյալ, և հույս էր հայտնվում, որ հայկական պետության մանդատը Ազգերի լիգայի հովանու ներքո պետք է ընդունի կա՛մ Ամերիկան, կա՛մ եվրոպական որևէ պետություն: Հակառակ պարագայում Գերագույն խորհուրդը ցանկություն էր հայտնում Թուրքիայի հետ պայմանագրում Հայաստանի ապագայի հարցը դնել Ազգերի լիգայի հովանու տակ: Այս տարբերակը, Գերագույն խորհրդի կարծիքով, միակ արդյունավետ երաշխիքն էր նորաստեղծ պետության կայացման և ապահովման հարցում: Բավական մակերեսորեն անդրադառնալով պետություններից որևէ մեկին Հայաստանի մանդատը հանձնելու խնդրին՝ Գերագույն խորհուրդը հիմնական շեշտը դնում էր Ազգերի լիգայի կողմից մանդատի ընդունման վրա[31]: Մանդատի ընդունման հետ կապված՝ որպես առաջնահերթ խնդիր ծագում էր Հայաստանին զինված ուժեր և նյութական միջոցներ տրամադրելու հարցը: Դա կապահովեր Հայաստանի հետագա պաշտպանությունը, տնտեսական զարգացումն ու առաջընթացը: Իսկ ի՞նչ լծակներ ուներ Ազգերի լիգան, և ի՞նչ կարող էր առաջարկել Գերագույն խորհուրդը: Ռազմական աջակցության հարցը քննարկել էր Գերագույն խորհրդի նշանակած հատուկ հանձնաժողովը, որի առաջարկած զեկույցը մեջբերված էր Ազգերի լիգային ուղղված հեռագրում: Զեկույցի համաձայն՝ Երևանի հայերը ունեին 25.000 զինվոր, որոնց մի մասը մարզված էր նախկին ռուսական բանակի կողմից, և որոնց թիվը անհրաժեշտ ռազմամթերքի և սարքավորումների տրամադրման դեպքում կարող էր հասցվել 40.000-ի: Որպես իրենց ձեռնարկած քայլերի ապացույց՝ Դաշնակիցները մատնանշում էին, որ արդեն իսկ օժանդակում են վերոհիշյալ հարցում և պատրաստվում են Հայաստան ուղարկել առաջին ռազմական տեխնիկան:

Հեռագրում ոչ մի տեղեկություն չկար Հայաստանի սահմանների մասին, որը և հենց սկզբից անիրական էր դարձնում

[31] Տե՛ս Brown Philip, The mandate over Armenia, *American Journal of International Law*, July, 1920:



ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
19898

հարցի լուծումը[32]: Ի՞նչ սահմաններ էր պաշտպանելու Ազգերի լիգան, ո՞ր հողերի վրա էր տարածվելու վերջինիս մանդատը: Հարցեր, որոնք պատասխաններ չունեին: Հարցական էր նաև նյութական աջակցության խնդիրը: Ակնհայտ էր, որ Հայաստանի մանդատն ընդունելու պարագայում Ազգերի լիգան պետք է նյութապես աջակցեր վերջինիս: Մինչդեռ Ազգերի լիգան, լինելով նորաստեղծ կառույց, չուներ միասնական բյուջե, չուներ նաև միասնական զինված ուժեր: Առանց այս երկու կարևորագույն գործոնի՝ դժվար էր պատկերացնել, թե Ազգերի լիգան ինչպես կարող էր օգնել Հայաստանին:

Նշյալ հեռագրի հետ մեկտեղ Գերագույն խորհուրդը ևս մի հեռագիր էր ուղարկել Ազգերի լիգայի խորհրդի՝ Թուրքիայի փոքրամասնությունների պաշտպանությունն ընդունելու խնդրանքով[33]: Եվ քանի որ այս 2 հեռագրերը ստացվել էին միաժամանակ, և առաջինը լինելով, իսկ երկրորդը՝ մասամբ վերաբերում էին Հայաստանին և հայերին, ուստի անհրաժեշտ է մի փոքր էլ անդրադառնալ փոքրամասնությունների խնդրի քննարկմանը և Թուրքիայի փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ Ազգերի լիգայի վերաբերմունքին: Ինչպես արդեն նշեցինք, Գերագույն խորհուրդը առաջարկում էր Ազգերի լիգային իր վրա վերցնել նաև Թուրքիայի փոքրամասնությունների պաշտպանության խնդիրը: Հատուկ նշանակված հանձնաժողովը մշակել և Ազգերի լիգա էր ներկայացրել ներքոնշյալ այն կետերը, որոնք պետք է ներառվեին Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրում.

1. Պայմանագրի՝ փոքրամասնությունների վերաբերյալ գլխի, ինչպես նաև գլխավոր դաշնակից և եվրոպական պետությունների միջև արդեն կնքված պայմանագրերի մեջ փոքրա-

---

[32] Տե՛ս League of Nations Archives and Historical Collections Section, United Nations Library, Geneva (այսուհետև՝ LNA) V Memorandum pre'sente' par le Secre'taire Ge'ne'ral de la Socie'te' des Nations a' la Premiere' Assemblee' (Doc. N56, p. 3):

[33] Տե՛ս LNA class.11, dossier 3421, doc. 3421, նաև ՝ The League of Nations, *Political Science Quarterly*, Vol. 35, No. 3, Supplement (Sep., 1920), p. 13:

մասնությունններին վերաբերող հոդվածների ապահովումը դրվելու է Ազգերի լիգայի վրա:

2. Ազգերի լիգայի խորհրդի նշանակած ներկայացուցիչը նստելու է Կոստանդնուպոլսում և հետևելու է վերոնշյալ հոդվածների իրականացմանը: Ազգերի լիգայի ներկայացուցիչը ժամանակ առ ժամանակ զեկուցելու է Ազգերի լիգայի խորհրդին, ինչպես նաև իրավունք է ունենալու տեղում հետաքննություն անցկացնելու՝ կապված պայմանագրի դրույթների յուրաքանչյուր խախտման հետ[34]:

Ստացված հեռագրերը նախ քննարկվում են Գլխավոր քարտուղարի աշխատասենյակում, իսկ երեկոյան դրանք արդեն քննության են առնվում Ազգերի լիգայի խորհրդի նիստում (մարտի 13-14, Փարիզ)[35]: Սկզբում քննարկվում է փոքրամասնությունների պաշտպանության հետ կապված հեռագիրը: Ազգերի լիգայի խորհրդում բավական մեծ դժգոհություն է առաջանում հատկապես 1-ին կետը. Ազգերի լիգան, լինելով նորաստեղծ կառույց, արդյո՞ք ի վիճակի էր իր վրա վերցնելու երաշխավորի դերը: Երաշխավորությունն ընդունելու կողմնակիցները առաջ էին քաշում այն հանգամանքը, որ Ազգերի լիգան իր վրա է վերցրել Լեհաստանում փոքրամասնությունների ապահովության խնդիրը, հետևաբար նման երաշխիքներ էլ պետք է տրվեն Թուրքիայի փոքրամասնությունների ապահովության համար[36]: Սակայն համեմատության համար պետք է նշել, որ Լեհաստանում, ի տարբերություն Թուրքիայի, կար հիմնավորված, կազմավորված կառավարություն, որի վրա անհրաժեշտության դեպքում հնարավոր էր ճնշում գործադրել, մինչդեռ Թուրքիայում խնդիրն այլ էր: Նույնիսկ այն կարծիքն է առաջ քաշվում, որ տեղի փոքրամասնությունները ավելի շատ հարձակման են ենթարկ-

---

[34] Տե՛ս League of Nations 20/29/6, Proces-Verbal of the Third Session of the Council of the League of Nations held in Paris on March 12-13 1920, pp. 17-18:

[35] Տե՛ս **Барсегов Ю.**, նշվ. աշխ., էջ 448:

[36] Տե՛ս **Thompson K. W.** Conflict and cooperation among Nations, New York, 1960, p. 72, նաև George A. Finch, The Work of the League of Nations, *The American Journal of International Law*, Vol. 14, No. 4 (Oct., 1920), p. 629:

վում ոչ կանոնավոր՝ թուրքական կառավարության հսկողությունից դուրս խմբերի կողմից: Թուրքիայի հանդեպ Ազգերի լիգայի նման մոտեցումը պայմանավորված էր նաև մեկ այլ գործոնով. Թուրքիան Ազգերի լիգայի անդամ չէր, և անհրաժեշտության դեպքում Ազգերի լիգան պետք է ինտերվենցիայի ձևեր փնտրեր, որը բավական բարդացնում էր խնդիրը: Իսկ Լեհաստանում փոքրամասնությունների իրավունքների ոտնահարման որևէ դեպքի արձանագրության պարագայում Ազգերի լիգայի խորհուրդը լեհ ներկայացուցիչներին կարող էր հրավիրվել խորհրդակցության, ինչը հնարավոր չէր թուրքերի դեպքում: Սակայն այս ամենի հետ մեկտեղ Ազգերի լիգան չէր ցանկանում հրաժարվել փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության՝ իրեն առաջարկված պատասխանատվությունից[37]:

Ինչ վերաբերում էր Հայաստանի մանդատի խնդրին, ապա Գերագույն խորհրդին ուղղված իր պատասխան հեռագրում Ազգերի լիգայի խորհուրդը մի շարք հարցեր է բարձրացնում, որոնց վերաբերյալ ստույգ պատասխան ունենալու դեպքում միայն կազմակերպությունը կարող էր քննարկել Հայաստանի մանդատի հարցը: Դրանք հատկապես վերաբերում էին ֆինանսական խնդիրներին (Ազգերի լիգան անկարող էր լրացնել ապագա հայկական պետության բյուջեի պակասուրդը, և բացի այդ՝ նյութական միջոցների տրամադրումը պահանջում էր կազմակերպության Վեհաժողովի հավանությունը, որը գումարվելու էր 1920 թ. նոյեմբերին), մանդատի ժամկետներին, ռազմական ուժերին: Սակայն նամակը նաև մատնանշում էր, որ Ազգերի լիգայի խորհուրդը չի մերժում իրեն առաջարկված պարտավորությունները, պարզապես ժամանակ է խնդրում՝ հարցն ավելի մանրամասն ուսումնասիրելու և տեղեկություններ հավաքելու համար: Որոշվում է Ազգերի լիգայի գլխավոր քարտուղարին գործուղել Լոնդոն՝ Գերագույն խորհրդից ավելի շատ տեղեկություններ ստանալու համար, որից հետո նախատեսվում էր 10-14 օրվա ընթացքում նոր հանդիպում կազմակերպել Փարիզում:

Ազգերի լիգայից ստացված պատասխանը լորդ Քերզոնը զեկուցում է Արտաքին գործերի և դեսպանների կոնֆերանսում:

---

[37] Տե՛ս LNA Class.11, dossier 3421, doc. 3421:

Պատասխանը որակելով որպես քաջալերող և գործնական՝ Քերզոնն առաջարկում է անմիջապես անցնել պահանջվող տեղեկատվության հավաքմանը: Թեև Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչները կրկին իրենց կասկածներն են հայտնում, որ իր ներկայիս կառուցվածքով Ազգերի լիգան հնարավորություն չունի ընդունելու Հայաստանի մանդատը, սակայն շարունակում են հետևել լորդ Քերզոնի գործողություններին: Առանց ժամանակ կորցնելու Բրիտանիայի ներկայացուցիչ Ռոբերտ Վանզիտարը տեղեկացնում է Փարիզի հաշտության կոնֆերանսի հայկական պատվիրակությանը Հայաստանի մանդատը Ազգերի լիգային հանձնելու Գերագույն խորհրդի որոշման մասին և տեղեկություններ է խնդրում Հայաստանի ֆինանսների, ռազմական և վարչական կարիքների վերաբերյալ: Սահմանների վերաբերյալ Ավ. Ահարոնյանի հարցին Ռ. Վանզիտարը պատասխանում է, որ հաշվի առնեն էրզրումը, Սամախաքունը, Մուշը, Բիթլիսը և Վանը[38]: Լոնդոնում Ազգերի լիգայի գլխավոր քարտուղար էրիկ Դրամմոնդը հանդիպում է լորդ Քերզոնի հետ: Վերջինս պնդում է, որ Ազգերի լիգայի հերթական նիստը տեղի ունենա Լոնդոնում, քանի որ այնտեղ Հայաստանի մասին մեծ թվով տեղեկություններ էին հավաքվել, և որ ինքը նույնպես կարող է ներկա լինել այդ նիստին և ամբողջությամբ ներկայացնել խնդիրը[39]: Կազմվում է նաև մի հանձնաժողով, որն Ազգերի լիգայի անունից սկսում է բանակցություններ վարել դաշնակիցների այն հանձնաժողովի ներկայացուցիչների հետ, որոնք լիազորված էին նախապատրաստել Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագիրը[40]: Ազգերի լիգայի հանձնաժողովի ներկայացուցիչներն էին Ն. Կոլբան և Վ. Նիկոլսոնը՝ Պոլ Մանթուի գլխավորությամբ: Դաշնակիցների հանձնաժողովում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչներն էին Ռոբերտ Վանզիտարը, Ֆորբս Ադամը, Ֆրանսիան ներկայացնում էր Կամմերերը, իսկ Իտալիայի կողմից հանդես էր գալիս գեներալ Կաստոլդին: Համատեղ աշխատանքների ընթացքում Ազգերի լիգայի հանձնաժողովի անդամները ներկայացնում են

---

[38] Տե՛ս **Hovannisian R.** նշվ. աշխ., էջ 52:

[39] Տե՛ս LNA Class.11, dossier 3421, doc. 3485:

[40] Տե՛ս LNA Class.11, dossier 3421, doc. 3538:

ապագա Հայաստանի մանդատի վերաբերյալ իրենց նախապատրաստած նյութը: Դաշնակիցների համաժողովը որևէ դիտողություն կամ անհամաձայնություն չի արտահայտում Ազգերի լիգայի ներկայացուցիչների առաջադրած տարածքային խնդիրների վերաբերյալ, քանի որ Ազգերի լիգայի անհանգստությունը լիովին հիմնավորված էր և տեղին. Հայաստանի սահմանների հարցը հրատապ լուծում էր պահանջում: Ռազմական խնդիրը կողմերը որոշում են համաձնել հատուկ մասնագետների քննարկմանը: Իսկ ահա ֆինանսական հարցը բավական բուռն դժգոհություններ է առաջացնում: Հենց սկզբից Իտալիայի ներկայացուցիչը հայտարարում է, որ Իտալիայի կառավարությունը դրամական որևէ նվիրատվություն ապագա հայկական պետությանը չի անելու: Չնայած Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները նման կտրուկ արտահայտություններով հանդես չեն գալիս, սակայն ակնհայտ էր, որ ֆինանսական հարցն ամենալուրջ ու դժվար խոչընդոտն էր լինելու Հայաստանի մանդատի հարցի լուծման ճանապարհին: Ֆրանսիացի Կամբոնը, թեև համաձայն էր գումարի անհրաժեշտության խնդրի հետ, սակայն կարծում էր, որ Ազգերի լիգայի համար դժվար կլինի համապատասխան երաշխիքներ ստանալ իր անդամ պետությունների կողմից:

Ըստ էության, վերոհիշյալ համաժողովը ոչ մի առաջընթաց քայլ չի կատարում Հայաստանի մանդատի հարցի լուծման ուղղությամբ: Տեղի ունեցածը պարզապես կարելի է որակել որպես կարծիքների փոխանակում, և դժվարությունը՝ մեկը մյուսի վրա բարդելու փորձ: Իսկ իրական պատկերն այն էր, որ Ազգերի լիգայի անդամ պետություններից շատերը հենց նույն Գերագույն խորհրդի անդամ պետություններն էին, հետևաբար էական տարբերություն նրանց որդեգրած քաղաքականության մեջ չէր էլ կարող լինել:

Ինչպես արդեն նշվեց, Լոնդոնում էր նաև հայկական միացյալ պատվիրակությունը՝ Ավ. Ահարոնյանի և Նուբար Փաշայի գլխավորությամբ: Ազգերի լիգայի համաժողովը կապի մեջ է մտնում նաև հայկական կողմի հետ: Հայկական պատվիրակությունը բավական գոհ էր այն հանգամանքից, որ Ազգերի լիգան միջամտել էր հայկական մանդատի հարցին: Ազգերի լիգայի

ներկայացուցիչ Պոլ Մանթուի և Նուբար Փաշայի միջև տեղի ունեցած զրույցի ժամանակ վերջինս նշում է, որ Հայաստանը հստակորեն խնամակալության կարիք ունի, և նախընտրելի է, որ Հայաստանի խնամակալությունն իրականացվի (պարտադրվի) դրսից: Ազգերի լիգայի պատվիրակությունը իր դիտարկումները ներկայացնում է նաև հայկական կողմին, որը գոհ է մնում տարածքային, ռազմական, դեպի ծով ելք ունենալու հարցերի նկատմամբ Ազգերի լիգայի որդեգրած դիրքորոշումից: Հստակ գիտակցելով ֆինանսական հարցի կարևորությունը՝ Նուբար Փաշան նույնիսկ իր որոշակի առաջարկն է ներկայացնում: Ըստ դրա՝ Հայաստանի համար անհրաժեշտ գումարը 2.000.000 ֆունտ ստեռլինգից չէր գերազանցելու, որի համար վարկը պետք է տրվեր 6% տոկոսադրույքով և մարման հիմնադրամին մասամաս տրվող 2% վճարման հնարավորությամբ, այսինքն՝ տարեկան 160.000 ֆունտ: Նուբար Փաշան փորձում էր համոզել, որ Հայաստանը իր սեփական միջոցներով հնարավորություն կունենա մարելու տարեկան 120.000-ը՝ մանդատար պետությանը թողնելով ընդամենը 40.000 ֆունտ ստեռլինգ, որը և կհամարվի որպես Հայաստանի պարտք և ենթակա կլինի վճարման Հայաստանի հաստույթից[41]:

Սա բավական հստակ և գործնական առաջարկ էր, որը, ցանկության դեպքում, կարող էր օգտագործել Ազգերի լիգան: Սակայն, ինչպես ցույց կտա դեպքերի հետագա ընթացքը, Ազգերի լիգայի խորհուրդը մտադիր չէր լրջորեն զբաղվելու ապագա հայկական պետության մանդատի խնդրով, այլապես մեծ խոչընդոտ հանդիսացող հարցի վերաբերյալ կոնկրետ առաջարկը կարող էր գոնե հետագա քննության ենթարկվել: Իհարկե, կային առանձին անհատներ, որոնք զգալի ջանքեր գործադրեցին հայերին օգնելու համար, սակայն, հայտնի ճշմարտություն է, որ անհատների ջանքերով չէ, որ կերտվում է պետությունների քաղաքականությունը:

Շարունակելով քննարկումները հայկական կողմի հետ՝ Ազգերի լիգայի հանձնաժողովը առաջ է քաշում խառը մանդատի գաղափարը (մանդատի ընդունումը միանգամից մի քանի պե-

---

[41] Տե՛ս LNA Class.11, dossier 3421, doc. 3538:

տությունների կողմից). հայկական կողմը միանշանակ նախընտրելի է համարում մեկ պետության մանդատը: Քննարկումների ընթացքում խոսվում է նաև որևէ մասնավոր ամերիկյան ընկերության միջոցով հայկական մանդատի խնդիրը լուծելու մասին: Հայկական կողմը բավական մեծ գոհունակությամբ է ընդունում ամերիկյան ոչ պետական գործակալությունների միջոցով Հայաստանի համար ռազմական և քաղաքացիական խորհրդատուներ ձեռք բերելու գաղափարը, որը մեծապես կհեշտացներ Հայաստանի վարչական և ֆինանսական դժվարությունները: Նուբար Փաշան նույնիսկ առաջարկում է ստեղծել ամերիկյան քաղաքացիական և ռազմական խորհրդականներից կազմված որոշակի մի մարմին, նույնիսկ եթե այդ մարմինը չներկայացներ ԱՄՆ կառավարությանը[42]:

Լոնդոնում հայկական միացյալ պատվիրակությունը բավական լայնածավալ աշխատանք է իրականացնում. Ավ. Ահարոնյանը և Նուբար Փաշան անձնական հանդիպումներ են ունենում Ազգերի լիգայի և դաշնակիցների պատվիրակությունների անդամների հետ, ներկայացնում են Հայաստանում տիրող իրավիճակը, տրամադրում տարբեր բնույթի տեղեկություններ[43]: Մարտի 22-ին Ազգերի լիգայի 2-րդ քարտուղար Վ. Նիկոլսոնի հետ հանդիպման ժամանակ Ավ. Ահարոնյանը փորձում է համոզել վերջինիս, որ Ազգերի լիգան ընդունի Հայաստանի մանդատի վերաբերյալ Գերագույն խորհրդի առաջարկը: Նիկոլսոնի պնդմամբ՝ հիմնական դժվարությունը ֆինանսական պահն էր, քանի որ պետությունների մեծ մասը մտադիր չէր գնալու նյութական զոհաբերությունների: Քարտուղարը Ավ. Ահարոնյանին առաջարկում է խոսել Վենիզելիոսի (Հունաստան) և Բելգիայի ներկայացուցիչ-դեսպանի հետ, որոնք «հանդիսանում են հայերի եռանդուն պաշտպաններ»[44]: Մարտի վերջին հայկական միացյալ պատվիրակությունը Ռ. Վանցիտարին է ներկայացնում Գերագույն խորհրդի պահանջած տվյալները, որոնք էլ տրամադրվում

---

[42] Նույն տեղում:

[43] Տե՛ս Լազեան Գ., Հայաստանը և հայ դատը (վավերագրեր), Գահիրէ, 1946, էջ 259-262:

[44] Ահարոնյան Ավ., նշվ. աշխ., էջ 71-72:

են Ազգերի լիգային: Պատվիրակությունը պատրաստել էր Հայաստանի մանդատի վերաբերյալ մի հուշագիր, որտեղ մանրամասնորեն ներկայացված էին տվյալներ Հայաստանի հանքերի, օգտակար հանածոների, ջրային ռեսուրսների, երկաթգծերի և այլնի մասին, մատնանշված էին բոլոր հնարավոր միջոցները, որոնք, ըստ պատվիրակության, կարող էին հանգեցնել հարցի դրական լուծմանը: Հաշվի առնելով, որ ապագա Հայաստանին միացվելու էին Թուրքահայաստանի որոշ վիլայեթներ, պատվիրակությունը նյութեր էր տրամադրել նաև հայկական այն վիլայեթների մասին, որոնք, ամենայն հավանականությամբ, պետք է միացվեին Հայաստանին: Հուշագիրը բավական գրագետ էր տարբեր տեսանկյուններից և սպառիչ պատկերացում էր ստեղծում մանդատի խնդրի վերաբերյալ:

Իրավական տեսանկյունից հուշագիրն առաջարկում էր հարցի լուծման 2 տարբերակ. քանի որ Ազգերի լիգային առաջարկելով ստանձնել հայկական խնդիրը՝ Գերագույն խորհուրդը չէր ճշգրտել այն ձևաչափը, որի շրջանակում պետք է իրականացվեր հոգատարությունը, իսկ Ազգերի լիգայի կանոնադրությունը նախատեսում էր 2 գործելակերպ, հայկական պատվիրակությունն առաջարկում էր հետևյալը.

1. *Հայաստանն ընդունել որպես Ազգերի լիգայի անդամ և համաձայն Կանոնադրության 10-րդ հոդվածի՝ պաշտպանել և հարգել վերջինիս տարածքային ամբողջականությունը՝ ընդդեմ յուրաքանչյուր արտաքին ագրեսիայի.*

2. *որևէ պետության հանձնել նոր կազմավորվող հայկական պետության մանդատը՝ վերջինիս համար ապահովելով խորհրդատվական աջակցություն մինչև ինքնուրույն կառավարման հասնելը (22-րդ հոդված)*[45]:

Ինչ վերաբերում էր 1-ին կետին, ապա հայկական պատվիրակությունը հույսով էր, որ դառնալով Ազգերի լիգայի անդամ, Հայաստանը հնարավորություն կունենա օգտվելու վերջինիս՝ իր անդամներին ընձեռած իրավունքներից, հատկապես հնարավոր ագրեսիաների դեմ պաշտպանված լինելու հարցում: Սրանով, փաստորեն, հայկական պատվիրակությունն առաջին անգամ

[45] Տե՛ս LNA Class.11, dossier 3421, doc. 3567:

շոշափում էր անդամակցության հարցը, որը թերևս որևէ արձագանք չի ստանում Ազգերի լիգայի խորհրդում, սակայն հիմք է դառնում Հայաստանի կառավարության հետագա գործողությունների համար: Իսկ ինչ վերաբերում էր 22-րդ հոդվածին, որը, ընդհանուր առմամբ, ենթադրում էր վերակառուցման և կազմակերպչական հարցեր, հայկական պատվիրակությունը կազմել էր աջակցության մի նախագիծ, որը Ազգերի լիգայի կողմից Հայաստանի մանդատի ընդունման դեպքում հնարավորություն կընձեռեր Հայաստանին օգտագործելու իր հանքային և գյուղատնտեսական հարստությունները, երկրի բնական պաշարները, կազմակերպելու ֆինանսական հարցերը և պատշաճ վիճակի բերելու պետության բանակը:

Հուշագրի սկզբում հայկական կողմն անդրադարձել էր և հատկապես կարևորել փոխառության և խորհրդականների նշանակման հարցը, մասնավորապես ֆինանսների, հասարակական աշխատանքների և արդարադատության բնագավառում: Հայկական կողմը նպատակ էր հետապնդում ընդգծել այն փաստը, որ ապագա հայկական պետության համար Ազգերի լիգան այդքան էլ շատ զոհողությունների չէր գնալու, ինչպես դա փորձում էին ներկայացնել Ազգերի լիգայի անդամները:

Հուշագրում մեծ տեղ էր զբաղեցնում հատկապես ապագա հայկական պետության եկամուտների և ծախսերի գնահատման նախագիծը, որը և լինելու էր այն հիմնաքարը, որի վրա Ազգերի լիգան պետք է կազմեր իր հետագա պլանները: Ապագա հայկական պետության մոտավոր բյուջեն որոշելու համար հայկական պատվիրակությունը որպես հիմք ներկայացրել էր Հայաստանի Հանրապետության բյուջեն և Թուրքիայի հայկական որոշ վիլայեթների բյուջեները[46]: Եվ քանի որ ապագա հայկական պետության եկամուտները և ծախսերը կազմվել էին առանց Հայաստանի սահմանները վերջնականապես ճշտելու, ուստի հաշվարկները մոտավոր բնույթ էին կրում: Ինչ վերաբերում է Թուրքահայաստանին, ապա նախագիծը հաշվի էր առել միայն Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, այն պատճառով, որ, ամենայն

---

[46] Տե՛ս LNA Class.11, dossier 3421, doc. 3827, նաև ՀԱԱ ֆ. 430, ց. 1, գ. 1222:

հավանականությամբ, հենց դրանք էին ընդգրկվելու ապագա հայկական պետության կազմում: Թուրքիայի հայկական վիլայեթների (երեքի) բյուջեն ներկայացված էր ըստ Թուրքիայի ֆինանսների նախարարության 1910-1911 թթ. պաշտոնական տվյալների: Ներկայացված նախագծերը պետք է զգալի փոփոխություններ կրեին՝ կապված Հայկական հարցի ճակատագրի հետ: Երկրորդ կարևոր հարցը վերաբերում էր Հայաստանի ռազմական ուժերին: Այս հարցում հուշագիրը հետևյալ տեղեկություններն էր ներկայացնում. «Բանակը, որը ներկայումս ունի 15 հազար զինվոր (ամենաքիչը), միացյալ պետության դեպքում կհասցվի 40 հազարի, հենց որ մատակարարվեն գլխավոր տերությունների խոստացած զենքը, զինամթերքը և հանդերձանքը: Առաջին տարիներին բանակը կկատարի նաև ոստիկանության դեր»[47]: Այս առումով հայկական պատվիրակությունը որևէ նոր բան չէր ասում, քանի որ այս տվյալները Գերագույն խորհուրդն արդեն իսկ տրամադրել էր Ազգերի լիգայի խորհրդին: Այնուհետև առանձին հավելվածով ներկայացված էին երկաթգծերի, ջրային ռեսուրսների, գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրանքի, հանքային հարստությունների վերաբերյալ տվյալներ: Հատկապես շեշտվում էին երկաթգծերի տվյալները, որոնք առաջնահերթ ուշագրավ կարող էին լինել տերությունների համար: Պետք է նշել, որ այստեղ ևս բերված էին բավական որոշակի առաջարկներ և պլաններ, որոնք, իրոք, կարող էր հետաքրքրություն առաջացնել շահագրգիռ կողմերի մեջ: Հուշագիրը առաջարկում էր առաջին հերթին կառուցել Բաքու-Արդահան, Կարս-Երևան ու Երևան-Վան և էրզրում գծերը, որոնք առևտրային մեծ նշանակություն ունեին, և կարող էին կառուցել մասնավոր ձեռնարկությունները: Քանի որ փոխառության հարցն ամենախրթինն էր, և անհրաժեշտ էր լրջորեն հիմնավորել վարկի մարման հնարավորությունները, հուշագրում մեծ տեղ էր հատկացված նաև այն միջոցների քննարկմանը, որոնց օգնությամբ Հայաստանը պետք է վճարեր ստացված վարկի դիմաց: Հատկապես մանրամասն ներկայացված էր Արարատյան դաշտավայրում բամբակի, խաղողի և բրնձի արտադրությունը: Ռազման աշխա-

---

[47] Նույն տեղում:

տանքների ապահովման դեպքում կարող էին ապահովել մեծ քանակի բերք: Ցուցակում նշված էր 450 հանքավայր, ներկայացված էին նաև երկրի գյուղատնտեսական արտադրանքը, ջրային պաշարները: Տեղեկություն կար անգամ ածուխի տարեկան սպառման ծավալների մասին[48]: Հայկական ազգային պատվիրակությունը այս տվյալների հիման վրա հետագայում նույնիսկ հրատարակում է գիրք՝ Հայաստանի տնտեսական հարստությունների և հնարավորությունների վերաբերյալ[49]:

Այսպիսով, հուշագիրը մի ամբողջական փաստաթուղթ էր, որը հնարավորություն էր տալիս լիակատար պատկերացում կազմելու երկրի վիճակի և սպասվելիք փոփոխությունների մասին: Իրավացի լինելու համար պետք է նշել, որ Հայաստանը ներկայացված էր որպես հարուստ և չօգտագործված պաշարներով մի երկիր, և որ ցանկության դեպքում մանդատար պետությունը կարող էր նույնիսկ օգուտ քաղել նրանից:

Հայաստանի հանդեպ մանդատ ստանձնելու հարցը Ազգերի լիգայի խորհրդում անցավ ընթացակարգային բոլոր փուլերը: Մինչև հարցի քննարկումը Ազգերի լիգայի խորհրդի նիստում Հայաստանի մանդատի հարցը հանձնվում է կազմակերպության քարտուղարության իրավական բաժնի քննարկմանը: Վերջինս 1920 թվականի մարտի վերջին իր նիստերից մեկում անդրադառնում է Հայաստանի մանդատի խնդրին: Իրավական բաժնի նպատակն էր պարզել, թե արդյո՞ք Գերագույն խորհրդի առաջարկը իրավական առումով համապատասխանում էր Ազգերի լիգայի կանոնադրությանը: Իրավական բաժնի եզրակացության հիման վրա էլ պետք է տեղի ունենար հարցի հետագա քննարկումն Ազգերի լիգայի խորհրդում: Իր եզրակացությունը հանձնաժողովի նախագահ պրն Վան Համելը ներկայացնում է Ազգերի լիգայի գլխավոր քարտուղարին: Իրավական բաժնի վերաբերմունքը բավական հակասական էր և անհասկանալի. մի կողմից դրական վերաբերմունք էր ցուցաբերում Ազգերի լիգայի կողմից

---

[48] Տե՛ս A. Krafft-Bonnard, Le Proble`me Arme'nien, Geneva 1924. pp. 26-27:

[49] Տե՛ս LNA, Dele'gation de la Republique Arme'nienne, L'Arme'nie au point de vue e'conomique (richesses mine'rals, re'serves aqueuses, chemins de fer, l'agriculture en Arme'nie), Paris, 1922:

Հայաստանի մանդատը վերցնելու գաղափարին, իսկ մյուս կողմից՝ հենց նույն փաստարկներով մերժում էր այն: Բաժինը կարծում էր, որ իրավական տեսանկյունից Ազգերի լիգայի կանոնադրությունը ենթադրում է ինչպես մեկ պետության, այնպես էլ հավաքական մանդատի հնարավորություն, և նույնիսկ, եթե կոլեկտիվ մանդատի փորձը Եգիպտոսում և Ալբանիայում դրական արդյունք չտվեց, ապա Հայաստանի դեպքում պայմանները այլ են, և հավաքական մանդատը կարող է հաջողություն ունենալ, քանի որ «այն կբխի հայերի հանդեպ պատասխանատվության զգացումից, այլ ոչ թե նախանձի և եսասիրության արդյունք կլինի, ինչպես Եգիպտոսի կամ Ալբանիայի օրինակում» [50]: Իսկ ի՞նչ լուծումներ էր առաջարկում Իրավական բաժինը: Վերջինս նախ դիտարկում է Հայաստանը որպես «աջակցվող կողմ», իսկ Ազգերի լիգան՝ «աջակցող կողմ» ծևաչափը, որը թերևս Ազգերի լիգայի կանոնադրության համաձայն հանձնաժողովը որակում է որպես հնարավոր տարբերակ, քանի որ հակառակ պնդումը չկար, սակայն մյուս կողմից էլ եզրակացնում (իհարկե, անհասկանալի պատճառներով- Է. Գ.), որ Հայաստանը որպես «աջակցվող պետություն» չի կարող ընկնել Ազգերի լիգայի կանոնադրության 10-րդ հոդվածի դրույթների ներքո (10-րդ հոդվածը ենթադրում էր տարածքի ընդհանուր երաշխիք): Ըստ իրավական բաժնի՝ այս դեպքում «հայկական տարածքների երաշխիքի հարցը պետք է ապահովվի Թուրքիայի հետ հաշտության պայմանագրով» [51]: Այնուհետև Իրավական բաժինն անդրադառնում է հարցի ֆինանսական կողմին. «Միայն այն դեպքում, երբ Ազգերի լիգան համոզված կլինի, որ իր ծախսերը լիովին կհատուցվեն, պարտավորությունների կամ համաձայնությունների միջոցով, իր վրա կարող է վերցնել Հայաստանին օգնելու խնդիրը» [52]: Այս ուղղությամբ Ազգերի լիգան պետք է համաձայնություն կայացնի կամ պայմանագիր կնքի Հայաստանի Հանրապետության հետ, ինչպես նաև երաշխիքային համաձայնագրեր կնքի շահագրգիռ կառավարությունների կամ մասնավոր ընկերությունների հետ:

---

[50] LNA Class.11, dossier 3421, doc. 3652.

[51] Նույն տեղում:

[52] Նույն տեղում:

Իսկ Ազգերի լիգայի կողմից անմիջական երաշխիքներ տալու գաղափարը Իրավական բաժինը համարում էր անհավանական: Բացի այդ, ֆինանսական հարցի հետ կապված այն կարծիքին էր, որ փոխառության տրամադրման պարտավորությունների ստանձնումն Ազգերի լիգայի կանոնադրության մեջ ներառված չէ, իսկ նման փոխառության տրամադրումը պետք է իրականացվի միայն նոր միջազգային համաձայնագրի կնքման միջոցով, որի համար հարկավոր է անդամների անհատական նախաձեռնությունը: Այս կապակցությամբ քարտուղարության իրավական բաժնի նախագահ Վան Համելն ասում էր. «Չեմ կարծում, որ շատ պետություններ ինքնակամ կստանձնեն նման պարտավորություն»[53]:

Իրավական բաժինն առաջարկում էր նաև Ազգերի լիգայի դերը որպես միջնորդի կամ կազմակերպչի: Վերջինիս, իհարկե, կվերապահվեր որոշակի քայլեր ձեռնարկելու, որոշումներ կայացնելու կամ որոշ վեճեր լուծելու իրավունք, սակայն գլխավորը պետք է լիներ բարոյական աջակցությունը Հայաստանին: Կառավարություն ստեղծելու, տեղական կառավարությանը օգնելու, ռազմական և վարչական ուժ և անհրաժեշտ դրամ տրամադրելու հարցերում Ազգերի լիգան կարող էր գործել միայն որոշակի կառավարությունների և կիսապաշտոնական ընկերությունների հետ համագործակցության միջոցով:

Իրավամբ, պետք է նշել, որ Իրավական բաժինն առաջ քաշեց նաև բավական կոնկրետ առաջարկներ, սակայն դրանք նպատակ էին հետապնդում Ազգերի լիգային ազատել հայկական խնդրից՝ այն գցելով ԱՄՆ-ի ուսերին: Իրավական բաժնի աշխատանքներին մասնակցում էր նաև ամերիկացի իրավաբան պրն Ռութը (թեև ԱՄՆ-ն Ազգերի լիգայի անդամ չէր, սակայն պրն Ռութը մասնակցում էր Արդարադատության մշտական դատարան ստեղծելու համար Ազգերի լիգայի խորհրդի կազմած հանձնաժողովի աշխատանքներին[54]): Վերջինս այն կարծիքին էր, որ ամե-

---

[53] Նույն տեղում:

[54] Տե՛ս Charles G. Fenwick, Notes on International Affairs: The Outlook for International Law, *The American Political Science Review*, Vol. 14, No. 3 (Aug., 1920), p. 491.

րիկյան ժողովրդի ազդեցիկ մասը պատրաստ է մասնակցելու Հայաստանի աջակցությանը:

Իրավական բաժինն առաջարկում էր նաև Ազգերի լիգային հանդես գալ որպես միջնորդ և Հայաստանին օգնելու նպատակով ստեղծել ֆինանսական մի կառույց՝ «Հայկական բանկ»: Վերջինս իր գործունեությունը պետք է իրականացներ ԱՄՆ բանկային կառույցների աջակցությամբ: Ըստ այդմ՝ Ազգերի լիգան կարող էր նաև կապող օղակ լինել Հայաստանի (նաև կովկասյան հանրապետությունների) և Ամերիկայի միջև: «Փորձել ստեղծել Հայաստան (կազմակերպել Հայաստանի օգնությունը) առանց ԱՄՆ-ի պաշտոնական և մասնավոր ընկերությունների, նշանակում է թմրեցնել Հայաստանի օգնության հարցը: Ամեն դեպքում պետք է ջանքեր գործադրել Ամերիկային՝ Հայկական հարցի լուծման մեջ ներգրավելու ուղղությամբ, իսկ վերջինիս մերժման դեպքում՝ Ազգերի լիգային հեռու պահել հայկական գործերից»[55]:

Ահա և իրավական բաժնի հիմնական եզրակացությունը:

Փաստորեն, Ազգերի լիգայի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու հարցին իրավական տեսանկյունից որևէ որոշակի լուծում չառաջարկվեց, ինչը խիստ բարդացնում էր հարցի հետագա ընթացքն Ազգերի լիգայում: Սա այն միակ հանձնաժողովն էր, որը կարող էր որևէ գործնական և իրավական առումով հիմնավորված առաջարկ անել, մինչդեռ վերջինս ամեն կերպ փորձում էր բեռը գցել ԱՄՆ-ի ուսերին:

Իրավական բաժինն իր աշխատանքների ընթացքում որպես Հայաստանի վերաբերյալ տեղեկություններ ուսումնասիրել էր ամերիկյան գնդապետ Ռիի զեկույցը: Այն որոշ դեպքերում հանդես էր եկել որպես ուղեցույց (մասնավորապես կովկասյան հանրապետությունները (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Դաղստան) ամերիկյան մանդատի տակ դնելու գաղափարը): Գնդապետի զեկույցն ընդհանուր առմամբ անբարենպաստ տպավորություն էր թողնում Հայաստանի մանդատն ընդունելու հետ կապված: Հատկապես ուշագրավ էին գնդապետի տեղեկությունները տարածաշրջանի տնտեսական վիճակի մասին: «Ներկա պահին նախկին Ռուսական Հայաստանն ի վիճակի է մթերքով

---

[55] Նույն տեղում:

ապահովել իր բնակչության միայն 11%-ին: Եթե Թուրքահայաստանը միացվի Հայաստանի Հանրապետությանը, ապա միգուցե հնարավոր է, որ այս նորաստեղծ պետությունը կարողանա ինքն իրեն ապահովել: Թուրքիան Ռուսահայաստանի սահմաններին միշտ ջանում է խժդժություններ սերմանել: Գյուղատնտեսությունը հիմնականում հիմնված է անձի աշխատանքի վրա: Վարչական ապարատը թույլ է: Թուրքերը ջարդերի ժամանակ ոչնչացրել կամ քշել են մտավորականության հիմնական մասին՝ թողնելով միջակների և թույլերի: Հայաստանին օգնում է Դենիկինը»[56]: Ահա նման լակոնիկ և Հայաստանի մանդատն ընդունելու առումով խիստ բացասական տողերով էր ներկայացված ամերիկացի գնդապետի տպավորությունը Հայաստանի մասին, որին հակասում էր հայկական կողմի ներկայացրած հուշագիրը: Այս տողերը բացառիկ անհարմար տպավորություն էին ստեղծում Հայաստանի համար՝ թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական և թե՛ վարչական առումներով: Ստացվում էր, որ Հայաստանը տնտեսապես շատ թույլ է (չնայած հայկական պատվիրակության հավաստիացումներին), քաղաքականապես կողմնորոշված է դեպի Ռուսաստան, իսկ վարչական ապարատը բաղկացած է գործին չտիրապետող մարդկանցից: Այս ամենը, իհարկե, խիստ մտահոգիչ կարող էին լինել Ազգերի լիգայի համար:

Նշենք, որ ինչպես հայ ժողովրդի ողջ պատմության ընթացքում, մանդատի հարցում ևս զգացվում էր համայն աշխարհի հայ համայնքի և արտասահմանի հայասերների կազմակերպությունների ազդեցությունը Ազգերի լիգայում հայկական խնդրի քննարկումների վրա[57]: Վերջիններս ամենաակտիվ կերպով և տարբեր միջոցներով միջամտում էին հարցի լուծմանը[58]: Այսպես, մարտի 23-ին Բրիտանական հայկական կոմիտեն ընդունում է մի բանաձև, որով բրիտանական կառավարությունից պահանջում էր Ազգերի լիգայի խորհրդում իր ներկայացուցիչների միջոցով

---

[56] LNA Class. 11, dossier 3421, doc. 3101.

[57] Տե՛ս **Krafft-Bonnard A.**, նշվ. աշխ., pp. 50-53:

[58] Մանրամասն տե՛ս A. Krafft-Bonnard, Sans Foyers. Le cri de d'etresse de l'Arme'nie, Geneva 1921. A. Krafft-Bonnard, L'Arme'nie. Justice et re'paration, Geneva, 1930:

հասնել նրան, որ Ազգերի լիգան իր վրա վերցնի Հայաստանի ապագայի հանդեպ պատասխանատվությունը: Կոմիտեն անվտանգության տեսանկյունից խիստ կարևորում էր կովկասյան երեք հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև սահմանների որոշումը. այն նշվում էր որպես տարածաշրջանում խաղաղություն հաստատելու միակ երաշխիք: Նշենք նաև, որ բանաձևն անդրադարձել էր նաև Կիլիկիայում տիրող կացությանը և քրիստոնյա բնակչության գլխին կախված վտանգին[59]: Մեկ այլ հուշագիր էլ ուղարկում է հայ ժողովրդին օգնելու համար ստեղծված Բրիտանական միացյալ խորհրդին[60]:

Մարտի 30-ին Հայաստանի մանդատը Ազգերի լիգայի կողմից ստանձնելու հարցը քննարկվում է նաև Ազգերի լիգայի միության գործադիր հանձնաժողովի նիստում: Հանձնաժողովը հատկապես շեշտում է, որ մերժելով Հայաստանի մանդատը՝ Ազգերի լիգան մեծ հարված է հասցնում իր հեղինակությանը: Իսկ ընդհանուր առմամբ նիստում քննարկված հարցերը հետևյալն էին.

1. *Ազգերի լիգան պետք է նշանակի որևէ չեզոք պետություն որպես Հայաստանի հովանավոր: Այդ պետությունը պետք է Հայաստանին տրամադրի սպաներ և վարչական այլ մասնագետներ, որոնք պետք է գործեն Ազգերի լիգայի խորհրդի անմիջական հսկողության ներքո: Առնվազն Ազգերի լիգայի եվրոպական անդամները պետք է մուծումներ կատարեն և ապահովեն Հայաստանի բյուջեի ճեղքվածքն առաջին տարիների ընթացքում:*

2. *Անհրաժեշտ է ԱՄՆ-ում և այլուր ստեղծել հզոր կամավորական գործակալություններ, որոնք պետք է Հայաստանին տրամադրեն անձնակազմ և ֆինանսներ: Սրանց հսկողությունը նույնպես պետք է դրվի Ազգերի լիգայի վրա:*

3. *Եթե այս երկու տարբերակները չիրագործվեն, ապա Ազգերի լիգայի խորհուրդը պետք է պարտավորվի ստեղծել Ազգերի լիգայի հատուկ հանձնաժողով, որի անձնակազմը պետք է պատասխանատվություն կկրի Հայաստանի ապագայի հան-*

---

[59] Տե՛ս LNA Class. 11, dossier 3421, doc. 3627:

[60] Նույն տեղում, doc. 4144:

*դեպ, տրամադրի անհրաժեշտ խորհուրդներ և աջակցություն*[61]:

Նիստն անդրադառնում է նաև Թուրքիայի փոքրամասնությունների խնդրին, որի վերաբերյալ առաջարկում էր Ազգերի լիգայի կողմից նշանակել հանձնակատար, որի նստավայրը կլիներ Թուրքիայի մայրաքաղաքը, և որը Գերագույն խորհրդի ներկայացուցչի հետ համատեղ պետք է քննարկի և ուսումնասիրի մարդու իրավունքների խախտման և դրանց հանդեպ ոտնձգությունների դեպքերը: Հանձնաժողովն անդրադառնում է նաև Կիլիկիայի հարցին և առաջարկում անհապաղ քայլեր ձեռնարկել Կիլիկիայի պաշտպանության ուղղությամբ: Նշենք նաև, որ Կիլիկիայի հարցը մասնավոր քննարկվել էր Ազգերի լիգայի գլխավոր քարտուղար է. Դրամմոնդի և Տրապիզոնի արքեպիսկոպոսի հանդիպման ժամանակ: Արքեպիսկոպոսը ներկայացրել էր հայկական ազգային շահերից ելնող մի շարք պահանջներ. մասնավորապես առաջարկել էր Կիլիկիան ճանաչել որպես հայկական տարածք, քանի որ յուրաքանչյուր այլ ճանաչում մեծ ազատություն կտար թուրքական ոկրտումներին (արքեպիսկոպոսը ցանկանում էր նաև, որ Հայաստանը շրջափակված չլինի մուսուլմանական երկրներով, որպես սահմանակից ունենա անգլիացիների և ֆրանսիացիների զբաղեցրած գոտիները: Առաջարկում էր Սև ծով դուրս եկող գոտում, որը պետք է տրամադրվեր Հայաստանին, ընդգրկել նաև Արդվին քաղաքը՝ որպես հայ կաթոլիկոսների կենտրոն, իսկ ֆինանսական հարցում ակնկալում էր Անգլիայի ակտիվ մասնակցությունը)[62]: Սակայն Կիլիկիայի հարցի քննարկումները սրանով ավարտվում են և հետագայում չեն արծարծվում Ազգերի լիգայի առաջին ասամբլեայի ընթացքում: Վերադառնալով Գործադիր հանձնաժողովի նիստին՝ նշենք, որ այն խիստ կարևորում է դաշնակիցների կողմից մանդատային տարածքի սահմանների ճշտումը, անվտանգության և խաղաղության ապահովումը: Սա բավական սկզբունքային հարցադրում էր, քանի որ սահմանների ճշտումը անհրաժեշտ էր ոչ միայն տարածքի չափը որոշելու, այլև տեղի բնական պաշար-

---

[61] Տե՛ս ժողովուրդի Ձայն, ապրիլ 20, 1920, նաև LNA Class. 11, dossier 3421, doc. 4144:

[62] Տե՛ս LNA Class. 11, dossier 3421, doc. 4144:

ները, բնակչության թիվը պարզելու, հարևաններին ճշտելու և այլ հարցերի պատասխանելու համար: Ի վերջո, հանձնաժողովն ընդունում է հետևյալ բանաձևը. «Հայկական մանդատի հարցը խիստ կարևոր է Ազգերի լիգայի ապագայի համար, որպեսզի վերջինս առանց խոր մտածելու մերժի այն, ինչպես նաև հրաժարվի Թուրքիայի փոքրամասնությունների հետ կապված դաշնակից տերությունների առաջարկած պարտավորություններից»[63]: Գործադիր հանձնաժողովի այս բանաձևը արդյունք էր Անգլիայի հայասերների միությունների հսկայական քարոզչական աշխատանքի: Սակայն, չնայած մեծ ակտիվության և ազդեցության, այդ միությունները չկարողացան հաջողության հասնել: «Հայաստանի մանդատի» նախագիծ էր պատրաստվել և Ազգերի լիգայի խորհուրդ ներկայացվել Հայ ժողովրդին օգնելու բրիտանական միացյալ խորհրդի, ինչպես նաև Շվեյցարիայի հայանպաստ մարմնի կողմից[64]: Ներկայացված երկու նախագծում էլ այն միտքն էր պնդվում, որ Հայաստանի ապագան պետք է լինվին ապահովված լինի Ազգերի լիգայի կանոնադրության 22-րդ հոդվածով: Անհրաժեշտ էին համարում, որ Ազգերի լիգան որևէ հոգատար պետություն նշանակի՝ այս հարցում կարևորելով Հայաստանի ցանկությունը (ինչպես ամրագրված է 22-րդ հոդվածով): Տարբերություններ կային հատկապես արտաքին քաղաքականության հարցերի շուրջ: Շվեյցարական հայանպաստ մարմինը համարում էր, որ Հայաստանի կառավարությունը պետք է օժտված լինի կառավարությանը հատուկ բոլոր ատրիբուտներով ինչպես արտաքին քաղաքականության, այնպես էլ ֆինանսական և արդարադատության ոլորտներում՝ հաշվի առնելով հոգատար պետության նշանակած բարձր կոմիսարի կարծիքը, իսկ բրիտանական միության նախագիծը վերոհիշյալ բնագավառներում լայն հնարավորություններ էր առաջարկում մանդատար պետությանը: Մասնավորապես հայտարարվում էր, որ մանդատի գոյության ողջ ընթացքում (ենթադրվում էր 20 տարի երկարաձգման պայմանով) մանդատար պետության դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչները տար-

[63] LNA Class. 11, dossier 3421, doc. 5606.

[64] Տե՛ս Փափազյան Վ., նշվ. աշխ., էջ 356-366:

քեր երկրներում պետք է լինեին նաև Հայաստանի ներկայացուցիչները: Հենց սկզբից արդարադատությունը պետք է լիներ մանդատար պետության հսկողության տակ: Ռազմական և ոստիկանական ուժերի ղեկավարումը և օգտագործումը նույնպես պետք է վստահվեին մանդատար պետությանը, որոնք, սակայն, ոչ մի դեպքում չէին կարող օգտագործվել ազգային տարածքից դուրս: Ազգերի լիգան ներկայացուցիչ էր ուղարկելու Հայաստան՝ մանդատի սկզբունքների կիրառությունը վերահսկելու համար: Վերջինս իրականացվող աշխատանքների վերաբերյալ պետք է զեկուցեր Ազգերի լիգայի խորհրդին: Հայկական տարածքի բոլոր ծախսերը, ներառյալ՝ հոգատար պետության ծախսերը, կատարվելու էին մեծ տերությունների հատկացրած վարկի միջոցով, որը հանդիսանալու էր ազգային կառավարության պարտքը: Ներկայացված սկզբունքները պետք է վերաբերեին Հայաստանի Հանրապետությանը և նախկին Օսմանյան կայսրության այն տարածքներին, որոնք միավորվելու էին Հայաստանին[65]:

Վերլուծելով վերոհիշյալ նախագծերը՝ պետք է նշել, որ սրանց իրականացումը կարող էր մեծ դժվարություններ հարուցել Հայաստանի Հանրապետության համար: Հայաստանի Հանրապետությունը 1920 թվականի գարնանն արդեն կազմավորված և տերությունների կողմից դե ֆակտո ճանաչված պետություն էր և իր ներկայացուցիչներն ուներ տարբեր երկրներում: Մի խոսքով, հանրապետության կյանքն ընթանում էր բնականոն հունով: Իսկ նախագծերի սկզբունքներով մանդատի կիրառումը Հայաստանում լիովին կխարխլեր պետականության ստեղծված հիմքերը:

Մինչև Ազգերի լիգայի խորհրդի նիստը ևս մի կարևոր դիտարկում է ներկայացնում Բրիտանիայի հայասերների միության նախագահ լորդ Բրայսը, որը ցավոք, չի քարգմանվում և չի ներկայացվում խորհրդի անդամներին մինչև մանդատի հարցի քննարկումը Ազգերի լիգայի ապրիլյան նստաշրջանում: Լորդ Բրայսը, որը բավական հայտնի անձնավորություն էր և մեծ

[65] Տե՛ս LNA Class. 11, dossier 3421, doc. 5413:

հեղինակություն էր վայելում[66], փորձ էր կատարել բացատրել հայկական տարածքներում գոյություն ունեցող իրավիճակը և առաջարկել դրանից բխող լուծումներ: Ըստ նրա՝ հայկական տարածքներում տիրող բոլոր դժվարությունները հարուցել էր թուրքական կառավարությունը: «Բնիկ ռասաները ֆանատիկ չեն, նույնիսկ մուսուլմանները: Երբ թուրքական կառավարությունը չի միջամտում կրոնական համայնքների գործերին, նրանք շատ համերաշխ են: Երբ այս տարածքները կմաքրվեն թուրքերից և Վանի ու Մոսուլի միջև բնակվող քրդերին ինքնավարություն կտրվի, իրական հնարավորություն կստեղծվի համերաշխ գոյության համար, և նույնիսկ փոքր թվով ոստիկանությունը բավարար կլինի կարգուկանոնը ապահովելու համար»[67]: Բրայսը անդրադարձել էր նաև թաքար ազգաբնակչության հետ հայերի խնդիրներին, որոնք, ըստ լորդի, սահմանների հարցի լուծումից հետո կվերանային: Բրայսը փորձում էր համոզել, որ 1մլն ֆունտ ստեռլինգը, ոստիկանական որոշակի ուժեր և եվրոպական սպաների մի աննշանակազմ բավական կլինեին Հայաստանի մանդատն իրականացնելու համար: Իսկ հանքերի շահագործումը հնարավորություն կընձեռեր նվազեցնելու տարեկան ծախսերը: «Ինչ վերաբերում է գումարներին, ապա մենք ևս մեր հույսը կապում ենք ԱՄՆ-ի օգնության հետ: Ֆինանսական օժանդակության հարցերը բարձրացվել են ԱՄՆ Կոնգրեսում, սակայն երբեք ոչ ոք հետամուտ չի եղել դրանց իրականացմանը, քանի որ միշտ կապված են եղել ԱՄՆ-ի՝ Ազգերի լիգա մտնելու և Հայաստանի մանդատն ընդունելու հետ: Եթե անդամության և մանդատի հարցերը օրակարգից հանվեն, և խնդիրը դրվի Կոնգրեսի առջև այն ձևով, որ ԱՄՆ-ն պարզապես պետք է օժանդակի որևէ պետությանը Հայաստանի մանդատը վերցնելու հարցում, այս դեպքում շատ հավանական է, որ ԱՄՆ-ն կտրամադրի անհրաժեշտ գումարը (տարեկան մոտ 3-4 մլն մի քանի տարվա ընթացքում): Կոնգրեսի մերժման դեպքում ԱՄՆ-ից կարելի է վարկ վերցնել, որին, համոզված եմ, կմիանան մի շարք հարուստ

---

[66] Տե՛ս **Ernest Barker, Lord Bryce,** *The English Historical Review*, Vol. 37, No. 146 (Apr., 1922), էջ 219-224:

[67] LNA Class. 11, dossier 3421, doc. 3895.

հայասերներ: Կարելի է կազմակերպել նաև կամավորական նվիրատվություններ: Հայերը մեծ գումարներ են ստացել Ամերիկյան Նպաստամատույցից վերջին 5 տարիների ընթացքում, իսկ այժմ հայերի հանդեպ համակրանքը հասել է իր գագաթնակետին»[68]: Ինչպես տեսնում ենք, կրկին խոսքը վերաբերում էր մանդատի հարցում ԱՄՆ-ի մասնակցությանը: Անտարակույս, բոլորը համոզված էին, որ հայկական մանդատի հարցը կարող է լուծել միայն ԱՄՆ-ն կամ լուծվել վերջինիս անմիջական աջակցությամբ: Իսկ Ազգերի լիգան, որը նույնպես համակարծիք էր այս հարցում, չէր շտապում և չէր փորձում որևէ քայլ ձեռնարկել, քանի որ ԱՄՆ-ն դեռևս պաշտոնապես չէր հրաժարվել Հայաստանի մանդատից: «Իրոք, հնարավոր չէ պատկերացնել, թե ինչ կլինի հայերի վիճակը, եթե Ազգերի լիգան նրանցով չզբաղվի: Եթե հայերը թողնվեն Թուրքիայի տիրապետության տակ, ապա ապագա խաղաղության և զարգացման մասին կարելի է մոռանալ: Ամենախելացի քայլը կլինի բոլոր ջանքերը ի մի բերել հարցը լուծելու համար»[69],-եզրակացնում էր Բրայսը: Կարելի է միայն ցավով արձանագրել, որ այս նամակը չի բաժանվել Խորհրդի անդամներին, քանի որ, ինչպես արդեն նշվեց, լորդ Բրայսը մեծ հեղինակություն էր վայելում, իսկ նրա ներկայացրած նամակը խիստ բարենպաստ կարող էր լինել հայերի համար, քանի որ պարզ լուծումներ և առաջարկներ էր բովանդակում:

1920 թվականի ապրիլի 1-ին Լոնդոնում Ազգերի լիգայի խորհրդի հերթական հանդիպման ժամանակ քննարկվում է նաև հայկական խնդիրը: Հայաստանի մանդատի վերաբերյալ գլխավոր քարտուղարը ներկայացնում է երկու հուշագիր՝ Թուրքիայի փոքրամասնությունների պաշտպանության և հայկական պետության վերաբերյալ: Հայկական պատվիրակությունը հանդիպման համար ներկայացրել էր մանդատի վերաբերյալ իր նախագիծը, ինչպես նաև՝ որոշ դիտարկումներ: Ազգերի լիգայի գլխավոր քարտուղարն այն կարծիքին էր, որ եթե Հայաստանը Կանոնադրության 22-րդ հոդվածի համաձայն դրվեր Ազգերի լիգայի

---

[68] Նույն տեղում:
[69] Նույն տեղում:

մանդատային համակարգի ներքո, ապա Ազգերի լիգայի դերը որևէ այլ բացատրության կարիք չէր ունենա, բացի նրանից, ինչն ամրագրված էր հոդվածով, այսինքն՝ Հայաստանի հովանավորության հարցը պետք է հանձնվեր որևէ զարգացած պետության՝ Ազգերի լիգայի վերահսկողության ներքո: Սակայն Գերագույն խորհուրդը հենց Ազգերի լիգային էր կոչ արել ստանձնել Հայաստանի մանդատը, քանի որ ոչ մի պետություն պատրաստ չէր ընդունելու այն: Այս համգամանքը մեծապես բարդացնում էր խնդիրը: Հանդիպման ընթացքում Գլխավոր քարտուղար Է. Դրամոնդը առաջ է քաշում Հայկական հարցի լուծման երեք հնարավոր տարբերակ.

*ա) Ջանքեր գործադրել գտնելու համար մի պետություն, որը կընդունի Հայաստանի մանդատը.*

*բ) Հայաստանը դնել կոլեկտիվ մանդատի ներքո, որով մի քանի պետություններ կոլեկտիվ պատասխանատվություն կկրեն Ազգերի լիգայի առջև՝ համաձայն 22-րդ հոդվածի,*

*գ) Ազգերի լիգայի կողմից ստեղծել հատուկ վարչական առաքելություն, որը պետք է աջակցի Հայաստանին. այլ կերպ ասած՝ Ազգերի լիգան պետք է ստանձնի Հայաստանի մանդատի կազմակերպումն ու վերահսկողությունը*[70]:

Գլխավոր քարտուղարը ներկայացնում է իր դիտարկումները՝ կապված երրորդ կետի հետ: Թեև տարածքային խնդրի շուրջ գլխավոր հարցը շարունակում էր մնալ սահմանների անճշտության հարցը, սակայն, ըստ քարտուղարի, առանձին խնդիր էր նաև Հայաստանին միացվելիք տարածքներից թուրքական կանոնավոր և ոչ կանոնավոր ուժերը դուրս բերելու հարցը: Պրն Դրամոնդը պնդում էր, որ Ազգերի լիգան նման երաշխիքներ տալ չի կարող, չնայած մեծ տերությունների հավաստիացումներին, որ Ազգերի լիգայի ներկայությունը կհեշտացներ Հայաստանի տարածքից զինված ուժերի դուրսբերման գործընթացը: Սակայն և՛ Ազգերի լիգայի, և՛ դաշնակիցների մեջ իրական վախ կար, որ այս դեպքում համատեղ աշխատանքների ընթացքում դժվարություններ կառաջանային: Տարաբնույթ կարծիքներ է

---

[70] Տե՛ս Оганесян Р., Международные отношения Республики Армения 1918-1920, Е., 2007, с. 490-491:

հարուցում նաև ռազմական խնդրի քննարկումը: Ոմանք համաձայն էին հայկական պատվիրակության հետ, որ գերագույն հրամանատարությունը և որոշ տեխնիկական առաքելություններ բավարար կլինեն ռազմական գործը գլուխ բերելու համար: Սակայն կային նաև ներկայացուցիչներ, որոնք գտնում էին, որ շուրջ 6 հազար կամավորի կարիք կա: Իսկ բոլորը քաջ գիտակցում էին, որ ռազմական խնդիրները սերտորեն կապված են ֆինանսական հարցի հետ: Յանդիպման ընթացքում քննարկվում է նաև դեպի ծով ելք ունենալու հարցը, որը կապված էր Բաթումի նավահանգստի հետ: Մինչև Գերագույն խորհրդին վերջնական պատասխան տալը նիստը որոշում է կայացնում նախ պարզել Բաթումի հետագա կարգավիճակի հարցը. այն վերածվելո՞ւ էր ազատ նավահանգստի՝ հատուկ վերահսկողության ներքո, թե՞ միացվելու էր հարևան երկրներից որևէ մեկի: Ըստ Գլխավոր քարտուղարի՝ Ազգերի լիգան կարող էր համաձայնվել օգնել Յայաստանին միայն այն դեպքում, երբ Գերագույն խորհրդից հստակ երաշխիքներ կստանար ոչ միայն Բաթումի նավահանգստի, այլև հարակից շրջանների անվտանգության վերաբերյալ: Սակայն այս հարցի կազմակերպումը հատկապես դժվար էր, քանի որ Բաթումի խնդիրը մեծ վիճաբանություններ էր առաջացնում տերությունների միջև:

Նիստի ընթացքում կրկին ամենասուր կերպով կանգնում է ֆինանսական հարցը, որի լուծմանը, ըստ էության, առնչվում էին նաև մյուս խնդիրները: Այս հարցում հատկապես զգացվում է Ազգերի լիգայի գլխավոր քարտուղար է. Դրամմոնդի հայանպաստ դիրքորոշումը, որը ջանում էր ամեն կերպ մեղմել ֆինանսական դժվարությունների հետ կապված տպավորությունը: Նա հարցը ներկայացնում էր այնպես, որ հայկական պետության ծախսերը որոշ չափով պետք է բավարարվեին սեփական միջոցներով և հայկական սփյուռքի անմիջական աջակցությամբ: Իհարկե, Գլխավոր քարտուղարը գտնում էր, որ առաջին տարիների ընթացքում թուրքական նախկին վիլայեթներից եկամուտ չի կարելի սպասել, և շատ քիչ եկամուտ էլ կարելի է ստանալ նախկինում Ռուսական կայսրությանը պատկանած տարածքներից, սակայն հայկական կողմի ներկայացրած տվյալները հիմք էին տալիս ենթադրելու, որ իրավիճակը կարելի էր շտկել մի քանի

տարվա ընթացքում: Բացի այդ, քարտուղարը հնարավոր էր համարում նաև, որ Հայաստանի կառավարությունն ինքը կարողանա բանակցել վարկ ձեռք բերելու համար: Սակայն Ազգերի լիգայի խորհրդին հստակ երաշխիքներ էին անհրաժեշտ հայկական պետության համար վարկի տրամադրումը հնարավոր դարձնելու համար, այլապես ոչ միայն ֆինանսական, այլև Հայաստանին օգնելու հարցը կմնար չլուծված: Ամենադյուրին կերպով է ընթանում միայն քաղաքացիական խորհրդականների (քիչ թվով) տրամադրման հարցի քննարկումը, որը, ըստ անդամների, ոչ մի դժվարություն չէր առաջացնի և չէր պահանջի մեծ տերությունների կողմից հատուկ երաշխիքներ[71]: Այնուհետև Գլխավոր քարտուղարը ներկայացնում է հայկական պատվիրակության ներկայացրած նյութերը: Հայկական կողմը ներկայացրել էր քաղաքացիական և ռազմական աջակցության 2 նախագիծ: Հայաստանի մանդատի նախագիծը հայկական պատվիրակությունը դեռ մարտի 20-ին ներկայացրել էր Գերագույն խորհուրդ: Ըստ հայկական նախագծի՝

*1. Ազգերի լիգայի կողմից Հայաստանին տրամադրվելիք օժանդակությունը տևելու էր 20 տարի և կարող էր երկարաձգվել երկու անգամ 5-ական տարով.*

*2. Ազգերի լիգան իր ստանձնած մանդատը պետք է իրականացներ հետևյալ միջոցներով.*

*ա) Հայաստանի մայրաքաղաքում հաստատվելու էր Ազգերի լիգայի բարձր ներկայացուցիչը (կոմիսար),*

*բ) նախարարություններին կից նշանակվելու էին խորհրդականներ.*

*3. Հայաստանն Ազգերի լիգային կից ունենալու էր իր ներկայացուցիչները.*

*4. Բարձր կոմիսարը միջնորդի և հաշտարարի դեր էր կատարելու խորհրդականների միջև տարակարծությունների ծագման դեպքում.*

*5. խորհրդականների գործառույթներն էին՝*

*ա) մշակել օրենքների նախագծեր և ներկայացնել համապատասխան նախարարներին, որոնք իրենց կարծիքների հետ*

---

[71]Տե՛ս LNA Class. 11, dossier 3421, doc. 3694:

*համատեղ կներկայացնեին նախագծերը օրենսդիր իշխանությանը,*

*բ) մշակել կանոնների և հրամանագրերի նախագծեր և ներկայացնել կից նախարարություններին,*

*գ) նախարարներին առաջարկել վարչական այնպիսի միջոցառումներ, որոնք կհամարեն օգտակար և անհրաժեշտ.*

*6. նախարարությունները երկու ամսվա ընթացքում խորհրդականների առաջարկած օրենքների նախագծերը պետք է փոխանցեն նախարարների խորհրդին, որն էլ դրանք ներկայացնելու էր Հայաստանի խորհրդարանին.*

*7. ցանկալի էր, որ նշանակված խորհրդականները պատկանեն միևնույն ազգին, ինչպես ամրագրված էր Ազգերի լիգայի կանոնադրության 22-րդ հոդվածով*[72]*:*

*Հայկական կողմի մյուս նախագիծը, ինչպես արդեն նշեցինք, վերաբերում էր ռազմական աջակցությանը, որը պետք է իրականացվեր հետևյալ ուղղություններով.*

*1. բանակի վերակազմավորում.*

*2. բանակի գործողությունների վերահսկում:*

Հայկական պատվիրակության տեղեկությունների համաձայն՝ հանրապետության բանակը բաղկացած էր մոտ հազար սպաներից, որոնք մարզված էին ռուսական ռազմական հաստատություններում, ծառայել էին ռուսական բանակում և լավ փորձ ունեին: Բանակն ուներ բավարար թվով բարձրաստիճան սպաներ, որոնք ոչ մի պարագայում չէին զիջում եվրոպական բանակի սպաներին: Միայն անհրաժեշտ էր նրանց ծանոթացնել նոր տեսակի զենքերի: Սակայն նույնը չէր կարելի ասել Ռազմական նախարարության և բանակի հատուկ խմբավորումների մասին, որտեղ տեխնիկական տարրերի պակաս կար:

Հետևաբար հայկական պատվիրակությունը պահանջում էր ռազմական խորհրդականներ և հրահանգիչներ.

*ա) հրետանու համար նոր տեսակի զենքերին ծանոթացնելու նպատակով,*

*բ) ավիացիայի համար,*

---

[72] Տե՛ս Փափազյան Վ., նշվ.աշխ., էջ 69-70, նաև ՀԱԱ, ֆ.430, ց. 1, գ. 1221, ժողովուրդի Ձայն, մայիս 1/14, 1920:

*գ) ռադիո-տելեգրաֆիայի համար,*

*դ) ռազմական մեքենաների բաժնի համար*[73]:

Նշենք նաև, որ հայկական պատվիրակությունը բազմիցս առաջարկել էր, որ հայկական բանակը դրվի դաշնակից տերությունների հսկողության ներքո: Դաշնակից սպաների առկայությունը, ըստ հայկական կողմի, երաշխիք կհանդիսանար Փարիզի խաղաղության կոնֆերանսի որոշումների իրականացման համար: Բացի այդ, դաշնակիցների ներկայությունը կամրապնդեր նաև հասարակական կարծիքը և կցրեր մուսուլմանական ազգաբնակչության մեջ հայկական կողմի ագրեսիայի նկատմամբ ամեն մի վախ, ինչը կթուլացներ լարվածությունը տարածաշրջանում: Իսկ Թուրքահայաստանի տարածքների ազատագրումը արդյունավետ իրականացնելու համար հայկական կողմը համոզված էր, որ բանակի 5 գումարտակին պետք է կցվի ռազմական առաքելության մեկական սպա[74]:

Որ հայկական պահանջները բավական չափավոր էին և ցանկության դեպքում իրականանալի, վկայում է հենց Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Ռ. Վանզիտարի՝ է. Դրամմոնդին ուղղված նամակը. «Հայերը ավելի քիչ են պահանջում, քան մենք սպասում էինք: Նրանց պահանջները բավական չափավոր են»[75]: Սակայն, դժբախտաբար, նույնիսկ այս համեստ պահանջներին վիճակված չէր իրականանալու:

Նշենք, որ ապրիլի 1-ի նիստն անդրադարձավ նաև Թուրքիայում փոքրամասնությունների պաշտպանության խնդրին: Նիստի ժամանակ ներկայացվում է Թուրքիայի հետ պայմանագրի նախագիծը, որը պատրաստել էին դաշնակիցները: Պայմանագիրը բաղկացած էր 14 հոդվածից, որոնք նպատակ էին հետապնդում ապահովել Թուրքիայի փոքրամասնությունների կյանքը, իրավունքները, հավատքը, գույքը: Թուրքական կառավարությունը պարտավորվում էր աջակցել բռնի իսլամացված մարդկանց հայտնաբերելու և նրանց թուրքական կրոնական հաստատություններից ազատագրելու գործընթացին: Սա հաստ-

---

[73] Տե՛ս LNA Class. 11, dossier 3421, doc. 3694:

[74] Տե՛ս նույն տեղում:

[75] LNA Class. 11, dossier 3421, doc. 3567.

կապես կարևոր էր հայերի համար, քանի որ թուրքական հարեմներում, որբանոցներում և կրոնական այլ հաստատություններում հայերի թիվը, ըստ հայկական պատրիարքարանի, հասնում էր 73350-ի[76]: Թուրքական կառավարությունը պարտավորվում էր նաև իրենց տները վերադարձնել բռնի տեղահանվածներին, հետ տալ վերջիններիս ունեցվածքը: Թուրքական կառավարությունը համաձայնվելու էր Ազգերի լիգայի խորհրդի կողմից արբիտրաժային հանձնաժողովի նշանակմանը, որը բաղկացած էր լինելու մեկ թուրք և տվյալ համայնքը ներկայացնող մեկ անձից՝ Ազգերի լիգայի խորհրդի նշանակած նախագահի ղեկավարությամբ: Այս հանձնաժողովը քննելու էր փոքրամասնությունների իրավունքների խախտման դեպքերը: Ազգերի լիգայի խորհրդի ներկայացուցիչը գտնվելու էր Կոստանդնուպոլսում և հետևելու էր պայմանագրի իրականացմանը: Նա պետք է պարբերաբար զեկույց ներկայացներ Ազգերի լիգայի խորհուրդ: Թուրքիան համաձայնվում էր նաև, որ Ազգերի լիգայի յուրաքանչյուր անդամ կարող է խորհրդի ուշադրությունը հրավիրել իրավունքների խախտման դեպքերի վրա, իսկ խորհուրդը կարող էր ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնք արդյունավետ կհամարեր հարցի լուծման համար: Թուրքական կառավարությունը պարտավորվում էր անմիջապես և լիովին իրականացնել խորհրդի ցուցումները[77]:

Այս ամբողջ նախապատրաստական աշխատանքներից հետո՝ 1920թ. ապրիլի 9-ից 11-ը, Փարիզում տեղի է ունենում Ազգերի լիգայի խորհրդի չորրորդ նիստը՝ Ֆրանսիայի ներկայացուցիչ Լեոն Բուրժուայի նախագահությամբ: Խորհրդի անդամներն էին բարոն Գայֆեր դե Էստրոյը (Բելգիա), Գաստաո դա Կունան (Բրազիլիա), Ֆիշերը (Մեծ Բրիտանիա), Ք. Լեոնը (Իսպանիա), Վենիզելիոսը (Հունաստան), Բոնին Լոնգարը (Իտալիա), Մատսուին (Ճապոնիա)[78]: Նիստին ներկա էր նաև Գլխավոր քարտուղար Էրիկ Դրամմոնդը: Նիստի սկզբում Է. Դրամմոնդը

[76] Տե՛ս Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Լիբանան, 1968, էջ 352:

[77] Տե՛ս LNA Class. 11, dossier 3421, doc. 3694:

[78] Տե՛ս LNA, Proces-Verbal of the 4th Session of the Council of the LN held in Paris from 9-11 April 1920, pp. 19-21:

ներկայացնում է Հայաստանի վերաբերյալ իր պատրաստած հուշագիրը և հայկական կողմի տվյալները (որն արդեն ներկայացվեց)[79]:

Այնուհետև ելույթ է ունենում Հունաստանի պատվիրակ Վենիզելիոսը, որը պնդում է, որ Ազգերի լիգայի կանոնադրության 22-րդ հոդվածը համապատասխանում է հայ ժողովրդի կարգավիճակին և լիովին մտնում է Ազգերի լիգայի իրավասության տակ: Վենիզելոսը գտնում է, որ թեև Ազգերի լիգան ֆինանսական և ռազմական միջոցներ չունի, սակայն կարող է երաշխիքներ պահանջել Գերագույն խորհրդից: Քանի որ Հայաստանը առաջին հերթին կարիք ուներ ռազմական աջակցության, Վենիզելոսը դաշնակիցներին առաջարկում էր Հայաստանին տրամադրել մեկական բրիգադ, որոնք, համալրելով արդեն գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետության հինգ բրիգադը, ԱՄՆ-ի օգնությամբ ի վիճակի կլինեն ապահովելու նորաստեղծ պետության անվտանգությունը: Ընդգծելով Հունաստանի համակրանքը հայ ժողովրդի հանդեպ՝ հույն պատվիրակը իր երկրի անունից առաջարկում է ռազմական ուժ տրամադրել՝ դաշնակից տերություններին առաջարկված ռազմական ուժերին համապատասխան: Իսկ ֆինանսական հարցում Վենիզելիոսը առաջարկում էր Ազգերի լիգայի անդամներին տրամադրել համապատասխան երաշխիքներ՝ փոխառության համար, որն անհրաժեշտ էր Հայաստանին սկզբնական 9-10 տարվա համար: Եթե մանդատար պետություն չգտնվեր և հնարավոր չլիներ իրականացնելու վերոհիշյալ ռազմական և ֆինանսական աջակցությունը, հույն պատվիրակը առաջարկում էր Գերագույն խորհրդի կողմից բարձր հանձնակատար նշանակել Հայաստանում: Բավական հետաքրքիր էր Բրիտանիայի ներկայացուցիչ Ֆիշերի ելույթը, որը հայտարարում է, որ եթե ոչ մի պետություն չընդունի Հայաստանի մանդատը, ապա Ազգերի լիգայի խորհուրդն ինքը պետք է օգնություն տրամադրի Հայաստանին (խորհուրդների ձևով): Իտալիայի ներկայացուցիչը հատկապես կարևորում է ապագա հայկական պետության սահմանների ճշտումը և դեպի ծով ելք ունենալու խնդրի լուծումը: Ելույթ է ունենում նաև Բելգիայի

---

[79] Տե՛ս Барсегов Ю., նշվ. աշխ., էջ 453-455:

պատվիրակ Գայֆեր դե Էստրոյը. նրա կարծիքով նախևառաջ պետք է լուծվի հայկական տարածքներից թուրքական զորքերի դուրսբերման հարցը: Դրա ապահովումը, ըստ բելգիացու, պետք է դրվի դաշնակիցների հսկողության ներքո: Քննարկումներից հետո միաձայն ընդունվում են հետևյալ որոշումները.

*1) խորհուրդը պետք է հստակեցնի այն հարցերը, որոնք դրվելու են Ազգերի լիգայի Վեհաժողովի առջև.*

*2) պետք է ամեն ինչ անել խուսափելու համար Ազգերի լիգայի հեղինակությանը վնասող որևէ ձեռնարկումից: Հայկական մանդատի դեպքում Ազգերի լիգան չպետք է հանդես գա որպես պետություն. դա անհամատեղելի է աշխարհի պետությունների միջև Ազգերի լիգայի՝ հաշտարարի և արբիտրի դերին.*

*3) ցանկալի՞ է Հայաստանի համար հոգատար պետության ընտրությունը, որի թեկնածության առաջադրումը պետք է վերապահվի Գերագույն խորհրդին.*

*4) Գերագույն խորհուրդը պետք է նոր պետության գոյության և անվտանգության համար անհրաժեշտ երաշխիքներ ապահովի:*

Ինչ վերաբերում էր ռազմական խնդրին, ապա Ազգերի լիգայի խորհուրդը նախ անհրաժեշտ էր համարում ճշտել հայկական պետության սահմանները: Կարևորվում էին նաև թուրքական զորքերի դուրսբերման կազմակերպման և Հայաստանի անվտանգության ապահովման հարցերը, որի համար, մեջբերելով ամերիկյան բանակի գեներալ Հարբորդի տվյալները, Ազգերի լիգայի խորհուրդը անհրաժեշտ էր համարում 60.000 զինվոր: Սակայն արդյո՞ք Գերագույն խորհուրդը պատրաստ էր տրամադրել այդքան զինվոր:

Իսկ երկրի անվտանգության հետ կապված հաջորդ հարցը, որը դրվելու էր Գերագույն խորհրդի առջև, Հայաստանի համար դեպի ծով ելք ապահովելու խնդիրն էր: Դրա անհրաժեշտությունն անվիճելի էր ոչ միայն դրսի աշխարհի հետ Հայաստանի կապը ապահովելու, այլև հոգատար պետության և դաշնակից մյուս տերությունների միջև ազատ անցումն երաշխավորելու համար.

5) *եթե Գերագույն խորհուրդը Հայաստանի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ չտրամադրի, ապա պետք է վեր-*

*չինիս խորհուրդ տրվի հատուկ առաքելություն ուղարկել Հայաստան՝ փաստերը ճշտելու համար*[80]:

Հայկական խնդրի քննարկումների հիման Ազգերի լիգայի խորհուրդը որոշում է ձեռնամուխ լինել իր պարտականությունների իրականացմանը առաջադրված հարցերին՝ Գերագույն խորհրդից բավարարող պատասխաններ ստանալուց անմիջապես հետո:

Նիստի ժամանակ Թուրքիայի փոքրամասնությունների պաշտպանության մասին զեկույցով հանդես է գալիս Բելգիայի ներկայացուցիչը: Խորհուրդը միաձայն որոշում է Գերագույն խորհրդի առաջարկն ընդունել՝ դրանով իսկ իրականացնելով այն դերը, որի համար ստեղծվել էր. այսինքն՝ խոչընդոտել բոլոր մերժելի գործողությունների վերադարձը նախկին Օսմանյան կայսրության թատերաբեմ, կանխել հնարավոր պատերազմները, որոնք կարող էին ծագել ջարդերի հետևանքով: Իր իրավասությունները չգերազանցելու համար Ազգերի լիգայի խորհուրդն որևէ գործնական լուծում այս խնդրին չի առաջարկում, քանի դեռ Թուրքիայի հետ պայմանագրի կետերը վերջնականապես չէին ճշտվել: Ազգերի լիգայի խորհուրդն այս հարցում իր պատրաստակամությունն է հայտնում աշխատել Գերագույն խորհրդի հետ՝ փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ պայմանագրի կետերի իրականացումն ապահովելու համար[81]: Նախագահ Լեոն Բուրժուայի հրավերով Բրիտանիայի պատվիրակ պրն Ֆիշերը զեկույց է պատրաստում՝ Հայաստանի ապագա կարգավիճակի վերաբերյալ: Զեկույցը մասնավորապես ընդգծում էր, որ ազատության, անկախության և պաշտպանվածության հիմքի վրա հայկական անկախ պետության ստեղծումը ողջ քաղաքակիրթ աշխարհի նպատակը և ցանկությունն է, և որի իրականացման լավագույն ձևը կլիներ Հայաստանի մանդատի ընդունումը որևէ քաղաքակիրթ պետության կողմից՝ Ազգերի լիգայի հովանու ներքո: Այս լուծումը հնարավորություն կընձեռեր ճիշտ կազմակերպելու պետության կառավարումը: Որևէ պետու-

---

[80] Տե՛ս նույն տեղում, նաև ՀԱԱ, ֆ.430, ց. 1, գ. 1222:

[81] Տե՛ս LNA, Proces-Verbal of the 4th Session of the Council of the LN held in Paris from 9-11 April 1920, pp. 19-21:

թյան կողմից Հայաստանի մանդատի ստանձնումը, ըստ Ֆիշերի զեկույցի, մասամբ կախված էր հայկական տարածքները ազատագրելու համար անհրաժեշտ ռազմական օգնության չափից և մասամբ էլ ֆինանսական աջակցությունից: «Նորաթուխ պետությանը անհրաժեշտ է վարկ սկզբնական տարիների համար, իսկ այդ վարկը պահանջում է ֆինանսական երաշխիքներ: Ազգերի լիգայի խորհուրդը պատրաստվում է պահանջել Ազգերի լիգայի Վեհաժողովից կոլեկտիվ-երաշխիքներ սահմանել Հայաստանի համար: Իսկ քանի որ Վեհաժողովը մինչև աշուն չէր գումարվելու, Ազգերի լիգայի խորհուրդը պետք է շարունակեր համագործակցել Գերագույն խորհրդի հետ՝ ֆինանսական հարցի լուծման որևէ այլ տարբերակ գտնելու համար»[82]: Զեկույցը Ազգերի լիգայի խորհրդի պարտավորությունը չէր համարում Հայաստանում ռազմական իրավիճակի քննությունը և այն միջոցների պարզումը, որոնք անհրաժեշտ էին երկրում խաղաղության պահպանման համար[83]: Ֆիշերի զեկույցը միածայն ընդունվում է Խորհրդի ապրիլի 11-ի նիստում, որտեղ ընդունվում է նաև հատուկ մի հուշագիր Հայաստանի ապագա կարգավիճակի վերաբերյալ[84]: Հուշագիրը հավաստում էր, որ Ազգերի լիգայի խորհուրդը շահագրգռված է իր իրավասության սահմաններում համագործակցել Գերագույն խորհրդի հետ Հայաստանի ապագայի վերաբերյալ, սակայն միաժամանակ ինքն իրեն հաշիվ է տալիս, որ սահմանափակ է իր գործունեության մեջ: Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ 22-րդ հոդվածը չէր ենթադրում, որ Ազգերի լիգան ինքը պետք է ընդունի որևէ պետության մանդատը, այլ պարզապես պարտադրում էր Ազգերի լիգային վերահսկել Օսմանյան կայսրությանը պատկանած համայնքների նկատմամբ մանդատների իրագործումը տերությունների կողմից: Հուշագիրը Գերագույն խորհրդի առջև երեք հարց էր բարձրացնում. առաջինը ֆինանսական էր, որի հետ կապված Ազգերի լիգան ցանկանում էր իմանալ, թե ինչ միջոցներով էր Գերագույն

[82] Сабанин А. Россия и Лига Наций 1920-21-22 гг., М., 1924, с. 23-26.
[83] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1223:
[84] Տե՛ս Walters F. P. A History of the Leaque of Nations, London-New-York-Toronto 1952, pp. 109-110:

խորհուրդը մտադիր իրականացնել Հայաստանին տրամադրվելիք ֆինանսական օգնության խնդիրը: Երկրորդը տարածքային խնդիրն էր: Հուշագրում ասված էր, որ անկախ հայկական պետության տարածքի մեծ մասը օկուպացված է թուրքական զորքերի կողմից, և Ազգերի լիգան, չունենալով ռազմական ուժ և հնարավորություն, որ ստիպի Թուրքիային էվակուացնել հայկական տարածքները, ցանկանում էր իմանալ Գերագույն խորհրդի պլանները տարածքները ազատագրելու վերաբերյալ: Բացի այդ, անհրաժեշտ էր համարվում էվակուացիայից հետո ևս զինված ուժեր պահել հայկական տարածքում, մինչև Հայաստանն ի վիճակի կլիներ իր պաշտպանությունը իրականացնել սեփական ուժերով: Եվ երրորդը, բարձրացված էր դեպի ծով ելք ունենալու պահանջը. դա անհրաժեշտ էր ոչ միայն Հայաստանին, այլև մանդատար պետության և Հայաստանի միջև կապը ապահովելու համար: Արդյո՞ք Գերագույն խորհուրդը պատրաստ էր պաշտպանել ոչ միայն Բաթումի նավահանգիստը, այլև Բաթումի ու Հայաստանի միջև հաղորդակցության ուղիները: *«Եթե Գերագույն խորհուրդը ապահովության համապատասխան երաշխիքներ տա վերոհիշյալ կետերի համար, ապա Ազգերի լիգան կսկսի ոչ պաշտոնական հանդիպումներ կազմակերպել իր անդամների հետ՝ մանդատար պետություն գտնելու համար: Եթե նման պետություն գտնվի, ապա Ազգերի լիգան անմիջական շփումներ կսկսի Գերագույն խորհրդի հետ այնպիսի կարևորագույն հարցերի մշակման համար, ինչպիսիք են Հայաստանի սահմանները և հարևան երկրների կարգավիճակը: Հայկական հարցի լուծման լավագույն տարբերակ Ազգերի լիգայի խորհուրդը համարում է որևէ պետության կողմից Հայաստանի մանդատի ստանձնումը: Անհաջողության դեպքում Ազգերի լիգայի խորհուրդը պետք է շարունակի համագործակցել Գերագույն խորհրդի հետ՝ հայկական խնդրին այլ լուծում գտնելու համար»*[85]:

Սրանով Ազգերի լիգայի խորհրդի 4-րդ նստաշրջանը ավարտում է հայկական մանդատի վերաբերյալ քննարկումները: Վերոհիշյալ հուշագիրը որպես պատասխան ուղարկվում է Գերագույն խորհուրդ: Քննադատներից ոմանք մեղադրում են

[85] LNA Class. 11, dossier 3421, doc. 3810.

Ազգերի լիգային մարդասիրությունից շեղվելու մեջ, սակայն, զրկված լինելով իրական ռազմական ուժից և համապատասխան ֆինանսական միջոցներից, Ազգերի լիգայի խորհուրդը կարող էր միայն մերժել Գերագույն խորհրդի առաջարկը, որն ինքնին հակասում էր Ազգերի լիգայի կանոնադրության 22-րդ հոդվածին: Գերագույն խորհուրդը, Ազգերի լիգային ներկայացնելով Կանոնադրության դրույթներին հակասող առաջարկ, հաշվի չէր առել դրանից բխող իրավական անհամապատասխանությունը, որը և հանգեցրեց այդ առաջարկի պատճառաբանված մերժմանը:

Ազգերի լիգայի պատասխանը բավական մեծ աղմուկ է բարձրացնում մամուլում: "Exchange Telegraph"-ը ապրիլի 13-ի իր համարում գրում է, որ *Ազգերի լիգայի խորհուրդը մերժել է հայկական մանդատն առանց որևէ մեկնաբանության*, իսկ "Westminster Gazett"-ը *անդրադառնում է Հայաստանի մանդատը որևէ երկրորդական պետությանը հանձնելու Ազգերի լիգայի մտադրությանը*[86]:

Նշենք նաև, որ զգալի ծավալով գրագրություն է տեղի ունենում Գերագույն խորհրդի և Ազգերի լիգայի խորհրդի միջև՝ հուշագրի հրատարակության հետ կապված: Ազգերի լիգան ցանկանում էր ապրիլի 11-ի հուշագիրը հրապարակել ամբողջությամբ՝ հետագա թյուրիմացություններից խուսափելու նպատակով, մինչդեռ Գերագույն խորհուրդը նպատակ ուներ հետաձգել այն՝ մինչև հայկական մանդատի խնդրին որևէ լուծում գտնելը[87]: Հայկական խնդիրը, իրապես, մեծ հետաքրքրություն էր առաջացնում ողջ աշխարհում, որն ուշիուշով հետևում էր Հայկական հարցի զարգացմանը, ուստի պատահական չէր, որ և՛ Ազգերի լիգան, և՛ Գերագույն խորհուրդը խուսափում էին միանգամից մերժել Հայաստանի հետ կապված խնդիրները: Ապրիլի 26-ին Սան Ռեմոյում Գերագույն խորհուրդը քննարկում է Ազգերի լիգայի խորհրդից ստացված հուշագիրը և պատրաստակամություն է հայտնում անելու հնարավորը՝ պատասխանելու համար Ազգերի լիգայի խորհրդի բարձրացրած հարցերին: Գերագույն խորհուրդը շարունակում էր որպես Հայկական հարցի լուծման

---

[86] Տե՛ս Andre Mandelstam, նշվ. աշխ., pp. 75-76:

[87] Տե՛ս LNA Class. 11, dossier 3421, doc. 3963, 3891, 3965, 4125:

լավագույն տարբերակ համարել որևէ պետության կողմից Հայաստանի մանդատի ընդունումը: Ռազմական աջակցության հարցի վերաբերյալ Գերագույն խորհուրդը որոշում է սպասել ռազմական խորհրդատուների վճռին, թե ինչ միջոցներով կարելի է ապահովել Հայաստանի սահմանները: Մեծամասնությունն այն կարծիքին էր, որ տերությունները ի վիճակի չեն լինի երաշխավորելու Հայաստանի սահմանները, սակայն կարելի էր սահմանների պաշտպանության հարցը մտցնել Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրի մեջ[88]: Նիստի ժամանակ Ֆրանսիայի, Իտալիայի և Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչները հայտարարում են, որ իրենց երկրները ի վիճակի չեն ռազմական աջակցություն տրամադրելու Հայաստանին, ինչպես նաև չեն կարող հատկացնել վարկեր կամ երաշխավորել փոխառություններ: Երրորդ հարցը, որ վերաբերում էր Հայաստանի ելքին դեպի ծով, ներառում էր Բաթումի և Լազիստանի հիմնախնդիրը: Բաթումի հարցն արդեն դրված էր Գերագույն խորհրդի օրակարգում և, անկասկած, առանձին քննարկվելու էր: Ամեն դեպքում, համաձայնություն կար, որ Բաթումը դառնալու էր ազատ նավահանգիստ, իսկ Լազիստանի ծովեզրերը, որը երկու փոքր նավահանգիստ ուներ, տրամադրվելու էր Հայաստանին: Սրանից արևմուտք ընկած էր Տրապիզոնը, որը նույնպես պետք է վերածվեր ազատ նավահանգստի, և Հայաստանի մուտքն այնտեղ պետք է դյուրացվեր: Նիստի ժամանակ բավական բուռն ելույթ է ունենում Լլոյդ Ջորջը, որը մեղադրում է Ազգերի լիգային՝ իր դժվարությունները արդեն իսկ «սեփական խնդիրներով ծանրաբեռնված» Գերագույն խորհրդին փոխանցելու մեջ: «Ազգերի լիգայի դիմումը Ամերիկային կարող է նպաստավոր լինել և կարող է կասեցնել նախագահ Վիլսոնի՝ Գերագույն խորհրդին հետագա նոտաներ ուղարկելը: Ազգերի լիգան լիովին ի վիճակի է բանակցությունների միջոցով փոխառություն ձեռք բերելու և մանդատար պետություն գտնելու»[89]:

---

[88] Տե՛ս Махмурян Г. Նշվ. աշխ., էջ 45-46:

[89] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 618-619:

Բուռն քննարկումների շնորհիվ Խորհրդի անդամները համաձայնության են գալիս.

*ա) ռազմական խորհրդականներ ուղարկել Հայաստանի զինված ուժերի հանդերձավորման հարցը և Թուրքիայի հայկական տարածքների ազատագրման հարցը կազմակերպելու համար.*

*բ) լորդ Քերզոնը նախագծելու էր Ազգերի լիգայի խորհրդին ուղարկվելիք պատասխանը՝ հիմնված Լլոյդ Ջորջի առաջարկությունների վրա[90]։*

Իսկ 1920թ. ապրիլի 26-ին Գերագույն խորհուրդը իր և Ազգերի լիգայի անունից կոչ-զեկույց (ճեպագիր) է հղում ԱՄՆ նախագահ Վիլսոնին[91], որտեղ մասնավորապես նշված էր, որ իր ռեսուրսներով հայկական մանդատը ընդունելու մարդասիրական քայլը կարող է ձեռնարկել միայն ԱՄՆ-ն՝ միաժամանակ հիշեցնելով հայերի զոհողությունների և պատերազմում նրանց մասնակցության վերաբերյալ Վիլսոնի արտասանած ամենաեռանդուն ելույթները: Գերագույն խորհուրդը կոչ էր անում ամերիկյան կառավարությանը ընդունել Հայաստանի մանդատը. դա բացատրում էր ոչ թե իր կողմից պատասխանատվությունից խուսափելու, այլ հարցը լուծելու պարտավորության հանգամանքով: Քանի որ սահմանների ճշգրտման հարցը դրված էր ԱՄՆ նախագահի վրա, իսկ Մեծ Հայաստանի գաղափարը (Կիլիկիայով և դեպի Միջերկրական ծով ելքով), որպես անիրագործելի, արդեն մերժվել էր, ապա խոսքը Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթների շրջանակում սահմանների որոշման և դրանք Հայաստանի Հանրապետությանը խաղաղ միավորելու մասին էր[92]: Այս տարածքների միավորումը և դեպի ծով ելքի ապահովումը հիմք կհանդիսանային նոր հայկական պետության գոյության համար: Գերագույն խորհուրդը որոշում է նաև, որ Թուրքիայի հետ պայմանագրում Հայաստանի վերաբերյալ հոդվածը

---

[90] Նույն տեղում:

[91] Տե՛ս **Andranik Masis**, The question of the American Mandate over Armenia, Nicosia 1980, էջ 58-60:

[92] Տե՛ս **Howard M. Sachar**, The emergence of the Middle East (1914-1924), New York 1969 էջ 357-361:

լինելու էր հետևյալ բովանդակությամբ. «Թուրքիան, Հայաստանը և մյուս բարձրաստիճան կողմերը համաձայն են ԱՄՆ նախագահ Վիլսոնի միջնորդությանը՝ կապված հայ-թուրքական սահմանի հետ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում, և ընդունել վերջինիս որոշումը, ինչպես նաև դեպի ծով ելք ունենալու վերաբերյալ նախագահի վճիռը: Մինչև միջնորդությունը հայ-թուրքական սահմանը պետք է մնա ներկայիս ձևով: Հայաստանի սահմանները Վրաստանի և Ադրբեջանի հետ պետք է հաստատի Գերագույն խորհուրդը՝ հիմնված փոխադարձ համաձայնագրերի վրա»[93]:

Բացի մանդատի և սահմանների հարցից, Գերագույն խորհուրդը ԱՄՆ-ի ուշադրությունն էր հրավիրում նաև ռազմական և ֆինանսական օգնության տրամադրման անհրաժեշտության վրա: Ուղերձում մատնանշված էր նաև, որ միայն ֆինանսական օգնությամբ հնարավոր էր լուծել վերոհիշյալ երկու խնդիրները: Ինչ վերաբերում էր դաշնակիցների խոստացած զենք ու զինամթերքին, ապա ուղերձում նշված էր, որ դրանք արդեն տրամադրված են, իսկ զորք ուղարկելու մասին խոսք անգամ լինել չէր կարող: Սակայն Գերագույն խորհուրդը հնարավոր էր համարում ԱՄՆ-ում և այլուր կամավոր ջոկատների ստեղծումը: Ֆինանսական հարցի կապակցությամբ ուղերձում նշված էր, որ Հայաստանին վարկի տրամադրման երաշխավորության նախագծին նույնիսկ եթե Ազգերի լիգայի Վեհաժողովը հավանության արժանացնի, այնուամենայնիվ, որոշակի ժամանակ կպահանջվի մինչև գործի կազմակերպումը: *«Մի քանի միլիոն ֆունտ ստեռլինգը կարող է ոտքի կանգնեցնել Հայաստանը: Մենք հավատում ենք, որ ամերիկյան տարբեր կազմակերպություններ և միություններ հաճույքով կներդնեն այդ գումարը»*[94]: «Մենք ամերիկացիներին չենք ստիպում, սակայն որոշման ընդունման հետաձգումը չի համապատասխանում հայ ժողովրդի ցանկություններին, իսկ արևելքում խաղաղության հաստատումը հետաձգվում է»[95]: Ահա

---

[93] LNA. Class. 11, sec. 3421, doc. 4396:

[94] LNA.. Dispatch to the US President Wilson, LNA Class. 11, dosier 3421, doc. 4396.

[95] Նույն տեղում:

այսպիսի տողերով էր ավարտվում ԱՄՆ նախագահին հղված ուղերձը: Գերագույն խորհուրդը թեև մեղադրում էր Ազգերի լիգային իր պարտավորությունները դաշնակիցների վրա փոխադրելու համար, ինքը անում էր նույն քայլը՝ պարտավորությունները փոխանցելով ԱՄՆ-ին:

Սան Ռեմոյի կոնֆերանսի ավարտին Գերագույն խորհուրդն իր պատասխանն է ուղարկում Ազգերի լիգայի խորհրդի ապրիլի 11-ի հուշագրի վերաբերյալ: Այն սկսվում էր մի հավաստիացմամբ, որ Գերագույն խորհուրդը մարտի 12-ի իր առաջարկով նպատակ չէր հետապնդել Ազգերի լիգային առաջարկել անձամբ ստանձնելու Հայաստանի մանդատը, այլ պարզապես ցանկանում էր իմանալ, թե որքանով է Ազգերի լիգան պատրաստ աջակցելու Հայաստանին: Սա բավական զավեշտալի մի հավաստիացում էր, քանի որ Գերագույն խորհրդի դիմումի մեջ տառացիորեն ամրագրված էր Ազգերի լիգայի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու պահանջը: Այնուհետև հակասելով ինքն իրեն՝ Գերագույն խորհուրդն իր գործողությունը բացատրում էր հետևյալ կերպ. «Գերագույն խորհուրդը լավ իրականացրած չէր լինի իր պարտավորությունը Հայաստանի հանդեպ, եթե չկատարեր մանդատի ուղղությամբ այդ վերջին ճիգը»[96]: Եվ եթե Ազգերի լիգային դիմելը դաշնակիցները համարում էին վերջին ճիգ, այսինքն՝ իրենք փորձել ու սպառել էին ունեցած ամբողջ հնարավորությունը և չէին գտել որևէ պետություն, որը կստանձներ Հայաստանի մանդատը, ապա Ազգերի լիգային նրանց դիմումը նույնպես դատապարտված էր տապալման, քանի որ Ազգերի լիգայում գլխավոր դերակատարները հենց նույն դաշնակից տերություններն էին: Համայնքների պալատում պրն Բալֆուրը, անդրադառնալով Ազգերի լիգային, իրավացիորեն նշել էր. *«Ազգերի լիգան իրենից ներկայացնում է հենց Գերագույն խորհրդի գլխավոր տերությունների մի մարմին, և հետևապես, հայկական մանդատը Ազգերի լիգային հանձնելու Գերագույն խորհրդի առաջարկը կարելի է ընդունել որպես հայկական հարցը նույն ատյանի ենթահանձնաժողովին հանձնելու փորձ»*[97]:

---

[96] LNA, Class. 11, dosier 3421, doc. 5283:

[97] ՀԱԱ, Ֆ. 412, ց. 1, գ. 2099:

Իր պատասխանում Գերագույն խորհուրդը նախ առաջարկում էր սպասել ԱՄՆ նախագահին ուղղված ուղերձի պատասխանին, թե արդյո՞ք ԱՄՆ-ն կընդունի Հայաստանի մանդատը, թե՞ ոչ, և ի՞նչ չափով է պատրաստ աջակցելու (ռազմական և ֆինանսական առումով): Եվ ելնելով այս նկատառումներից՝ Գերագույն խորհուրդը նշում է, որ ապրիլի 11-ի հուշագրում բարձրացված երեք կետերի պատասխանները կտրվեն մի փոքր ավելի ուշ: Իսկ ԱՄՆ նախագահ Վիլսոնի պատասխանը ստանալուց անմիջապես հետո Գերագույն խորհուրդը պարտավորվում էր կապվել Ազգերի լիգայի խորհրդի հետ՝ հետագա քայլերը ճշտելու համար[98]:

Վերլուծելով Սան Ռեմոյում մանդատների բաշխման հարցը՝ Արնոլդ Թոյնբին իր «Սան Ռեմոն և Թուրքիան» հոդվածում նշում է. *«Մանդատային համակարգը այն ձևն էր, որով Գերագույն խորհուրդը փորձում էր լուծել թուրքական խնդիրը: Սակայն այն, ինչ տեղի ունեցավ Սան Ռեմոյում, խարխլեց այս նոր ինստիտուտի հիմքերը: Կիլիկիայի և Թուրքահայաստանի վեց վիլայեթների հայերը խնդրում էին, սակայն չգտան մանդատար պետություն: Սիրիայի և Միջագետքի արաբները, հակառակ իրենց ցանկության, դրվեցին մանդատի տակ (Միջագետքը ներառում էր նավթով հարուստ Մոսուլի շրջանը): Եվ երբ հայերի համար հայտարարեցին, որ բավարար ուժ չունեն Հայաստանի պաշտպանության համար, Միջագետքը, որն ամենաքիչն էր դժգոհում թուրքական ճնշումներից, դրվեց մանդատի տակ: Մինչդեռ Հայաստանում թուրքական վայրագությունները հասել էին իրենց գագաթնակետին»*[99]:

Ազգերի լիգայի խորհրդի հերթական նիստը տեղի է ունենում 1920 թ. մայիսի 15-ին Հռոմում, որտեղ քննարկվում է նաև ապրիլի 11-ի հուշագրի վերաբերյալ Գերագույն խորհրդի պատասխանը: Ազգերի լիգայի խորհուրդն իր գոհունակությունն է հայտնում դաշնակիցների գործողությունների, հատկապես ԱՄՆ նախագահին ուղղված կոչի առթիվ, քանի որ Ազգերի լիգան միշտ էլ այն կարծիքին էր, որ ԱՄՆ-ի աջակցությունը և պաշտպա-

---

[98] Տե՛ս LNA, Class. 11, dosier 3421, doc. 5283 :

[99] Arnold Toynbee, "San Remo and Turkey", ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 2013.

նությունը ոչ միայն մանդատի, այլև գործնական որևէ այլ միջոցով հիմնալի լուծում կարող էին լինել Հայկական հարցի համար: Ազգերի լիգայի խորհուրդն ողջունելի էր համարում նաև որևէ երրորդ պետություն գտնելու Գերագույն խորհրդի ջանքերը: Նիստի արդյունքները, որպես պատասխան, մայիսի 29-ին ուղարկվում են Գերագույն խորհուրդ: Ինչպես միշտ, այս անգամ ևս Ազգերի լիգայի պատասխանը զուտ խորհրդատվական և մարդասիրական բնույթ էր կրում: «Ազգերի լիգան կշարունակի աջակցել Գերագույն խորհրդին Հայաստանի անվտանգության ապահովման հարցում՝ մարդասիրությունից ելնելով և ի նպաստ դժբախտ հայ ժողովրդի»[100]: Ինչպես շարունակ համոզվում ենք, Ազգերի լիգան սրտառուչ խոսքերի մեջ բոլորովին չէր զլանում:

Իսկ ինչո՞ւ Ազգերի լիգան մերժեց Հայաստանի մանդատը.

1. Նախ, իրավական առումով Ազգերի լիգան չէր կարող ստանձնել Հայաստանի մանդատը, քանի որ վերջինիս Կանոնադրությունը նման դեպք չէր նախատեսում: Ավելին, Ազգերի լիգայի կանոնադրության 22-րդ հոդվածով Ազգերի լիգան պետք է հանդես գար որպես վերահսկող մարմին, այլ ոչ թե անձամբ ստանձներ որևէ երկրի մանդատը:

2. Դաշնակից տերություններն արդեն իսկ հրաժարվել էին ընդունել Հայաստանի մանդատը, իսկ Ազգերի լիգան, բաղկացած լինելով գլխավորապես նույն ազգերի ներկայացուցիչներից, չէր կարող հակադիր որոշում ընդունել: Իսկ Գերագույն խորհրդում հստակորեն գիտակցում էին, որ Ազգերի լիգան անկարող է ստանձնել Հայաստանի մանդատը: Այսպես է արտահայտվում լորդ Քերզոնը Լոնդոնի կոնֆերանսի ժամանակ (1920 թ. մարտի 11-ին) Կիլիկիայի մանդատն Ազգերի լիգային փոխանցելու վերաբերյալ. «Կիլիկիան Ազգերի լիգայի մանդատի տակ դնելը գործնական չէ, քանի որ Ազգերի լիգան դեռ նոր է կազմավորվել և դեռևս իր գոյությունն ապահովում է զուտ հեղինակության և բարձր գաղափարների վրա»[101]: Եթե Ազգերի լիգան ի վիճակի չէր ստանձնելու Կիլիկիայի մանդատը, ապա ի՞նչ մի-

---

[100] Барсегов Ю., նշվ. աշխ., էջ 506:
[101] Hovannisian R. նշվ. աշխ., էջ 50:

ջոցներով և ինչպե՞ս պետք է իրականացներ Յայաստանի մանդատը:

Գերագույն խորհրդի և Ազգերի լիգայի խորհրդի վերաբերյալ հայկական ազգային պատվիրակության անդամ Ա. Սաֆրաստյանը գրում է. «Իրաւապես ու փաստօրեն մեր խնդրի լուծումը կը գտնուի Ազգերու Լիկի Խորհրդի ձեռընհասութեան տակ, որ իր կարգին պարզ գործադիրն է Դաշնակից պետութիւններու Գերագոյն Խորհրդին: Շատ բարդ և անորոշ է այդ երկու խորհուրդներու փոխադարձ իրավունքներուն և ձեռնահասութիւններուն շրջագիծը: Կը թուի թէ վերջինը յաճախ առաջինի գլխին կը նետէ այն ամէն խնդիրները, որոնց լուծումը առարկայ է միջազգային հակամարտութիւններու»[102]:

3. Յայաստանի մանդատի հարցը բավական բարդ էր և խճճված[103]: Տարածքները, որոնք պետք է մտնեին մանդատի տակ, նախ պետք է ազատագրվեին: Բացի այդ, տեղի հայ բնակչության թիվը կոտորածների հետևանքով գրեթե հավասարվել էր զրոյի: Այս հանգամանքը մեծապես թուլացնում էր տերությունների մեջ պատասխանատվության զգացումը, ինչպես նաև բարդացնում ազատագրման խնդիրը: Անհրաժեշտ էին խոշոր ռազմական ուժեր՝ տարածքները ազատագրելու և միավորելու համար, ինչպես նաև հսկայական ֆինանսական միջոցներ՝ փոքրինչ բարելավելու միասնական հայկական պետության քայքայված տնտեսությունը: Իսկ Ազգերի լիգան չուներ ո՛չ ռազմական ուժ, ո՛չ էլ անհրաժեշտ ֆինանսական միջոցներ Յայաստանին իրական օգնություն ցուցաբերելու համար:

## 1.2. Հայաստանի մանդատի հարցը մասնավոր ընկերության միջոցով լուծելու Ազգերի լիգայի փորձերը

Թեև Ազգերի լիգայի խորհուրդն իր ապրիլյան նստաշրջանում քննարկեց հայկական մանդատի հարցը, սակայն որևէ լուծում չգտնվեց: Այնուամենայնիվ, Ազգերի լիգան, խիստ մտահոգված իր հեղինակությամբ, դեռ փորձում էր որոշակի քայլեր

---

[102] Ժողովուրդի Ձայն, յունուար 9/22, 1921:

[103] Տե՛ս Արձագանք Փարիզի, Փարիզ, 1921, N21-26:

ծեռնարկել հայկական մանդատի հարցը որևէ կերպ լուծելու ուղղությամբ: Ազգերի լիգայի այս «լավատեսությունը» բխում էր այն հանգամանքից, որ Հայաստանի հետ կապված որոշ կարևոր սկզբունքների շուրջ կար միասնական կարծիք, ինչը կարող էր հենակետ լինել խնդրի լուծման համար:

Որո՞նք էին այդ սկզբունքները. նախևառաջ, համաձայնություն կար հայկական պետության փաստացի գոյության հարցում: Ինչպես Ազգերի լիգան, այնպես էլ Գերագույն խորհուրդն ընդունում էին այդ փաստը (1920 թ. հունվարի 19-ին Գլխավոր դաշնակից տերությունները դե ֆակտո ճանաչել էին Հայաստանի Հանրապետության գոյությունը[104]): Հայտնի իրողություն էր նաև, որ հայկական պետությունը կարիք ուներ օժանդակության. այդ մասին վկայում էին ինչպես Ազգերի լիգայի և Գերագույն խորհրդի միջև Հայաստանի վերաբերյալ թղթակցությունը (1920 թ. մարտ-ապրիլ ամիսներին), այնպես էլ հայկական կողմի ներկայացրած տվյալները: Իսկ թե ինչո՞ւմն էր այդ օժանդակությունը, նշված էր հայկական պատվիրակության ներկայացրած հուշագրում: Ըստ այդմ՝ Հայաստանը կարիք ուներ աջակցության վարչական, ռազմական և ամենահրատապը՝ ֆինանսական բնագավառներում: Ինչ վերաբերում էր վարչական օգնությանը, ապա Հայաստանին անհրաժեշտ էին հմուտ կազմակերպիչներ, որոնք ունակ կլինեին աշխատեցնելու վարչական համակարգը, տեխնիկական խորհրդականներ և հմուտ իրավախորհրդատուներ, որոնք կմշակեին օրենքների նախագծեր, ինչպես նաև այնպիսի մարդիկ, որոնց ունեցած փորձը թույլ կտար հայ նախարարներին իրականացնելու քայլեր՝ երկրի զարգացմանը նպաստելու ուղղությամբ: Ռազմական հարցում նույնպես անհրաժեշտ էին լոկ որոշակի թվով հրահանգիչներ և բարձրակարգ սպաներ, որոնք պետք է գործեին որպես հայկական կառավարության ռազմական խորհրդականներ: Ֆինանսական հարցը թեև ամենախրթինն էր, սակայն որոշ առաջարկներ ինչպես հայկական, այնպես էլ Ազգերի լիգայի կողմից, այնուամենայնիվ, կային:

---

[104] Տե՛ս Իզմիրլեան Կ., Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցեալին և ներկայիս (քննական տեսութիւն), Պէյրութ, 1964, էջ 202:

Գերագույն խորհուրդն Ազգերի լիգային էր վստահել Հայաստանին անհրաժեշտ օգնություն տրամադրելու պարտավորությունը: Մերժելով հանդերձ մանդատի ընդունումը՝ Ազգերի լիգայի խորհուրդը լիովին չէր հրաժարվել Հայաստանին օգնելու գաղափարից: Ավելին, Ազգերի լիգայի խորհուրդն այն կարծիքին էր, որ մանդատային համակարգի կիրառման դեպքում Ազգերի լիգան կարող էր գործել որպես վերահսկող մարմին: Միաժամանակ, ակնհայտ էր նաև այն փաստը, որ Ազգերի լիգան կարող էր գործել միայն որպես վերահսկող մարմին (դա հստակորեն ամրագրված էր Կանոնադրության 22-րդ հոդվածով), և չէր կարող ուղղակիորեն ընդունել Հայաստանի մանդատը, քանի որ, ինչպես քննարկվեց նախորդ գլխում, Ազգերի լիգան պետություն չէր, չուներ ռազմական ուժ և ֆինանսական ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ էին Հայաստանին արդյունավետորեն աջակցելու համար:

Ինչպես Գերագույն խորհուրդը, այնպես էլ Ազգերի լիգան ցանկանում էին, որ Հայաստանի մանդատն ընդուներ Ազգերի լիգայի անդամ կամ ոչ անդամ որևէ պետություն. այս դեպքում հարցը կարելի էր համարել լուծված: Սակայն դժվարությունն այն էր, որ ստեղծված պայմաններում անհավանական էր թվում նման պետություն գտնելը:

Ելնելով վերոնշյալ փաստարկներից և մոտեցումներից՝ Ազգերի լիգայում սկսվում է շրջանառվել Հայաստանին աջակցելու պարտավորությունը մեկ այլ՝ ոչ պետական կազմակերպությանը վստահելու գաղափարը[105]: Եվ այսպես, թեև Ազգերի լիգայի խորհուրդը մերժում է Գերագույն խորհրդի մարտի 12-ի առաջարկը, սակայն հայկական մանդատի հարցի քննարկումները Ազգերի լիգայում շարունակվում են:

Մասնավոր ընկերության միջոցով հայկական խնդիրը լուծելու հարցում հատկապես մեծ ակտիվություն է ցուցաբերում Ազգերի լիգայի քարտուղարության իրավական բաժինը: Վերջինիս նախագահ Վան Համմելը 1920 թ. ապրիլի վերջին լիգայի Գլխավոր քարտուղար է. Դրամմոնդին ուղղված իր նամակներից մեկում գրում է. *«Հայաստանի հետ կապված՝ ես դեռ մտածում եմ*

---

[105] Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 3801, 5283:

*գտնել որևէ մասնավոր կամ կիսամասնավոր ընկերություն՝ իրավիճակից դուրս գալու համար: Ես բաժնի անդամներին խնդրել եմ ուսումնասիրել բոլոր հնարավոր մանրամասները և հույս ունեմ ավելի ուշ Ձեզ ներկայացնելու համգամանալից և կառուցողական մի ծրագիր»*[106]:

Ուսումնասիրելով հարցը՝ Իրավական բաժինը եկել էր այն համոզման, որ հայկական մանդատի հարցի լուծումը հնարավոր էր կազմակերպել հետևյալ կերպ.

*ա) նախ, անհրաժեշտ էր ստեղծել հատուկ մի մարմին՝ միջազգային որևէ միավորում (ասոցիացիա, ընկերություն, կազմակերպություն).*

*բ) այդ կազմակերպությունը Ազգերի լիգայից պետք է ստանար Հայաստանի մանդատը.*

գ) կազմակերպության խնդիրն էր լինելու աջակցել հայկական կառավարությանը՝ հայկական պետության կառավարման և այլ հարցերում.

*դ) ոչ պետական այս կազմակերպությունը պետք է Հայաստանի կառավարությանը տրամադրեր խորհրդատու-կառավարիչներ: Կազմակերպությունը պետք է տնօրիներ անհրաժեշտ գումարներ, նաև ի վիճակի լիներ կազմակերպելու ռազմական և ոստիկանական աջակցություն.*

*ե) կազմակերպությունն առևտրային չէր լինելու (այսինքն՝ շահույթ չհետապնդող), այլ ունենալու էր բարոյական աջակցության նպատակ՝ օգնելու հայ ժողովրդին իրենց երկրում ավելի լավ, բարեկեցիկ կյանք ստեղծելու գործում.*

*զ) կազմակերպությունը պետք է համաձայնություն ունենար Հայկական պետության հետ՝ հաստատված որևէ համաձայնագրով կամ պայմանագրով*[107]:

Ակնհայտ էր, որ կազմակերպությունը, որն աշխատանքներ էր իրականացնելու Հայաստանում, պետք է համապատասխան միջոցներ տրամադրեր քաղաքացիական վարչակազմի ձևավորման, ռազմական ուժի ստեղծման և ֆինանսական կայունության ապահովման համար: Որևէ կասկած չկար, որ ոչ պետական

---

[106] Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 4396.

[107] Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 4539:

կազմակերպությունը կարող էր տրամադրել անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ՝ վարչական մարմինների ձևավորման համար, ինչպես նաև միջոցներ հայթայթել ֆինանսական վիճակը կայունացնելու նպատակով: Սակայն դժվար էր պատկերացնել, թե ինչ ձևով նման ոչ պետական կազմակերպությունը պետք է լուծեր հայկական պետությանը ռազմական օգնություն տրամադրելու հարցը, որի կարիքը Հայաստանն ակնհայտորեն զգում էր: Գաղափարի քննադատներից շատերը գտնում էին, որ սա լուրջ և անհաղթահարելի խոչընդոտ էր մանդատորի ընկերության միջոցով հայկական մանդատի հարցի լուծման ճանապարհին: Սակայն Իրավական բաժինը նույնիսկ այս հարցում բավական լավատես էր. ըստ նրա՝ միջազգային փորձը (հատկապես պարսկականը[108]) ցույց էր տվել, որ կարելի է կազմակերպել կամավորական ռազմական ենթակառուցվածքներ: Նշենք, որ հայկական կողմը տեղյակ էր այս գաղափարին և նույնիսկ ցանկություն էր հայտնել, որ Հայաստանին տրամադրվելիք բոլոր ռազմական ենթակառուցվածքները կազմված լինեին միևնույն ազգի ներկայացուցիչներից[109]: Սա էլ, իր հերթին, ըստ Իրավական բաժնի, բավական հեշտացնում էր իրավիճակը, քանի որ հարցը հնարավոր էր դառնում լուծել Ազգերի լիգայի և Հայաստանի ընտրած որևէ պետության հետ համաձայնագիր կնքելու միջոցով: Ընդ որում, գերադասելի էր համարվում որևէ չեզոք պետության ընտրությունը: Այս ծրագրի իրականացման համար Իրավական բաժնի անդամները, նախ, պետք է պարզեին նման մասնավոր կազմակերպության ստեղծման իրավական հիմքերը, միջազգային իրավունքում գտնեին որևէ նախադեպ (պրեցեդենտ): Իսկ նման նախադեպեր կային:

Նշենք, որ մասնավոր կազմակերպության միջոցով հայկական մանդատի հարցը լուծելու գաղափարը արծարծվել էր դեռ 1920 թ. մարտին Լոնդոնում Ազգերի լիգայի հատուկ հանձնաժողովի և հայկական պատվիրակության միջև հանդիպման ժամանակ: Այստեղ Ազգերի լիգայի հանձնաժողովն առաջին անգամ առաջ էր քաշել ամերիկյան ոչ պետական գործակալությունների

---

[108] Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 4539:

[109] Նույն տեղում:

միջոցով Հայաստանի համար ռազմական և քաղաքացիական խորհրդատուներ ձեռք բերելու գաղափարը, որը կարող էր մեծապես թեթևացնել Հայաստանի վարչական և ֆինանսական դժվարությունները: Հայկական կողմը բավական գոհ էր մնացել մանդատի հարցի լուծման այս տարբերակից, քանի որ ծրագիրը անհամեմատ իրատեսական էր: Նուբար Փաշան նույնիսկ առաջարկել էր ստեղծել ամերիկյան քաղաքացիական և ռազմական խորհրդականներից կազմված հատուկ մի մարմին, նույնիսկ եթե վերջինս չներկայացներ ԱՄՆ կառավարությունը, այլ լիներ լոկ մասնավոր անհատներից կազմված մի մարմին, և այս լուծումը ավելի գերադասելի էր համարել որևէ փոքր պետության կողմից Հայաստանի մանդատն ընդունելուց[110]: Այս հանգամանքը, իհարկե, հասկանալի էր և ուներ իր բացատրությունը. հայկական կողմի հույսերը հիմնականում խարսխված էին ԱՄՆ-ի օգնության վրա, և բնական էր, որ նման իրատեսական ծրագիրը կարող էր մեծապես ոգևորել հայկական կողմին: Ավելին, բոլորը միակարծիք էին, որ Հայաստանի մանդատի հարցում ամենահարմար երկիրն ԱՄՆ-ն է. դրա պատճառները շարադրված էին ԱՄՆ նախագահ Վիլսոնին ուղղված Գերագույն խորհրդի ապրիլի 26-ի վերոնշյալ հուշագրում: Դրանք ձևակերպված էին հետևյալ կերպ. նախ, ԱՄՆ-ն ուներ հարուստ նյութական պաշարներ, քանի որ ամենաքիչն էր տուժել պատերազմից: Սրան ավելանում էր նաև այն հանգամանքը, որ ԱՄՆ-ն իրեն հռչակել էր նոր կազմավորված և դեռևս կազմավորման փուլում գտնվող պետությունների աջակից և պաշտպան, որոնք առանց ԱՄՆ-ի օգնության չէին կարող ապահովել անկախ և բարգավաճ կյանք: Հայկական խնդիրը մեծ հետաքրքրություն էր առաջացնում ոչ միայն մարդասիրական առումով, այլև ամերիկյան բանկային շրջանակներում: Բացի այս, գաղափարի հեղինակները համոզված էին, որ մեծ թվով հայեր, որոնք զգալի ֆինանսական միջոցներ ունեին, նույնպես կաջակցեին ծրագրի իրականացմանը: Եվ վերջապես, ամերիկյան հասարակությունը և ամերիկյան ֆինանսական աշխարհը բազմիցս ակտիվ հետաքրքրություն էին ցուցաբերել հայերի ճակատագրի հանդեպ: Եվ այս ամենը հիմնավորում էր այն

[110] Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 3538:

գաղափարը, որ հնարավոր է ԱՄՆ-ում ստեղծել որևէ մասնավոր կազմակերպություն կամ գոնե այնտեղ գտնել նման կազմակերպության ստեղծման համար անհրաժեշտ նյութական և իրավական հիմքեր:

Ինչպես նշեցինք, Իրավական բաժինը գտավ մասնավոր կազմակերպության ստեղծման նախադեպեր, որոնք քիչ չէին: Պարզվում է, որ նմանատիպ կազմակերպություններ էին ստեղծվել դեռ XVII-XVIII դարերում, օրինակ՝ Բրիտանական, Գերմանական «Արևելյան Հնդկաստան» և այլ առևտրային ընկերությունները: Բարեգործական ընկերություններ էին ստեղծվել նաև Նիգերիայում և Արևելյան Աֆրիկայում (օրինակ՝ Կոնգոյի անկախ պետությունը ստեղծվել էր Կոնգոյի միջազգային ասոցիացիայի անմիջական աջակցությամբ): Հանձնաժողովի անդամները գտնում էին, որ նշյալ կազմակերպությունների և Հայկական կազմակերպության միջև տարբերությունը լինելու էր այն, որ բոլոր այս ընկերությունները նյութական և առևտրային նպատակներ էին հետապնդել, մինչդեռ Հայկական կազմակերպությունը պետք է ստեղծվեր բարոյական առաքելությամբ: Ազգերի լիգայում այն կարծիքին էին, որ հայկական խնդիրը մեծ ժողովրդականություն է վայելում, և բոլոր պետությունները հակված էին շուտափույթ լուծում գտնել դրան: Սակայն նույնիսկ այս հանգամանքը հաշվի առնելով՝ Ազգերի լիգայի իրավական բաժինը հակված էր այն մտքին, որ նման ոչ պետական բարեգործական կազմակերպություն լավ կլիներ հիմնել ԱՄՆ-ում, որն արդեն ուներ նման փորձ՝ կապված «Ամերիկյան գաղութացման միության» հետ, որը նպաստել էր Լիբերիայի պետության ստեղծմանը[111]: ԱՄՆ-ն իր

---

[111] Ամերիկյան գաղութացման միություն՝ լրիվ անվանումը Ամերիկայի գունավոր ազատ մարդկանց գաղութացման միություն, որի նպատակն էր Աֆրիկայի ամերիկացիներին վերադարձնել անկախություն: Ստեղծվել է 1816 թ. Վաշինգտոնում: Միության ջանքերով 1821-22 թթ. Աֆրիկայում ստեղծվեց Լիբերիայի պետությունը, որը 1847թվականին հայտարարեց իր անկախությունը: Կազմակերպությունը Ամերիկայի սևամորթներին վերադարձնում էր Աֆրիկա՝ այնտեղ նրանց համար ազատություն և անկախություն ապահովելու նպատակով:

մասնակցությունն էր ունեցել նաև Ջորջիայի գաղութի ստեղծման գործում[112]:

Իրավական բաժինը Հայաստանի մանդատի հարցը մասնավոր ընկերության միջոցով լուծելու համար առաջ էր քաշում հետևյալ իրավական մոտեցումները.

1. Նախ, հայկական պետության գոյությունը պետք է պաշտոնապես (de jure) ընդունեին պետությունները: Սրա անհրաժեշտությունը բխում էր նրանից, որ ոչ պետական կազմակերպության ստեղծման նպատակով պետք է համաձայնագրեր կնքվեին, այդ թվում՝ Հայաստանի և տվյալ կազմակերպության միջև: Սակայն Հայաստանը չէր կարող նման համաձայնագրեր կնքել առանց միջազգային ճանաչում ունենալու: Եվ որպես Հայաստանի անկախության ճանաչման լավագույն և ամենաարագ լուծում՝ Ազգերի լիգայի իրավական բաժինն առաջարկում էր Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրի մեջ հատուկ հոդված ներառել, որով պայմանագիրը կնքող կողմերը «դե յուրե» կճանաչեին հայկական պետությունը: Իսկ Հայաստանը «դե յուրե» ճանաչելու համար Իրավական բաժինն անհրաժեշտ պայման չէր համարում Հայաստանի սահմանների հստակ որոշումը՝ որպես օրինակ նշելով Ֆինլանդիան, որը ճանաչվել էր անկախ պետություն՝ չունենալով ճշգրտված սահմաններ[113]:

2. Քանի որ հայկական պետության տարածքն ընդգրկելու էր Օսմանյան կայսրությանը պատկանած հայկական հողամասերը, որոնք կազմելու էին «հայկական պետության միջուկը», Իրավական բաժինը գտնում էր, որ Հայաստանն իր քաղաքական և վարչական զարգացման տեսանկյունից գտնվելու էր նույն մակարդակի վրա, ինչ որ Օսմանյան կայսրությանը պատկանած հայկական համայնքները: Հետևաբար, նրանց հանդեպ կիրառելի էր Կանոնադրության 22-րդ հոդվածը: Սրանով Իրավական բաժինն արդարացնում էր մանդատի կիրառումը Հայաստանի նկատմամբ:

---

[112] Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 4539:

[113] Ֆինլանդիան իր անկախությունը հայտարարել էր 1917թ. դեկտեմբերի 6-ին, և տերությունները ճանաչել էին Ֆինլանդիայի անկախությունը՝ առանց Ռուսաստանի հետ վերջինիս սահմանները ճշտելու:

3. Գլխավոր դաշնակից տերությունները Հայաստանի մանդատի հետ կապված իրենց պարտավորությունները մարտի 12-ի հայտնի նամակով զիջել էին Ազգերի լիգային, և Իրավական բաժինը գտնում էր, որ իրավական առումով լիովին ընդունելի և արդարացված կլինի, որ Ազգերի լիգան էլ իր հերթին դրանք զիջի որևէ երրորդ պետության կամ կազմակերպության, որը և կիրականացներ Հայաստանի օժանդակությունը: Ըստ Իրավական բաժնի, 22-րդ հոդվածը ընձեռում էր նման հնարավորություն, քանի որ ամրագրելով, որ մանդատը տրվում է դաշնակից պետությունների կողմից՝ դրա կիրառելիությունը/վերահսկողությունը կապում էր Ազգերի լիգայի անվան հետ:

4. Իրավական բաժինը համոզված էր, որ ոչինչ չի խանգարում, որ Ազգելի լիգան իր իրավասությունների մի մասը փոխանցի որևէ կազմակերպության, և սա դիտվելու էր ոչ թե մանդատի, այլ իրավասությունների մի մասի փոխանցում[114]:

Կանոնադրության 22-րդ հոդվածը ենթադրում էր, որ մանդատար պետության ընտրության հարցում պետք է անպայման հաշվի առնվի համայնքի ցանկությունը: Այսինքն՝ անհրաժեշտ էր, որ Հայաստանը իր համաձայնությունը տար ոչ պետական կազմակերպության ընտրության հարցում: Իսկ նման համաձայնությունը պետք է արտահայտվեր Հայաստանի և Ազգերի լիգայի միջև կնքված որևէ կոնվենցիայի կամ համաձայնագրի միջոցով: Այստեղ ընդհանուր կերպով պետք է մատնանշվեին կազմակերպության իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև Ազգերի լիգայի պարտավորությունը՝ վերահսկելու կազմակերպության գործունեությունը: Մյուս կողմից՝ նման համաձայնագիրը անհրաժեշտ էր սահմանելու համար Հայաստանի պարտավորությունները ստեղծվելիք կազմակերպության հանդեպ, ինչպես նաև կազմակերպության իրավունքները հայկական պետության նկատմամբ: Եվս մի փաստաթուղթ էլ անհրաժեշտ էր կնքել՝ սահմանելու համար Ազգերի լիգայի և տվյալ կազմակերպության միջև փոխադարձ պարտավորությունները և հարաբերությունները, որը պետք է արտացոլեր նաև իրավասությունների փոխանցումը:

---

[114] Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 4396:

Սրանք այն դիտարկումներն էին, որոնք ապահովելու էին գործողության իրավական կողմը: Իսկ գործընթացն իրականանալու էր հետևյալ կերպ. նախ՝ պետք է ստեղծվեր ոչ պետական մի կազմակերպություն (գերադասելի էր ԱՄՆ-ում), որն իր վրա էր վերցնելու Հայաստանին աջակցելու գործը: Իրավական բաժինն իր խնդիրը չէր համարում զբաղվել այդ կազմակերպության իրավական կարգավիճակով, քանի որ վերջինս ենթադրվում էր ստեղծել ըստ ամերիկյան օրենքների: Իրավական բաժինը գտնում էր, որ «Ամերիկյան գաղութացման միությունը», որի շնորհիվ կազմավորվել էր Լիբերիայի Հանրապետությունը, կարողացել էր բավական հեշտությամբ ստեղծվել և իրականացնել իր աշխատանքները՝ համաձայն ամերիկյան օրենսդրության[115], հետևաբար, նույնը նախատեսվում էր կիրառել նաև Հայաստանի դեպքում: Երբ կազմակերպությունը կհիմնվեր և իրավական ուժ կստանար, Ազգերի լիգան պետք է իրավական հարաբերությունների մեջ մտներ վերջինիս հետ և իր իրավասությունների մի մասը փոխանցեր այդ կազմակերպությանը: Ընդ որում, իրավասությունների ծավալը կարող էր փոփոխվել: Դրանք պետք է սահմանվեին Հայաստանի և Ազգերի լիգայի միջև կնքված նախնական մի համաձայնագրով, որից ելնելով էլ այդ կազմակերպությունն իրավասու կլիներ զբաղվելու Հայաստանի աջակցության հարցերով:

Պարզ դարձնելու համար Ազգերի լիգայի և ոչ կառավարական կազմակերպության միջև հարաբերությունները՝ Իրավական բաժինն ուսումնասիրել էր XIX դարի Անգլիայի և Գերմանիայի որոշ կազմակերպությունների պատմությունը: Իհարկե, դրանց մանրամասները տարբեր էին, սակայն, այնուամենայնիվ, բաժինը կարողացել էր վեր հանել որոշ հիմնական գծեր: Երկու դեպքում էլ հիմնական գաղափարը հանգում էր նրան, որ նույն ազգին պատկանող մարդկանց մի խումբ որևէ կառավարությունից ինքնիշխան իրավունքներ է ստանում որոշակի տարածքի նկատմամբ: Ինչպես նշված էր Գաղութների ֆրանսիական խորհրդի զեկուցման մեջ, նման իրավունքների ծեռքբերումը նպատակ է հետապնդում.

[115] Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 4539:

*ա) կա՛մ չբնակեցված, կա՛մ զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող ցեղերի զբաղեցրած տարածքների գաղութացում,*

*բ) կա՛մ հասարակական որոշակի աշխատանքների իրականացում, ինչը պահանջում է տարածքի մի մասի կոնցեսիա (զիջում),*

*գ) արդեն վարչականորեն և քաղաքականապես կազմավորված տարածքների զավթում կամ այնտեղ իշխանության հաստատում[116]: Սա, ըստ բաժնի, համապատասխանում էր հայկական տարբերակին:*

Հայկական հարցի հետ կապված՝ Իրավական բաժինը գտնում էր, որ թեև Ազգերի լիգան Հայաստանի հանդեպ մանդատի իրականացումը հանձնելու էր մասնավոր կազմակերպությանը, սակայն, ամեն դեպքում պահպանելու էր ընդհանուր հսկողության և վերահսկողության իր իրավունքը ինչպես Հայաստանի, այնպես էլ Հայաստանի հովանավորությունը ստանձնած կազմակերպության նկատմամբ: Սրանից բխելու էր, որ Ազգերի լիգան իրականացնելու էր Հայաստանի ընդհանուր հովանավորությունը: Իսկ իրավաբանական առումով վերահսկողության այս կրկնակի պարտավորությունը արտահայտվելու էր հետևյալ երկու փաստաթղթով.

*ա) համաձայնագիր Ազգերի լիգայի և Հայաստանի միջև, որով սահմանվելու էին այն բնագավառները, որոնց հանդեպ պետք է իրականացվեր Ազգերի լիգայի վերահսկողությունը, ինչպես նաև նախատեսվելու էին շահագրգիռ կազմակերպության գործունեության սկզբունքները.*

*բ) համաձայնագիր Ազգերի լիգայի և տվյալ կազմակերպության միջև, որով սահմանվելու էին Ազգերի լիգայի կողմից տվյալ կազմակերպության վերահսկողության հանգամանքները[117]:*

Հայաստանի մանդատի հետ կապված Ազգերի լիգայի վերահսկողությունն իրականանալու էր երկու բնագավառների նկատմամբ՝ արտաքին հարաբերությունների և ֆինանսների:

[116] Նույն տեղում:

[117] Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 4539:

Արտաքին հարաբերությունների նկատմամբ վերահսկողության անհրաժեշտությունը բացատրվում էր նրանով, որ Հայաստանը դեռ նոր էր մտնում «ազգերի ընտանիք», և այդ պատճառով ո՛չ անհրաժեշտ փորձ , ո՛չ էլ հեղինակություն ուներ իր դիրքերն ամրապնդելու համար: Իսկ Ազգերի լիգայի մյուս անդամները, անկասկած, կնախընտրեին միջազգային հարաբերությունների վերաբերյալ պայմանագրեր կնքել ավելի հեղինակավոր պետությունների, քան նորաստեղծների հետ: Տվյալ դեպքում Ազգերի լիգայի հովանավորությունը բավական տեղին և արդյունավետ կարող էր լինել Հայաստանի համար:

Արտաքին հարաբերությունների հետ սերտորեն կապված էր ռազմական գործողությունների, հետևաբար նաև ռազմական օգնության տրամադրման հարցը: Եթե Ազգերի լիգան ստանձնելու էր Հայաստանի արտաքին հարաբերությունների պատասխանատվությունը, ապա Հայաստանի դեպքում բացառված չէր, որ որոշակի պահի ռազմական գործողությունների իրականացման անհրաժեշտություն առաջանար: Եվ քանի որ Ազգերի լիգան միջազգային ռազմական ուժեր չուներ, ապա, համաձայն Կանոնադրության, պետք էր ստանալ Ազգերի լիգայի անդամ պետությունների համաձայնությունը՝ անհրաժեշտության դեպքում ռազմական գործողությունների ժամանակ զորք տրամադրելու համար: Այս կետը, հայտնի պատճառներով, բավական անհեռանկարային էր, ուստի ռազմական աջակցության հարցում բաժինը նախընտրելի էր համարում չեզոք պետության հետ համաձայնագիր կնքելու տարբերակը:

Վերահսկողության երկրորդ ուղղությունը վերաբերելու էր ֆինանսական հարցերին: Դա խիստ անհրաժեշտ էր Հայաստանի վարչական ապարատը ոտքի կանգնեցնելու, բանակը վերազինելու և ֆինանսական ամուր հիմք ստեղծելու համար: Հայաստանի մանդատի ապրիլյան քննարկումների ժամանակ առաջին պլանում էր Հայաստանին միջազգային փոխառություն տրամադրելու հարցը, որը պետք է կա՛մ տրվեր Ազգերի լիգայի անդամ պետությունների կողմից, կա՛մ երաշխավորվեր վերջիններիս կողմից: Սակայն իրողությունն այն էր, որ Հայաստանը չէր կարող ապահովության որևէ երաշխիք տրամադրել, ինչը անհրաժեշտ էր բանկային և ֆինանսական յուրաքանչյուր գործառույթ իրակա-

նացնելու համար: Իրավական բաժինն այս հարցի լուծման համար առաջարկում էր ստեղծել «Օսմանյան պարտք»[118] կազմակերպության պես մի մարմին, որի վերահսկողությունը պետք է կատարեր Ազգերի լիգան: Բացի վերոնշյալ ուղղություններից, Ազգերի լիգան պետք է իրականացներ նաև Կանոնադրության 22-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր վերահսկողություն՝ մշտական հանձնաժողովի միջոցով:

Ազգերի լիգայի և Հայաստանի միջև կնքվելիք համաձայնագիրը պետք է լիներ հիմնարար մի փաստաթուղթ՝ բաղկացած հետևյալ դրույթներից. նախ, Հայաստանը համարվելու էր որպես ազատ և անկախ պետություն (այս հոդվածի կարևորությունն այն էր, որ ընդգծվում էր, որ նման իրավահարաբերություններում Ազգերի լիգան Հայաստանին դիտում է որպես անկախ պետություն, և աջակցող կազմակերպության գոյությունը ոչնչով չի խոչընդոտում դրան): Ելնելով իր վրա դրված պարտավորություններից՝ Ազգերի լիգան Հայաստանի նկատմամբ իրականացնելու էր ընդհանուր վերահսկողություն՝ հատկապես արտաքին հարաբերությունների և ֆինանսական վիճակի ուղղակի վերահսկողություն: Մյուս կողմից՝ Ազգերի լիգան պարտավորվում էր զբաղվել հայկական տարածքները լքած անձանց պաշտպանությամբ, և նախատեսվում էր, որ Ազգերի լիգան այդ ուղղությամբ համաձայնագրեր պետք է կնքի շահագրգիռ պետությունների հետ, որոնց դիվանագիտական և հյուպատոսական ծառայության ներ-

---

[118] «Օսմանյան պարտք» կազմակերպությունը (Ottoman Public Dept Administration) հիմնադրվել էր 1881 թվականին: Այն եվրոպայի կողմից վերահսկվող կազմակերպություն էր, որը նպատակ էր հետապնդում հավաքելու և վերադարձնելու այն գումարները, որոնք Օսմանյան կայսրությունը պարտք էր եվրոպական ընկերություններին: Կազմակերպությունը Օսմանյան կայսրությունում բավական լայն լիազորություններ ուներ. այն ղեկավարում էին պարտատերերը: Կազմակերպությունը կարևոր դեր ուներ կայսրության ֆինանսական գործերում: Միևնույն ժամանակ «Օսմանյան պարտք» կազմակերպությունը միջնորդի դեր էր կատարում Օսմանյան կայսրության և եվրոպական ընկերությունների միջև, որոնք մտադիր էին ներդրումներ կատարել Օսմանյան կայսրությունում: 1900 թվականին կազմակերպությունը ֆինանսավորում է երկաթուղիների շինարարությունը և այլ արտադրություններ:

կայացուցիչներն Ազգերի լիգայի անունից պետք է անմիջականորեն իրականացնեն վերոհիշյալ պարտավորությունները: Ազգերի լիգան պարտավորվում էր նաև պայմանավորվածություն ձեռք բերել այն պետության հետ, որը Հայաստանին անհրաժեշտ քանակի սպաներ պետք է տրամադրեր՝ բանակի կազմավորման գործի համար (անհրաժեշտության դեպքում այդ սպաները պետք է դրվեին Հայաստանի Հանրապետության տրամադրության ներքո), ինչպես նաև բանակցել Ազգերի լիգայի անդամ բոլոր պետությունների հետ՝ Հայաստանին վարկ տրամադրելու համար: Սրանք Ազգերի լիգայի պարտավորություններն էին, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում էր կանոնավոր զեկուցել Ազգերի լիգայի խորհրդին երկրի վարչական կառավարման և ֆինանսական վիճակի վերաբերյալ: Հանրապետությունը պարտավորվում էր նաև համագործակցել աջակցող կազմակերպության հետ՝ կառավարության յուրաքանչյուր ճյուղի կցելով կազմակերպության մեկական աշխատակցի: Բացի նմանաբնույթ միջոցառումներից, Հայաստանի Հանրապետությունը պարտավորվելու էր նաև խաղաղություն և կարգուկանոն ապահովել իր տարածքում, ինչպես նաև իր տարածքից որևէ մաս «չզիջել» (կոնցեսիա) երրորդ պետությանը: Իսկ Հայաստանի Հանրապետության և կազմակերպության միջև հնարավոր բոլոր վեճերը կառավարությունը պարտավորվելու էր ներկայացնել Ազգերի լիգայի խորհուրդ և վերջինիս վճիռը համարել վերջնական[119]:

Իրավական բաժինը մշակել էր նաև Ազգերի լիգայի և աջակցող կազմակերպության միջև կնքվելիք համաձայնագրի նախնական տեքստը: Հիմնական բովանդակությունն այն էր, որ Ազգերի լիգան մասնավոր կազմակերպությանն էր փոխանցելու Հայաստանի հանդեպ 22-րդ հոդվածով սահմանված իր իրավունքները, բացառությամբ այն իրավունքների, որոնք Ազգերի լիգայի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված համաձայնագրով վերապահվելու էին իրեն: Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում իր իրավասություններն իրականացնելու էր Ազգերի լիգայի ընդհանուր վերահսկողության ներքո

[119] Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 4539:

և պարբերաբար զեկույցներ էր ներկայացնելու վերջինիս՝ իր իրականացրած վարչական միջոցառումների և ֆինանսների վերաբերյալ: Կազմակերպությունը պարտավորվելու էր ո՛չ ուղղակի, ո՛չ էլ անուղղակի չենթարկվել որևէ կառավարության վերահսկողության: Կազմակերպությունը պետք է նաև նախապատրաստեր Հայաստանի Սահմանադրությունը (իհարկե, համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության իշխանությունների հետ), որը պետք է հավանության արժանանար Հայաստանի Հանրապետության իշխանությունների և Ազգերի լիգայի կողմից: Կազմակերպությունը պետք է հատուկ ուշադրություն դարձներ նաև հայկական տարածքում մուսուլմանների նկատմամբ պատշաճ վերաբերմունքի ապահովման վրա: Կազմակերպությունը պարտավորվում էր նաև օրենսդրության մեջ չամրագրել տարբերակված մոտեցում Ազգերի լիգայի անդամ պետությունների նկատմամբ, ինչպես նաև իրականացնել իրավաստեղծ այլ գործառույթներ: Եվ վերջում, կազմակերպությունը ևս պարտավորվում էր իր և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև ծագած բոլոր հնարավոր վեճերը ներկայացնել Ազգերի լիգայի խորհուրդ և վերջինիս վճիռը համարել վերջնական:

Նշյալ համաձայնագիրը հավերժական չէր լինելու և պետք է գործեր լոկ որոշակի տարիների համար: Ազգերի լիգան, համապատասխանաբար, իրավունք էր ունենալու չարաշահումների դեպքում ընդհատելու կազմակերպության գործունեությունը, պատճառաբանված հիմքով փոփոխության ենթարկելու կամ չեղյալ հայտարարել ու համաձայնագրի որևէ դրույթ կամ ողջ համաձայնագիրը[120]:

Իսկ Հայաստանի Հանրապետության և աջակցության կազմակերպության միջև կնքվելիք համաձայնագրում արտահայտվելու էին երկու կողմերի իրավունքներն ու պարտականությունները, որոնք պետք է բխեին վերոնշյալ երկու համաձայնագրերից: Այն, մասնավորապես, պարունակելու էր դրույթներ կազմակերպության պարտավորությունների վերաբերյալ՝ վարչական և ֆինանսական կառավարման հարցերում Հայաստանի Հանրապետության կառավարությանը աջակցելու, ինչպես նաև Հայաս-

[120] Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 4539:

տանի Հանրապետության կառավարության պարտավորությունը՝ ամեն կերպ հեշտացնելու կազմակերպության գործունեությունը: Այս համաձայնագիրը պետք է կնքվեր Ազգերի լիգայի հովանու ներքո և հավանության արժանանար վերջինիս կողմից[121]:

Ահա ընդհանուր գծերով Ազգերի լիգայի իրավական բաժնի աշխատանքի արդյունքները: Չնայած որոշ թերացումների, ծրագիրը բավական գործնական էր ու լավ մշակված և անհրաժեշտության դեպքում կարող էր անմիջապես գործի դրվել: Ըստ էության, ամենամեծ թերացումն այն էր, որ Իրավական բաժինն աջակցող կազմակերպության գործունեությունը ցանկանում էր դնել բարեգործական հիմքերի վրա, մինչդեռ այն ավելի արդյունավետ կաշխատեր, եթե ունենար առևտրային նպատակ և շահույթ հետապնդեր (ինչում հենց իրենք՝ հանձնաժողովի անդամները, բազմիցս առիթ էին ունեցել համոզվելու): Որքան էլ Հայկական հարցը բարոյական շեշտ ունենար, և եթե անգամ կազմակերպության հիմնադիրներն ազգությամբ հայ լինեին, շահույթ չհետապնդելու գաղափարը հզոր ազդակ էր շատերին հետ կանգնեցնելու համար: Սակայն ոչ միայն այս հանգամանքը, այլև քաղաքական լուրջ փոփոխություններն ի դերև հանեցին այս ծրագիրը, որը նույնիսկ չմտավ Ազգերի լիգայի խորհրդի նիստերի օրակարգ և չարժանացավ որևէ քննարկման:

Իսկ, այնուամենայնիվ, ինչո՞ւ էր Ազգերի լիգայի իրավական բաժինն այդքան շահագրգռված հայկական մանդատին լուծում գտնելու հարցում: Պատճառները մի քանիսն էին.

1. Լինելով նորաստեղծ կառույց՝ Ազգերի լիգան խիստ անհանգստացած էր իր հեղինակության համար և ջանք չէր խնայում այն պահպանելու ու ամրապնդելու ուղղությամբ: Թեև Ազգերի լիգայի խորհուրդը չընդունեց Գերագույն խորհրդի՝ հայկական մանդատի ընդունման առաջարկը, սակայն խուսափում էր կտրական մերժումից: Ըստ Ազգերի լիգայի որոշ անդամների՝ մերժումը կարող էր բացասաբար անդրադառնալ կազմակերպության հեղինակության վրա: Իսկ քանի որ մասնավոր ընկերության գաղափարն արծարծվել էր Լոնդոնում հայկական պատվիրակության հետ հանդիպման ժամանակ և հավանության էր

[121] Նույն տեղում:

արժանացել վերջիններիս կողմից, ապա կարելի էր փորձել աշխատել այդ ուղղությամբ: Նախ, տպավորություն կստեղծվեր, որ Ազգերի լիգան քայլեր է ձեռնարկում Հայկական հարցը լուծելու ուղղությամբ: Բացի այդ, նույնիսկ այս ծրագրի հաջողության դեպքում Ազգերի լիգան որևէ լուրջ պարտավորություն չէր կրելու, այսինքն՝ անմիջականորեն մանդատ չէր իրականացնելու: Ուստի ծրագրի իրականացումը էապես չէր հակասի Հայաստանի մանդատի ընդունման հետ կապված Ազգերի լիգայի խորհրդի որդեգրած դիրքորոշմանը:

2. Հայկական հարցը մեծ ժողովրդականություն էր վայելում ողջ աշխարհում: Միջազգային մամուլը կենտրոնացած էր հայկական խնդրի վրա: Թերթերն ուշիուշով հետևում էին հայկական խնդրի շուրջ ծավալվող իրադարձությունների զարգացմանը: Ամեն օր եվրոպական մամուլի էջերում հայտնվում էին Ազգերի լիգայի և Գերագույն խորհրդի՝ Հայաստանի հանդեպ իրականացվող քաղաքականության դեմ ուղղված հոդվածներ: Ակնհայտ էր, որ Ազգերի լիգան չէր կարող հաշվի չնստել այս ամենի հետ[122]:

---

[122] Տե՛ս LNA, Class. 11, dos. 3421, doc. 4087:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿԱԾ ՔԱՅԼԵՐԸ

## 2.1. Հայաստանի Հանրապետության անդամակցության դիմումի քննարկումները Ազգերի լիգայում (1920 թ. սեպտեմբեր - դեկտեմբեր)

Ազգերի լիգայի կանոնադրության 1-ին հոդվածում ասված էր.

*«Յուրաքանչյուր պետություն, դոմինիոն կամ գաղութ, որը կառավարվում է ազատ և որը նշված չէ Կանոնադրության հավելվածում, կարող է դառնալ Ազգերի լիգայի անդամ, եթե նրա անդամությանը կողմ է արտահայտվում Վեհաժողովի երկու երրորդը, և տվյալ երկիրը արդյունավետ երաշխիքներ է ներկայացնում իր ստանձնած միջազգային պարտավորությունները պահպանելու, զինված ուժերի, ցամաքային, ջրային և օդային սպառազինությունների վերաբերյալ Ազգերի լիգայի կանոնակարգն ընդունելու իր անկեղծ մտադրությունների վերաբերյալ»*[123]:

Սակայն արդյո՞ք այս պայմանները բավարար էին անդամության հայտն ընդունելու համար, արդյո՞ք Ազգերի լիգան չէր կարող մերժել երկրի մուտքն իր կառույց քաղաքական կամ որևէ այլ նկատառումով: Պատմությունը դրական պատասխան է տալիս այս հարցադրմանը: Յավոք, մերժում ստացավ նաև Ազգերի լիգային անդամության հայտ ներկայացրած Հայաստանի Հանրապետությունը: Մինչդեռ վերջինս պետք է մեխանիկորեն դառնար Ազգերի լիգայի անդամ որպես Վերսալյան համակարգի՝ Թուրքիայի պայմանագրի մի մաս: Սակայն երբ Ազգերի լիգան հիմնադրվեց, Թուրքիայի հետ հաշտության պայմանագիրը

---

[123] Кольский А. Лига Наций, М., 1934, с. 30.

դեռևս կնքված չէր, և, բացի այդ, քննարկվում էր Հայաստանի հանդեպ մանդատ սահմանելու հարցը[124]:

Հայկական պատվիրակությունը, 1920 թ. մայիսին վերջնականապես համոզվելով, որ Ազգերի լիգայի կողմից Հայաստանի մանդատի ընդունման հարցը ձախողված է, որոշում է դիմել Ազգերի լիգային՝ ՀՀ անդամակցության խնդրանքով: Պետք է նշել, որ հայկական պատվիրակության այս քայլը պատահական չէր: Դեռ 1920 թ. ապրիլի սկզբին Ազգերի լիգայի խորհուրդ ներկայացված մանդատին վերաբերող իր հուշագրում հայկական կողմը անդրադարձել էր անդամության խնդրին[125]: Բայց քանի որ այդ ժամանակ հրապարակի վրա դրված էր մանդատի խնդիրը, անդամության գաղափարը ժամանակավորապես անցել էր երկրորդ պլան:

Ավ. Ահարոնյանը 1920 թ. մայիսի 13-ին երկու հեռագիր է ուղարկում Ազգերի լիգայի խորհուրդ, որն այդ ժամանակ նիստի էր Հռոմում: Հեռագրերից մեկը ահազանգում էր Զանգեզուրում և Ղարաբաղում խորհրդային Ադրբեջանի և Հայաստանի միջև ծագած խժդժությունների, ինչպես նաև էրզրումի կողմից թուրքական զորքերի նախապատրաստվող հարձակման մասին և օգնություն էր խնդրում Ազգերի լիգայից[126]: Մյուս հեռագրով հայկական կողմը խնդրում էր ընդունել Հայաստանի Հանրապետությունը որպես Ազգերի լիգայի անդամ, որը պարտավորվում էր կատարել կազմակերպության բոլոր կարգադրությունները[127]: Պատասխան հեռագրում Ազգերի լիգայի գլխավոր քարտուղարը տեղեկացնում է, որ նոր անդամների ընդունելությունը կախված է ոչ թե խորհրդից, այլ Վեհաժողովից և, բացի այդ, խնդրում է իրեն ուղարկել ՀՀ կառավարության պաշտոնական դիմումը, որը և պետք է զեկուցվեր Վեհաժողովին:

---

[124] Տե՛ս Hovannisian R. The Republic of Armenia, Volume IV (between crescent and sickle: partition and sovietization), էջ 327:

[125] Տե՛ս LNA, class. 11, dossier 3421, doc. 8592:

[126] Տե՛ս LNA, class. 11, dossier 3421, doc. 4396.

[127] Տե՛ս Մշակ օրաթերթ, հունուարի 28, 1921, նաև Барсегов Ю., նշվ. աշխ., էջ 507:

Հայկական պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանը 1920 թ. սեպտեմբերի 25-ին արդեն դիմում է Ազգերի լիգայի նախագահին. *«Քանի որ ստորագրվել է Սևրի պայմանագիրը, որով դաշնակից պետությունները վերջնականապես ճանաչել են ՀՀ անկախությունը, խնդրում ենք ՀՀ-ն ընդունել որպես Ազգերի լիգայի անդամ»*[128]: Ընդհանրապես, պետք է նշել, որ հեռագրական կապը շատ վատ ու դանդաղ էր աշխատում, և հայկական պատվիրակությունը հիմնականում ստիպված էր գործել իր տրամադրության տակ եղած նյութերով: Հետևաբար պատվիրակությունը Ազգերի լիգայի հետ հարաբերություններում հաճախ հանդես էր գալիս Հայաստանի Հանրապետության կառավարության անունից՝ առանց վերջինիցս պաշտոնական պատասխան ստանալու: Օրինակ, ինչպես վերևում նշեցինք, Գլխավոր քարտուղարը պահանջում էր իրեն ուղարկել ՀՀ կառավարության պաշտոնական դիմումը, սակայն այդ դիմումը Համո Օհանջանյանի ստորագրությամբ ժնև է հասնում միայն նոյեմբերի 8-ին[129], երբ Ազգերի լիգայի խորհուրդն արդեն վաղուց քննարկում էր պետությունների անդամության դիմումները:

Հայաստանի անդամության վերաբերյալ իր պատրաստած զեկույցում Ազգերի լիգայի քարտուղարը նշում է, որ Հայաստանը բավարարում է Ազգերի լիգայի կանոնադրության անդամության համար ներկայացված պահանջները. պետությունը լիովին ձևավորված է և ճանաչվել է գլխավոր դաշնակիցների և այլ կառավարությունների կողմից: Սևրի պայմանագրի 88-րդ հոդվածը բացահայտորեն ընդգծում է, որ գլխավոր դաշնակից տերությունները ճանաչել են Հայաստանը՝ որպես ինքնիշխան և անկախ երկիր[130]:

Հայկական պատվիրակության դիմումին ի պատասխան՝ Ազգերի լիգայի տարբեր հանձնաժողովներ մի շարք հարցեր են

---

[128] Տե՛ս **Dr. Nercessian V.** Armenia and the League of Nations, a reprint of hajgazian armenological review, Beirut, 1993, էջ 217, նաև Վեհապետյան Թ., Նոր սերունդը քաղության նոխազ, Բեյրութ, 1988, էջ 106-107, նաև Գանգրունի Հ., Դաշնագիրները դաւեցին Հայոց 1918-1923, Պեյրութ, 1992, էջ 175-177:

[129] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, գ. $198^2$:

[130] Տե՛ս **Hovannisian R.**, նշվ. աշխ., էջ 328:

բարձրացնում և տեղեկություններ են խնդրում հայկական բանակի, նավատորմի, օդանավերի և օդագնացության, ՀՀ սահմանների մասին, ինչպես նաև Ազգերի լիգայում Հայաստանի Հանրապետության հնարավոր ներկայացուցիչների մասին: Կրկին ժամանակին չստանալով անհրաժեշտ նյութերը՝ հայկական պատվիրակությունը ներկայացնում է իր ձեռքի տակ եղած նյութերը: Բանակի թվի հետ կապված՝ հայկական կողմին անհրաժեշտ էր հաշվի առնել, որ Ազգերի լիգան հետամուտ էր պետությունների բանակների թվի կրճատմանը[131], ուստի պետք էր բացատրել Հայաստանի Հանրապետության համար մեծ թվով բանակ պահելու անհրաժեշտությունը: Սհարոնյանը հայկական բանակի թվի նվազեցման անհնարինությունը ներկայացնում է հետևյալ կերպ.

ա) Հայաստանի շրջապատի թշնամիները չեն վերացել ու չեն զինաթափվել,

բ) Սևրի պայմանագիրը դեռևս իրագործված չէր[132]:

Ինչ վերաբերում էր Ազգերի լիգայում Հայաստանի Հանրապետության հնարավոր ներկայացուցիչներին, ապա կառավարությանն ուղղված իր նամակներից մեկում Ավ. Սհարոնյանն առաջարկում է Գ. Նորատունկյանի թեկնածությունը, իսկ մյուսին (փոքր երկրները պետք է 2-3 ներկայացուցիչ ունենային) առաջարկում է նշանակել արտասահմանում եղածներից որևէ մեկին, քանի որ երկրի համար մարդկանց սղության պայմաններում աննպատակահարմար է նոր մարդ ուղարկել արտասահման[133]:

Ազգերի լիգայի խորհուրդը հոկտեմբերի 20-ի իր բրյուսելյան նիստում քննարկում է Հայաստանի Հանրապետության անդամության հարցը և հայկական պատվիրակությունից ստացված տվյալները: Ստացված տեղեկությունների հիման վրա Ազգերի լիգային կից մշտական Ռազմական հանձնաժողովը տալիս է հետևյալ եզրակացությունը. *«Հայաստանի ռազմական ուժերը ներկայումս կազմում են 35.000 մարդ: Երկրի քաղաքական և աշ-*

---

[131] Տե՛ս Kohn G.The organization and the work of the League of Nations, Philadelphia, 1924, էջ 38:

[132] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 93:

[133] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 467:

*խարհագրական վիճակն այնպիսին է, որ կառավարությունն ի վիճակի չէ ներկայացնելու որևէ հստակ որոշում իր ապագա ռազմական կարգավիճակի վերաբերյալ»:* Բանակի թվի հետ կապված՝ հանձնաժողովն առաջարկում է պահպանել եղած թիվը՝ հաշվի առնելով երկրի իրավիճակը: Ինչ վերաբերում էր ծովային ուժերին, ապա Հայաստանը ծով չուներ, հետևաբար չէր կարող ունենալ նաև ծովային ուժեր: Օդային ուժից Հայաստանն ուներ 5 ինքնաթիռ, որոնց պահպանումը հանձնաժողովը նույնպես հայտարարում է անհրաժեշտ[134]:

Հանձնաժողովի վերոհիշյալ որոշումն ընդունվում է այն պայմանով, որ Ազգերի լիգայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ կարող էր վերանայվել: Հայաստանի, ինչպես նաև անդամության հայտ ներկայացրած այլ պետությունների վերաբերյալ Ռազմական հանձնաժողովի որոշումները մտցվում են Ազգերի լիգայի Վեհաժողովի օրակարգ: Ազգերի լիգայի անդամության թեկնածությունների քննության համար նշանակվում է 36-հոգանոց հատուկ հանձնաժողով (5-րդ հանձնաժողովը)՝ Չիլիի պատվիրակ Դոն Անտոնիո Հունեուսի նախագահությամբ: Հանձնաժողովը իր առաջին նիստը գումարում է 1920 թվականի նոյեմբերի 20-ին՝ իր աշխատանքները բաժանելով 3 ենթահանձնաժողովների միջև, որոնք յուրաքանչյուր թեկնածություն պետք է ուսումնասիրեին հետևյալ տեսակետներից.

*ա) արդյո՞ք անդամության պահանջը (հայտը) ներկայացված է պատշաճ կերպով.*

*բ) անդամության հայտ ներկայացրած երկրի կառավարությունը ինչպիսի՞ ճանաչում ունի (դե ֆակտո՞, թե՞ դե յուրե).*

*գ) արդյո՞ք թեկնածու երկիրն ունի հստակ սահմաններ և կայուն կառավարություն, որը ներկայացնում է ողջ բնակչությանը, ինչպես նաև որքա՞ն տարածք ու բնակչություն ունի տվյալ երկիրը.*

*դ) արդյո՞ք երկիրը կառավարվում է ազատ.*

---

[134] Տե՛ս LNA, Minutes of the Commissions, "Military, naval and air conditions of the States which have asked to be admitted to the League of Nations", էջ 107:

*ե) ինչպիսի՞ն է երկրի վերաբերմունքը (խոսքով և գործով) իր ստանձնած միջազգային պարտավորությունների և զինուժին վերաբերող Ազգերի լիգայի պահանջների նկատմամբ:*

Նշենք, որ Հայաստանի հետ համատեղ Ազգերի լիգային անդամության հայտ էին ներկայացրել նաև անդրկովկասյան մյուս հանրապետությունները և բալթյան երեք հանրապետությունները: Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի, Ուկրաինայի և Կոստա Ռիկայի անդամության հարցերը հանձնվում են հանձնաժողովի 3-րդ ենթահանձնաժողովին, որի նախագահն էր Ֆրիտյոֆ Նանսենը[135] (Նորվեգիա), իսկ անդամներն էին Թոմա Իոնեսկուն (Ռումինիա), Է. Միլենը (Ավստրալիա), Է. դը Պալասիոսը (Իսպանիա), Ն. Պոլիտիսը (Հունաստան), Մ. Սպալայկովիչը (Հարավսլավիա) և Թսանյ-Թսայ-Ֆուն (Չինաստան):

Հիշյալ հանձնաժողովի՝ Հայաստանի վերաբերյալ նախապատրաստած զեկույցը քննարկվում է 5-րդ հանձնաժողովի դեկտեմբերի 1-ի նիստում (4-րդ նիստ): Զեկույցը ներկայացնում է 3-րդ ենթահանձնաժողովի նախագահ Ֆրիտյոֆ Նանսենը: Ենթահանձնաժողովը քննարկել էր Հայաստանի Հանրապետության դիմումը և եկել էր այն համոզման, որ այն համապատասխանում է առաջադրված պայմաններին: «Երևանի հայկական հանրապետությունը կազմավորվել է 1918 թվականի մարտին[136]: Կասկած չկա, որ կառավարությունը ներկայացնում է հայ ժողովրդին՝ չնայած կայուն համարվել չի կարող: Երկիրը դեռևս չունի գրված Սահմանադրություն, սակայն նախագծի քննարկումը հետաձգվել է մինչև Սահմանադիր ժողովի գումարումը»[137]: Սահմանների վերաբերյալ թեև նշված էր, որ հստակորեն ամրագրված չեն, սակայն Սևրի պայմանագրի 52-րդ հոդվածն արբիտրաժ էր ենթադրում, և ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնն ընդունել էր միջնորդի դերը: Ենթադրելով, որ Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթները միացվելու են Հայաստանի Հանրապե-

---

[135] Ֆ. Նանսենի մասին մանրամասն տե՛ս Նանսեն-Հեոյեր Լիվ, Նանսենը և աշխարհը. երկրորդ գիրք, Ե., 2006:

[136] Իրականում Հայաստանի Հանրապետությունը կազմավորվել է 1918 թ. մայիսին:

[137] LNA, Admission of new Members to the League of Nations. Armenia. Report presented by the 5[th] Committee to the Assembly.

տության, ապա վերջինիս տարածքը կդառնա 214 հազ. ք/կմ, իսկ բնակչության թիվը մոտ 2.159.000 է (հաշված չեն վերջին տարիների կորուստները և ներգաղթածների թիվը): Ինչ վերաբերում էր միջազգային պարտավորությունների հանդեպ Հայաստանի Հանրապետության վերաբերմունքին, ապա զեկույցը պնդում էր, որ երկրի կառավարության դիրքորոշումը լիովին վստահություն է ներշնչում, որ Հայաստանի Հանրապետությունը կատարում է իր խոսքը: «Հայաստանը Սևրի պայմանագիրը ստորագրած պետություններից մեկն է, որը, հայկական պատվիրակության պնդմամբ, հանդիսանում է դաշնակից պետությունների կողմից Հայաստանի Հանրապետության դե յուրե ճանաչում»[138]: Համաձայն Ազգերի լիգայի քարտուղարության հասած ոչ պաշտոնական տվյալների՝ ԱՄՆ-ն, Արգենտինան նույնպես «դե յուրե» ճանաչել են Հայաստանը: Զեկույցի վերջում նշված էր, որ Հայաստանը հարուստ է հանքանյութերով և ունի արդյունաբերական լուրջ հնարավորություններ:

Ահա այսպիսին էր 3-րդ ենթահանձնաժողովի զեկույցը Հայաստանի մասին: Պետք է նշել, որ ենթահանձնաժողովի զեկույցը միանշանակ մոտեցում չէր ցուցաբերում Հայաստանի անդամության հարցի վերաբերյալ: Հենց ենթահանձնաժողովի նախագահը (Նանսենը) զեկույցի վերջում եզրակացնում է, որ թեև ենթահանձնաժողովը միաձայն էր հայ ժողովրդի հանդեպ համակրանքի հարցում, սակայն որոշ հարցեր դեռևս մնում էին առկախ:

Ֆ. Նանսենից հետո ելույթ է ունենում Բրազիլիայի պատվիրակ Ռոդրիգո Օկտավիոն, որը նախ նշում է, որ իր երկիրը «դե յուրե» ճանաչել է Հայաստանը, և որ վերջինս ներառված է նաև Ազգերի լիգայի կանոնադրությունը ստորագրած պետությունների ցուցակում, և, բացի այդ, Հայաստանը ստորագրել է փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ Ազգերի լիգայի կազմած փաստաթուղթը: Պատվիրակի նշած այս փաստերը նպատակ ունեին ապացուցելու, որ Հայաստանը «դե յուրե» ճանաչված պետություն է, և դրանով Հայաստանի միջազգային ճանաչման խնդիրը կարելի է համարել լուծված: Ելույթով

---

[138] Տե՛ս նույն տեղում, նաև ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1227:

հանդես են գալիս նաև Ֆրանսիայի և Հունաստանի ներկայացուցիչները (Ռենե Վիվիանի, Պոլիտիս), որոնք նույնպես կողմ են արտահայտվում Հայաստանի Հանրապետության անդամության հարցին[139]:

Հայաստանի Հանրապետության անդամության հարցի վերաբերյալ իր կասկածներն է արտահայտում Հարավաֆրիկյան Հանրապետության ներկայացուցիչ լորդ Ռոբերտ Սեսիլը, որը մասնավորապես ուշադրություն է հրավիրում 2 կետի վրա. նախ, ըստ բանախոսի, Ազգերի լիգային Հայաստանի Հանրապետության անդամակցությունը չեղյալ կդարձներ նախկինում առաջարկված լուծումը, որով Հայաստանը պետք է անցներ մանդատար պետություն հովանու տակ: Երկրորդ՝ Ազգերի լիգայի անդամ բոլոր պետությունները որևէ պարտավորություն չէին ստանձնել օգնություն տրամադրելու Հայաստանին, իսկ վերջինիս անդամակցության դեպքում բոլոր այդ պետությունները պետք է համատեղ հանդես գան Հայաստանի Հանրապետությունը արտաքին ագրեսիաներից պաշտպանելու հարցում: Նմանատիպ կարծիք է արտահայտում նաև Մեծ Բրիտանիայի պատվիրակ պրն Ֆիշերը, որը մատնանշում է, թե արդյո՞ք մի քանի ամսից ակնհայտ չի լինի, որ Հայաստանի համար ավելի լավ կլիներ ընդունել որևէ պետության մանդատը[140]: Սրանով նիստն ավարտում է հայկական խնդրի վերաբերյալ իր քննարկումը ուշ լինելու պատճառով: Ֆիշերը նույն օրը հեռագիր է ուղարկում Լոնդոն. «Վիվիանին և լորդ Սեսիլը փորձում են Հայաստանին հրել Ազգերի լիգայի մեջ: Պրն Բալֆուրը և ես մեծ կասկածներ ունենք այդ բեռն Ազգերի լիգայի ուսերին գցելու կապակցությամբ: Երբ հարցը հասնի Վեհաժողով, մենք շատ հեշտությամբ պարտություն կկրենք այն փոքր ազգերից, ովքեր դեկավարվում են զգացմունքներով և ովքեր ոչինչ չեն արել հայերին օգնելու համար: Արդյո՞ք նման լուծումը քաղաքականապես արդար կլինի»[141]:

---

[139] Տե՛ս **Барсегов Ю.**, նշվ. աշխ., էջ 595:

[140] Տե՛ս Եսայան Ա., Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Ե., 1965, էջ 137:

[141] **Hovannisian R.**, նշվ. աշխ., էջ 330-331:

Դեկտեմբերի 2-ին Լլոյդ Ջորջը հարցը բարձրացնում է Նախարարների խորհրդում: Գալիս են այն եզրակացության, որ Հայաստանի սահմանները դեռևս անորոշ են, և Ազգերի լիգան շատ թույլ կառույց է՝ Հայաստանի պաշտպանությունն իր վրա վերցնելու համար: Սակայն միաժամանակ անհրաժեշտ էր հաշվի նստել հասարակական կարծիքի հետ. չնայած Հայաստանի մուտքն Ազգերի լիգա ցանկալի չէր, սակայն անգլիական կառավարության համար շատ անցանկալի էր հայտնվել միայնակ՝ ընդդեմ մյուս պետությունների կառավարությունների, որոնք պաշտպանում են Հայաստանի մուտքն Ազգերի լիգա: Ուստի անգլիական դիվանագիտությունը անցնում է իր հին և ստուգված մեթոդներից մեկին. համոզել մյուս դաշնակիցներին ևս միանալ իրենց դիրքորոշմանը, ինչն իրենց մոտ ստացվում է:

Մինչ Ազգերի լիգայի խորհուրդը զբաղված էր Հայաստանի ընդունելության հարցի քննարկումներով, Հայաստանում տեղի ունեցան շրջադարձային փոփոխություններ: Նախ, 1920 թ. սեպտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը թուրքական մեծաքանակ ուժերը հարձակում ձեռնարկեցին Հայաստանի Հանրապետության ուղղությամբ: Պատերազմի հենց սկզբից ռազմական գործողությունները ընթանում էին հիմնականում թուրքական կողմի հաջողություններով, իսկ հոկտեմբերի վերջին՝ հատկապես Կարսի գրավումից հետո, ակնհայտ դարձավ, որ պատերազմում հաղթելու են թուրքերը: Այս կարճատև պատերազմից հետո՝ դեկտեմբերի 2-ին, թուրքերի հետ կնքվում է Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը, որը բավական ծանր պայմաններ էր առաջադրում հայկական կողմին[142]: Ըստ Ալեքսանդրապոլի պայմանագրի՝ Հայաստանը հրաժարվում էր նաև Սևրի պայմանագրից: Դեռ ավելին. 1920թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը կնքվում է ևս մի համաձայնագիր, այս անգամ Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև, որով Հայաստանում հաստատվում են խորհրդային կարգեր:

Դեկտեմբերի 3-ին՝ Ազգերի լիգայում Հայաստանի Հանրապետության անդամության հարցի քննարկումների կիզակետում,

---

[142] Մանրամասն տե՛ս Զոհրաբյան Է., 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Ե.,1997:

ստացվում է Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Իտալիայի արտգործնախարարների նամակը, որոնք այդ ժամանակ նիստի էին Լոնդոնում: Վերջիններս Ազգերի լիգայում իրենց ներկայացուցիչներին հորդորում են չընդունել Հայաստանը Հանրապետությունը՝ որպես անդամ: Հեռագրում մասնավորապես ասված էր. *«Լոնդոնում հավաքված ֆրանսիական, իտալական և անգլիական կառավարությունների ներկայացուցիչները, քննարկելով ժնևում բարձրացված Հայաստանի անդամության հարցը, եկան միաձայն եզրակացության, որ անհնար է իրագործել Հայաստանի պահանջը: Սևրի պայմանագիրը, որը կազմավորում է Հայաստանը որպես անկախ պետություն, դեռ վավերացված չէ: Ավելին, Հայաստանի սահմանները, որոնք որոշելու հարցը մեծ տերությունները հանձնել էին ԱՄՆ նախագահ Վիլսոնի արբիտրաժային վճռին, այնքան ընդարձակ են գծված, որ ներկա պայմաններում Ազգերի լիգան դժվարությամբ կարող է ընդունել դրանք հարգել տալու վերաբերյալ իր պարտավորությունները»*[143]:

Իհարկե, այս հեռագիրը միանշանակ չեն ընդունվում Ազգերի լիգայի անդամ պետությունները: Նրանցից ոմանք ընդվզում են երեք կառավարությունների թելադրանքի և նրանց գերակա դիրքի դեմ: Սակայն իրականում այս դժգոհությունները մակերեսային և ինքնաքուխ բնույթ էին կրում, և երբ հարկ եղավ ցուցադրելու իրենց դժգոհությունը, ընդվզողները ևս գործեցին հենց այս երեք տերությունների կառավարությունների ցանկությունների շրջանակում: Հայաստանի Հանրապետության անդամակցության հարցի ճիշտ ընկալման համար անհրաժեշտ է ուսումնասիրել նաև մյուս պետությունների և հատկապես Կովկասյան և Բալթյան պետությունների անդամության դիմումների ճակատագիրը[144]: Դեկտեմբերի 4-ին 5-րդ հանձնաժողովը քննարկում է Լյուքսեմբուրգի, Ֆինլանդիայի, Ալբանիայի և Բալթյան պետությունների դիմումները[145]: Բալթյան պետությունների (Լատվիա,

---

[143] Mandelstam A. La Socie'te' des Nations et les Puissances devant le proble`m Armenie'nne, Beirut, 1957, p. 115.

[144] Տե՛ս Ճակատամարտ, յունուար 11, 1921:

[145] Տե՛ս LNA, Minutes of the Committees, Sixth meeting of the Committee V, held on December 4th, pp. 184-189:

Լիտվա, էստոնիա) վերաբերյալ զեկուցում է Բրազիլիայի ներկայացուցիչ Ռ. Օկտավիոն, որը որևէ հստակ դիրքորոշում վերոհիշյալ երկրների ընդունելության հետ կապված չի արտահայտում՝ անդրադառնալով լոկ որոշ փաստերի: Մինչդեռ Չեխո-Սլովակիայի ներկայացուցիչ Մ. Բենեշը հանձնաժողովի ուշադրությունը հրավիրում է այն փաստի վրա, որ Բալթյան պետություններում առկա անկայուն վիճակը պայմանավորված է խորհրդային Ռուսաստանով, և կարծիք է հայտնում, որ եթե այս երկրներն ընդունվեն, ապա Ազգերի լիգան կհայտնվի մեծ վտանգի առջև: Մատնանշելով Բալթյան և Կովկասյան երկրների (Հայաստան ու Վրաստան, քանի որ Ադրբեջանի դիմումը ենթահանձնաժողովը մերժել էր) նմանությունը՝ Ռ. Սեսիլն առաջարկում է այս երկրների ընդունելության հարցերը քննարկել համատեղ: Թեև Սեսիլը վտանգավոր էր համարում մերժել այս պետությունների անդամությունը, սակայն, ըստ լորդի, այդ երկրներն իրենց հարևանությամբ ունեին մի երկիր (Ռուսաստանը), որի վրա Ազգերի լիգան չէր կարող գործադրել ո՛չ քաղաքական, ո՛չ ռազմական և ո՛չ էլ տնտեսական ճնշում: Ուստի առաջարկում էր ընդունել նրանց՝ 10-րդ հոդվածի վերապահմամբ: Նա առաջարկում էր հանձնաժողովի քվեարկությանը ներկայացնել հետևյալ առաջարկը.

*Հաշվի առնելով այն փաստը, որ այս երկրները իրենց հարևանությամբ ունեն այնպիսի տարածքներ, որոնք բռնազավթված են անկարգ ու անկանոն բնակչության կողմից, որոնք ենթակա չեն Ազգերի լիգայի ազդեցությանը, Վեհաժողովը հռչակում է, որ Ազգերի լիգայի անդամները ազատվում են 10-րդ հոդվածի պարտավորություններից*[146]:

Պրն Բենեշն առաջարկում է թույլ տալ այդ երկրներին մասնակցելու Ազգերի լիգայի տեխնիկական կազմակերպությունների աշխատանքներին: Դա հնարավորություն կտար «չհիասթափեցնելու վերջիններիս» և միևնույն ժամանակ բավարարելու հանձնաժողովին, որը ցանկություն ուներ աջակցելու նրանց: Ելնելով սրանից՝ Բենեշն առաջարկում է հետևյալ բանաձևը.

*Հանձնաժողովը, չցանկանալով վերջնական որոշում կայացնել այդ պետություններին ընդունելու կամ չընդունելու վերա-*

---

[146] Տե՛ս Сабанин А. Россия и Лига Наций 1920-21-22 гг. М., 1924, с. 44:

*բերյալ, եզրակացնում է, որ այդ պետությունները պետք է հրավիրվեն մասնակցելու որոշ տեխնիկական կազմակերպությունների աշխատանքներին, որպեսզի հնարավորության դեպքում նրանք կարողանան դառնալ Ազգերի լիգայի լիիրավ անդամ*[147]:

Երկու բանաձևերն էլ բուռն քննարկումներ են առաջացնում: Հատկապես 10-րդ հոդվածի վերապահումով անդամներ ընդունելու հանգամանքը շատերի կարծիքով կարող էր նախադեպ լինել, որը ցանկալի չէր նորաստեղծ Ազգերի լիգայի համար: Միևնույն ժամանակ Ազգերի լիգայի ներկայացուցիչները չէին ցանկանում խրտնեցնել անդամության հայտ ներկայացրած պետություններին: Տեղի ունեցած քննարկումներում պետք է կարևորել նաև Կանադայի ներկայացուցիչ Ն. Ռաուելի ելույթը, որը պնդում էր, որ Կովկասյան և Բալթյան երկրների անդամության հայտերի քննարկումը պահանջում է ողջ ռուսական խնդրի ուսումնասիրությունն իր բոլոր դրսևորումներով, որը պատվիրակն առաջարկում էր ազնվորեն ընդունել: Ռուսական քաղաքական իրավիճակը, ըստ Ռաուելի, մեծ կարևորություն ուներ հարևան երկրների համար, և քանի որ Կանադան Խաղաղ օվկիանոսի կողմից հարևան էր Ռուսաստանին, հատուկ հետաքրքրություն էր ցուցաբերում ռուսական խնդրի նկատմամբ: Պատվիրակն առաջարկում էր նաև դիմել Ազգերի լիգայի քարտուղարության իրավական բաժին՝ առաջարկելով վերջինիս ստեղծել մի ձևաչափ, որը, Ազգերի լիգայի կանոնադրության համաձայն, հնարավորություն կտար հարաբերություններ հաստատելու Ազգերի լիգայի անդամների և ոչ անդամների միջև: Ն. Ռաուելը առաջ է քաշում հետևյալ բանաձևը. «Պետք է դիմել քարտուղարության իրավական բաժին՝ իմանալու, թե արդյո՞ք Ազգերի լիգայի կանոնադրությունը ենթադրում է ոչ լրիվ անդամության հարցը, իսկ մինչ այդ հետաձգել հարցի քննարկումը»[148]:

Բավական մանրամասն ենք կանգ առնում Բալթյան պետությունների անդամության հարցի վրա, քանի որ գտնում ենք, որ այս քննարկումների ընթացքում էլ հենց երևան եկան նախկին

---

[147] Նույն տեղում:

[148] Նույն տեղում, էջ 44:

Ռուսական կայսրության տարածքների վրա առաջացած պետությունների անդամությունների մերժման բուն պատճառները:

Ազգերի լիգայի որոշ անդամներ խիստ անհանգստացած էին նաև այն հանգամանքից, որ բոլշևիկյան քաոսի հետևանքով չեն կարողանա վերադարձնել Ցարական Ռուսաստանին տված վարկերը և այդ պատճառով ևս բավական զգուշավոր էին վերաբերվում նախկին կայսրության մաս հանդիսացող երկրներին: Եվս մի բանաձև է առաջարկում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Ֆիշերը. «Հարցը վերադարձնել ենթահանձնաժողով՝ նոր ձևաչափ մշակելու համար, որը կապահովի Ազգերի լիգայի հետ պետությունների անխախտ կապը, լրիվ անդամության փոխարեն»[149]: Քննարկումների հետևանքով որոշվում է ընդունել Ֆիշերի՝ առաջարկը՝ դրան ավելացնելով, որ Բալթյան պետությունների վերաբերյալ նախապատրաստվելիք զեկույցին գումարվեն նաև Հայաստանը և Վրաստանը:

Հինգերորդ հանձնաժողովի նիստը ենթահանձնաժողովների բացասական զեկույցների հիման վրա որոշում է, որ Ադրբեջանի և Ուկրաինայի դիմումները Վեհաժողովի քննարկմանը չեն ներկայացվելու: Ադրբեջանի դիմումի վերաբերյալ ենթահանձնաժողովը եկել էր այն կարծիքի, որ երկիրը չի բավարարում Ազգերի լիգայի կանոնադրության ներկայացրած պահանջները[150]. չունի հստակ որոշված սահմաններ, երկրում առկա է երկու իշխանություն՝ մուսավաթական, որը և դիմել էր Ազգերի լիգային երկրի անդամության համար, և խորհրդային (1920 թ. ապրիլի 27-ին բոլշևիկները գրավել էին Բաքուն[151]) երկիրը ունի չհստակեցված սահմաններ հարևանների հետ[152]: Գրեթե միևնույնը ոճի էր Ուկրաինայի վերաբերյալ ենթահանձնաժողովի զեկույցը[153]:

---

[149] Մշակ, հունվար 29, 1921:

[150] Տե՛ս **Musayev Tofig F.** From territorial claims to belligerent occupation: legal appraisal, www.azconsulatela.org/news/tmusayev.pdf:

[151] Տե՛ս Ֆրիտյոֆ Նանսեն, Խաբված ժողովուրդ, Ե., 2000 թ., էջ 265:

[152] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1218:

[153] Տե՛ս **Сабанин А.**, նշվ. աշխ., էջ 40:

Դեկտեմբերի 9-ին՝ ժամը 15-ին, տեղի է ունենում 5-րդ հանձնաժողովի 7-րդ նիստը[154]: Այստեղ, ինչպես արդեն որոշվել էր, Ռ. Օկտավիոն ներկայացնում է 5ա ենթահանձնաժողովի լրացուցիչ զեկույցը, որը վերաբերում էր Բալթյան և Կովկասյան (Հայաստան և Վրաստան) պետությունների անդամության հարցին: 5ա ենթահանձնաժողովի նիստը Բելգիայի ներկայացուցիչ Պուլեի ղեկավարությամբ, որը գումարվել էր դեկտեմբերի 6-ին, քննարկել էր երեք ձևաչափ: Ենթահանձնաժողովի նախագահը առաջարկել էր հետևյալը. *«Խորհուրդ տալ Վեհաժողովին մինչև ռուսական հարցի լուծումն ընդունել Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Հայաստանը և Վրաստանը, որոնք կազմավորվել են Ռուսական կայսրության լուծարման հետևանքով, և որոնց սահմանները ճանաչել են հարևան երկրները»*[155]: Սակայն Պուլեի այս բանաձևը խիստ դժգոհություններ էր հարուցել և, ի վերջո, տապալվել էր: Ենթահանձնաժողովը հետագա բանակցություններից հետո ընդունել էր Կարներեկի ներկայացրած հետևյալ բանաձևը.

*Հանձնաժողովը Վեհաժողովին հանձնարարում է տեղեկացնել Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի, Վրաստանի և Հայաստանի կառավարություններին, որ.*

*ա) անդամության վերաբերյալ նրանց դիմումները քննարկվել են դրականորեն, սակայն հանգամանքներն այնպիսին են, որ թույլ չեն տալիս Վեհաժողովին գալ վերջնական որոշման.*

*բ) մինչև Վեհաժողովի վերջնական որոշումը այս պետությունները կարող են մասնակցել Ազգերի լիգայի տեխնիկական կազմակերպությունների աշխատանքներին, որոնք ընդհանուր հետաքրքրություն են ներկայացնում*[156]*:*

Հենց վերոհիշյալ այս բանաձևն էլ որպես լրացուցիչ զեկույց ներկայացվում է 5-րդ հանձնաժողովի դեկտեմբերի 9-ի նիստին: Նիստի ընթացքում տեղի ունեցած քննարկումներն է՛լ ավելի ակնհայտ են դարձնում Կովկասյան և Բալթյան պետու-

---

[154] Տե՛ս Барсегов Ю., նշվ. աշխ., էջ 606-607:

[155] Сабанин А., նշվ. աշխ., էջ 45:

[156] Տե՛ս LNA, Minutes of the Committees, Admission of Armenia, Georgia and of Baltic States, Finland excepted, pp. 238-240:

թյունների ճակատագրում բոլշևիկյան Ռուսաստանի ունեցած դերը: Նիստի ժամանակ Ռոբերտ Սեսիլը կրկին խոսք է բացում այն մասին, որ անհրաժեշտ է Ազգերի լիգայի կանոնադրության 10-րդ հոդվածի վերապահումով ընդունել վերոհիշյալ երկրները: Սակայն Սեսիլի այս առաջարկը հանդիպում է խիստ դիմադրության: Դեռևս քողարկելով իրականությունը՝ Ֆրանսիայի պատվիրակ Վիվիանին շարունակում էր պնդել, որ ճիշտ չի լինի ընդունել այդ պետություններին և մերժել նրանց օգնություն տրամադրել (խոսքը Ազգերի լիգայի կանոնադրության 10-րդ հոդվածի մասին է- է.Գ.): Սակայն արդյո՞ք այդ բազմահիշատակ 10-րդ հոդվածը վերաբերում էր հենց անմիջական օգնություն տրամադրելուն: Կարծում ենք՝ ոչ. փորձենք հիմնավորել: Նախ, անհրաժեշտ է բառացիորեն մեջբերել հոդվածն ամբողջությամբ: Դրանում ասված էր. «Ազգերի լիգայի անդամները պարտավորվում են հարգել և արտաքին ագրեսիայից պաշտպանել լիգայի բոլոր անդամների տարածքային ամբողջականությունը և առկա քաղաքական անկախությունը: Նման ագրեսիայի կամ ագրեսիայի վտանգի դեպքում Խորհուրդը պետք է խորհուրդ տա այն միջոցները, որոնք կբերեն այս պարտավորությունների իրականացմանը»[157]: Ինչպես տեսնում եք, 10-րդ հոդվածը որևէ որոշակի միջոց (հատկապես ռազմական) չէր ենթադրում արտաքին ագրեսիաներից պաշտպանելու բնագավառում: Հոդվածը հենց Ազգերի լիգայի իրավական ատյաններում հակասական մեկնաբանությունների տեղիք էր տալիս: Սակայն ընդհանուր մոտեցումը հանգում էր նրան, որ 10-րդ հոդվածը ամրագրում էր տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության միջազգային իրավունքի կատեգորիաները[158]: Շարունակենք Ազգերի լիգայի կանոնադրության ուսումնասիրությունը: Հոդված 11-ը հայտարարում էր, որ յուրաքանչյուր պատերազմ կամ պատերազմի սպառնալիք, որն անմիջականորեն ազդում էր կամ չէր ազդում Ազգերի լիգայի անդամ պետությունների վրա,

---

[157] ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 2286, նաև **Кольский А.**, նշվ. աշխ., էջ 32:

[158] Տե՛ս **William Howard Taft**, The Paris Covenant For a League of Nations, *The American Political Science Review*, Vol. 13, No. 2 (May, 1919), էջ 186-187:

hռչակվում է որպես Ազգերի լիգայի գործառույթ, և վերջինս պետք է գործողություններ ձեռնարկի, որոնք անհրաժեշտ ու արդյունավետ կլինեն և կպահովեն ազգերի խաղաղությունը: Այս դեպքում անդամ պետությունների պահանջով Գլխավոր խորհուրդը պետք է Ազգերի լիգայի խորհրդի նիստ գումարի: Յուրաքանչյուր անդամի իրավունքն է Ազգերի լիգայի Վեհաժողովի կամ Խորհրդի ուշադրությունը հրավիրելու այն հանգամանքների վրա, որոնք ազդում են միջազգային հարաբերությունների, միջազգային խաղաղության կամ ազգերի միջև բարիդրացիական հարաբերությունների վրա, ինչից էլ կախված է միջազգային խաղաղությունը»[159]: Ինչպես հստակ և պարզորոշ երևում է վերոհիշյալ հոդվածից, Ազգերի լիգան պարտավորվում էր միջամտել միջազգային խաղաղությանը սպառնացող յուրաքանչյուր դեպքի ժամանակ, և անդամ լինելու հանգամանքը, ինչպես փորձում էին հավաստիացնել Ազգերի լիգայի անդամ պետությունները, այդքան էլ նշանակություն չուներ: Սակայն արդար լինելու համար պետք է նշել, որ թե՛ 10-րդ և թե՛ 11-րդ հոդվածները որևէ գործնական նշանակությունից զուրկ էին, քանի որ որևէ իրական ազդեցության լծակներ կամ միջոցներ չէին ենթադրում: Ազգերի լիգայի կողմից հնարավոր պատժամիջոցներին էր վերաբերում 16-րդ հոդվածը, որը առևտրական, տնտեսական, ֆինանսական և քաղաքացիների միջև շփման արգելքներ էր նախատեսում պատերազմ սանձազերծած պետության դեմ: «Այս դեպքում Ազգերի լիգայի խորհուրդը գործին առնչվող կառավարություններին պետք է խորհուրդ տա, թե ռազմական, ծովային կամ օդային ինչպիսի ուժեր պետք է կիրառվեն՝ Ազգերի լիգայի կանոնադրությունը պաշտպանելու համար»: Կանոնադրության 17-րդ հոդվածով 16-րդ հոդվածը տարածվում էր նաև ոչ անդամ պետությունների վրա[160]:

Վերլուծելով 10-րդ հոդվածի դերը՝ Ուինսթոն Չերչիլը գրում է. «Ազգերի լիգա՞ն, ահա ինչպես այն կվարվի. երկու երկրների միջև ծագում են լուրջ հակասություններ, որոնք սպառնում են

---

[159] Նույն տեղում:

[160] **Борян Б. А.** Армения, международная дипломатия и СССР, ч. 2, М-Л 1929, гос. Издательство, с. 230.

վերածվել պատերազմի: Ազգերի լիգայի խորհուրդը արտահերթ հավաքվում է և երկար քննարկումներից հետո որոշում է երկու կողմերին էլ հեռագիր ուղարկել՝ հրավիրելով դադարեցնել թշնամական գործողությունները: Երկու կողմերը շարունակում են սպառնալ միմյանց: Պատերազմը անխուսափելի է: Խորհուրդը կրկին նիստի է հավաքվում և նորից է հեռագիր ուղարկում՝ առաջարկելով կողմերին ապառազմականացվել: Կողմերի միջև սկսվում են ռազմական գործողություններ, պատերազմը մոլեգնում է, և Ազգերի լիգայի խորհուրդը կրկին հապճեպ հավաքվում է և երրորդ հեռագիրը ուղարկում՝ նշելով, որ «եթե անմիջապես պատերազմը չդադարեցնեք, ապա այլևս ձեզ ոչ մի հեռագիր չենք ուղարկի»[161]:

Վերոնշյալ բացատրություններն ու փաստերը ապացուցում են այն հանգամանքը, որ իրականում 10-րդ հոդվածը նոր անդամների ընդունելության հարցում էական դեր չէր կարող ունենալ, ինչպես դա փորձում էին ներկայացնել Ազգերի լիգայի անդամ երկրների պատվիրակները, և որը մինչև այժմ պնդում են որոշ պատմաբաններ: Մերժման պատճառները պետք է փնտրել այլ տեղում:

Վերադառնանք դեկտեմբերի 9-ի նիստին: Իրավիճակը ճիշտ գնահատելու տեսանկյունից հատկապես պետք է կարևորել Պարսկաստանի ներկայացուցիչ էմիր Զոկա-էդ-Դոուլեհի ելույթը, որը, խոսելով Վրաստանի անդամության մասին, կողմ է արտահայտվում դրան՝ նշելով, որ վերջինս և՛ ռասայական, և՛ սովորույթների առումով տարբեր է Ռուսաստանից (այսինքն՝ վտանգը ավելի քիչ է, որ Վրաստանը կդառնա խորհրդային - Է.Գ.): Բավական բաց տեքստով է խոսում նաև Կոլումբիայի ներկայացուցիչ Ռեստրեպոն, ըստ այդմ՝ Ռուսաստանի սահմաններին գտնվող պետություններին ընդունելով որպես անդամ, ավելի հեշտ կլիներ պայքարել բոլշևիկների դեմ: «Եթե Ազգերի լիգայի անդամ պետությունները 2 ռազմանավ ուղարկեն, Կոլումբիան պատրաստ է զորք տրամադրել բոլշևիկների դեմ կռվելու

[161] **Илюхина Р.**, նշվ. աշխ., էջ 85:

համար»[162]: Եվս մի «խոստովանություն», որը բացահայտում էր Ազգերի լիգայի գործունեության, նրա վարքագծի ներքին դրդապատճառներն ու շարժառիթները:

Չինգերորդ հանձնաժողովի նախագահը, մեկնաբանելով Կարներեկի առաջարկած բանաձևը, նշում է, որ այն թույլ կտա Բալթյան և Կովկասյան պետություններին հաջորդ տարի նորից դիմել՝ Ազգերի լիգային անդամակցելու համար: Կարներեկի առաջարկած բանաձևը հեշտությամբ ընդունվում է Բալթյան պետությունների և Վրաստանի նկատմամբ:

Հայաստանի անդամության հետ կապված քննարկումների ժամանակ մեծ արձագանք է ստանում մեծ տերությունների՝ դեկտեմբերի 3-ի նամակը: Հանձնաժողովի անդամները հատկապես կարևորում են մամուլում բարձրացված մեծ աղմուկը: Բանն այն էր, որ դեկտեմբերի 3-ի նամակը հասարակական լուրջ դժգոհություն էր առաջացրել: Աշխարհի առաջատար թերթերը քննադատական հոդվածներ էին գրում՝ կապված հայկական խնդրում մեծ տերությունների դիրքորոշման հետ: Այս կապակցությամբ Կանադայի ներկայացուցիչը նշում է, որ պետությունների անդամության հարցը որոշվում է Ժնևում, այլ ոչ թե Լոնդոնում, Փարիզում կամ Հռոմում: Նանսենը հիշեցնում է, որ 5-ա ենթահանձնաժողովը հանդես էր եկել Հայաստանի անդամության օգտին, սակայն անդամություն չէր առաջարկել՝ գտնելով, որ Հայաստանի համար ավելի լավ կլիներ անցնել մանդատար պետության հովանու տակ: Բուռն քննարկումներից հետո Կարներեկի բանաձևը Հայաստանի վերաբերյալ ընդունվում է 9 կողմ, 2 դեմ հարաբերակցությամբ[163]:

Նիստի ընթացքում քննարկվում է նաև տեխնիկական հանձնաժողովներին պետությունների մասնակցության խնդիրը, հատկապես Միջազգային աշխատանքային կազմակերպությանը անդամակցելու հարցը: Պետք է նշել, որ այս հարցի բարձրացումով Ազգերի լիգայի անդամ պետությունները նպատակ էին հետապնդում վերջնականապես չխզել կապերը Կովկասյան և

[162] LNA, Admission of Armenia, Georgia and the Baltic States, Finland excepted, pp. 197.
[163] LNA, Minutes of the Committees, 8th meeting of the V Committee.

Բալթյան պետությունների հետ, նրանց պահել «իրենց կողքին»՝ ավելի ստույգ իրազեկվելու այդ երկրների հետագա ճակատագրին (այսինքն՝ հետևելու Ռուսաստանի հետ նրանց հարաբերությունների հետագա զարգացմանը): Միջազգային աշխատանքային կազմակերպությանն անդամակցելու հետ կապված՝ Կանադայի ներկայացուցիչը նշում է, որ վերջինիս անդամ չեն կարող դառնալ Ազգերի լիգայի ոչ անդամ պետությունները: Քննարկումներից հետո որոշվում է աշխատանքային կազմակերպությանը հանձնարարել որոշելու՝ արդյո՞ք հնարավոր է, որ այս երկրները իրենց պահանջով ընդունվեն կազմակերպության կազմում: Ազգերի լիգայի ոչ անդամ պետությունների՝ Միջազգային աշխատանքային կազմակերպությանն անդամակցության հարցը քննարկվում է նաև 5-րդ հանձնաժողովի դեկտեմբերի 10-ի նիստում, որտեղ ներկայացվում է Ազգերի լիգայի քաղաքական բաժնի պետ Պոլ Մանթուի զեկույցը: Համաձայն այդ զեկույցի՝ Ազգերի լիգայի ոչ անդամ պետությունը կարող էր դառնալ աշխատանքային կազմակերպության անդամ. «քանի որ որևէ երկրում աշխատանքային պայմանների խախտումներն արգելք կհանդիսանան այլ պետությունների համար, ովքեր ցանկանում են բարելավել իրենց պայմանները, կազմակերպությունը ցանկություն ունի որքան հնարավոր է շատ երկրներ ընդունել իր կազմում»[164]:

Քանի որ Ազգերի լիգայի 5-րդ հանձնաժողովի որոշ անդամներ կարծիք էին հայտնել, որ Հայաստանի վերաբերյալ բանաձևը պետք է ինչ-որ կերպ ավելին լինի, քան Բալթյան պետությունների վերաբերյալ նույն բանաձևը, Հայաստանի հետ կապված Ն. Ռաուելը առաջ է քաշում հետևյալ լրացումը» որը նույնպես ներկայացվում է Ազգերի լիգայի Վեհաժողով.

*Վեհաժողովն անկեղծորեն ցանկանում է, որ ԱՄՆ նախագահի ջանքերը, որոնք եռանդուն կերպով պաշտպանություն են գտել Իսպանիայի և Բրազիլիայի կառավարությունների և Ազգերի լիգայի խորհրդի կողմից, կօգնեն պահպանելու հայ ազգը և կապահովեն կայուն կառավարության հաստատումը, որն իր իշխանությունը կիրականացնի հայկական ողջ պետության սահ-*

---

[164] LNA, Minutes of the Committees, eight meeting of the V Committee.

*մաններում, որոնք վերջնականապես կարող են հաստատվել Սևրի պայմանագրով, այն նկատառումով, որ վեհաժողովը կարողանա իր հաջորդ նիստի ժամանակ ընդունել Հայաստանը որպես Ազգերի լիգայի լիիրավ անդամ*[165]:

Նիստի ընթացքում որոշվում է նաև ստեղծել մի ենթահանձնաժողով (Մ. Մոթա (Շվեյցարիա), է. Բենեշ (Չեխոսլովակիա) և Ռ. Սեսիլ (Մեծ Բրիտանիա)), որը զբաղվելու էր անդամության հայտ ներկայացրած երկրներում փոքրամասնությունների պաշտպանությունը ապահովող ձևաչափի մշակմամբ: Ենթահանձնաժողովը պետք է հետևյալ բանաձևը ներկայացներ Վեհաժողով. «Ասամբլեան խորհուրդ է տալիս Բալթյան և Կովկասյան պետություններին՝ Ազգերի լիգային իրենց վերջնական անդամության ժամանակ ձեռք առնել անհրաժեշտ միջոցները՝ փոքրամասնությունների վերաբերյալ պայմանագրերի իրականացումն ապահովելու համար, և վերջիններիս պահանջում է կապի մեջ մտնել Ազգերի լիգայի խորհրդի հետ՝ դիմումի մանրամասները համաձայնեցնելու համար»[166]: Սա ևս մի գործողություն էր, որով Ազգերի լիգայի անդամ պետությունները ձգտում էին համոզել Կովկասյան և Բալթյան պետություններին, որ դրականորեն են վերաբերում իրենց անդամությանը, ինչը պարզապես ժամանակի խնդիր է: Այսինքն՝ Ազգերի լիգան միանգամից երկու խնդիր էր իրականացնում. մի կողմից ժամանակ էր շահում՝ դեպքերի հետագա ընթացքին հետևելու և ճիշտ կողմնորոշվելու համար, իսկ մյուս կողմից էլ իր կողքին էր պահում Բալթյան և Կովկասյան պետություններին: Սրանով 5-րդ հանձնաժողովն ավարտում է իր աշխատանքը և վերջինիս պատրաստած զեկույցները ներկայացվում են Ազգերի լիգայի առաջին Վեհաժողովի քննարկմանը, որը նոր անդամների ընդունելության հարցին անդրադառնում է 1920 թ. դեկտեմբերի 15-ից:

Թեև Հայաստանի անդամակցության հարցը քննարկվեց հաջորդ օրը՝ դեկտեմբերի 16-ին, սակայն հարկ ենք համարում անդրադառնալ նաև առաջին օրվա քննարկումներին: Ելույթ ունեցած էդուարդ Բենեշի խոսքերից ընդգծում ենք միայն Բալթ-

---

[165] Եսայան Ա., նշվ. աշխ., էջ 148-149:
[166] Նույն տեղում:

յան և Կովկասյան պետություններին վերաբերող հատվածը. «Ես միայն ցանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Ազգերի լիգան դեռևս շատ թույլ կազմակերպություն է, և նման պայմաններում որոշ փոքր պետությունների մուտքը շատ նուրբ խնդիր է, քանզի նրանցից ոմանք շատ ծանր դրության մեջ են: Իրադրությունն աղոտ է նաև Եվրոպայի որոշ հատվածներում, և մենք չգիտենք՝ արդյո՞ք վաղը չեն ծագի նոր դժվարություններ և խնդիրներ, որոնք այդ պետություններին կներքաշեն անկարգությունների հորձանուտը»[167]: Բենեշի ակնարկն ավելի քան ակնհայտ էր: Մեջբերենք նաև Պարսկաստանի ներկայացուցչի ելույթից. «Տարաձայնություններ եղան Հայաստանի, Ադրբեջանի և Ուկրաինայի հարցում, որոնք, ցավոք, չունեն հստակ սահմանագծված սահմաններ և կայուն կառավարություն (մի քանի օրվա ընթացքում Ադրբեջանին և Ուկրաինային միացել էր նաև Հայաստանը-է.Գ.): Նրանք չեն բավարարում Ազգերի լիգայի անդամության պահանջները, սակայն հույս ունենք, որ կգա այն օրը, երբ հնարավոր կլինի նաև նրանց անդամությունը»[168]: Իսկ ի՞նչ ընդհանրություն ունեին այս երեք պետությունները՝ խորհրդային կարգերի առկայությունը: Սրանից հետո Էմիր-Զոկա-էդ-Դոուլեհը երկար անդրադառնում է Ցարական Ռուսաստանի տարածքի վրա առաջացած պետությունների էթնիկական, լեզվական, մշակութային և այլ տարբերություններին՝ համեմատելով դրանք Ռուսաստանի հետ:

Բավական անկեղծ է արտահայտվում նաև Շվեյցարիայի պատվիրակ Մ. Մոթթան՝ նշելով, որ Ազգերի լիգայի պարտավորությունն է իր ողջ ուշադրությունը հրավիրել ռուսական խնդրի վրա: Զարգացնելով Մոթթայի խոսքը՝ Ռ. Վիվիանին պնդում է, որ Բալթյան և Կովկասյան պետությունների անդամությունը մերժվեց ոչ թե 10-րդ հոդվածի կամ որևէ այլ պատճառով, այլ նրա համար, որ վտանգավոր կլիներ մասնատել ռուսական հարցը, որը պետք է մնա միասնական[169]:

---

[167] Сабанин А., նշվ. աշխ., էջ 48:

[168] Մշակ, հունվար 29, 1921:

[169] Տե՛ս Сабанин А., նշվ. աշխ., էջ 48-49:

Արդեն որոշակիորեն Բալթյան և Կովկասյան երկրների ընդունելության հարցը քննարկվում է Վեհաժողովի դեկտեմբերի 16-ի առավոտյան նիստում: Դրական լուծում տալով Ֆինլանդիայի, Լյուքսեմբուրգի, Կոստա Ռիկայի անդամության հայտերին (5-րդ հանձնաժողովը արտահայտվել էր հօգուտ սրանց ընդունելության[170])՝ Վեհաժողովի նիստը ձեռնամուխ է լինում այն պետությունների անդամության հարցերի քննարկմանը, որոնց անդամակցությունը Ազգերի լիգային 5-րդ հանձնաժողովը հնարավոր չէր համարել և առաջարկել էր միայն նրանց մասնակցությունը տեխնիկական կազմակերպությունների աշխատանքներին: Օրակարգում առաջինը դրված էր Հայաստանի հարցը, որի վերաբերյալ զեկույցը ներկայացնում է Ֆ. Նանսենը: Նա հատկապես նշում է, որ հանձնաժողովը մեծ ցանկություն ուներ տեսնելու Հայաստանը որպես Ազգերի լիգայի անդամ, սակայն հանգամանքներն այնպիսին են, որ դա անել հնարավոր չէ, քանի որ պետության սահմանները որոշված չեն, հետևաբար կառավարությունը կայուն համարվել չի կարող, իսկ երկիրն էլ ծանր կացության մեջ է: Նանսենը մատնանշում է նաև Սևրի պայմանագրի վավերացված չլինելու հանգամանքը՝ որպես խոչընդոտ Ազգերի լիգային Հայաստանի անդամակցելու համար: «Եթե Սևրի պայմանագիրը վավերացվեր, ապա Հայաստանը մեխանիկորեն դառնալու էր Ազգերի լիգայի անդամ: Սակայն Սևրի պայմանագիրը վավերացված չէ, և հետևաբար հանձնաժողովը չի կարող հաշվի առնել այդ հնարավորությունը»[171]: Նանսենը այս անգամ ևս խոսում է այն մասին, որ Հայաստանի համար ավելի նպատակահարմար կլիներ մանդատար պետության հովանավորությունը: Նանսենից հետո ելույթ է ունենում Ն. Ռաուելը (Կանադա), որը ևս մատնանշում է այն երկու դժվարությունները, որոնք ընկած են Հայաստանի ընդունելության ճանապարհին. սահմանների անճշտությունը և կառավարության անկայունությունը: Սակայն միևնույն ժամանակ կանադացի պատվիրակն ընդգծում է, որ Ազգերի լիգայի խորհրդի ակտիվ ջանքերի շնոր-

[170] Walters F. P. A history of the League of Nations, vol. I, London New York Toronto, 1952, Oxford University Press. p. 588.

[171] LNA, The Records of the First Assembly Plenary meetings, p. 588.

հիվ ԱՄՆ նախագահի միջնորդությամբ և Բրազիլիայի և Իսպանիայի աջակցությամբ հնարավոր կլինի հասնել այդ խոչընդոտների վերացմանը (խոսքը վերաբերում է թուրք-հայկական պատերազմին, որը դադարեցնելու միջնորդության համար իրենց համաձայնությունն էին տվել ԱՄՆ նախագահը, Բրազիլիայի և Իսպանիայի կառավարությունները):

Այնուհետև Հայաստանի անդամության հարցը դրվում է քվեարկության, որը մերժվում է 21 ձայնով՝ ընդդեմ 8-ի: Կողմ են քվեարկում Կանադան, Պերուն, Պորտուգալիան, Ռումինիան, Սալվադորը, Շվեյցարիան, Ուրուգվայը, Վենեսուելան, դեմ՝ Ավստրալիան, Բոլիվիան, Բրազիլիան, Բրիտանական կայսրությունը, Չիլին, Կոլումբիան, Կուբան, Դանիան, Իսպանիան, Հունաստանը, Հնդկաստանը, Իտալիան, Ճապոնիան, Պանաման, Նորվեգիան, Նոր Զելանդիան, Պանաման, Պարագվայը, Նիդերլանդները, Հարավսլավիայի Հանրապետությունը, Շվեդիան: Ջեռնպահ կամ բացակա էր 13 ներկայացուցիչ[172]:

Սրանից հետո Վեհաժողովը ծեռնամուխ է լինում տեխնիկական կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության մասնակցության հարցի քննարկմանը[173]: Պարզվում է, որ Հայաստանին «օգնելու ցանկություններով տոգորված» Ազգերի լիգան սկսում է կասկածել անգամ այս հարցում: Բրիտանական կայսրության ներկայացուցիչ Ջորջ Բարնեսը, որը մասնագիտական կազմակերպություններով զբաղվող հանձնաժողովի անդամ էր, նշում է, որ քանի որ Հայաստանը ինքնիշխան պետություն է, ապա կարող է մասնակցել տարբեր կոնֆերանսների և ստորագրել համապատասխան կոնվենցիաներ և այս ճանապարհով մասնակցել մասնագիտական կազմակերպությունների աշխատանքներին:

Իսկ մասնագիտական կազմակերպություններին մասնակցելու վերաբերյալ 5-րդ հանձնաժողովի բանաձևը նա որակում է որպես Ազգերի լիգայի անդամների խիղճը հանգստացնելու միջոց, որը, ըստ էության, ոչինչ չէր նշանակում Հայաստանի հա-

[172] Տե՛ս LNA, The Records of the First Assembly Plenary meetings, pp. 587-594:

[173] Նույն տեղում, էջ 594-597:

մար: Ռ. Սեսիլը ներկաների ուշադրությունը հրավիրում է 10-րդ հոդվածի վրա: Նա համոզված է, որ Ազգերի լիգայի անդամների մեծ մասը չի կարողանա իրականացնել այդ հոդվածից բխող պարտավորությունները, եթե Հայաստանն ընդունվի Ազգերի լիգայի մեջ: Եվ մասնագիտական կազմակերպություններին և Աշխատանքի միջազգային բյուրոյին մասնակցելու հնարավորությունը ինչ-որ կերպով կարող էր մեղմել Հայաստանի վիճակը: Ռ. Սեսիլը առաջարկում էր Հայաստանին հնարավորություն ընձեռել իր ներկայացուցչին ուղարկելու Վեհաժողով, որն իրավունք կունենար հատուկ դեպքերում հանդես գալու նիստերի ժամանակ: Ըստ նրա՝ 5-րդ հանձնաժողովի առաջարկած բանաձևը չնչին առավելություն էր տալիս Հայաստանին:

Քննարկումների ժամանակ Ավստրալիայի ներկայացուցիչ Հանթեր Միլլենը հարց է բարձրացնում, թե արդյո՞ք ճիշտ է թերթերում հայտնված այն տեղեկատվությունը, որ անդամության հայտ ներկայացնելուց հետո Հայաստանի կառավարությունը տապալվել է, և իշխանության է եկել խորհրդային կառավարությունը, որը ճանաչել է Ռուսաստանը, և երկիրը տոնում է հաշտությունն այն պետությունների հետ, որոնց հետ նախկինում պատերազմի մեջ էր: Պարզվում է, որ ո՛չ Վեհաժողովը, ո՛չ Խորհուրդը և ո՛չ էլ Գլխավոր քարտուղարը պաշտոնական տեղեկատվություն այդ մասին չէին ստացել:

Հետագա քննարկումներից պարզ է դառնում, որ 5-րդ հանձնաժողովի բանաձևը ոչ թե ենթադրում էր անմիջապես Հայաստանի մասնակցությունը մասնագիտացված կազմակերպություններին, այլ այն, որ Հայաստանի ցանկության և դիմումի դեպքում միայն կարող էր մասնակցել վերոհիշյալ մարմինների աշխատանքներին: Կրկին բավական մեծ ակտիվություն է դրսևորում Բրիտանիայի ներկայացուցիչը, որն առաջարկում է բաց թողնել այս հարցը և անցնել օրակարգի մյուս խնդիրներին՝ պատճառաբանելով, որ «հարցի դրական լուծումը կեղծիք կլինի, իսկ բացասականը՝ ապտակ հայ ժողովրդի համար»[174]: Քվեար-

---

[174] The First Assembly of the League of Nations, IV, Boston 1921, published bimonthly by World Peace Foundation, www.archive.org/details/firstassemblyof l00worlrich.

կությունից խուսափելու միակ միջոցը քննարկումը դադարեցնելն էր, և նման ձևով կարելի էր ազատվել այդ դժվարին խնդրից: Բրիտանիայի ներկայացուցիչը պնդում է այս ձևի վրա: Ֆրանսիայի ներկայացուցիչ Ռենե Վիվիանին առաջարկում է հարցը վերադարձնել 5-րդ հանձնաժողով, քանի որ, ինչպես ինքն էր պնդում, որքան էլ Ազգերի լիգան խղճահարությամբ վերաբերի Հայաստանին, կա մի փաստ, որի մասին իրենք բավականաչափ տեղեկացված չեն. *«արդյո՞ք Հայաստանը կլանված է սովետների կողմից»*[175]: Քվեարկությամբ որոշվում է ընդունել Վիվիանիի առաջարկը և տեխնիկական կազմակերպություններին Հայաստանի մասնակցության հարցը վերադարձնել 5-րդ հանձնաժողով: Հստակեցնելու համար նշենք, որ 5-րդ հանձնաժողովն իր աշխատանքներն ավարտելու էր գրեթե Վեհաժողովի հետ համատեղ՝ դեկտեմբերի 18-ին, այսինքն՝ ընդամենը երկու օր հետո: Ակնհայտ էր, և Վեհաժողովի անդամները իրենք էլ քաջ գիտակցում էին, որ երկու օրվա ընթացքում 5-րդ հանձնաժողովը չէր կարող որևէ որոշում կայացնել: Բացի այդ, երկու օրում չէր վերանալու գլխավոր արգելքը՝ խորհրդային կարգերը Հայաստանում: Այս մերժումից հետո Վեհաժողովը ձեռնամուխ է լինում Կանադայի ներկայացուցիչ Ն. Ռաուելի առաջարկի քննարկմանը, որը նույնպես Ռ. Սեսիլը առաջարկում է վերադարձնել 5-րդ հանձնաժողովի քննարկմանը: Հիշեցնենք, որ Ն. Ռաուելը լրացում էր մտցրել 5-րդ հանձնաժողովի՝ Հայաստանին վերաբերող բանաձևի մեջ, որը վերաբերում էր թուրք-հայկական պատերազմում ԱՄՆ-ի, Իսպանիայի և Բրազիլիայի միջնորդությանը, որոնց օգնությամբ Հայաստանում կապահովվեր կայուն կառավարություն, և երկիրը հնարավորություն կստանար անդամագրվելու Ազգերի լիգային:

Վեհաժողովը մտահոգ էր, որ տեղյակ չլինելով Հայաստանում կատարվող իրադարձություններին, կարող է ծիծաղելի դրության մեջ հայտնվել՝ առաջարկելով ԱՄՆ-ի միջնորդությունը՝ ռազմական գործողությունները դադարեցնելու նպատակով:

---

[175] **Ohanian P. C.** La cuestion Armenia y las relaciones internacionales, Tomo VI (1920), Buenos Aires 2010, p. 1301.

Սակայն Ռաուելին հաջողվում է պաշտպանել իր առաջարկը: Ըստ նրա, եթե նույնիսկ Հայաստանում արդեն հաստատվել էին խորհրդային կարգեր, ապա առավել ևս անհրաժեշտ էր օգնել հայերին՝ կայուն կառավարություն ստեղծելու գործում: Նիստը քվեարկում է hօգուտ այս առաջարկի՝ դրանով ավարտելով Հայաստանի անդամության հարցի քննարկումը Ազգերի լիգայի Վեհաժողովի առաջին նստաշրջանում: Շարունակելով Կովկասյան և Բալթյան պետությունների անդամության հարցի քննարկումները՝ նշենք, որ Վրաստանին և Բալթյան պետություններին թույլ տրվեց մասնակցել տեխնիկական կազմակերպությունների աշխատանքներին: Վրաստանի հանդեպ այս վերաբերմունքի մասին խաղաղության կոնֆերանսում վրացական պատվիրակության անդամ Զուրաբ Ավալովը գրում է. «1920 թվականի մայիսի 7-ին Ռուսաստանը ճանաչել էր Վրաստանը, այդ պատճառով Ազգերի լիգան կարծում էր, թե Ռուսաստանը չի հարձակվի Վրաստանի վրա, և այդ պատճառով էլ Վրաստանի կողմնակիցները ավելի շատ էին»[176]: Սակայն Վրաստանում նույնպես 1921 թ. սկզբին հաստատվեցին խորհրդային կարգեր՝ դրանով իսկ զրկելով Վեհաժողովի երկրորդ նստաշրջանում անդամության հարցի դրական լուծումից: Իսկ ահա Բալթյան պետությունները, որտեղ խորհրդային իշխանությունը հաստատվեց ավելի ուշ, 1921 թվականին Ազգերի լիգայի երկրորդ Վեհաժողովի ժամանակ դարձան Ազգերի լիգայի անդամներ, թեև Վեհաժողովի առաջին նստաշրջանում նրանց օգտին քվեարկել էր ընդամենը 5 պետություն:

Այսպիսով, ուսումնասիրելով Ազգերի լիգային Հայաստանի անդամակցության հարցը, գալիս ենք հետևյալ եզրահանգումների.

1. Ակնհայտ էր, որ Հայաստանի Հանրապետության դիմումը բավարարում էր Ազգերի լիգայի կանոնադրության առաջադրած բոլոր պահանջները: Այս հանգամանքը ապացուցում էր ինչպես Ազգերի լիգայի գլխավոր քարտուղարի զեկույցը Հայաստանի անդամակցության վերաբերյալ, այնպես էլ 5-րդ հանձնաժողովի

---

176 **Авалов З.** Независимость Грузии в международной политике, Париж, 1924, с. 298.

երրորդ ենթահանձնաժողովի զեկույցը, որոնք դրական էին արձագանքել Հայաստանի Հանրապետության անդամության դիմումին: Սակայն Լոնդոնից դեկտեմբերի 3-ին ստացված հեռագիրը լիովին փոխում է դեպքերի ընթացքը: Որպես Հայաստանի անդամության մերժման փաստարկ՝ հեռագիրը մատնանշում էր Սևրի պայմանագրի վավերացրած չլինելու հանգամանքը, որով Հայաստանը հռչակվում էր ազատ և անկախ պետություն: Սակայն այս փաստարկը լիովին անհիմն էր, քանի որ Սևրի պայմանագրի 88-րդ հոդվածով Թուրքիան հայտարարում էր, որ ճանաչում է Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն, որն արդեն արել են դաշնակից պետությունները[177]: Այսինքն՝ Հայաստանի՝ որպես ազատ և անկախ պետության գոյությունը որևէ կերպ չէր առնչվում Սևրի պայմանագրի հետ, որը լոկ Թուրքիայի հետ հաշտության պայմանագիր էր: Բացի այդ, 1920 թ. օգոստոսի 10-ին Հայաստանը կնքել էր նաև փոքրամասնությունների վերաբերյալ միջազգային պայմանագիր: Դրա նախաբանը սկսվում էր հետևյալ կերպ. «Գլխավոր դաշնակից պետությունները մի կողմից և Հայաստանը մյուս կողմից, քանի որ Գլխավոր դաշնակից պետությունները ճանաչում են Հայաստանը որպես ինքնիշխան և անկախ պետություն...»[178]: Այստեղ հարկ ենք համարում հավելել նաև Ազգերի լիգայի քաղաքական բաժնի ղեկավար Պոլ Մանթուի խոսքերը, որոնք ասվել էին Սևրի պայմանագրի ստորագրումից հետո. «*Կասկած չկա, որ Հայաստանը այժմ մի պետություն է, որին դե ֆակտո և դե յուրե ճանաչել են այն պետությունները, որոնք թույլ են տվել վերջինիս ստորագրել Սևրի պայմանագիրը*»[179]: Հայաստանը ստորագրել էր նաև Ազգերի լիգայի կանոնադրությունը, սակայն չէր հայտնվել Ազգերի լիգայի սկզբնական անդամների ցուցակում, ինչպես Լեհաստանը, Չեխոսլովակիան, Հեջազը: Պատ-

---

[177] Տե՛ս **Poidebard A.** Le Transcaucase et la republique d'Arme'nie dans les texts Diplomatiques du traite' de Brest-Litovsk au traite' de Kars 1918-1921, Paris 1924, pp. 46-47, նաև՝ Pamphlets Armenia and the League of Nations, Geneva, 1924, p. 9:

[178] Տե՛ս Հայրենիք ամսագիր, N 2, 1933, էջ 64-65:

[179] **Барсегов Ю.**, նշվ. աշխ., էջ 531:

ճառներից մեկն այն էր, որ Վերսալյան համակարգի սահմաններում Թուրքիայի հետ հաշտության պայմանագիրը, որի մի կողմ էր լինելու նաև Հայաստանը, կնքված չէր: Բացի այդ, սկզբում հարց էր դրված հոգատարություն սահմանել Հայաստանի վրա: Հայաստանը ոչ միայն միակ դաշնակիցն էր, որ չմտավ Ազգերի լիգայի մեջ, այլև դրվեց Ադրբեջանի, Վրաստանի, Կոստա Ռիկայի, Ուկրաինայի հետ նույն հարթակի վրա, որոնք երբեք դաշնակից պետություն չէին եղել և չէին ստորագրել Ազգերի լիգայի կանոնադրությունը:

2. Հայաստանի Հանրապետության անդամության համատեքստում մշտապես արծարծվում էր Ազգերի լիգայի կանոնադրության 10-րդ հոդվածը, որը, սակայն, կարծում ենք էական դեր չի խաղացել Հայաստանի Հանրապետության անդամակցության մերժման հարցում: Մենք դրա բովանդակությանը արդեն անդրադարձել ենք այս գլխում, ուստի այդ մասին այլևս չենք խոսի: Սակայն մեր իրավացիությունը 10-րդ հոդվածի երկիմաստության հարցում կփորձենք ապացուցել հենց Ազգերի լիգայի անդամ պետությունների միջոցով: Տասներորդ հոդվածի բովանդակությունը, դրա իրական իմաստը հուզում էր նաև Ազգերի լիգայի անդամներին, որոնք միանշանակորեն չէին կարողանում մեկնաբանել այն: 1920 թվականին Ավստրիայի անդամության հարցի հետ կապված 5-րդ հանձնաժողովը հետևյալ կերպ բացատրեց 10-րդ հոդվածի բովանդակությունը. «10-րդ հոդվածը ապահովում է Ազգերի լիգայի անդամ յուրաքանչյուր երկրի տարածքային ամբողջականությունը: Այն միտված է դատապարտելու արտաքին ագրեսիաները, որոնք նպատակ են հետապնդում խախտելու անդամ պետությունների տարածքային ամբողջականությունը և քաղաքական անկախությունը, որոնք կարող են կոչ ուղղել Ազգերի լիգայի խորհրդին՝ ագրեսիաներին դիմակայելու համար միջոցներ ձեռնարկելու խնդրանքով»[180]: Այս մեկնաբանության քննարկումների ժամանակ Շվեյցարական Համադաշնության նախագահին ավելի հստակ բացատրություն տվեց 10-րդ հոդվածին. «Հոդվածը երկրներին պաշտպանում է արտաքին ագրեսիաներից: Հոդվածը այլ բան չի ասում: Այն պաշտպանիչ

[180] **Mandelstam A.,** նշվ. աշխ., էջ 125-126:

գործառույթ չունի: Այն հակաիարվածի գործիք չէ: Ազգերի լիգան ցանկանում է լինել ազատության ուժ, խաղաղ զարգացման ապահովման գործոն»[181]: Վեհաժողովի որոշմամբ 1920 թվականին ստեղծվում է մի հանձնաժողով, որը պետք է փոփոխություններ և մեկնաբանություններ կատարեր Ազգերի լիգայի կանոնադրության մեջ: Անդրադառնալով 10-րդ հոդվածին՝ հանձնաժողովը մեկնաբանում է այն որպես արտաքին ագրեսիան դատապարտող և պետությունների քաղաքական անկախությունը և տարածքային ամբողջականությունը կարևորող հոդված: Ավելի խորանալով հոդվածի բովանդակության մեջ՝ հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ 10-րդ հոդվածը հռչակում է այն սկզբունքը, որ ապագայում քաղաքակիրթ աշխարհը չի կարող հանդուրժել ագրեսիան՝ որպես պետությունների տարածքային կարգավիճակի և քաղաքական անկախության փոփոխման ձև[182]:

Միաժամանակ Ազգերի լիգան պարտավորություններ էր ստանձնել նաև պաշտպանել պետությունների տարածքային ամբողջականությունն ու անկախությունը յուրաքանչյուր արտաքին ագրեսիայից (լիներ դա անդամ պետություն, թե ոչ): Այս պարտավորության կատարումը ապահովելու նպատակով Ազգերի լիգայի խորհուրդը որոշ միջոցներ էր առաջարկում, որոնք ծևակերպված էին Կանոնադրության 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 19-րդ հոդվածներում: Սակայն պետք է նշել, որ այս հոդվածներից և ոչ մեկը պարտադիր ռազմական գործողություններ չէր ենթադրում, և պաշտպանության բնագավառում միջոցների ընտրության հարցը թողնում էր Ազգերի լիգայի խորհրդի հայեցողությանը: Բացի դա, Ազգերի լիգան չուներ միջազգային զինված ուժեր, և այս հանգամանքը հենց սկզբից անհնարին էր դարձնում ռազմական միջամտության յուրաքանչյուր հնարավորություն: Իսկ ռազմական արշավանք

---

181 Charles G. Fenwick, Notes on International Affairs: The Meeting of the Assembly of the League of Nations, *The American Political Science Review*, Vol. 15, No. 1 (Feb., 1921), p. 100.

182 Տե՛ս Simmons B. A. & Steinberg R., International law and International relations, 2006, էջ 263-265:

կազմակերպելու մասին Ազգերի լիգայի խորհրդի որոշման դեպքում յուրաքանչյուր պետություն ինքը կամովին պետք է զորք տրամադրեր: Օրինակ, 1920 թվականին Լեհաստանի և Լիտվայի միջև տարածքային վեճի հարթման նպատակով Ազգերի լիգայի խորհրդի խնդրանքով որոշ անդամ պետություններ զորք տրամադրեցին՝ վիճելի տարածքներում (Վիլնյուս և Սուալկի տարածաշրջան) ընտրությունների ժամանակ կարգուկանոն ապահովելու համար[183]:

Այսպիսով, 10-րդ հոդվածի պարտավորություններից ելնելով չէր, որ Ազգերի լիգան մերժեց Հայաստանի Հանրապետության ընդունելության հարցը, ինչպես դա փորձում էին ներկայացնել անդամ պետությունների պատվիրակներից ոմանք: Իսկ տիա կազմակերպության Կանոնադրության որոշ հոդվածներ մի շարք այլ միջոցներ էին առաջարկում ագրեսոր պետության դեմ (դիվանագիտական, տնտեսական, ռազմական և այլն): Եվ ցանկության դեպքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նպատակով կարող էին կիրառվել հենց նմանատիպ պատժամիջոցներ:

3. Չնայած Ազգերի լիգայի անդամ երկրների պատվիրակները բացահայտորեն չէին նշում Հայաստանի հարցում Խորհրդային Ռուսաստանի դերը, սակայն դեպքերի մանրամասների ուսումնասիրությունը երկմտելու տեղիք չի թողնում: Իրավիճակը ճիշտ հասկանալու համար պարզապես անհրաժեշտ էր համատեղ ուսումնասիրել Կովկասյան և Բալթյան պետությունների անդամության դիմումների ճակատագիրը: Այս հարցում ամենագլխավորը խորհրդային կարգերի հաստատումն էր Հայաստանում և Խորհրդային Ռուսաստանի դերը տարածաշրջանում: ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը, անդրադառնալով վերոնշյալ պետությունների խնդրին, նշել էր, որ դրանց ճակատագրի հարցը պետք է լուծվի Ռուսաստանի հետ, քանի որ այդ պետությունները

[183] Տե՛ս Charles Noble Gregory, The First Assembly of the League of Nations, *The American Journal of International Law*, Vol. 15, No. 2 (Apr., 1921), էջ 249-250:

կազմում են «ռուսական խնդրի» բաղկացուցիչ մասը[184]: Ակըն-հայտ է, որ ԱՄՆ նախագահը գիտակցում էր, որ Ռուսաստանը չի հրաժարվի նախկինում Ցարական Ռուսաստանի մաս կազմած պետությունների նկատմամբ վերահսկողությունից: Այս փաստը գիտակցում էին նաև Ազգերի լիգայում:

Հասկանալի դարձնելու համար Ազգերի լիգայի և բոլշևիզ-մի փոխհարաբերությունները, նշենք, որ կազմակերպությունը իր նախաձեռնողներից ոմանց կարծիքով լինելու էր բոլշևիզմի հակակշիռ և դրա դեմ պայքարելու գործիք, որը պահպանելու էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները բոլշևիզմի տա-րածման վտանգից[185]: Ազգերի լիգայի անդամ պետություններն այն կարծիքին էին, որ բոլշևիկյան Ռուսաստանը՝ որպես թշնա-մական և անվստահելի պետություն, ոչ մի պարագայում չէր կա-րող դառնալ կազմակերպության անդամ[186]: Մինչդեռ դեմոկրա-տական Ռուսաստանը ոչ միայն հրավիրվում էր կազմակեր-պություն, այլև պետք է իր պատվավոր տեղը զբաղեցներ լիգայի Խորհրդի անդամների շարքում[187]: Ինչ վերաբերում էր բոլշևիկ-ներին, ապա վերջիններս Ազգերի լիգան համարում էին «բուր-ժուա գողերի լիգա», որի նպատակն է ճնշել ժողովուրդներին և բանվորական դասի հեղափոխությունը[188]:

Այսպիսով՝ մի կողմից անհրաժեշտ էր հաշվի նստել սրա հետ, մյուս կողմից՝ պաշտպանվել բոլշևիկյան վտանգից: Սրա-նով էր պայմանավորված Ազգերի լիգայի քաղաքականությունը նաև Հայաստանի հարցում, որը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ էր հարցը դիտարկել նախկին Ռուսական կայսրու-թյան մաս կազմած մյուս պետությունների հետ նույն համա-տեքստում: Թեև անվիճելի է Թուրքիայի դերակատարությունը

---

[184] Տե՛ս Briguet P. E. Le Republic Caucasus et La League. Les Nations opprimes el la Socie'te' des Nations, Paris, 1938, էջ 19-20:

[185] Տե՛ս Temperley H. V., A History of Peace Conference in Paris, vol. VI, London, 1924, pp. 579-580.

[186] Տե՛ս Buzinkai Donald I., "The Bolsheviks, the League of Nations and the Paris Peace Conference, 1919" *Soviet Studies 19, no. 2 (Oct., 1967):* 260.

[187] Տե՛ս **Miller D. H.,** The Drafting of the Covenant, vol. I, New York, 1928, p. 296.

[188] Տե՛ս Buzinkai Donald I, նշվ. աշխատ., էջ 259.

Հայկական հարցում, սակայն տվյալ դեպքում պետք է ընդգծել, որ իրավական առումով անդամակցության հարցը վերաբերում էր Հայաստանի Հանրապետությանը, որը ստեղծվել էր նախկին Ռուսական կայսրությանը պատկանած հողերի վրա և, որի տարածքը հիմնականում ընդգրկում էր Արևելյան Հայաստանի պատմական հողերը: Ուստի, աշխարհաքաղաքական առումով նորանկախ պետությունը մեծ մասամբ ընկնում էր Ռուսաստանի հետաքրքրությունների ոլորտում:

Իսկ ինչպե՞ս ընթացան դեպքերը: Նախ, անդամության հայտ ներկայացրած Բալթյան և Կովկասյան պետությունների դիմումները հանձնվեցին 5-րդ հանձնաժողովի քննարկմանը: Հանձնաժողովը հենց սկզբից բացասական պատասխան տվեց Ադրբեջանի և Ուկրաինայի դիմումներին[189]: Չնայած հանձնաժողովը իր բացասական պատասխանը պայմանավորում էր վերոհիշյալ պետությունների սահմանների անճշտության և «դե յուրե» ճանաչված չլինելու հետ, սակայն իրական պատճառը այլ էր. և՛ Ադրբեջանում, և՛ Ուկրաինայում հաստատվել էին խորհրդային կարգեր: Ինչ վերաբերում էր Հայաստանին, Վրաստանին և Բալթյան պետություններին, ապա քննարկումների սկզբում ամեն ինչ բարեհաջող էր ընթանում: Այս պետությունների վերաբերյալ 5-րդ հանձնաժողովի պատասխանը դրական էր: Սակայն դեկտեմբերի 3-ին ստացվեց Հայաստանի վերաբերյալ 3 մեծ տերությունների (Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա) լոնդոնյան նամակը, որով անհնար էր համարվում Հայաստանի Հանրապետության անդամակցությունը՝ որպես պատճառ նշելով Սևրի պայմանագրի վավերացված չլինելը և Վիլսոնի գծած սահմանների չափազանց մեծ լինելը: Իսկ ինչ վերաբերում էր դեկտեմբերի 3-ի հեռագրին, ապա այնտեղ մատնանշված պատճառները իրականում ձևական բնույթ էին կրում: Շատ հեղինակներ այս նամակի հայտնվելու պատճառը կապում են դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև կնքված Ալեքսանդրապոլի պայմանագրի հետ՝ մոռանալով նույն օրը կնքված մեկ այլ համա-

---

[189] Տե՛ս **Manley O. Hudson**, Membership in the League of Nations, *The American Journal of International Law*, Vol. 18, No. 3 (Jul., 1924), էջ 446:

ծայնագրի մասին (Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև): Իրականությունն այն էր, որ դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը կնքված Լեգրան-Դրո համաձայնագրով Հայաստանում հաստատվել էին խորհրդային կարգեր:

Ավելի համոզիչ լինելու համար հիշեցնենք, որ թուրք-հայկական պատերազմը սկսվել էր դեռ սեպտեմբերի 24-ին, և հենց սկզբից պատերազմն ընթանում էր հօգուտ Թուրքիայի: Անդամության հարցի քննարկման օրերին (նոյեմբեր-դեկտեմբեր) ակնհայտ էր, որ Թուրքիան հաղթելու էր: Նույնիսկ ավելին, հնարավոր էր, որ պատերազմի հետևանքով Հայաստանն այլևս դադարեր գոյություն ունենալուց: Հետևաբար, եթե Հայաստանի ընդունելության հարցի մերժումը կապված լիներ Թուրքիայի հետ, ապա 5-րդ հանձնաժողովը հենց սկզբից բացասական պատասխան կտար:

Այսպիսով, Ադրբեջանից և Ուկրաինայից հետո Հայաստանը երրորդն էր, որտեղ հաստատվեցին խորհրդային կարգեր: Արդյունքը եղավ այն, որ Հայաստանը, ի տարբերություն Վրաստանի և Բալթյան պետությունների, չընդունվեց անգամ Ազգերի լիգայի տեխնիկական կազմակերպությունների մեջ (վերջիններիս թույլատրվեց մասնակցել Ազգերի լիգայի տեխնիկական կազմակերպությունների՝ առողջապահության, տրանզիտի, տնտեսական և ֆինանսական աշխատանքներին[190]):

Կոլումբիայի ներկայացուցիչ Անտոնիո Ռեստրեպոն, անդրադառնալով Հայաստանի Հանրապետության անդամության հարցին, նշում է, որ քվեարկեց Հայաստանի դեմ, քանի որ Հայաստանը չուներ այն իրավական պայմանները, որոնք անհրաժեշտ են պետության գոյության համար: «Հայաստան են ներխուժել մի կողմից քեմալականները, մյուս կողմից՝ բոլշևիկները: Նրանց հետ կնքված հաշտությունը այն հաշտությունը չէր, որ մենք սպասում էինք մեր Հայաստանից: Ազատ Հայաստանը բնավ նման չէ ներկա Հայաստանին, որը չունի գծված սահմաններ, հաստատուն կառավարություն և ազատ չի կառավար-

---

[190] Տե՛ս Charles Noble Gregory, The First Assembly of the League of Nations, *The American Journal of International Law*, Vol. 15, No. 2 (Apr., 1921), էջ 249:

վում: Այլ բան են Վրաստանը և Բալթյան պետությունները»[191]:

Մեջբերենք նաև Պարսկաստանի ներկայացուցչի խոսքերը. «Հայաստանի համար բոլոր տվյալները հօգուտ Հայաստանի էին, սակայն երկրի դրությունը այժմ կայուն չէ, և Հայաստանը դե ֆակտո գոյություն չունի (եթե Հայաստանում հաստատվել էին խորհրդային կարգեր, ապա Հայաստանը այլևս գոյություն չունե՞ր-Է.Գ.): Իսկ Վրաստանը կազմավորված երկիր է, հաստատուն կառավարությամբ և զորքով, որը կարողացավ պաշտպանել երկիրը թշնամիներից (նկատի ունի Ռուսաստանը -Է.Գ.)»[192]: Իսկ ինչո՞ւ էր Պարսկաստանը այդքան շահագրգռված և ակտիվ բոլշևիկյան Ռուսաստանի հետ կապված հարցերում: Խնդիրն այն էր, որ Պարսկաստանն ինքը խնդիրներ ուներ բոլշևիկյան կառավարության հետ: Վերջինիս անմիջական մասնակցությամբ և աջակցությամբ 1920 թ. հունիսին Պարսկաստանի Գիլան գավառում ստեղծվել էր ինքնահռչակ Պարսկական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը (գոյատևեց մինչև 1921 թվականի սեպտեմբեր), ինչպես նաև խորհրդային իշխանություններն աջակցում էին Պարսկաստանի քրդաբնակ շրջաններում Մահաբադի հանրապետություն ստեղծելու քրդական շարժումներին: Ազգերի լիգայում պարսկական ներկայացուցչությունը նույնիսկ դիմել էր կազմակերպության Խորհրդին՝ Ռուսաստանի դեմ օգնություն ստանալու խնդրանքով[193]:

Իսկ Վրաստանի հարցում Ազգերի լիգան կարևորում էր նաև այն հանգամանքը, որ նրա սահմանները ճանաչված էին Ռուսաստանի հետ կնքված պայմանագրով[194], իսկ մյուս կողմից մատնանշում էին Ռուսաստանից Վրաստանի՝ Կովկասյան լեռնաշղթայով բաժանված լինելու հանգամանքը (ռուս-վրացական սահմանը խորհրդային կառավարությունը ճանաչել էր 1920թ. մայիսի 7-ին):

---

[191] Ժողովուրդի Ձայն, դեկտեմբերի 25, 1920:

[192] Աշակ, N 19, հունուար 29, 1921:

[193] Տե՛ս Charles G. Fenwick, Notes on International Affairs: The Outlook for International Law, *The American Political Science Review*, Vol. 14, No. 3 (Aug., 1920), էջ 492:

[194] Փափազյան Վ., նշվ. աշխ., էջ 119:

Ամփոփելով Հայաստանի ու Վրաստանի ընդունելության հարցերի քննարկումը՝ նշենք, որ քվեարկության արդյունքը եղավ այն, որ Հայաստանի ընդունելության օգտին (որի հասցեին բազմաթիվ ջերմ խոսքեր էին ասվել) ավելի քիչ ձայներ եղան, քան Վրաստանի (Վրաստանի համար՝ 10 կողմ, 14 դեմ, Հայաստանի համար՝ 8 կողմ, 21 դեմ[195]):

4. Ինչ վերաբերում էր թուրք-հայկական պատերազմին, ապա, ըստ մեզ, այն, ըստ էության, էական նշանակություն չի ունեցել Հայաստանի Հանրապետության անդամության հարցը մերժելու գործում: Թուրք-հայկական պատերազմի վերաբերյալ քննարկումները Ազգերի լիգայի Վեհաժողովում ընթանում էին անդամության հարցից տարանջատված՝ պահպանելով լոկ փոխկապակցվածության արտաքին տպավորությունը: Այսպես, հոկտեմբերի 22-ին (այս ընթացքում ռազմական գործողությունները ընթանում էին լիովին հօգուտ թուրքերի) Ազգերի լիգայի խորհրդի նախագահ Պոլ Հյումանսի տանը, որտեղ հրավիրված էին բոլոր պատվիրակությունները, Ահարոնյանի հետ զրույցի ժամանակ և՛ Հունաստանի դեսպանը, և՛ Ազգերի լիգայի գլխավոր քարտուղար էրիկ Դրամմոնդը, և՛ երկրորդ քարտուղար Պոլ Մանթուն հայտարարում են, որ Հայաստանը առանց որևէ առարկության կընդունվի Ազգերի լիգայի անդամ[196]:

Որ Ազգերի լիգան իրոք հակված էր ընդունելու Հայաստանի Հանրապետության անդամակցությունը, ապացուցում է նաև այն փաստը, որ, ի տարբերություն անդամության հայտ ներկայացրած մյուս պետությունների, Ազգերի լիգան Հայաստանի Հանրապետությանը հրավիրել էր մասնակցելու Բրյուսելում կազմակերպած միջազգային ֆինանսական կոնֆերանսի աշխատանքներին (սեպտեմբերի 24–հոկտեմբերի 8)[197]:

Հայկական կողմը նույնպես համոզված էր, որ Հայաստանն

---

[195] Ժողովուրդի Ձայն, 6/19 դեկտեմբեր, 1921, The First Assembly of the League of Nations, IV, Boston 1921, published bimonthly by World Peace Foundation, www.archive.org/details/firstassemblyofl00worlrich

[196] Տե՛ս Ահարոնյան Ավ., նշվ. աշխ., էջ 98:

[197] Տե՛ս LNA, International Financial Conference in Brussels, Reports of the Conference.

ընդունվելու է որպես անդամ: Այդ մասին վկայում են կառավարությանն ուղղված բազմաթիվ հեռագրերը, որով Ավ. Ահարոնյանը խնդրում էր պատվիրակներ նշանակել Ազգերի լիգայում, քանի որ «մեր» անդամության հարցն արդեն լուծված է[198]:

Հայաստանի ընդունելության օգտին են վկայում նաև Ֆրանսիայի պատվիրակ Ռենե Վիվիանիի խոսքերը. «Ֆրանսիական կառավարությունը արտոնած էր Հայաստանին ընդունելու, սակայն հետագա դեպքերը փոխեցին կառավարության այս ընթացքը, և նրանք հետաձգել տվեցին Հայաստանի ընդունելությունը Ազգերի լիգային»[199]:

Իսկ ամենանշանավորն այն էր, որ Թուրքիայի հանդեպ Ազգերի լիգայի անդամ պետությունների վերաբերմունքն այնքան փոխվեց, այնքան ջերմացավ, որ 1932 թվականին հենց Ազգերի լիգայի «խնդրանքով» Թուրքիան միաձայն դարձավ կազմակերպության անդամ[200]:

Անդրադառնալով Հայաստանի հանդեպ Ազգերի լիգայի քաղաքականությանը՝ Լևոն Շանթը գրում է.«Ազգերի լիգայի միակ նպատակը դրսում իրար ընդհարվող շահերի ու ձգտումների հետևանքների վավերացումն է, ձեռք բերված հաջողությունների իրավական ձևակերպումը և նրանց տևական դարձնելու ջանքերը: Այլ կերպ ասած, հաղթողների համար է, ուժեղներին ծառայող գործիք: Եվ այս միջազգային սեղանի շուրջ ասված բառերը երևում են իբրև պարզ քաղաքավարի դարձվածներ: Եվ շատ ծիծաղելի կդառնան բոլոր նրանք, ովքեր հանկարծ ուզենան այդ բառերին լրջորեն վերաբերել. միևնույն է, թե մի միամիտ մինիստրի նամակի տակ գրված «Ձեր խոնարհ ծառան» խոսքերը հանկարծ իրենց իսկական իմաստով հասկանա: Այդ ժողովներում ձայն ունի միայն ուժը: Իսկ այն փոքր ժողովուրդները,

---

198 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 2082, 2093, 552 մաս 2, նաև Ժողովուրդի Ձայն, յունուար 9/22, 1921, Արեվելեան մամուլ, դեկտեմբեր 14, 1920:

199 Ժողովուրդի Ձայն, դեկտեմբեր 12/նոյեմբեր 29, 1920:

200 Տե՛ս Yücel Güçlü, Turkey's Entrance into the League of Nations, *Middle Eastern Studies*, Vol. 39, No. 1 (Jan., 2003), p. 195, նաև Missakian J. A searchlight on the Armenian question (1878-1950), Boston, 1950, p. 125, նաև Աշխատաւոր N 11, դեկտեմբերի 1, 1921:

որոնք ուժ չունեն, կամ մեզ նմանները, որոնք բնավ աթոռ էլ չունեն այդ ժողովներում, ստիպված են կախվել ուրիշների փեշից կամ նայել, թե ինչ հարաբերություններ կան նրանց շահերի մեջ: Եվ երբ այդ ժողովներում կբարձրանա քո հարցը, երբեմն շատ մեծ աղմուկով ու հնչուն բառերով, սակայն որքան հնչուն և «արդարության» ու «ազնվության» հովեր ունեն, այնքան կնշանակի, որ քո հարցը քիչ կարևորություն ունի խոսողի շահերի համար: Իսկ քաղաքավարության ծևը փրկելու համար դաշնագրի կամ արձանագրության մեջ կարելի է մտցնել ոչ մի արժեք չունեցող վերացական հոդված:

Միջազգային սեղանների վրա մեծ հույսեր չդնելը խելացիություն է, բայց դրանց արհամարհելը և բնավ կարևորություն չտալը անմտություն»[201]:

## 2.2. Հայաստանի Հանրապետության պատվիրակության մասնակցությունը Ազգերի լիգայի կազմակերպած Բրյուսելի միջազգային ֆինանսական կոնֆերանսի աշխատանքներին (1920 թ. սեպտեմբերի 24 – հոկտեմբերի 8)

Ազգերի լիգայի խորհուրդը դեռևս 1920 թ. փետրվարին ընդունել էր մի բանաձև, համաձայն որի Ազգերի լիգան պետք է միջազգային կոնֆերանս գումարեր՝ ուսումնասիրելու համար Առաջին համաշխարհային պատերազմից հետո սկսված ֆինանսական ճգնաժամը, գտնելու դրանից դուրս գալու ելքեր, լուծելու ճգնաժամի հետևանքով առաջ եկած դժվարությունները[202]:

Անկախացումից հետո Յայաստանի նորաստեղծ հանրապետության առջև ծառացել էին մի շարք դժվարություններ, որոնք շուտափույթ լուծման կարիք էին զգում. երկիրը չուներ ո՛չ իրական արժեք ներկայացնող դրամ, ո՛չ արդյունաբերություն, ո՛չ ճանապարհներ: Մի խոսքով, երկիրը ֆինանսական խոր ճգնաժամի մեջ էր, և կառավարությունը փորձում էր ելքեր գտնել

---

[201] Լևոն Շանթ, Մեր անկախութիւնը, Պոսթըն, 1925, էջ 16-18:

[202] LNA, Section II, Class. 11, dossier 3421, doc. 7734, նաև՝ Charles H. Levermore, The Record of the League of Nations, *The Journal of International Relations*, Vol. 12, No. 1 (Jul., 1921), p. 6.

ստեղծված իրավիճակից դուրս գալու համար: Միաժամանակ Առաջին համաշխարհային պատերազմից հետո եվրոպական ֆինանսական խավերը սկսում են մեծ հետաքրքրություն ցուցաբերել հումքերի և մասնավորապես նավթի նկատմամբ և շտապում են ձեռք բերել բոլոր նորաստեղծ երկրների ունեցած հանքերը (Լեհաստան, Չեխոսլովակիա և այլն): Եվրոպական երկրները որոշակի շահագրգռություն էին ցուցաբերում նաև Հայաստանի հանդեպ, քանի որ գտնում էին, որ լեռնոտ այդ երկրում կարող են լինել անմշակ նյութերի և նավթի հանքեր: Այդ հարցով նրանք նույնիսկ դիմել էին Փարիզի հայկական պատվիրակությանը[203]: Խնդիրը բարդանում էր նրանով, որ հայկական կողմը տեղյակ չէր, թե Հայաստանն ինչ սահմաններ պետք է ունենար, և որ շրջանում ինչ հանքեր կային: Այս մասին հայկական պատվիրակության ունեցած տվյալները խիստ աղոտ էին: Փարիզի հայկական պատվիրակությունը Հայաստանի Հանրապետության կառավարությունից հրաման ուներ նաև խոշոր փոխառություն ստանալ Եվրոպայում (մոտ կես միլիոն անգլիական ոսկի կամ 20-25 միլիոն ֆրանկ): Սակայն փոխառությունը ստանալու համար անհրաժեշտ էր նախ շահագրգռել եվրոպական երկրներին, իսկ հետո ճշգրիտ վիճակագրական տվյալներ ներկայացնել՝ համոզելու համար, որ Հայաստանի Հանրապետությունն ի վիճակի է վճարել ստացած պարտքի դիմաց: Հայաստանի Հանրապետության պատվիրակության ֆինանսական և տնտեսական խորհրդական Ռուբեն Բերբերյանն այն կարծիքին էր, որ եվրոպական ֆինանսական խավերը ոչ մի գաղափար չունեն Հայաստանի արդյունաբերական ներուժի, հանքերի, երկաթուղիների, երկրի բնական պաշարների մասին: Այս բոլոր խնդիրներն իրականացնելու համար Բերբերյանն առաջարկում էր դիմել Ազգերի լիգա՝ վերջինիս կազմակերպած միջազգային ֆինանսական կոնֆերանսին մասնակցելու համար, որը տեղի էր ունենալու 1920 թ. սեպտեմբեր–հոկտեմբերին Բրյուսելում: Ըստ խորհրդականի՝ կոնֆերանսին մասնակցությունը հնարավորություն կտար միջազգային հանրությանը ներկայացնելու Հայաստանի տնտե-

---

[203] Տե՛ս Հայրենիք.Հանդիպումներ Ս. Սիարոնյանի և Գ. Կիիլպէնկեանի հետ, Բոստոն, 1948, էջ 10-11:

սական և ֆինանսական վիճակը և փորձելու ելքեր գտնել ստեղծված ծանր իրավիճակից[204]: Կոնֆերանսը, որին ներկա էին լինելու մոտ 39 երկրի ամենահեղինակավոր ֆինանսիստներ, պետական դրամատների ներկայացուցիչներ, տնտեսագետներ և ֆինանսական նախարարներ, եզակի առիթ էր հայկական հողերի նյութական հարստությունն ու տնտեսական հնարավորությունները ներկայացնելու, ինչպես նաև եվրոպայից օգնություն խնդրելու համար:

Կոնֆերանսին մասնակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը դիմում է Ազգերի լիգա՝ Բրյուսելի կոնֆերանսին Հայաստանի Հանրապետության մասնակցության խնդրանքով: Խորհրդաժողովի կազմակերպիչներին ուղղված իր նամակում Ազգեր լիգայի գլխավոր քարտուղար է. Դրամոնդը գրում է. «ես որևէ խնդիր չեմ տեսնում Հայաստանի լիակատար անդամակցության առումով: Սակայն պետք է գիտակցենք, որ այս դեպքում Բալթյան պետությունները ևս պետք է անդամագրվեն, եթե նման դիմում ներկայացնեն»[205]: Նշենք, որ Բալթյան պետությունները թեև ի վերջո ընդունվում են և մասնակցում կոնֆերանսի աշխատանքներին, սակայն առանց քվեարկելու իրավունքի, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունը կոնֆերանսին մասնակցում է որպես լիիրավ անդամ[206]: Ազգերի լիգայի կողմից Բրյուսելյան կոնֆերանսին մասնակցելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դիմումի ընդունումը, որը ենթադրում էր, որ Հայաստանի տնտեսական և ֆինանսական վիճակը դրվելու էր Ազգերի լիգայի անդամ պետությունների զեկույցների շարքում, վկայում էր այն մասին, որ միջազգային այդ կազմակերպությունը, իրավամբ, հետաքրքրված էր Հայաստանով և հակված էր ընդունելու վերջինիս որպես Ազգերի լիգայի լիիրավ անդամ: Բրյուսելյան կոնֆերանսը լավ առիթ էր ոչ միայն Հայաստանի Հանրապետության ֆինանսական և տնտեսական վիճակը ներկայացնելու, այլև Ազգերի լիգայի կողմից Հայաստանի իրական վիճակը գնա-

[204] Նույն տեղում, էջ 12:
[205] LNA, Class. 11, Dossier 3421, doc. 8580.
[206] Նույն տեղում:

հատելու, նրա բնական պաշարների, հարստությունների և հնարավորությունների ծանոթանալու նպատակով:

Այսպիսով, հայկական պատվիրակության անդամներ են նշանակվում Ռուբեն Բերբերյանը և Մենքոր Բունիաթյանը, որոնք մեկնում են Բրյուսել՝ մասնակցելու միջազգային ֆինանսական կոնֆերանսի աշխատանքներին[207]: Պետք է փաստել, որ բավական բարդ գործ էր դրված Հայաստանի Հանրապետության պատվիրակության առջև: Նախ և առաջ, նորակազմ հանրապետության աշխարհագրական սահմանները դեռ ճշտված չէին, ուստի Բրյուսել մեկնող պատվիրակությունը չգիտեր, թե ինչ նշել իր զեկույցում: Բացի այդ, պատվիրակության ձեռքի տակ եղած վիճակագրական տվյալները (Հայաստանի Հանրապետության տնտեսական-արդյունաբերական հարցերի վերաբերյալ) շատ քիչ էին: Մինչդեռ անհրաժեշտ էր ներկայացնել համոզիչ տվյալներ և փաստեր, խոսել նորակազմ Հայաստանի Հանրապետության, նրա կրած զոհողությունների մասին, ինչպես նաև հնարավորությունների և իրական ներուժի մասին: Իր հուշերում Ռ. Բերբերյանը գրում է. «Պետք էր ներկայացնել Հայաստանը եթե ոչ որպես նոր Կալիֆորնիա՝ լի հարուստ հանքերով, ապա գոնե այնպես, որ ունկնդիրը համոզվի, որ մեր երկիրը ունի բոլոր հնարավորությունները տնտեսապես զարգանալու, փոխ վերցրած դրամագլուխը վերադարձնելու: Պետք է նաև համոզել, որ Հայաստան կոչված հողամասի սահմաններում և նրա համակարգի շրջանակում չկա և չի կարող լինել վտանգ, եթե եվրոպան ներմուծի իր դրամագլուխը: Տնտեսական, ֆինանսական կամ գիտական զեկույցները սկզբունքորեն պետք է զերծ մնան զգայականություններից: Սակայն մեր հայկական դեպքում ես չէի կարող բավականանալ զուտ չոր ու ցամաք նյութական հնարավորությունների մասին խոսելով. պետք էր ցույց տալ Բրյուսելյան խորհրդաժողովին, որ Հայաստանը, ավելի քան որևէ այլ պետություն, իրավունք ունի խնդրելու, որ եվրոպան ընդառաջ

---

[207] LNA, International Financial Conference, Report of the Conference, Brussels, p. 33.

գնա և ծեռք մեկնի իրեն տնտեսական դժվարին պայմաննե-րում»[208]:

Ազգերի լիգայի կողմից կազմակերպված միջազգային ֆինանսական կոնֆերանսը գումարվում է 1920 թ. սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 8-ը Բրյուսելում, որին մասնակցում էին 86 ներկայացուցիչ 39 երկրներից[209]: Նշենք նաև, որ իրենց կառավարությունների կողմից նշանակված 86 ներկայացուցիչները հանդես էին գալիս որպես փորձագետ, այլ ոչ որպես իրենց երկրի պաշտոնական քաղաքականությունը ներկայացնողներ:

Ինչպես արդեն նշեցինք, կոնֆերանսի հիմնական նպատակն էր ուսումնասիրել աշխարհի ֆինանսական դրությունը Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Ակնհայտ էր, որ պատերազմի պատճառած վնասները տարբեր էին՝ կախված պետությունների՝ պատերազմի մեջ ներքաշված լինելու հանգամանքից: Այդ պատճառով էլ որոշվել էր, որ կոնֆերանսի սկզբում պետք է ներկայացվեին բոլոր 39 երկրների տնտեսական վիճակը նկարագրող զեկույցներ, որից հետո միայն կոնֆերանսն անդրադառնալու էր հետագա քայլերի մշակմանը[210]:

Ինչ վերաբերում էր մասնակից երկրների ֆինանսական վիճակների քննության հարցին, ապա կոնֆերանսը մասնակից երկրներին բաժանել էր երկու խմբի: Առաջին խմբի մեջ էին այն երկրները, որոնք պատերազմից հետո արմատական փոփոխություններ էին կրել, ինչպես նաև նորաստեղծ երկրները, իսկ երկրորդ խմբի մեջ էին չեզոք երկրները: Առաջին խմբի՝ Ավստրալիայի, Չեխոսլովակիայի, Էստոնիայի, Ֆինլանդիայի, Հունգարիայի, Լատվիայի, Լիտվիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Սերբիայի, Խորվաթիայի, Սլովենիայի շարքում էր նաև Հայաստանը: Անդրադառնալով այս երկրների բյուջեներին՝ կոնֆերանսը փաստում է, որ վերջիններս գտնվում են ծնավորման, ստեղծման կամ վերակազմավորման փուլում: Նշյալ երկրների եկամուտները,

---

[208] Հայրենիք.Հանդիպումներ Ս. Սհարոնյանի և Գ. Կիիլպէնկեանի հետ, Բոստոն, 1948, էջ 14:

[209] Женевская экономическая конференция Лиги Наций, М-Л, 1927, с. 25.

[210] Տե՛ս Proceedings of the Conference. Statements on the financial situation of the countries represented at the conference:

համաձայն տեղեկությունների, չնչին են, իսկ ծախսերը, եթե ուղղված չեն ազգային անվտանգության պաշտպանությանը, ապա նախնական բնույթ են կրում: Առաջին խմբի մեջ մտնող բոլոր երկրների բյուջեները պակասուրդով են, պետական եկամուտների մեքենան էլ չի աշխատում: Իսկ շարունակվող պատերազմները, ռազմամթերքի վրա ծախսվող գումարները հնարավորություն չեն տալիս հավասարակշռելու պետական բյուջեն: Համաձայն կոնֆերանսի հրապարակած տվյալների՝ այդ երկրների եկամուտները չեն բավարարում անգամ վարչական ծախսերը հոգալու համար: Փողը բոլոր այս երկրներում արժեք չունի, իսկ արտահանումը բացակայում է: Սակայն կոնֆերանսի մասնակիցները հույս ունեին գյուղատնտեսությանը զարկ տալու միջոցով հասնելու դրական արդյունքի, քանի որ վերոհիշյալ երկրներից մի քանիսը (նաև Հայաստանը) ունեին գյուղատնտեսական ուղղվածություն[211]:

Քանի որ երկաթուղիների վիճակը անմիջականորեն կապված էր տնտեսական և ֆինանսական կացության հետ, կոնֆերանսը բավական հանգամանորեն անդրադառնում է նաև այս խնդրին: Համաձայն կոնֆերանսի ներկայացրած տվյալների, Հայաստանի Հանրապետության երկաթուղային ցանցը ծայրահեղ վատ վիճակում էր: «Անդրկովկասում երկաթուղիները գտնվում էին ծայրահեղ վատ վիճակում, չկա որևէ կազմակերպվածություն: Բացակայում է փոխադարձ վստահությունը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև: Համաձայնագիրը, որը պետք է կնքվեր նրանց միջև, ձախողվեց բրիտանացիների գնալուց հետո: Երկաթուղիների գործը գլուխ բերելու համար հսկայական գումարներ են անհրաժեշտ: Ամենաքիչը 100 հազար ֆունտ ստեռլինգ է պետք երկաթգծերը, լոկոմոտիվները և շարժակազմը ոտքի կանգնեցնելու համար»[212]: 100 հազարը բավական մեծ գումար էր. բացի այդ, իրավիճակը տարածաշրջանում անկայուն էր և վստահություն չներշնչող: Ուստի քիչ հավանական էր հուսալ, որ որևէ կազմակերպություն կներդներ այդ գումարը բավական բարձր ռիսկայնություն ունեցող գործի մեջ:

---

[211] Նույն տեղում:

[212] Տե՛ս LNA, Rapport IX, The European Transport Situation:

Հուսադրող չէր նաև Հայաստանի տնտեսական և ֆինանսական վիճակի մասին Հայաստանի Հանրապետության ներկայացրած զեկույցը: Որպես երկրում տիրող կացության հիմնական պատճառներ զեկույցը նշում էր հետևյալը.

1. Ծնունդ առնելով պատերազմի կիզակետում թուրքերի անմիջական սպառնալիքների պայմաններում Հայաստանի Հանրապետությունն ի վիճակի չէր ստեղծելու դրամական կայուն համակարգ, որը հիմնված կլիներ որևէ կայուն արժեքի վրա: Կառավարությունը ստիպված էր թողարկել թղթադրամ, որը ոչնչով երաշխավորված չէր: 2. Գտնվելով շարունակական պատերազմի մեջ, ստիպված լինելով ապահովել ավելի քան 600 հազար փախստականների և 40 հազար որբերի, ինչպես նաև չունենալով հստակ սահմաններ՝ Հայաստանի Հանրապետությունն ի վիճակի չէր հիմնելու հարկային այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտար փոխհատուցելու իր հսկայական ծախսերը և պակասուրդը: Պետությունը ստիպված է եղել թողարկել ֆիդուցիար (ոսկով չապահովված) փող:

3. Թուրքերի կողմից լիովին ավերված և թալանված Հայաստանի Հանրապետությունը ստիպված է երկրի վերականգնման և բնակչության գոյությունը ապահովելու նպատակով ամեն ինչ գնել արտասահմանից՝ հնարավորություն չունենալով որևէ բան արտահանելու՝ հաշվեկշիռը պահպանելու համար:

4. Ելք չունենալով դեպի ծով՝ Հայաստանի Հանրապետությունն օտար արժույթների հետ կապված իր բոլոր գործարքները ստիպված է կատարել երկրից դուրս՝ Թիֆլիսում կամ Բաքումում: Հայաստանի Հանրապետությունը, բացի այդ, որոշ իմաստով հարկատու է օտար երկրներին՝ ապրանքներ ներմուծելու և որոշ այլ ծախսերի առումով[213]:

Սրանք էին այն գլխավոր պատճառները, որոնք, ըստ հայկական կողմի, թույլ չէին տալիս Հայաստանի Հանրապետությանը դուրս գալ ստեղծված ծանր իրավիճակից: Սակայն ինչպես արդեն նշել ենք, զեկույցը չէր անդրադարձել լոկ բացասական երևույթներին: Կային նաև բավական խոստումնալից և շահագրգռող տվյալներ: Հատկապես ուժեղ շեշտ էր դրված գյու-

[213] LNA, Section 10, dossier 5869, doc. 5869.

դատնտեսության զարգացման հնարավորության վրա: Գյուղատնտեսական մեքենաները և գործիքները, ըստ հայկական պատվիրակության, կարող էին ոլորտի զարգացման համար մեծ խթան հանդիսանալ: Անհրաժեշտ էր նաև զարգացնել տեղական արտադրությունը՝ կիրառելով հաստոցներ և գործիքներ: Օտարերկրյա ներդրումները խրախուսելու նպատակով հայկական կողմն առաջարկում էր շահագործել Հայաստանի Հանրապետության հանքային հարստությունները, որոնք երկրում բավական շատ էին: Զեկույցը արժևորել էր նաև երկրի ջրային պաշարների ներուժը. դա, մասնագետների կարծիքով, հնարավորություն կստեղծեր էներգիայով ապահովելու Հայաստանի Հանրապետության ֆաբրիկաները և երկաթուղիները: Այս ուղղությամբ կառավարությունն արդեն մշակել էր բազմաթիվ ծրագրեր, որոնցից մի քանիսն արդեն իրականացման փուլում էին, սակայն քիչ հավանական էր, որ առանց արտասահմանյան ներդրումների՝ հնարավոր կլիներ իրականացնելու այս նախագծերը: Հայկական կողմը կոնֆերանսից աջակցություն էր խնդրում հետևյալ հարցերում.

1) կանոնավորել Հայաստանի Հանրապետության փոխադրամիջոցները երկաթուղային կամ այլ միջոցներով.

2) նպաստել երկրի հողագործական և հանքային կարողությունների և հատկապես ջրային պաշարների օգտագործմանը: Այս նպատակով, ըստ հայկական կողմի, անհրաժեշտ էր դիմել դրամատիրական ընկերություններին.

3) կանոնավորել երկրի ֆինանսները՝ թղթադրամը փոխարինելով ոսկով ապահովված այլ արժեթղթերով: Այս նպատակի իրագործման համար անհրաժեշտ է հիմնել ազգային դրամատուն և փոխառություն վերցնել, որը հնարավորություն կտա ստեղծելու մեծ ձեռնարկատիրություններ, ինչպես նաև կատարելու վերակառուցողական աշխատանքներ և շահագործելու երկրի բնական հարստությունները:[214]

Բրյուսելի Inolependence Belge օրաթերթը, անդրադառնալով ֆինանսական միջազգային կոնֆերանսին, մեծ գովեստներով է խոսում Հայաստանի պատվիրակության զեկույցի, հայ ժողովրդի

[214] Տե՛ս Փափազյան Վ., նշվ. աշխ., էջ 159-160:

շինարարության, Հայաստանի Հանրապետության մասին, որին նյութական օգնության «անհրաժեշտությունը ուղղակի հուզեց համաժողովին»[215]:

Հատկանշական է, որ եվրոպական ֆինանսական խավերը սկսում են հետաքրքրություն ցուցաբերել Հայաստանի Հանրապետության հանդեպ: Հայկական պատվիրակության անդամ Ռ. Բերբերյանն իր հուշերում նշում է, որ Լոնդոնից Փարիզ է ժամանում «Ֆինանսական խմբի» մի ներկայացուցիչ, որը բանակցություններ է սկսում հայկական պատվիրակության հետ, թե ինչ պայմաններով անգլիացիները կարող են շահագործել Հայաստանի հանքերը և երկաթուղիները: Lazard Brothers ֆինանսական ընկերությունից էլ նամակ է ստացվում Հայաստանի պղնձի հանքերի վերաբերյալ[216]:

Ազգերի լիգային Հայաստանի Հանրապետության անդամակցության հարցի դրական լուծման դեպքում կոնֆերանսի որոշումներն ու բանաձևերը կարևոր նշանակություն կարող էին ունենալ Հայաստանի Հանրապետության զարգացման համար: Սակայն քաղաքական պատմությունն ընթացավ միանգամայն այլ հունով, և Բրյուսելյան կոնֆերանսի արդյունքները Հայաստանի դեպքում որևէ արդյունք չտվեցին, մինչդեռ կոնֆերանսի աշխատանքների ընթացքում ձեռք բերվեցին մի շարք կարևոր պայմանավորվածություններ:

Բրյուսելյան կոնֆերանսն իր աշխատանքները բաժանել էր չորս մասի և հարցերը ավելի խորությամբ քննելու համար ստեղծել էր հետևյալ հատուկ հանձնաժողովները՝ հասարակական ֆինանսներ, տարադրամ և փոխանակում, միջազգային առևտուր, վարկեր: Ֆինանսների հանձնաժողովի հիմնական նպատակն էր հասնել ազնիվ քաղաքականության վրա հիմնված համագործակցության: Ըստ նիստերի ընթացքում ներկայացված տվյալների՝ երկրների պետական գումարների 20%-ը շարունակում էին ծախսվել ռազմամթերք ձեռք բերելու և պատերազմների նախապատրաստվելու վրա: Մինչդեռ պետությունների միջև

[215] Հայրենիք, Հանդիպումներ Ա. Ահարոնյանի և Գ. Կիլիկեցյանի հետ, էջ 16:
[216] Նույն տեղում:

համագործակցությունը հնարավորություն կստեղծեր օգտագործելու գոյություն ունեցող պաշարները միայն արտադրական խաղաղ նպատակներով: Այս առումով կոնֆերանսն Ազգերի լիգայի խորհրդին առաջարկում է առաջիկա Վեհաժողովի նիստին ներկայացնել սպառազինությունների կրճատման ծրագիր[217]: Կոնֆերանսի ընթացքում որոշում է ընդունվում բոլոր մասնակից պետություններում ստեղծել կենտրոնական բանկեր (եթե չունեն), իսկ եթե երկիրը բավական միջոցներ չուներ, ապա դա իրականացվելու էր դրսի կապիտալի օգնությամբ. այս դեպքում պետք է իրականացվեր միջազգային հսկողություն[218]: Հայաստանը ևս այն երկրների շարքում էր, որտեղ պետք է դրսի կապիտալի օգնությամբ հիմնվեր Կենտրոնական բանկ[219]:

Ինչ վերաբերում էր վարկերին, ապա կոնֆերանսը որոշում է ընդունում ստեղծել նոր միջազգային կազմակերպություն, որը պետք է ծառայեր այն երկրներին, որոնք նպատակ ունեին վարկ վերցնելու[220]: 39 երկրների ֆինանսական վիճակի վերաբերյալ զեկույցների ուսումնասիրությունը ակնհայտորեն ցույց էր տվել, որ երկրների զգալի մասն ուներ բյուջեի պակասուրդ, ներառյալ՝ Հայաստանը: Կոնֆերանսը նաև որոշում է, որ մասնակից բոլոր երկրների կառավարությունները պարտադիր պետք է իրականացնեն սոցիալական և ֆինանսական բարեփոխումներ, կատարեն որոշ ապրանքների և ծառայությունների գների իջեցում (հացի, վառելիքի և այլն): Պետությունները պարտավորվում էին նաև կրճատել ռազմամթերքի վրա իրականացվող ծախսերը[221]: Կոնֆերանսը միաժամայն ընդունում է նաև Միջազգային առևտրի հանձնաժողովի առաջարկները: Հանձնաժողովը հատկապես կարևորում էր իրական խաղաղության և ազգերի միջև բարեկամական հարաբերությունների հաստատումը: «Պետությունները,

---

[217] Տե՛ս International Financial Conference. Report of the Conference. Brussels. էջ 8-9:

[218] Նույն տեղում:

[219] Տե՛ս Kohn G., նշվ. աշխ., էջ 53:

[220] Տե՛ս III. League of Nations, *Political Science Quarterly*, Vol. 36, No. 3, Supplement (Sep., 1921), pp. 16-17:

[221] LNA Section II, Class. 11, dos. 3421, doc. 7734.

որոնք առաջացել կամ մեծացել են պատերազմի հետևանքով, պետք է անմիջապես վերահաստատեն լիակատար և բարեկամական համագործակցություն և բարիքների անխափան փոխանակում, որպեսզի Եվրոպայի տնտեսական կյանքի կարևոր միասնությունը չընդհատվի»[222]: Կոնֆերանսի պնդմամբ յուրաքանչյուր պետություն պետք է հասներ առևտրի ազատության այն աստիճանին, որը գոյություն էր ունեցել Առաջին համաշխարհային պատերազմից առաջ, վերացներ արհեստական սահմանափակումները, գնային խտրականությունը: Կոնֆերանսը հույս ուներ, որ Ազգերի լիգան կաներ ամեն ինչ, որպեսզի առևտրային փոխառություններ տրամադրեր այն երկրներին, որոնք ի վիճակի չէին սեփական ուժերով վերակազմավորվել: Միջազգային առևտրի խթանման հարցում կոնֆերանսը կարևորում էր նաև երկրների և հատկապես պատերազմից տուժած երկրների փոխադրամիջոցների համակարգերի վերանորոգումը, բարելավումը և տնտեսական առումով օգտագործումը[223]: Ակնհայտ է, որ Միջազգային առևտրի հանձնաժողովի առաջարկների իրականացման դեպքում Հայաստանի Հանրապետությունը կարող էր մեծ օգուտներ քաղել և բարելավել երկրի ծայրահեղ վիճակը:
Միածայն են ընդունվում նաև Միջազգային փոխառությունների հանձնաժողովի բանաձևերը: Միջազգային փոխառությունների հանձնաժողովի տվյալների համաձայն՝ փոխառություն ստանալու ճանապարհին ամենագլխավոր խոչընդոտը փոխառություն վերցնող պետության մեջ համապատասխան երաշխիքների առկայության բացակայությունն էր, որոնք կապահովագրեին գումարների վերադարձը: Այս ուղղությամբ կոնֆերանսի առաջարկները հետևյալն էին.

1) ստեղծել միջազգային կազմակերպություն, որին կարող էին դիմել վարկ վերցնել ցանկացող պետությունները՝ իրենց համար կենսական նշանակություն ունեցող ներմուծվող ապրանքների դիմաց վճարելու համար: Ազգերի լիգան պետք է ստեղծի ֆինանսիստների և գործարարների հանձնաժողով, որը

[222] Տե՛ս International Financial Conference. Report of the Conference. Brussels. էջ 10:
[223] Տե՛ս LNA, Rapport IX, The European Transport Situation:

պայմաններ էր մշակելու՝ հեշտացնելու փոխառությունների անմիջական տրամադրումը (փոխանցումը) հասարակական կազմակերպություններին.

2) ստեղծել պարտատոմսեր և վերջիններիս համար ապահովել միջազգային երաշխիքներ.

3) ստեղծել իրավական դաշտ՝ փոխառությունների տրամադրումն իրականացնելու համար[224]:

Հայաստանի հարցը բավական լայն քննարկում է ստանում միջազգային նպաստ-փոխառությունների հանձնաժողովում: Դեռևս 1920 թ. ապրիլի 21-ին և 22-ին Փարիզում տեղի էր ունեցել միջազգային կոնֆերանս՝ ուսումնասիրելու Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների տնտեսական պայմանները՝ վիճակի մեղմացման և վերակազմավորման համար վարկեր տրամադրելու, ինչպես նաև վարկեր տրամադրելու հարցում համապատասխան մեխանիզմներ մշակելու նպատակով: Հանձնաժողովը մտադիր էր մթերքի և անմշակ հումքի միջոցով աջակցել պատերազմից տուժած երկրներին: Ֆրանսիան, Իտալիան, ԱՄՆ-ն և մի շարք այլ երկրներ փոխառություններ էին տրամադրել, որոնք հասու էին եղել Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Հարավսլավիայի, Ռումինիայի, Բալթյան երկրների, Հայաստանի, Վրաստանի և Ավստրո-Հունգարիայի համար: Մեծ Բրիտանիան և Անգլիան դեռ 1919 թվականի սկզբից սկսել էին իրենց աջակցության ծրագիրը: Հայաստանի հետ կապված հանձնաժողովը իր աշխատանքները ներկայացրել էր առանձին հավելվածով: Ըստ այդմ՝ ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան Հայաստանում իրականացրել էին շուրջ 21.012.200 ֆունտ ստեռլինգի աջակցության ծրագրեր[225]: Այս տվյալների քննության հիման վրա Բրյուսելի կոնֆերանսը պետք է հստակեցներ իր հետագա քայլերը Հայաստանում: Ապահովագրության հարցում Միջազգային փոխառության հանձնաժողովը կոնֆերանսին առաջարկում էր ստեղծել Ապահովագրական ընկերություն (օրինակ՝ Լոնդոնում), որը պետք է զբաղվեր միջազգային փոխառությունների ռիսկայ-

---

[224] Տե՛ս International Financial Conference. Report of the Conference. Brussels. էջ 14:

[225] Տե՛ս LNA, Section 10, Dossier 5869, doc. 8384:

նության հարցերով: Ընկերությունը պետք է ունենար մասնավոր և միջազգային աղբյուրներից գոյացած զգալի կապիտալ: Են-թադրվում էր, որ գլխավոր գրասենյակը գործելու էր՝ համա-գործակցելով նախագծով հետաքրքրված երկրների համապա-տասխան ընկերությունների հետ: Սրա առավելությունն այն է, որ հնարավորություն էր ստեղծվում նվազեցնելու միջազգային փոխառությունների ռիսկայնությունը և իրականացնելու ավելի արդյունավետ վերահսկողություն[226]: Փոխառությունների հարցը նույնպես կենսական նշանակություն ուներ Հայաստանի Հանրա-պետության համար, որը գումար ստանալու նպատակով դիմել էր ինչպես Ազգերի լիգա, այնպես էլ դաշնակից պետություններին: Հարցի նման լուծումը կարող էր իրական փրկություն լինել հայ ժողովրդի համար: Այսպիսով, ամփոփելով իր աշխատանքները, Բրյուսելյան միջազգային կոնֆերանսը եկավ հետևյալ եզրա-հանգումների: Նախ՝ որոշվեց ստեղծել միջազգային տնտե-սական և ֆինանսական մի կազմակերպություն, որը պետք է բաղկացած լիներ տարբեր ազգությունների 12 անձանցից, որոնք հայտնի կլինեին քաղաքական, տնտեսական, ֆինան-սական, բանկային, առևտրի, գյուղատնտեսության և արտադրու-թյան բնագավառներում: Նրանց ընտրելու էր Ազգերի լիգայի խորհուրդը: Յուրաքանչյուր երկիր պարտավորվելու էր ստեղծ-ված միջազգային կազմակերպությանը ներկայացնել կանոնա-վոր զեկույցներ և վիճակագրական տվյալներ սեփական ֆի-նանսական և տնտեսական խնդիրների վերաբերյալ: Կոնֆերան-սը ցանկալի էր համարել նաև, որ յուրաքանչյուր երկիր այդ նպատակով իր տարածքում ստեղծի հատուկ գրասենյակ, որոնք ուղղակի կապի մեջ կլինեն իրար հետ: Կազմակերպությունը յուրաքանչյուր 6 ամիսը մեկ, ելնելով երկրների ներկայացրած զեկույցներից, պետք է մշակի ընդհանուր իրավիճակի վերաբեր-յալ ամփոփիչ զեկույցներ: Ամեն տարի (հնարավոր է՝ նաև ավելի հաճախ) կազմակերպությունը պետք է հրավիրի կոնֆերանս, որը վճիռներ կկայացնի քննարկվելիք հարցերի կապակցությամբ: Յուրաքանչյուր երկիր կոնֆերանսին ներկայացված կլինի մե-

[226] Նույն տեղում:

կական պատգամավորով, որն իր հայեցողությամբ կարող է ունենալ անհրաժեշտ քանակի տեխնիկական խորհրդականներ:

Որոշվեց նաև, որ մասնակից պետությունները պետք է Ազգերի լիգայի խորհուրդ ներկայացնեն ոչ միայն իրենց ընդհանուր բյուջեն, այլև պետության ծախսերը և եկամուտները կես տարվա կտրվածքով, ինչպես նաև ամբողջական տվյալներ՝ հարկային համակարգի մասին: Այս տեղեկությունների հիման վրա Ազգերի լիգան թռուցիկներ էր պատրաստելու աշխարհի տարբեր երկրների ֆինանսական դրության վերաբերյալ:

Կոնֆերանսն առանձին կետով Ազգերի լիգային խորհուրդ էր տալիս նաև լրջորեն զբաղվել պետությունների սպառազինությունների կրճատման հարցով[227]:

Սրանով Բրյուսելյան ֆինանսական կոնֆերանսն ավարտեց իր աշխատանքները: Մասնակից պետություններն ընդհանուր առմամբ գոհ էին կոնֆերանսի արդյունքներից: Դա խիստ կարևոր էր նաև Հայաստանի Հանրապետության համար: Մի կողմից կոնֆերանսը հնարավորություն ընձեռեց ներկայացնելու ոչ միայն երկրի համար անհրաժեշտ առաջնահերթությունները, այլև իրական տնտեսական ներուժը և հնարավորությունները: Իսկ մյուս կողմից ֆինանսական կոնֆերանսը հնարավորություն ընձեռեց ու նպաստեց Հայաստանի Հանրապետության ինտեգրմանը միջազգային հանրությանը: Թեև դեպքերի կտրուկ շրջադարձը թույլ չտվեց Հայաստանին քաղելու Բրյուսելյան ֆինանսական կոնֆերանսի դրական պտուղները (ինչպես տեղի ունեցավ Ավստրիայի և Հունգարիայի համար, որոնց վերակառուցման վերաբերյալ կոնֆերանսի ընդունած որոշումները ներկայացվեցին Ազգերի լիգայի Վեհաժողով, որը որոշակի ծրագրեր իրականացրեց նշյալ երկրների ֆինանսական և տնտեսական վիճակը բարելավելու ուղղությամբ[228]), սակայն մի բան ակնհայտ էր. Ազգերի լիգայի անդամ պետությունները Հայաստանի Հանրապետությունը դիտում էին որպես միջազգային իրավունքի լիիրավ և իրավահավասար սուբյեկտ: Բրյուսելի միջազ-

---

[227] Տե՛ս International Financial Conference. Report of the Conference. Brussels. էջ 16-27:

[228] Տե՛ս Kohn G., նշվ. աշխ., էջ 24-31, 34-38:

գային ֆինանսական կոնֆերանսին Հայաստանի Հանրապետության մասնակցությունն ապացուցում էր նաև այն փաստը, որ Ազգերի լիգան սկզբնական շրջանում իրոք մտադիր էր իր շարքերն անդամագրել Հայաստանի նորանկախ հանրապետությանը:

## 2.3 Ղարաբաղյան հիմնահարցը և Ազգերի լիգան

Ղարաբաղյան հիմնահարցը որպես Առաջին համաշխարհային պատերազմից սկիզբ առած ապազաղութայնացման գործընթացների հետևանք՝ առաջին անգամ միջազգային ասպարեզում հայտնվեց 1918 թվականին ստեղծված և Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետություն անվանումը ստացած պետության հետ միասին:

Ղարաբաղի լեռնային՝ հայաբնակ հատվածի 1918-1920 թթ. միջազգային-իրավական կարգավիճակը հստակորեն վկայում է այն մասին, որ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կարճատև անկախության շրջանում երկրամասը չի եղել վերջինիս իրավասության ներքո, այլ հանդիսացել է առանձին միավոր, քանզի միջազգային հանրությունը 1918-1920 թթ. երկրամասը դիտարկել է որպես վիճելի տարածք: Ու չնայած ներկայումս ադրբեջանական դիվանագիտությունը մշտապես մատնանշում է անգլիացիների՝ 1919 թվականի որոշումը, որով երկրամասը ժամանակավորապես հանձնվել էր Ադրբեջանի կառավարմանը[229], նույն պատմաշրջանում, մասնավորապես նշյալ որոշումից հետո, միջազգային ատյանների ընդունած՝ իրավական ուժ ունեցող որոշումները վկայում են Ղարաբաղի վիճելի կարգավիճակի մասին: Այսպես՝ *1920 թ. հունվարին Փարիզի խաղաղության կոնֆերանսում Դաշնակից տերությունների Գերագույն խորհուրդը՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի կողմից Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կառավարությունների դե ֆակտո ճանաչման մեջ հստակորեն նշված էր, որ ճանաչումը չի*

[229] http://регнум.рф/news/polit/1466476.html, www.aze.az/news_imya_sestra_imya_62668.htmlCached .

*ենթադրում սահմանների վերջնական ամրագրում, ինչը պետք է լուծվի հարևան երկրների հետ փոխադարձ համաձայնություն-ների միջոցով*[230]:

Ղարաբաղի կարգավիճակի հանդեպ միջազգային հանրու-թյան իրավական դիրքորոշումը դրսևորվել է նաև Ազգերի լի-գային Հայաստանի և Ադրբեջանի անդամակցության համա-տեքստում: Տվյալ պատմաշրջանում Ազգերի լիգայի կարևորու-թյունը նրանում էր, որ այս կազմակերպությունը մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը գոյություն ունեցած խոշորա-գույն միջազգային կազմակերպությունն էր: Համաձայն նրա հիմնադիրների՝ Ազգերի լիգան լինելու էր այն *իրավական հար-թակը,* որը հաստատելու և իրավական ուժ էր տալու պետություն-ների գոյությանը և նրանց միջև առկա հարաբերություններին[231]: Ուստի հասկանալի էր Ազգերի լիգայի անդամ դառնալու նո-րաստեղծ պետությունների ձգտումները:

Ինչպես արդեն ներկայացվել էր նախորդ գլուխներում (այս գլխում ստիպված ենք կրկին անդրադառնալ Հայաստանի Հան-րապետության անդամակցության վերաբերյալ որոշ փաստե-րի՝դրանք համադրելով և զուգահեռականներ անցկացնելով Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության անդամակցու-թյան հետ՝ Ղարաբաղյան հիմնահարցը ավելի համապարփակ և հասկանալի ներկայացնելու համար), Հայաստանի Հանրապե-տությանը որպես դաշնակից պետություն ստորագրելով Ազգերի լիգայի Կանոնադրությունը՝ հավակնում էր մտնելու կազմա-կերպության անդամների նախնական ցուցակի մեջ, սակայն, սկզբում՝ Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի ձգձգումը, և ապա՝ Հայաստանի հանդեպ մանդատ սահմանելու մեծ տե-րությունների որոշումն անորոշ դարձրին Ազգերի լիգային ան-միջապես անդամակցելու Հայաստանի Հանրապետության հնա-րավորությունները: Ուստի՝ Հայաստանի Հանրապետությունը

---

[230] Տե՛ս Իզմիրլեան Կ., Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցեալին եւ ներկային (քննական տեսութիւն),Պէյրութ, տպ. Սեւան, 1964, էջ 202, նաև՝ *125 H.C.Debs.*, 58., February 24, 1920, p. 1467.

[231] Տե՛ս The League of Nations Starts, an outline by its organizers, London 1920, p. 134-135.

1920 թ. սեպտեմբերի 25-ին[232] պաշտոնապես դիմում է Ազգերի լիգայի խորհրդին՝ անդամակցության խնդրանքով[233]: Մինչդեռ, Ադրբեջանի կողմից անդամակցության դիմումագիրը ներկայացվում է 1920 թ. նոյեմբերի 1-ին[234], երբ այդ երկրում տեղի ունեցած իշխանափոխության արդյունքում՝ 1920 թ. ապրիլի 28-ից Բաքվում իշխանությունն անցել էր բոլշևիկների ձեռքը, որից հետո մուսավաթական կառավարությունը՝ որպես վտարանդի կառավարություն, կարճ ժամանակով հաստատվել էր Գյանջայում, իսկ այնուհետև տեղափոխվել արտասահման: Ազգերի լիգայի կողմից Ադրբեջանի վտարանդիական իշխանությունների դիմումագրի ընդունումը, ըստ էության, անօրինական էր: Հավանաբար, դա պայմանավորված էր նրանով, որ անդամ-պետություններն կասկածներ ունեին Բաքվում բոլշևիկյան իշխանության ամրության և տևականության մեջ:

Հայաստանի և Ադրբեջանի անդամակցության դիմումները նախ հանձնվում են Ազգերի լիգայի գլխավոր քարտուղարին, որն իր դիտարկումներն է ներկայացնում թեկնածու երկրների վերաբերյալ: Ադրբեջանի վերաբերյալ իր զեկույցում Ազգերի լիգայի գլխավոր քարտուղարը շեշտել էր. «Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը, որը արտաքուստ (superficial) զբաղեցնում է 40.000 ք/կմ տարածք (չնայած ադրբեջանցիները Ազգերի լիգային ուղղված իրենց դիմումագրում նշել էին 94.137 ք/կմ[235]), նախկինում երբեք պետություն չի եղել, այլ ընդգրկված է եղել մոնղոլների և պարսիկների խմբերի մեջ, իսկ սկսած 1813 թվականից՝ Ռուսաստանյան կայսրության տարածքում: Ադրբեջան անունը, որն ընտրվել է նորաստեղծ Ադրբեջանի համար, նույնն է,

---

[232] Ոչ պաշտոնական դիմումը եղել է 1920 թ-ի մայիսի 13-ին:

[233] Տե'ս Dr. V. Nercessian, Armenia and the League of Nations, a Reprint of Hajgazian Armenological Review, Beirut 1993, էջ 217:

[234] LNA, League of Nations Memorandum on the Application for the Admission of the Republic of Azerbaijan to the League of Nations.

[235] Տե'ս LNA, Admission of Azerbaijan to the League of Nations. Memorandum by the Secretary-General, sec. 28, doc. 8856, dos. 8466.

ինչ հարևան Պարսկաստանի նույնանուն գավառի անվանումը»[236]:

Ադրբեջանի դիմումագրի հետ կապված Գլխավոր քարտուղարը մասնավորապես մատնանշում էր, որ Ազգերի լիգայի կանոնադրության առաջին հոդվածի համատեքստում Ադրբեջանը չի կարող դիտվել որպես *դե յուրե ինքնիշխան երկիր* (ընդգծումը մերն է- Է.Գ.), քանի որ այդպիսին չի ճանաչվել Ազգերի լիգայի և ոչ մի անդամի կողմից և ապա առանձնացնում էր հետևյալ իրավական դիտարկումները.

1. Ադրբեջանի տարածքը, որը նախկինում կազմել է Ռուսաստանի մաս, թեև 1918 թ. հռչակել է իրեն որպես անկախ պետություն և 1920 թ. հունվարին նրա կառավարությունը դե ֆակտո ճանաչվել է դաշնակիցների կողմից, սակայն Կանոնադրության 1-ին հոդվածով Ադրբեջանի՝ դե յուրե «ինքնիշխան երկիր» լինելու հանգամանքը կասկածների առիթ է տալիս: Իսկ դե ֆակտո Ադրբեջանի կառավարությունը ճանաչվել է միայն Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի կողմից, ընդ որում՝ ԱՄՆ-ն դեմ է Ադրբեջանի ճանաչմանը[237]:

2. Եթե նույնիսկ Ազգերի լիգան ընդունի Ադրբեջանի ինքնիշխանությունը, հարց է ծագում, թե արդյո՞ք ադրբեջանական պատվիրակությունը մանդատ ունի ներկայացնելու նրա օրինական իշխանությանը, և արդյո՞ք այդ կառավարությունը կարող է ստանձնել միջազգային պարտավորություններ և տալ համապատասխան երաշխիքներ[238]:

Վերլուծելով Ազգերի լիգայի գլխավոր քարտուղարի իրավական դիտարկումները Ադրբեջանի ինքնիշխանության հետ կապված՝ նշենք նաև, որ դե ֆակտո ճանաչումը տրվել էր Ադրբե-

---

[236] Տե՛ս LNA, League of Nations Memorandum on the Application for the Admission of the Republic of Azerbaijan to the League of Nations.

[237] http://karabakh-doc.azerall.info/ru/azerpeople/ap045-6.php: Մինչդեռ այսօր ադրբեջանական պատմագիտությունը հարցն այնպես է ներկայացնում, թե իբր ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը մեծ ջանքեր է գործադրել Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության անկախության ճանաչման ուղղությամբ

[238] Տե՛ս LNA, Admission of Azerbaijan to the League of Nations. Memorandum by the Secretary-General. Sec. 28, doc. 8466, dos. 8466.

ջանի մուսավաթական կառավարությանը, այլ ոչ թե պետությանը, և, բացի այդ, առկախ էր թողնվել նաև պետության սահմանների հարցը: Միաժամանակ, դաշնակից պետությունների կողմից Ադրբեջանի դե ֆակտո ճանաչելու հանգամանքը բացատրվում էր ոչ թե նրանով, որ Ադրբեջանը դիտվում էր որպես անկախ պետություն, քանզի չուներ անկախության որևէ պատմական կամ իրավական հիմք, այլ դրանով նպատակ էր դրվում կանխել բոլշևիկների կողմից Կովկասի գրավումը և անվտանգության շղթա ստեղծել Խորհրդային Ռուսաստանի և Արևմուտքի միջև[239]: Միաժամանակ նշենք, որ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետություն անունը կրող պետությունը դե յուրե ճանաչված չէր և ոչ մի պետության կողմից, իսկ ԱՄՆ-ն դեմ էր Ադրբեջանի նույնիսկ դե ֆակտո ճանաչմանը[240], քանի որ նախագահ Վ.Վիլսոնը այն կարծիքին էր, որ Ադրբեջանի անկախությունը նպատակահարմար չէ ճանաչել[241]: Արդյունքում՝ ԱՄՆ-ն անգամ՝ չեղյալ էր հայտարարել 1920 թ. հունվարին դաշնակից պետությունների կողմից Ադրբեջանի դեֆակտո ճանաչման վերաբերյալ իր համաձայնությունը[242]: Պատճառն այն է, որ Վ. Վիլսոնի կարծիքով նախկին ցարական Ռուսաստանի մասը կազմած նորանկախ պետությունները հանդիսանում են ռուսական խնդրի (ընդգծումը մերն է- Է.Գ.) բաղկացուցիչը և չպետք է անկախանան, բացառությամբ Լեհաստանի, Ֆինլանդիայի և Հայաստանի[243]:

Անդրադառնալով երկրի ինքնիշխանության տեսակետից մյուս կարևոր հանգամանքը հանդիսացող ներքին կյանքի կազմակերպվածության հարցին՝ նշենք, որ այն ևս Ադրբեջանում հստակ չէր: Ըստ Ազգերի լիգայի կողմից 1920 թվականին Ալանդյան կղզիների հարցով նշանակված Իրավաբանների միջազգա-

---

[239] Տե՛ս **Cornell, Svante E.**, Azerbaijan Since Independence, Armonk, NY, USA, M.E. Sharpe, Inc., p. 28.

[240] Տե՛ս **Sicker, M.**, Middle East in the Twentieth Century, Greenwood Press, Westport, CT, USA, p. 123.

[241] Տե՛ս **Kazemzadeh F.**, The Struggle for Transcaucasia, New York, 1959, p 266.

[242] Տե՛ս LNA, sec. 11, dos. 5343, doc. 7653.

[243] Տե՛ս The United States, Poland and Russia, *Advocate of peace through justice*, vol. 82, no. 9/10 (September-October, 1920), p. 319.

յին համաձայնագրի՝ «*Իրավական առումով պետությունը լիովին ինքնիշխան է, երբ քաղաքական առումով կայուն և կազմակերպված է, իսկ կառավարությունն իր իշխանությունը տարածում է պետության ողջ տարածքում առանց օտարերկրյա ուժերի օգնության*»[244]: Մինչդեռ ինչպես հետագայում իր քննարկումների ընթացքում մատնանշում է Ազգերի լիգայի 5-րդ համաձայնագիրը՝ Ադրբեջանը չուներ կայուն կառավարություն, հստակ սահմաններ, որի վրա կտարածվեր երկրի կառավարության իշխանությունը: Ավելին, դեռ 1918 թվականից դե ֆակտո, իսկ 1920 թ. ապրիլից՝ դե յուրե երկրում առկա էր երկու իշխանություն՝ ի դեմս Գյանջայում ապաստանած մուսավաթական (վերջինս 1920 թվականի ապրիլից կարճ ժամանակ անց տեղափոխվեց արտասահման) և Բաքվում գտնվող բոլշևիկյան կառավարությունների[245], որը նշված էր նաև Ազգերի լիգայի գլխավոր քարտուղարի զեկույցում[246]: Ի դեպ, երկու կառավարություններն էլ պնդում էին Ադրբեջանի վրա իրենց իրավական իշխանությունը: Ներքին կյանքի կազմակերպվածության տեսանկյունից նշենք նաև այն հանգամանքը, որ երկրում մեծ ազդեցություն ունեին թուրքերը, որոնց օգնությամբ ադրբեջանական-մուսավաթական կառավարությունը բազմիցս փորձել էր վերականգնել իր իշխանությունը (1918 թ. մուսավաթականները միայն թուրքերի օգնությամբ կարողացան գրավել Բաքուն): Դա է պատճառը, որ անդրադառնալով Ադրբեջանում թուրքական ազդեցությանը, որոշ պատմաբաններ արդարացիորեն կասկածի տակ են դնում մուսավաթական կառավարության ուժն ու ազդեցությունը Ադրբեջանի տարածքում[247]:

---

[244]Տե՛ս LNA, Report of the International Committee of Jurists entrusted by the Council of the League of Nations with the task of giving an advisory opinion upon the legal aspects of Aaland Islands question. League of Nations Official Journal, Special Supp. No. 3 (1920).

[245] Տե՛ս Suny R., The Baku Commune, 1917-1918, New Jersey Princeton University Press, 1972, p. 231.

[246] Տե՛ս LNA, Admission of Azerbaijan to the League of Nations. Memorandum by the Secretary-General, sec. 28, doc. 8856, dos. 8466.

[247] Տե՛ս Hill Ch., State-building and conflict resolution in the Caucasus. Leiden, Boston: 2010, p. 177-178, նաև Դ. Կնյազյան, Ադրբեջանի Դեմոկրա-

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության անդամակցությանը, ապա Ազգերի լիգայի գլխավոր քարտուղարի զեկույցի համաձայն՝ Հայաստանը բավարարում էր Ազգերի լիգայի կանոնադրության պահանջները, պետությունը լիովին ձևավորված էր և ճանաչված գլխավոր դաշնակիցների և այլ կառավարությունների կողմից, իսկ Սևրի պայմանագրի 88-րդ հոդվածով գլխավոր դաշնակից տերությունները ճանաչել էին Հայաստանը նաև դե յուրե՝ որպես ինքնիշխան և անկախ երկիր[248]: Հատկանշական է, որ Ազգերի լիգայի քարտուղարության քաղաքական բաժինը ևս Սևրի պայմանագրի ստորագրումը որակում էր որպես Հայաստանի Հանրապետության դե ֆակտո և դե յուրե ճանաչման փաստ[249]:

Անդամության համար ստացված դիմումները շուտով ներկայացվում են Ազգերի լիգայի Ռազմական, օդային և նավատորմի հարցերով մշտական խորհրդատվական հանձնաժողով[250], որը զբաղվում էր անդամակցության հայտ ներկայացրած պետությունների սպառազինությունների կրճատման հարցերով՝ որպես անդամակցության նախապայմաններից մեկը[251]: Վերջինս Հայաստանի վերաբերյալ իր եզրակացության մեջ ընդունում է մեծաքանակ զորք և զինամթերք պահելու անհրաժեշտությունը՝ որպես հիմք ընդգծելով Հայաստանի Հանրապետության աշխարհագրական պայմաններն ու քաղաքական ծանր վիճակը[252], ինչպես նաև՝ շրջապատի թշնամիների առկայությունը[253]: Սա բավական հետաքրքիր և արժեքավոր որոշում էր, քանի որ հանձնաժո-

---

տական Հանրապետության Կովկասյան քաղաքականությունը 1918–1920թթ., Եր., 2008, էջ 26-35:

[248] Տե՛ս Hovannisian R., The Republic of Armenia, Volume IV (between Crescent and Sickle: Partition and Sovietization), էջ 328:

[249] Տե՛ս Ю. Барсегов, նշվ. աշխատ. էջ 531:

[250] Տե՛ս The League of Nations starts, an outline by its organizers, p. 134-135.

[251] Տե՛ս Kohn G., The organization and the work of the League of Nations, Philadelphia 1924, էջ 38:

[252] Տե՛ս LNA, Minutes of the Commissions, "Military, naval and air conditions of the States which have asked to be admitted to the League of Nations", p. 107:

[253] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 93:

դովը, փաստորեն, ընդունում էր հարևաններից պաշտպանվելու Հայաստանի իրավունքի օրինականությունը՝ հակառակ սպառազինությունների կրճատման վերաբերյալ կազմակերպության որդեգրած դիրքորոշման:

Ինչպես արդեն հայտնի է, անդամության թեկնածությունների քննության համար նշանակված Ազգերի լիգայի 5-րդ հանձնաժողովն իր աշխատանքները բաժանում է երեք ենթահանձնաժողովների միջև, որոնք անդամության հայտ ներկայացրած պետությունների վերաբերյալ իրենց զեկույցները ներկայացնում են 5-րդ հանձնաժողովի քննարկմանը:

Հայաստանի և Ադրբեջանի հնարավոր անդամակցության վերաբերյալ ենթահանձնաժողովի զեկույցները (Հայաստանի և Ադրբեջանի դիմումները հանձնվել էին երրորդ ենթահանձնաժողովին, որի նախագահն էր Ֆրիտյոֆ Նանսենը) Ազգերի լիգայի 5-րդ հանձնաժողովին ներկայացվեցին 1920 թ. դեկտեմբերի 1-ին: Հայաստանի Հանրապետության անդամակցության վերաբերյալ զեկույցը դրական էր. երկիրը համապատասխանում էր առաջադրված պայմաններին: «Կասկած չկա, որ կառավարությունը ներկայացնում է հայ ժողովրդին՝ նրա կայուն համարվել չի կարող»[254]: Սահմանների վերաբերյալ զեկույցն անդրադարձել էր միայն Արևմտյան Հայաստանի տարածքներին՝ չխոսելով հարևանների հետ առկա վեճերի մասին (ինչը, ի դեպ, հիշատակվում է Ադրբեջանի վերաբերյալ ենթահանձնաժողովի զեկույցում): Այնուհետև նշվում էր, որ «Հայաստանի սահմանները թեև հստակորեն ամրագրված չեն, սակայն Սևրի պայմանագրի 52-րդ հոդվածն արքիտրաժ է ենթադրում, և ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնն ընդունել է միջնորդի դերը»[255]: Ինչ վերաբերում էր երկրի միջազգային ճանաչմանը, ապա ԱՄՆ-ն, Արգենտինան և Բրազիլիան դե յուրե ճանաչել էին ՀՀ-ն[256]:

---

[254] Տե՛ս LNA, Admission of New Members to the League of Nations. Armenia. Report presented by the 5th Committee to the Assembly.

[255] Նույն տեղում, նաև՝ ՀԱԱ ֆ. 430, ց. 1, գ. 1227:

[256] Տե՛ս LNA, Admission of New Members to the League of Nations. Armenia. Report presented by the 5th Committee to the Assembly.

Ինչպես արդեն նշվեց, Հայաստանը ներառված էր նաև Ազգերի լիգայի կանոնադրությունը ստորագրած պետությունների ցուցակում, ստորագրել էր փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ Ազգերի լիգայի պատրաստած փաստաթուղթը (1920 թ. օգոստոսի 10-ին, Սևրի պայմանագրի ստորագրման հետ), որի նախաբանը հստակորեն ընդգծում էր, որ գլխավոր դաշնակից պետությունները ճանաչում են Հայաստանը՝ որպես ինքնիշխան և անկախ պետություն[257]: Ուստի Ազգերի լիգայի 5-րդ հանձնաժողովի 1920 թ. դեկտեմբերի 1-ի նիստի ընթացքում անդամ պետությունների գրեթե բոլոր ներկայացուցիչները կողմ են արտահայտվում Հայաստանի Հանրապետության անդամակցությանը, չնայած հարցի վերաբերյալ վերջնական որոշում չի ընդունվում[258]:

Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա վերջինիս վերաբերյալ ենթահանձնաժողովի զեկույցը, որը նույն օրը ներկայացվել էր 5-րդ հանձնաժողովին, ընդգծում էր հարևան Հայաստանի և Վրաստանի հետ սահմանային վեճերի առկայությունը[259], ինչը, ինչպես արդեն նշվեց, Հայաստանի դեպքում մատնանշված չէր[260]: Ենթահանձնաժողովի զեկույցը հստակորեն բացասական բովանդակություն ուներ: 5-րդ հանձնաժողովի քննարկումների ժամանակ մասնավորապես ընդգծվում է այն փաստը, որ հնարավոր չէ հստակորեն որոշել ադրբեջանական կառավարության վերահսկողության տակ գտնվող տարածքները, քանի որ երկրում երկիշխանություն է: Նիստի ժամանակ բարձրացված հաջորդ հարցը վիճելի տարածքների առկայությունն էր հարևան երկրների հետ, որի հետևանքով անհնար էր որոշակիացնել Ադրբեջանի սահմանները:

---

[257]Տե՛ս Հայրենիք ամսագիր, N 2, 1933թ., էջ 64-65, նաև՝ **Ю. Барсегов**, նշվ. աշխատ., էջ 595:

[258] Տե՛ս **Ю. Барсегов**, նշվ. աշխատ., էջ 595:

[259] Տե՛ս LNA, Admission of the new members to the League of Nations, Azerbaijan, Report presented by the 5th Committee to the Assembly, Class. 28, doc. 9410, doss. 8466.

[260] Տե՛ս LNA, League of Nations, the Records of the First Assembly, Meetings of the Committees, Geneva 1920, pp. 218-219.

Քննարկումների արդյունքում 5-րդ հանձնաժողովը եզրակացնում է, որ Ադրբեջանը չի բավարարում Ազգերի լիգայի Կանոնադրության պահանջները. *չունի հստակ սահմաններ, ինքնիշխան կառավարություն և դե յուրե չի ճանաչվել Ազգերի լիգայի և ոչ մի անդամ պետության կողմից*[261]: Փաստորեն, Ազգերի լիգայի 5-րդ հանձնաժողովը Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության անդամակցության անհնարինությունը պայմանավորում էր այն հանգամանքով, որ երկրի կառավարությունը կայուն չէ, երկրի սահմանները հստակ չեն, և Ադրբեջանը տարածքային վեճեր ունի հարևան երկրների հետ[262]:

Արդյունքում՝ հանձնաժողովը բացասական կարծիք տվեց Ադրբեջանի ընդունելության դիմումին[263]: «*Թեև Ադրբեջանի դիմումագիրը ֆորմալ առումով ճիշտ է, դժվար է հստակեցնել այն տարածքները, որոնց վրա տարածվում է Ադրբեջանի կառավարության իշխանությունը: Տարածքային վեճերը հարևան երկրների հետ թույլ չեն տալիս հստակորեն որոշել Ադրբեջանի սահմանները: Հանձնաժողովը եկել է այն եզրակացության, որ ստեղծված պայմաններում կազմակերպության կանոնադրությունը թույլ չի տալիս Ադրբեջանի անդամակցությունը Ազգերի լիգային*»[264],- ասված էր Ադրբեջանի համար 1920 թ. դեկտեմբերի 1-ին ընդունված 5-րդ հանձնաժողովի բանաձևի մեջ:

Սրանով Ազգերի լիգան ոչ միայն կրկին անդրադարձել է Ղարաբաղի վիճելի կարգավիճակը, այլև այդ հիմնահարցը հիմք է հանդիսացել Ադրբեջանի անդամակցության մերժման հարցում:

Ներկայումս ադրբեջանական դիվանագիտությունը Ազգերի լիգայի Ադրբեջանի անդամակցության մերժման բացատրությունները փորձում է հիմնել Ազգերի լիգայի գլխավոր քարտուղարի վերոնշյալ հուշագրում առանձնացված իրավական դիտարկումների վրա, որտեղ իբր ոչ թե՝ «վիճելի տարածքների» խնդիրն

---

[261] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1218:

[262] Տե՛ս LNA, Fourth Meeting of the 5th Committee, held on December 1, 1920, pp. 173-174.

[263] Նույն տեղում:

[264] Տե՛ս LNA, Journal of the First Assembly of the League of Nations, Geneva 1920, p. 139.

է դիտվում որպես անդամակցության մերժման հիմք[265], այլ բացառապես՝ կառավարության ինքնիշխան չլինելու հանգամանքը[266]:

5-րդ հանձնաժողովի ընդունած բանաձևի վերոնշյալ մեջբերումն ինքնին վկայում է, որ Ադրբեջանի ինքնիշխանության փաստի հանդեպ 5-րդ հանձնաժողովի կասկածների հիմքում ընկած էր հենց «վիճելի տարածքների» խնդիրը, թեև կոնկրետ չէր նշվում, թե ո՞ր տարածքների մասին է խոսքը: Սակայն, քանի որ ադրբեջանական նման պնդումները միտված են «հիմնավորելու» այն դրույթը, թե իբր Ղարաբաղը 1918-1920 թթ. վիճելի տարածք չի եղել, վկայաքերենք հենց ադրբեջանական աղբյուրները, որոնք ևս վկայում են ճիշտ հակառակ իրողության մասին: Որպես ապացույց մատնանշենք Փարիզի Խաղաղության վեհաժողովում Ադրբեջանի պատվիրակության նախագահ Ալիմարդան (ըստ ադրբեջանական աղբյուրների՝ Ալի Մարդան բեկ) Թոփչիբաշևի 1920 թ. դեկտեմբերի 7-ի նամակ-արձագանքը՝ ուղղված Ազգերի լիգայի Վեհաժողովի նախագահին: Այստեղ անդրադառնալով Ադրբեջանի անդամակցության խնդրի քննությանը՝ Թոփչիբաշևը, նախ, հստակորեն վկայաքերել է 5-րդ հանձնաժողովի կողմից Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության անդամակցության մերժման հիմքերը. Ադրբեջանի սահմանները, որոնց վրա տարածվում է մուսավաթականների իշխանությունը, որոշակի չեն, իսկ հարևանների հետ առկա տարածքային վեճերի հետևանքով հստակ չեն նաև երկրի արտաքին սահմանները: Ապա Թոփչիբաշևը ներկայացրել է համապատասխան բացատրություններ[267]:

Սրանով Ադրբեջանի պաշտոնական ներկայացուցիչը պաշտոնապես խոստովանել է, որ իր երկրի անդամակցության դիմումի մերժումը ոչ թե մեկ, այլ միանգամից երկու հիմքեր ունի:

---

[265] Տե՛ս Musayev T. F., From territorial claims to belligerent occupation: legal appraisal, www.azconsulatela.org/news/tmusayev.pdf, www.aze.az/news_imya_sestra_imya_62668.htmlCached.

[266] www.azembassy.nl/?options=content&id=19, www.azembassy.us/3/31.html, www.un.int/azerbaijan/historical_background.htm

[267] Տե՛ս LNA, Sec. 28, dos. 8466, doc. 9440.

Առաջին կետի վերաբերյալ ադրբեջանական պատվիրակության պատասխան փաստարկները հիմնված էին բոլշևիկների կողմից Բաքվի իշխանության զավթման անօրինականության հանգամանքի վրա, ուստի Թոփչիբաշևը օգնություն էր խնդրում Ազգերի լիգայից՝ բոլշևիկների դեմ պայքարելու համար: Իսկ ինչ վերաբերում էր հարևան երկրների հետ վիճելի տարածքներին, ապա ադրբեջանական պատվիրակությունն Ազգերի լիգայի ուշադրությունն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ Առաջին համաշխարհային պատերազմից հետո քաղաքական քարտեզի վրա չկան հստակ սահմաններ ունեցող նորաստեղծ պետություններ, ինչը, սակայն, չի կարող օգտագործվել որպես հիմք պետությանը՝ իր տարածքի հանդեպ ինքնիշխան իրավունքներից զրկելու համար: Բացատրության մեջ նշվում էր. *«Ադրբեջանի Հանրապետությունը բոլոր ազգերից իր տարածքային ամբողջականությունը պաշտպանելու նպատակով ստիպված էր ռազմական գործողությունների մեջ մտնել Վրաստանի հետ՝ Զաքաթալայի, իսկ Հայաստանի հետ՝ Ղարաբաղի և Զանգեզուրի շրջանների համար: Այս տարածքները կազմում են Ադրբեջանի մաս և կառավարվում են Ադրբեջանի կառավարության կողմից. Ղարաբաղն ու Զանգեզուրը Ադրբեջանի ղեկավարությանն են հանձնվել Կովկասում դաշնակիցների նախկին ներկայացուցիչների կողմից: Ամեն դեպքում, այս վեճերը վերաբերում են ոչ միայն Ադրբեջանին, այլ նաև հարևան երկրներին, ովքեր սկսել են վեճը»*[268]:

Այնուհետև նշվում էր. *«Սակայն Ադրբեջանի Հանրապետությունը մշտապես այն կարծիքին է եղել, որ հարևան Վրաստանի և Հայաստանի հետ սահմանային վեճերը պետությունների ներքին գործն են, և կառավարությունները պետք է ճանապարհ գտնեն հարցը փոխադարձ զիջումներով լուծելու համար: Վիճելի հարցը փոխադարձ համաձայնությամբ չլուծելու դեպքում, Ադրբեջանի պատվիրակությունը կասկած չունի, որ Անդր-*

[268] Հիշեցնենք, որ ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ Վրաստանի անդամության դիմումների քննարկումների ժամանակ Ադրբեջանի հետ վիճելի տարածքների մասին խոսք չի եղել:

*կովկասյան երեք հանրապետությունները կդիմեն Ազգերի լիգային»*[269]:

Այսպիսով՝ ներկայումս ադրբեջանական կողմից հնչող այն պնդումները, որ 1918-1920 թթ. տարածքային վեճերը ազդեցություն չեն ունեցել Ազգերի լիգային Ադրբեջանի անդամակցության հարցում, հերքվում են հենց իր՝ Ազգերի լիգայում ադրբեջանական պատվիրակության տվյալներով: Բացի այդ, Թոփչիբաշևի նամակը հստակորեն վկայում է, որ 1920-ին Ադրբեջանն ինքը Ղարաբաղի կարգավիճակը դիտում էր որպես վիճելի հարց, ուստիև պատրաստակամություն էր հայտնում դիմելու Ազգերի լիգայի արբիտրաժին: Այսպիսով՝ 1918-1920 թթ. Լեռնային Ղարաբաղը չի եղել Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կազմում, ինչը հստակորեն մատնանշվել է ինչպես այդ երկրի դե ֆակտո ճանաչման ընթացում, այնպես էլ Ազգերի լիգային անդամակցելու մերժման հիմնավորումների մեջ: Ուստի՝ ադրբեջանական կողմի ներկա պնդումները՝ անգլիացի գեներալ Թոմսոնի կողմից ընդունված՝ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում թողնելու վերաբերյալ որոշման և նրան Ղարաբաղի հայության համագումարի 1919 թ. օգոստոսյան համաձայնության վերաբերյալ, չեն դիմանում որևէ քննադատության: Նախ՝ ակնհայտ է, որ այդ որոշումները ժամանակավոր բնույթ էին կրում մինչև Փարիզի խաղաղության կոնֆերանսից սպասվող իրավական վճռահատումը[270]: Երկրորդ՝ Փարիզի խաղաղության կոնֆերանսում՝ 1920 թ. հունվարին Ադրբեջանի կառավարությունը ճանաչվեց առանց իր սահմանների վերջնական որոշման, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղը կրկին մնաց որպես վիճելի տարածք: Երրորդ՝ Ազգերի լիգային Ադրբեջանի անդամակցության մերժման համար հիմք հանդիսացան միանգամից երկու փաստարկներ՝ ա) 1920 թ. դեկտեմբերի 1-ին Ադրբեջանի՝ որպես պետության ինքնիշխան չլինելու իրողությունը, և բ) Հայաստանի Հանրապետության հետ՝ Լեռնային Ղարաբաղի, իսկ Վրաստանի հետ Զաքաթալայի վիճելի տարածքների առկայությունը:

---

[269] Տե՛ս LNA, Sec. 28, dos. 8466, doc. 9440.

[270] Տե՛ս **Heiko Krüger**, The Nagorno-Karabakh Conflict: A Legal Analysis, Springer 2010, p.13.

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ

## 3.1. Թուրք - հայկական պատերազմը դադարեցնելու Ազգերի լիգայի փորձերը

Ազգերի լիգայի խորհուրդը ապրիլի 11-ին՝ իր հերթական նստաշրջանի ավարտին, հուշագիր էր հղել Գերագույն խորհուրդ՝ խնդրելով պատասխանել Հայաստանի մանդատի հետ կապված մի շարք հարցերի: Դա հնարավորություն կստեղծեր մանդատար պետություն գտնել Հայաստանի համար: Իսկ ապրիլի 26-ին Ազգերի լիգան և Գերագույն խորհուրդը համատեղ դիմել էին ԱՄՆ նախագահին՝ խնդրելով ընդունել Հայաստանի մանդատը, ինչպես նաև որոշել վերջինիս սահմանները: Որոշվել էր նաև, որ Ազգերի լիգայի խորհուրդը պետք է կապի մեջ լիներ Գերագույն խորհրդի հետ՝ տեսնելու, թե Հայաստանի հետ կապված ինչ նախապատրաստական քայլեր կարող են ձեռնարկվել ֆինանսական երաշխիքների հարցում, որը, ըստ նախնական պայմանավորվածության, պետք է դրվեր Ազգերի լիգայի Վեհաժողովի առաջիկա նստաշրջանի օրակարգում: Ազգերի լիգայի խորհուրդը, անհանգստացած հայկական խնդրի մեծ ժողովրդականությունից և միջազգային մամուլի անդադար վերահսկողությունից, փորձում էր ինչ-որ լուծում գտնել ստեղծված իրավիճակից պատվով դուրս գալու համար: Ազգերի լիգայում այն կարծիքին էին, որ Խորհուրդը պետք է շարունակի խորհրդակցությունները Գերագույն խորհրդի հետ՝ Հայկական հարցում հետագա քայլերը պարզելու համար: «Մինչև նման քայլեր չձեռնարկվեն, հասարակական կարծիքը կասի, որ Ազգերի լիգան ոչինչ չի անում այս կարևոր հարցում: Նույնիսկ Ազգերի լիգայի Վեհաժողովը պետք է ձեռնամուխ լինի հայկական խնդրի լուծմանը և դիմի Գերագույն խորհրդին»[271]: Վերոնշյալ հարցի վերաբերյալ Գերագույն խոր-

---

[271] LNA, Class.11, dossier 3421, doc. 6542.

հըրդից պատասխան չստանալով՝ Ազգերի լիգայի խորհուրդը Գլխավոր քարտուղարին հանձնարարում է պարզել, թե արդյո՞ք ցանկալի է, որ ապրիլի 11-ի հուշագրի որևէ առաջարկ, հատկապես ֆինանսական երաշխիքների հարցը, դրվի Ազգերի լիգայի Վեհաժողովի օրակարգում[272]:

Իսկ մինչև իր հերթական նստաշրջանը, որը գումարվելու էր 1920 թ. սեպտեմբերի 19-ին Փարիզում, Ազգերի լիգայի խորհուրդը, Գերագույն խորհրդի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, փորձում էր տվյալներ հավաքել Հայաստանի Հանրապետության մասին: Մինչև նշյալ հերթական նստաշրջանը, Ազգերի լիգայի խորհրդին հաջողվել էր որոշ տեղեկություններ հավաքել Հայաստանի Հանրապետության սահմանների, միջազգային փոխառության և պաշտպանական խնդիրների վերաբերյալ, որոնք ստացվել էին Աթենքից[273]: Այնտեղ Հայաստանի Հանրապետության նախկին վարչապետ Ալ. Խատիսյանը անդրադարձել էր Հայաստանին վերաբերող մի շարք կարևոր խնդիրների, որոնց վերաբերյալ վարչապետի տրամադրած տեղեկությունները հասել էին Ազգերի լիգայի քարտուղարություն: Թուրքիայի հետ կապված՝ Ալ. Խատիսյանը նշել էր, որ եթե վերջինս հարձակվի Հայաստանի վրա, ապա հայերը բավարար ուժ ունեն՝ հակահարված տալու: «Սևրի պայմանագրի ստորագրումից հետո մենք հեռագիր ենք տվել Մուստաֆա Քեմալին՝ խնդրելով որքան հնարավոր է շուտ տալ իր որոշումը, քանի որ դրանից են կախված մեր միջերկրածովյան սահմանների և նավահանգստի հարցերը, որով պետք է ապահովվի Հայաստանի հաղորդակցությունը Սև ծովի հետ (հավանաբար Տրապիզոնը կամ Ռիզեն)»[274]: Բոլշևիկյան Ռուսաստանի հետ կապված (որը նույնպես խիստ հետաքրքրում էր Ազգերի լիգային)՝ Ալ. Խատիսյանը տեղեկացրել էր, որ Ռուսաստանի և Հայաստանի միջև խաղաղություն է հաստատվել, և օգոստոսի 2-ին Մոսկվայում պայմանագիր է կնքվել, որով Խորհրդային Ռուսաստանը ճանաչել էր Հայաստանի Հանրապետության անկախությունը: Ընդհանուր առմամբ,

---

[272] Տե՛ս LNA, Class 11, dossier 3421, doc 7656, 6491:

[273] Տե՛ս LNA, Class 11, dossier 3421, doc 6922:

[274] Նույն տեղում:

Խատիսյանը բավական լավատեսորեն էր ներկայացրել Հայաստանի վիճակը: Ռազմական ուժի վերաբերյալ նա նշել էր, որ բանակի թիվը աճում է կամավորների և հայրենադարձների շնորհիվ: Ալ. Խատիսյանը հույս էր հայտնել նաև, որ իր շրջագայության ընթացքում կկարողանա ստանալ 20 մլն դոլարի փոխառություն: Այսպիսով՝ Ալ. Խատիսյանն անդրադարձել էր Ազգերի լիգային խիստ հետաքրքրող՝ սահմանների, միջազգային փոխառության և Հայաստանի պաշտպանության հարցերին: Սեպտեմբերի 19-ին Փարիզում Ազգերի լիգայի խորհրդի հերթական նստաշրջանի ընթացքում կազմակերպության Գլխավոր քարտուղար է. Դրամմոնդը ներկայացնում է Հայաստանին անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների հարցը Ազգերի լիգայի Վեհաժողովի օրակարգ մտցնելու վերաբերյալ իր պատրաստած հուշագիրը՝ «Հայաստանի ապագա կարգավիճակը» խորագրով: Հուշագիրն ուղարկվում է նաև Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի կառավարություններ[275], որով Գլխավոր քարտուղարը խնդրում էր վերջիններիս համաձայնությունը՝ Ազգերի լիգայի Վեհաժողովում Հայաստանին տրամադրվելիք փոխառության հարցը բարձրացնելու համար: Սակայն հուշագրի պատասխանը չի ստացվում, և Ազգերի լիգայի խորհուրդը որոշում է Վեհաժողովում հայկական խնդիրը բարձրացնել որևէ այլ եղանակով: Այսպիսով, Հայկական հարցը թեև չի ներառվում Ազգերի լիգայի Վեհաժողովի նախնական օրակարգում, սակայն քանի որ այդ մասին անդրադարձ կար կազմակերպության Խորհրդի զեկուցագրում, որը ներկայացվելու էր Վեհաժողովին, ապա որոշվում է, որ դա հնարավորություն կընձեռի քննարկելու Հայաստանին տրամադրվելիք ֆինանսական երաշխիքների հարցը: Սակայն մինչև հարցը կհասներ Վեհաժողովի նստաշրջան, որն իր առաջին նիստը գումարելու էր նոյեմբերի 15-ին, Հայաստանում տեղի են ունենում արմատական իրադարձություններ, որոնք լիովին փոխում են Հայկական հարցի բնույթն Ազգերի լիգայում:

Քեմալական մեծաքանակ զորքերը 1920 թ. սեպտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը հարձակվում են Հայաստանի Հանրապե-

---

[275] Տե՛ս LNA, Class 11, dossier 3421, doc 6920, 7388:

տության վրա՝ սանձազերծելով նոր պատերազմ[276]: Քեմալական բանակն ամեն տեսակետից գերազանցում էր հայկականին, և ռազմական գործողությունները հենց սկզբից ընթանում են թուրքական կողմի հաջողություններով: Պատերազմի առաջին իսկ օրերից Հայաստանի Հանրապետության կառավարությունը կոչով դիմում է եվրոպական տերություններին՝ օգնություն խնդրելով հայ ժողովրդի գլխին կախված վտանգը վերացնելու համար: Բացառություն չէր նաև Ազգերի լիգան:

Հայկական պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանը 1920 թ. հոկտեմբերի 6-ին նամակ է հղում Ազգերի լիգայի խորհրդի նախագահ Պոլ Հյումանսին՝ տեղեկացնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունից ստացված տվյալների համաձայն՝ թուրքական կանոնավոր ուժերը, որոնք թվով գերազանցում էին հայկական բանակին, շարժվում են դեպի Կարս՝ նպատակ ունենալով Հայաստանին պարտադրել Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը, ինչպես նաև միանալ բոլշևիկներին: Նամակը համառ կոչ և խնդրանք էր ուղղում Ազգերի լիգային որևէ ձևով միջամտել՝ ապահովելու համար Սևրի պայմանագրի կիրառությունը[277]: Ավ. Ահարոնյանը տեղեկացնում է նաև, որ կռիվները մղվում են միանգամից երեք ճակատով՝ թուրքերի, թաթարների և բոլշևիկների դեմ ռազմամթերքի, պարենի, վառելիքի լիակատար անբավարարության պայմաններում: Հետաքրքիր է, որ հայկական կողմը նամակում լուրջ անդրադարձ էր արել բոլշևիկյան գործողություններին՝ տեղեկացնելով, որ վերջիններս դրական են վերաբերում թուրքական արշավանքին, քանզի համոզված են, որ համաշխարհային իսլամական հեղափոխությունը կհանգեցնի արևելքում տնտեսական համակարգի անկանոնության և անկայունության. ըստ այդմ էլ բոլշևիկները խաղադրույք են կատարում՝ իրենց համակարգի տարածմանը հասնելու համար: Փաստորեն, հայկական կողմը շատ ճիշտ էր ընթռնել Արևմուտքի պայքարը բոլշևիկների դեմ և ցանկանում էր

---

[276] Մանրամասն տե՛ս Զոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները:

[277] Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 7359. Document du Conseil, Ar. 3, 20/4/328, La Situation en Arme'nie:

oգտագործել այդ հանգամանքը՝ թուրքերի դեմ պատերազմում որևէ օգնություն ստանալու ակնկալիքով: Ավելին, նամակում շեշտված էր, որ համաշխարհային խաղաղությունը սպառնալիքի տակ կլինի, եթե երիտթուրքերը միավորվեն բոլշևիկների հետ և համատեղ գործելու ազատություն ստանան: «Հենց միայն այս պատճառով կարելի է օգնել Հայաստանին»[278]: Որպեսզի հնարավոր լինի խանգարել թուրք-բոլշևիկյան միավորումը, հայկական պատվիրակությունը առաջարկում էր գրավել Տրապիզոնը, ինչպես նաև առաջ էր քաշում Կոստանդնուպոլսի թուրքական կառավարության վրա ճնշում գործադրելու գաղափարը: Ըստ հայկական կողմի, խնդրի լուծում կարող էր լինել նաև հունական զորքի առաջխաղացման կազմակերպումը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը թեև ճիշտ էր հասկացել իրավիճակը, սակայն գերագնահատել էր բոլշևիկների դեմ կռվելու Արևմուտքի պատրաստակամությունն ու հնարավորությունները:

Ազգերի լիգայում հոկտեմբերի 12-ին ստացվում է հայկական պատվիրակության ուղարկած երկրորդ նամակը, որով տեղեկացվում էր, որ թուրքական կողմը ստիպել է հայերին էվակուացնել Կաղզվանն ու Սարիղամիշը, և կրկին խնդրվում էր միջամտել, քանի որ տեղի ունեցող իրադարձությունները սպառնում էին ոչ միայն Հայաստանին, այլև Կովկասում և Փոքր Ասիայում դաշնակից տերությունների շահերին[279]: Նույնաբովանդակ նամակ էլ ուղարկվում է դաշնակից տերություններին:

Այս նամակները քննարկվում են Ազգերի լիգայի խորհրդի 1920 թ. հոկտեմբերի 20-ի Բրյուսելյան նիստի ընթացքում[280]: Զեկույցով հանդես է գալիս Բրիտանիայի ներկայացուցիչ Արթուր Բալֆուրը, որը «Հայաստանի ապագա կարգավիճակը» խորագրի ներքո անդրադառնում է հայկական պատվիրակության ուղարկած նամակներին: Նա մասնավորապես նշում է, որ Ազգերի լիգան լիազորված չէ քայլեր ձեռնարկել թուրքական զորքերի՝ Հայաստան ներխուժման հետ կապված, քանի որ ներխուժումն իրականացնում են ոչ կանոնավոր զորքերը, որոնք չեն են-

[278] Նույն տեղում, էջ 3:

[279] Տե՛ս LNA. Class.11, dossier 3421, doc. 7507:

[280] Տե՛ս Барсегов Ю., նշվ. աշխ., էջ 539-540:

թարկվում թուրքական կառավարությանը: Ազգերի լիգայի խորհուրդը որոշում է այս հարցով դիմել Գերագույն խորհրդին՝ խնդրելով որևէ քայլ ձեռնարկել Հայաստանին օգնելու համար: Իսկ Ազգերի լիգայի խորհուրդն իր հերթին պարտավորվում է Վեհաժողովի առաջիկա նիստին ներկայացնել Հայաստանի մանդատի հարցը: Ա. Բալֆուրը տեղեկացնում է նաև, որ Բրիտանական կառավարությունը պատրաստ է օգնել Հայաստանին զենքով և ռազմամթերքով, սակայն փոխառության հարցում չի կարող հանդես գալ երաշխավորի դերում՝ միաժամանակ համոզվածություն հայտնելով, որ դա չի կարող անել և ոչ մի կառավարություն: Նիստը որոշում է նաև մեկ անգամ ևս դիմել դաշնակից տերություններին՝ խնդրելով վերջնականապես որոշել Հայաստանի Հանրապետության սահմանները:Դա հնարավորություն կտար Ազգերի լիգայի խորհրդին քայլեր ձեռնարկել՝ հայկական խնդրի լուծման ուղղությամբ[281]:

Մինչ Ազգերի լիգայի խորհուրդը զբաղված էր Գերագույն խորհրդի հետ նամակագրությամբ, հոկտեմբերի 23-ին հայկական պատվիրակությունը նոր նամակ է ուղարկում, որտեղ շարադրված էին հայ-թուրքական ռազմաճակատում գրանցված վերջին դեպքերը[282]: Հայկական կողմը տեղեկացնում է, որ հոկտեմբերի 13-ին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը պաշտոնապես խնդրել է Հայաստանի Հանրապետությանը իր զորախմբերի համար ազատ անցում ապահովել Հայաստանի տարածքով դեպի Թուրքիա, ինչպես նաև պահանջել է հրաժարվել Սևրի պայմանագրից, որոնց իրականացումը հայկական կառավարությունը մերժել է: Սրանով, փաստորեն, հայկական կողմը ցանկանում էր շեշտել իր դիրքորոշումը դեպի Եվրոպան և ընդգծել Հայաստանի պայքարը բոլշևիկների դեմ: Հայկական կողմը կրկին խնդրում էր Ազգերի լիգային դիմել դաշնակիցներին՝ առաջարկելով Լեհաստանը որպես միջնորդ ներգրավել բանակ-

---

281 Տե՛ս Յափուճյան Ա., Եվ վերածնավ հայ ժողովուրդը հուրեն ու սուրեն, Կահիրե, 1971, էջ 100-101:

282 Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 7734:

ցությունների մեջ՝ բոլշևիկների վրա ճնշում գործադրելու համար[283]:

Ազգերի լիգան հոկտեմբերի 23-ին վերջապես արձագանքում է հայկական կողմի նամակներին, թեև ոչ դրական: Հայկական պատվիրակությանն ուղղված իր պատասխան նամակում Ազգերի լիգայի խորհրդի նախագահ Հյումանսը գրում է, որ Սևրի պայմանագրի իրականացումը Ազգերի լիգայի իրավասության տակ չէ, այլ մեծ տերությունների, և այս ուղղությամբ կազմակերպությունը որևէ քայլ ձեռնարկել չի կարող: Սակայն փոխարենը Ազգերի լիգան խոստանում է դիմել տերություններին՝ ստեղծված պայմաններում Հայաստանին օգնություն տրամադրելու համար, ինչպես նաև հիշեցնել ապրիլի 11-ի հուշագրի մասին և կրկնել իր առաջարկը՝ համատեղ քննարկել Հայաստանի ապագան՝ պաշտպանելու համար անհրաժեշտ միջոցների ընտրության հարցը[284]:

Մեկ այլ նամակ էլ Պոլ Հյումանսը ուղղում է Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի և Ճապոնիայի վարչապետերին, որտեղ հիշեցնում էր Ազգերի լիգայի խորհրդի և Գերագույն խորհրդի միջև Հայաստանի վերաբերյալ տեղի ունեցած գրագրության մասին, ինչպես նաև կրկին խնդրում վերջնականապես ճշտել Հայաստանի սահմանները[285]:

---

[283] Լեհաստանը և Խորհրդային Ռուսաստանը 1919 թ. փետրվարից պատերազմի մեջ էին լեհական որոշ տարածքների համար, որոնք նախկինում պատկանել էին Ցարական Ռուսաստանին: Վերսալյան պայմանագիրը չէր սահմանել ռուս-լեհական սահմանը, ուստի կողմերը փորձում էին հարցը լուծել ռազմական ճանապարհով: Թեև սկզբնական շրջանում ռազմական գործողությունները ընթանում էին ռուսական կողմի հաջողությամբ, սակայն իրավիճակը փոխվում է 1920 թ. օգոստոսի կեսերից, և Վարշավայի ճակատամարտից հետո խորհրդային կողմի խնդրանքով 1920թ. հոկտեմբերին հրադադար է կնքվում: Հրադադարի շուրջ բանակցությունները ընթանում էին 1920թ. հոկտեմբերին՝ Լեհաստանի ակնհայտ գերակայությամբ: Հայկական կողմն առաջարկում էր օգտվել հրադադարի այս բանակցություններից՝ խորհրդային Ռուսաստանի վրա ճնշում գործադրելու համար:

[284] Տե՛ս Барсегов Ю., նշվ. աշխ., էջ 544-545:

[285] Նույն տեղում, էջ 545:

Իսկ ի՞նչ էին մտածում Հայաստանին օգնելու հարցի մասին Ազգերի լիգայում: Փաստորեն, հայկական կողմը թուրք-բոլշևիկյան պլանները վիժեցնելու համար առաջարկում էր, որ դաշնակիցները գրավեին Տրապիզոնը, ճնշում գործադրեին Կոստանդնուպոլսում թուրքերի վրա կամ ապահովեին հունական բանակի առաջխաղացումը բոլոր ռազմաճակատներում, մինչդեռ Ազգերի լիգայի խորհուրդն այն կարծիքին էր, որ Հայաստանի դեմ գործողություններն իրականացնում է ոչ թե Կոստանդնուպոլսի օրինական կառավարությունը, այլ Մուստաֆա Քեմալը, որը չի ենթարկվում Կոստանդնուպոլսի օրինական կառավարությանը: Ինչ վերաբերում էր Սևրի պայմանագրին, ապա Ազգերի լիգայի խորհուրդն այն կարծիքին էր, որ թեև Սևրի պայմանագիրը, իրոք, խախտված է, բայց ոչ իրավաբանորեն. Կոստանդնուպոլսի օրինական կառավարությունն ինքը պատերազմի մեջ է Մուստաֆա Քեմալի հետ և անում է այն ամենը, ինչ ի զորու է տվյալ պահին: Իսկ յուրաքանչյուր ճնշում Կոստանդնուպոլսի կառավարության վրա, ըստ Ազգերի լիգայի խորհրդի, միայն ձեռնտու կլինի Մուստաֆա Քեմալին: Միակ գործուն միջոցը, փաստորեն, մնում էր Քեմալի դեմ ռազմական գործողություններ իրականացնելը, սակայն Ազգերի լիգան չէր կարող դիմել նման քայլի (Ազգերի լիգան չուներ միջազգային զինված ուժեր): Ինչ վերաբերում էր տնտեսական պատժամիջոցներին, ապա, ըստ Խորհրդի, դրանք ևս արդյունք չէին տա, քանի որ Մուստաֆա Քեմալը այսպես թե այնպես ոչ մի երկրի հետ հարաբերություններ չուներ, բացի Խորհրդային Ռուսաստանից և կովկասյան որոշ երկրներից: Այս ամենից բացի, Սևրի պայմանագիրը դեռևս վավերացված չէր, և, ընդհանրապես, Ազգերի լիգան գտնում էր, որ ճիշտ կլիներ, եթե Հայաստանն օգնության հարցով դիմեր դաշնակիցներին, այլ ոչ թե Ազգերի լիգային:

Ինչպես արդեն նշեցինք, հոկտեմբերի 24-ին Ազգերի լիգայի խորհրդի նախագահ Պ. Հյումանսը նամակ էր հղել նաև Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի վարչապետերին՝ կապված Հայաստանի ապագա կարգավիճակի հետ, որում, մասնավորապես, անդրադարձել էր Սևրի պայմանագրի վավերացմանը և Հայաստանին օգնություն տրամադրելու անհրաժեշտությանը: Ազգերի լիգայի այս նամակին Մեծ Բրիտա-

Ռիայի վարչապետ Լլոյդ Ջորջը պատասխանում է միայն նոյեմբերի 10-ին, որով տեղեկացնում է, որ դաշնակից տերությունները անում են ամեն ինչ Հայաստանի Հանրապետությանը ռազմական աջակցություն ցույց տալու ուղղությամբ՝ վերջինիս տրամադրելով պատերազմական նյութեր և վառելիք: Ինչ վերաբերում էր Սևրի պայմանագրին, ապա Մեծ Բրիտանիայի վարչապետը հիշեցնում էր, որ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը համաձայնել էր հանդես գալ որպես արբիտր հայ-թուրքական սահմանի որոշման հարցում, և մինչև Վիլսոնի պատասխանը որևէ դրական արդյունք Սևրի պայմանագրի իրագործման ճանապարհին Լլոյդ Ջորջն իրատեսական չէր համարում[286]:

Սրանով դաշնակիցները փաստորեն «լվանում էին» իրենց ձեռքերը Հայկական հարցից՝ հայ-թուրքական պատերազմի բատերաբեմում ղերակատարությունը թողնելով Ազգերի լիգային:

Մինչ ընթանում էր այս նամակագրությունը, հայ-թուրքական ռազմաճակատում իրավիճակն է՛լ ավելի էր ծանրանում: Հոկտեմբերի վերջին թուրքերի կողմից Կարսի գրավումն առավել հավանական դարձրեց թուրքերի հաղթանակի հնարավորությունը[287]: Հայկական կողմը նոյեմբերի 12-ին նոր նամակ է ուղարկում Ազգերի լիգայի խորհուրդ՝ կրկին խնդրելով Ազգերի լիգային՝ միջամտել Սևրի պայմանագիրը հարգելու և Հայաստանի Հանրապետության գրավումը կանխելու[288]: Նամակը տեղեկացնում էր նաև, որ բացի քեմալական Թուրքիայից և բոլշևիկներից, Հայաստանը հարձակման է ենթարկվում նաև արևելքից՝ Խորհրդային Ադրբեջանի կողմից: Հայկական կողմի հերթական նամակը ստացվում է նոյեմբերի 17-ին: Վերջինս հայտնում էր, որ նոյեմբերի 7-ին Հայաստանը բավական ծանր պայմաններով ստիպված է եղել զինադադար կնքել Թուրքիայի հետ: Սակայն հայկական կողմը շարունակում է դեմ լինել Սևրի պայմանագրի որևէ շեղման և առաջարկում էր Ալեքսանդ-

---

[286] Տե՛ս Իզմիրլեան Կ., նշվ. աշխ., էջ 222, նաև՝ LNA, Class.11, dossier 3421, doc. 9699:

[287] Տե՛ս Ternon Y., La cause armenie'nne, Paris 1983, pp. 66-67:

[288] Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 8387, 8591, նաև՝ ՀԱԱ ֆ. 430, ց. 1, գ. 1227:

րապոլում կոնֆերանս գումարել՝ իրավիճակը քննարկելու համար, ինչպես նաև խնդրում էր քայլեր ձեռնարկել Թուրքիայի վրա ճնշում գործադրելու համար: Նույն օրը՝ նոյեմբերի 17-ին, Ազգերի լիգայի Վեհաժողովի նիստում բարձրացվում է հայկական խնդիրը: Բավական ընդարձակ ճառով հանդես է գալիս Հարավաֆրիկյան միության պատվիրակ լորդ Ռոբերտ Սեսիլը[289]: Վերջինս հանգամանորեն ներկայացնում է հայ ժողովրդի կրած տանջանքները, կանգ է առնում հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Թալեաթ փաշայի կազմակերպած ջարդերի, կոտորածների վրա՝ դրանք որակելով որպես մարդկության դեմ իրականացված ամենաահրեշավոր հանցագործություն: Ռ. Սեսիլը զգուշացնում է, որ Ազգերի լիգան կկորցնի հասարակական բարոյականության ներկայացուցչի իր դերը, եթե որևէ քայլ չձեռնարկի հայ ժողովրդին օգնելու ուղղությամբ: Ռ. Սեսիլը կոչ էր անում որևէ գործնական քայլ կատարել իրավիճակը շտկելու համար և այդ նպատակով Ազգերի լիգայի Վեհաժողովի ուշադրությանն է ներկայացնում բանաձևի հետևյալ նախագիծը.

*Ազգերի լիգայի խորհուրդը պետք է անհապաղ քննարկի Հայաստանի իրավիճակը և Ազգերի լիգայի Վեհաժողովի քննարկմանը ներկայացնի առաջարկություններ, որոնք նպատակ կունենան դադարեցնելու հայ ժողովրդի կենդանի մնացած մասին ներկայումս սպառնացող վտանգը և այդ երկրում հաստատելու մշտական կարգուկանոն*[290]:

Նույն օրը Ազգերի լիգայի խորհրդի աշխատանքների վերաբերյալ զեկույցով հանդես է գալիս Ազգերի լիգայի գլխավոր քարտուղար է. Դրամմոնդը, որն անդրադառնում է նաև Հայաստանի խնդրին: Նա հանգամանորեն ներկայացնում է Հայաստանի մանդատի հետ կապված քննարկումներն Ազգերի լիգայի խորհրդում, ինչպես նաև Հայկական հարցի վերաբերյալ նամակագրությունը Ազգերի լիգայի խորհրդի և Գերագույն խորհրդի

---

[289] Տե՛ս LNA, Georges Lechartier, The Useless League, *The North American Review*, Vol. 213, No. 785 (Apr., 1921), էջ 469:

[290] Turabian H. L'Arme'nie et la question Arme'nienne avant, pendant et depuis la guerre, Paris, 1922, p. 38.

միջև: Գլխավոր քարտուղարը տեղեկացնում է նաև, որ հայկական պատվիրակությունը դիմել է Ազգերի լիգայի խորհուրդ՝ խնդրելով օգնել թուրքական առաջխաղացումը կանխելու: Սակայն նոյեմբերի 17-ի Վեհաժողովի նիստը սահմանափակվում է այսքանով: Հայկական խնդրի վերաբերյալ հաջորդ քննարկումը տեղի է ունենում նոյեմբերի 19-ին[291]: Այս անգամ Հայաստանի մասին խոսքը բացում է Մեծ Բրիտանիայի պատվիրակ Բարնեսը, որը նշում է, որ Ազգերի լիգան և դաշնակիցներն արել են ամեն ինչ հայերին օգնելու համար, և եթե որևէ բան չի ստացվել, ապա ոչ թե կամքի, այլ միջոցների բացակայության պատճառով: Ելույթով հանդես է գալիս նաև Շվեյցարիայի ներկայացուցիչ Մ. Մոթթան, որը միանում է Ռոբերտ Սեսիլի՝ նոյեմբերի 17-ի առաջարկին: Պատվիրակը նշում է, որ Շվեյցարիան նույնիսկ առանձին դիմել է դաշնակիցներին՝ խնդրելով ավելի խորությամբ զբաղվել Հայաստանի հարցով, ինչպես նաև հայտարարում, որ ճիշտ կլիներ, եթե Ազգերի լիգան փորձի գտնել Հայկական հարցի որևէ լուծում [292]: Հայկական խնդրի քննարկումն այս անգամ ևս տեղի չի ունենում, քանի որ այսքանով նիստն ավարտում է իր աշխատանքները: Ազգերի լիգայում թուրք-հայկական պատերազմի վերաբերյալ քննարկումները հսկայական հասարակական արձագանք են ստանում ոչ միայն արտասահմանի հայերի շրջանում, այլև ողջ աշխարհում: Սեսիլի բանաձևը պաշտպանելու խնդրանքով Ազգերի լիգայի նախագահ Պոլ Հյումանսին նամակներ են ուղարկում Բելգիայի, Ալեքսանդրիայի, Լոնդոնի, Հնդկաստանի, Գերմանիայի, Ռումինիայի, Եգիպտոսի հայ համայնքները, Հնչակյան կուսակցությունը, Դաշնակցության հայկական կոմիտեն, Հայ կանանց միությունը, Լիբերալ կուսակցությունը և այլն[293]: Ազգերի լիգային դիմում է նաև Գևորգ V կաթողիկոսը՝ խնդրելով օգնել հայերին՝ ընդդեմ թուրքական հարձակման՝ տրամադրելով անհրաժեշտ բարոյական և ֆիզիկական օգնություն Հայաստանին պաշտպանելու համար,

---

[291] Տե՛ս LNA, Records of the First Assembly Plenary meetings, pp. 148-160:

[292] Տե՛ս Барсегов Ю., նշվ. աշխ., էջ 552, նաև՝ Arme'nie, Suisse et Socie'te' des Nations en 1924, Gene'vе.

[293] Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 8502, 9181, 5724, 6562:

մինչև վերջինս ի վիճակի կլինի ինքնուրույն պաշտպանվելու[294]: Նմանատիպ կոչով է հանդես գալիս նաև Շոտլանդիայի միացյալ անկախ եկեղեցին, որը միաձայն բանաձև էր ընդունել և ուղարկել Ազգերի լիգա՝ խնդրելով քայլեր ձեռնարկել հայկական խնդրի լուծման ուղղությամբ[295]: Բավական երկար մի նամակ էլ ստացվում է Հայասերների միության կողմից, որոնք Ազգերի լիգային մեղադրում էին Հայաստանի նկատմամբ 22-րդ հոդվածը չկիրառելու մեջ: Հայասերների միությունը այն կարծիքին էր, որ Հայաստանի վիճակը բարելավելու համար նախ անհրաժեշտ է ապահովել երկիրը արտաքին ագրեսիաներից: Իսկ այդ առաջադրանքը պետք է կատարի Ազգերի լիգայի Վեհաժողովը՝ հարցը հանձնելով մեկ կամ մի քանի անդամ պետությունների: Ըստ նրանց, ֆինանսական պարտավորությունները պետք է դրվեն մասամբ Ազգերի լիգայի, մասամբ էլ ԱՄՆ-ի վրա: Որպես օրինակ՝ միությունը բերում էր Հունաստանի փաստը, որը նույնպես թուրքական ճնշումների զոհ էր, սակայն իր տեղն էր գտել Ազգերի լիգայում: Կիլիկիայի, Անատոլիայի և թուրքական մյուս վիլայեթների հայերի համար միությունն այն կարծիքին էր, որ վերջիններս չեն կարող թողնվել թուրքական բռնությունների ներքո. «Վեհաժողովը պետք է ջանքեր գործադրի թուրքական բանակը զինաթափելու համար, և պետք է եվրոպական հանձնակատար նշանակի՝ տիրող իրավիճակի մասին զեկուցելու և քրիստոնյա փոքրամասնությունների պաշտպանությունն ապահովելու նպատակով»[296]: Նշենք նաև, որ միության նախագահ Էդուարդ Նավիլը հանդիպում է խնդրում Վեհաժողովի ներկայացուցիչների հետ:

Նոյեմբերի 20-ի Ազգերի լիգայի Վեհաժողովում Հայաստանի վերաբերյալ հարցը վերաբացում է Բելգիայի ներկայացուցիչ Հենրի Լաֆոնտեն, որը մեղադրում է Ազգերի լիգային և նրա անդամ 41 պետություններին՝ մատնանշելով, որ վերջիններիս «զորքերի թիվը հասնում է միլիոնի, և որոնք նավատորմ ունեն Կոստանդնուպոլսում, որտեղից մի քանի քայլ է մինչև այն վայրը, որտեղ անգթորեն կոտորում են դժբախտ հայ ժո-

[294] Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 8847:
[295] Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 9883:
[296] LNA, Class.11, dossier 3421, doc. 8292.

ղովրդին»[297]: Իսկ հայերը, ըստ Լաֆոնտենի, այդքան էլ շատ բան չեն ուզում. լոկ սպաներ՝ ռազմական գործը կարգավորելու համար: Գործը գլուխ չբերելու միակ պատճառը Լաֆոնտենը համարում էր բարի կամքի բացակայությունն ու հայերի դժբախտ ճակատագրով հետաքրքրված չլինելու հանգամանքը: Նույն օրը հանդես է գալիս նաև Իտալիայի ներկայացուցիչ Թոմասո Տիտոնին, որն իր հերթին ներկայացնում է Հայկական հարցի ընթացքը Ազգերի լիգայում: Որպես ամփոփում՝ Տիտոնին նշում է, որ Ազգերի լիգան դեռևս նորաստեղծ և թույլ կառույց է և այդ իսկ պատճառով պետք է ըմբռնումով մոտենալ որոշ հարցերում դրա անկարողությանը. «Եթե Ազգերի լիգան Հերկուլեսի ուժը ունենար և կարողանար սպանել հրեշին, որ նպատակ ունի պատերազմ սանձազերծել և խանգարել համաշխարհային խաղաղությանը, ապա կարող էր հեշտությամբ իրականացնել իր առաքելությունը»[298]:

Ռոբերտ Սեսիլի առաջարկած վերոնշյալ բանաձևի քննարկումները վերջապես սկսվում են նոյեմբերի 22-ին[299]: Ազգերի լիգայի գլխավոր քարտուղարը ներկայացնում է Ռ. Սեսիլի բանաձևը՝ Բելգիայի ներկայացուցիչ Հ. Լաֆոնտենի կատարած հավելումով: Վերջինս առաջարկում էր խնդրել Ազգերի լիգայի Վեհաժողովին նշանակել 6 հոգուց բաղկացած հանձնաժողով՝ քննարկելու համար հայերի և քեմալականների միջև թշնամական գործողությունները դադարեցնելու համար անհրաժեշտ միջոցառումները[300]: Նույն օրը բավական երկար և բուռն ելույթ է ունենում նաև Հարավսլավիայի ներկայացուցիչ Մ. Սպալայկովիչը, որն իր ազգի փորձի վրա ներկայացնում է թուրքական վայրագությունների հնարավոր ուժն ու ծավալները և առաջարկում անմիջապես հեռագիր ուղարկել գլխավոր տերությունների խորհրդարաններին՝ կոչ անելով հրատապ և արդյունավետ մի-

---

[297] Барсегов Ю., նշվ. աշխ., էջ 552:
[298] Նույն տեղում, էջ 554-555:
[299] Տե՛ս LNA, Records of the First Assembly, The Ninth Plenary Meeting, pp.184-202:
[300] Տե՛ս նույն տեղում, էջ 184, նաև՝Վ. Վիրաբյան, ՀՀ 1918-20 թթ. կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Ե., 1999, էջ, 55:

ջոցներ ձեռնարկել հայ ժողովրդի կենդանի մնացած մասին փրկելու համար: Սպալայկովիչը գտնում էր, որ կոչը ավելի ազդեցիկ կլինի, եթե ընդունվի միաձայն և արտահայտի Ազգերի լիգայի անդամ բոլոր պետությունների ցանկությունը: Ռ. Սեսիլի բանաձևի ընդունմանն օգտին է արտահայտվում նաև Շվեդիայի պատվիրակ Մ. Բրանտինգը: Իսկ ահա Բրիտանական կայսրության ներկայացուցիչը շտապում է շարադրել այն դժվարությունները, որոնք անհնարին են դարձնում Հայաստանին արդյունավետ օգնություն տրամադրելը: Նրա կարծիքով ամենածանր խնդիրն այն էր, որ Ազգերի լիգայի կանոնադրությունը նման դեպքերի համար ոչինչ չէր նախատեսում, այսինքն՝ ցանկությունը դեռ բավարար չէր, անհրաժեշտ էր գործնական միջոցների առկայություն: Բացի այդ, Արթուր Բալֆուրի կարծիքով, Հայաստանը չուներ հստակ սահմաններ, քանի որ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը դեռ չէր հայտնել իր վճիռը (նշենք, որ Վիլսոնի արբիտրաժային որոշումը լինում է հենց նույն օրը՝ նոյեմբերի 22-ին[301]): Մուստաֆա Քեմալի հետ կապված՝ Բրիտանիայի պատվիրակը նշում է, որ Ազգերի լիգայի կանոնադրությունը նկատի ունի միայն ձևավորված պետություններին, որոնց համար նշանակություն ունի հասարակական կարծիքը, այլ ոչ թե նրանց, որոնց վրա նույնիսկ չեն կարող ազդել Ազգերի լիգայի իրականացրած տնտեսական ճնշումները, քանի որ ո՛չ ֆինանսական, ո՛չ էլ առևտրային պարտավորություններ Քեմալը չի կրում: Վերջինս ղեկավարում է անկանոն ավազակային խմբեր, որոնց վրա որևէ ճնշում գործադրելը անհրական է: Բալֆուրի կարծիքով՝ միակ ելքը Հայաստանի համար մանդատար պետություն գտնելն էր, որը կկարողանար կազմակերպել Հայաստանի հետ կապված բոլոր խնդիրների լուծումը:

Այս կարծիքը բավական մեծ դժգոհության տեղիք է տալիս. Ֆրանսիայի պատվիրակն իրավամբ նկատում է, որ եթե չհաջողվեց գտնել մանդատար պետություն մինչև թուրք-հայկական պատերազմը, ինչպես դա հնարավոր կլինի ստեղծված ծանր պայմաններում: Ավելի խորանալով՝ Ֆրանսիայի ներկայացուցիչ

---

301 Տե՛ս Ch. Aznakian Vertanes, Armenia reborn, New York, 1951, pp. 155-172:

Ռենե Վիվիանին նույնիսկ նշում է, որ Ազգերի լիգայի Վեհաժողովն ուժ չունի, քանի որ վերջինիս տվել են պարտավորություններ, սակայն չեն օժտել իրական ուժով[302]: Նշենք, որ Ֆրանսիան դեռ Ազգերի լիգայի ձևավորման նախաշեմին առաջարկում էր, որ կազմակերպությունն ունենար իր սեփական բանակը՝ ստեղծվեր միջազգային կոնտինգենտ, որը ավելի գործնական կդարձներ Ազգերի լիգայի գոյությունը[303]: Անդրադառնալով մանդատի խնդրին՝ Ռ. Վիվիանին նշում է, որ քանի որ ոչ մի պետություն չի ցանկանում ընդունել Հայաստանի մանդատը, կարելի է գտնել մի պետություն, որն իր բարոյական կամ տնտեսական հեղինակությամբ կկարողանա միջամտել և լուծել պատերազմող կողմերի միջև առկա խնդիրները: Որն Վիվիանին նոր բանաձև է առաջարկում, որը, ըստ նրա, ավելի արդյունավետ կլիներ, քանի որ քիչ ժամանակ էր պահանջելու.

*Ազգերի լիգայի Վեհաժողովը, ձգտելով համագործակցել Ազգերի լիգայի խորհրդի հետ՝ ամենակարճ ժամկետներում վերջ տալու հայկական ողբերգությանը, խնդրում է Ազգերի լիգայի խորհրդին համաձայնության գալ անդամ պետությունների ներկայացուցիչների հետ, որպեսզի վերջիններս համոզեն իրենց կառավարություններին՝ քայլեր ձեռնարկելու Հայաստանի և քեմալականների միջև ռազմական գործողությունները դադարեցնելու համար*[304]:

Նոյեմբերի 22-ին նիստի ժամանակ ելույթ է ունենում նաև Նորվեգիայի ներկայացուցիչ Ֆ. Նանսենը, որը հայկական խնդիրը բաժանում է երկու մասի, առաջինը հարցի մարդասիրական կողմն էր, որը պահանջում էր փրկել հայ ժողովրդին ոչնչացումից: Ըստ նրա, մինչև սահմանների ճշտումը անհրաժեշտ էր, որ ժողովուրդը կենդանի մնա այնտեղ ապրելու համար: Երկրորդը մանդատի հարցն էր, որին, ըստ Նանսենի, պետք է անդրադառնալ ավելի ուշ: Նորվեգիայի ներկայացուցիչը նույնիսկ որոշակի առաջարկ է անում՝ 60 000-անոց էքսպեդիցիա, որի համար

---

[302] Տե՛ս Alfred H. Fried, Police force or moral force for the League of nations?, *Advocate of Peace through Justice*, Vol. 83, No. 1 (January, 1921), էջ 13-14.

[303] Տե՛ս Եսայան Ա., նշվ. աշխ., էջ 204:

[304] Նույն տեղում:

անհրաժեշտ կլինի մոտ 20մլն ֆունտ, բավական կլինի հայերին օգնելու համար: «ԱՄՆ-ն թեև հրաժարվել է մանդատից, սակայն չի հրաժարվի օգնել հայերին ոչնչացումից: Իհարկե, Ազգերի լիգան վտանգում է իր հեղինակությունը՝ սկսելով մի գործ, որը չի կարող ավարտին հասցնել, սակայն, կազմակերպությունն իրեն էլ ավելի կվտանգի, եթե ոչինչ չձեռնարկի»[305]:

Հայկական խնդրի վերաբերյալ արտասանված բոլոր ելույթները լի էին նույն սրտառուչ տոնով և բովանդակությամբ, նույն ցավով և հայերին օգնելու մեծ ցանկությամբ: Սակայն, ինչպես ասում են, այստեղ խոսքն ու գործը չէին համընկնում: Բավական դիպուկ է արտահայտվում Կանադայի ներկայացուցիչ Դոմինիկ Դոգերտին՝ նշելով, որը թուրք- հայկական պատերազմը Ազգերի լիգայի իրավասությունն է, քանի որ այն ընկնում է Կանոնադրության 11-րդ հոդվածի ներքո, այսինքն՝ պատերազմական վիճակ, որը սպառնում է միջազգային խաղաղությանը, և որին Ազգերի լիգայի խորհուրդը պետք է միջամտի: Հետագա քննարկումները վերաբերում էին Հարավաֆրիկյան Հանրապետության ներկայացուցիչ Ռոբերտ Սեսիլի *(Ազգերի լիգայի խորհուրդը պետք է անհապաղ քննարկի Հայաստանի կացությունը և Ազգերի լիգայի Վեհաժողովի քննարկմանը ներկայացնի առաջարկություններ, որոնք հետամուտ կլինեն դադարեցնելու հայ ժողովրդի կենդանի մնացած մասին ներկայումս սպառնացող վտանգը և այդ երկրում հաստատելու մշտական կարգուկանոն)* և Ֆրանսիայի ներկայացուցիչ Ռենե Վիվիանիի *(Ազգերի լիգայի Վեհաժողովը, ձգտելով համագործակցել Ազգերի լիգայի խորհրդի հետ, ամենակարճ ժամկետներում վերջ տալու հայկական ողբերգությանը, խնդրում է Ազգերի լիգայի խորհրդին համաձայնության գալ անդամ պետությունների ներկայացուցիչների հետ, որպեսզի վերջիններս համոզեն իրենց կառավարություններին քայլեր ձեռնարկել Հայաստանի և քեմալականների միջև ռազմական գործողությունները դադարեցնելու համար)* առաջարկած բանաձևերին՝ դրանցից առավել արդյունավետը ընտրելու համար: Ռ. Վիվիանին իր առաջարկած բանաձևին ավելացնում է նաև հետևյալը.

[305] LNA, The Ninth Plenary Meeting of the Assembly, p. 193.

*Նշանակել 6-հոգանոց հանձնաժողով, որը կքննարկի և ներկայիս Վեհաժողովի աշխատանքների ընթացքում կներկայացնի զեկույց այն հնարավոր քայլերի և միջոցների վերաբերյալ, որոնք պետք է իրականացվեն՝ թուրքերի և հայերի միջև ռազմական գործողությունները դադարեցնելու համար*[306]:

Միջնորդության գաղափարին բավական վատատեսորեն է վերաբերվում Բրիտանիայի ներկայացուցիչը՝ գտնելով, որ հնարավոր չի լինի համաձայնության գալ Մուստաֆա Քեմալի հետ: «Դրական արդյունքի հասնելու համար վերջինիս պետք է կա՛մ փող, կա՛մ տարածք առաջարկել, ինչը հնարավոր չէ, հետևաբար միջնորդության գաղափարն անիրականանալի է»[307]:

Ի վերջո, երկար քննարկումներից հետո որոշվում է երկու բանաձևն էլ դնել քվեարկության, որոնք ընդունվում են միաձայն: Անդրադառնալով Վեհաժողովի նոյեմբերի 22-ի նիստին՝ հայկական ազգային պատվիրակության անդամ Ա. Սաֆրաստյանը գրում է. «Հայկական խնդիրը չէր կարող ունենալ աւելի մեծ ու հեռահաս համաշխարհային բրօքականտ, քան ժընէվի մեջ էր իր շուրջ կատարուած վիճաբանութիւններով: Վերջին 40 տարիներիս ընթացքին մեր սեփական ույժերով կատարուած բրօքականտը չէր կրցած այնչափ աշխարհին ծանօթացնել հայկական ողբերգութիւնը, որչափ նոյեմբերի 22-ի նիստը և անոր յաջորդող բանակցութիւնները կրցան այդ ընել ամբողջ աշխարհի ժողովուրդներուն մէջ»[308]:

Քվեարկությունից հետո Վեհաժողովի նախագահն առաջարկում է համապատասխան խմբերի և անձանց հետ խորհրդակցելուց հետո նշանակել կոմիտեի 6 անդամների: Այս որոշումն իրականացնելու նպատակով նույն օրը գումարվում է Ընդհանուր հարցերով հանձնաժողովի նիստ, որի կազմի մեջ էին նախագահը և 12 փոխնախագահները: Հայկական հարցով զբաղվող կոմիտեի անդամներ են նշանակվում լորդ Ռ. Սեսիլը (Հարավային Աֆրիկա), Հ. Լաֆոնտենը (Բելգիա), Ֆ. Նանսենը

---

[306] Барсегов Ю., նշվ. աշխ., էջ 576:

[307] Տե՛ս LNA, Records of the First Assembly Plenary Meeting, p. 187:

[308] Տե՛ս Ժողովուրդի Ձայն, յունուար 9/22, 1921:

(Նորվեգիա), Հ. Պուերեդոն (Արգենտինա), Շանցերը (Իտալիա), Ռ. Վիվիանին (Ֆրանսիա)[309]:

Վեհաժողովի նախագահ Հյումանսը հրավիրում է նաև Ազգերի լիգայի խորհրդի նիստ՝ հայերի և թուրքերի միջև միջնորդության հարցը գլուխ բերելու համար: Նոյեմբերի 24-ին Ժնևում գումարվում է Ազգերի լիգայի խորհրդի 11-րդ նիստը, որի նպատակն էր համապատասխան քայլեր ձեռնարկել՝ Վեհաժողովի նոյեմբերի 22-ի բանաձևն իրականացնելու համար[310]: Մտքերի փոխանակումից հետո Ազգերի լիգայի խորհուրդը որոշում է դիմել կազմակերպության անդամ բոլոր կառավարություններին, ինչպես նաև հաղորդագրություն ուղարկել ԱՄՆ նախագահին: Այս վերջին քայլը պայմանավորված էր նրանով, որ պետությունները գտնում էին, որ Հայաստանի սահմանները որոշելու Վիլսոնը համաձայնությունը վերջինիս վրա նաև որոշակի բարոյական պարտավորություն էր դրել միջամտել Հայաստանի հետ կապված հարցերում, ուստի անհրաժեշտ էր դիմել նաև ԱՄՆ նախագահին: Խորհուրդը գտնում է նաև, որ լավ կլիներ, եթե Հայաստանի և Մուստաֆա Քեմալի միջև միջնորդությամբ հանդես եկող երկրները չլինեն Սևրի պայմանագիրը ստորագրած պետություններ: Գլխավոր քարտուղարի կազմած հեռագրերը նոյեմբերի 25-ին ուղարկվում են ԱՄՆ նախագահին և մյուս երկրների կառավարություններին: Հեռագրերում մեջբերված էր Ազգերի լիգայի Վեհաժողովի նոյեմբերի 22-ի բանաձևը, ապա Ազգերի լիգայի խորհրդի խնդրանքը՝ արձագանքել կազմակերպության բանաձևին և միայնակ կամ այլ պետությունների հետ համատեղ հանդես գալ որպես միջնորդ Հայաստանի և քեմալականների միջև ռազմական գործողությունները դադարեցնելու համար[311]: Իսկ ԱՄՆ նախագահին ուղղված հեռագրում մատնանշված էր նաև, որ միջնորդական այս առաքելությունը որևէ կապ չունի ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի ընդունման գաղափարի հետ[312]:

---

309 Տե՛ս ՀԱԱ ֆ. 430, ց.1, գ. 1227:

310 Տե՛ս Барсегов Ю., նշվ. աշխ., էջ 577:

311 Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 10064:

312 Տե՛ս նույն տեղում:

Ինչպես և ենթադրվում էր, կառավարությունները բավական արագ են արձագանքում Ազգերի լիգայի խորհրդի հեռագրերին: Նոյեմբերի 30-ին ստացվում է Իսպանիայի արտաքին գործերի նախարար Մ. Դատոյի պատասխանը, որը հայտնում է իր կառավարության պատրաստակամությունը բարոյական և դիվանագիտական քայլերով համագործակցել այլ պետությունների հետ, որոնց ջանքերը ուղղված կլինեն Ազգերի լիգայի խաղաղասիրական առաքելությունների իրագործմանը: Չնայած Իսպանիայի կառավարությունը նշում էր, որ չի պատկերացնում, թե ինչպես է իրականացվելու օգնությունը, սակայն իր պատրաստակամությունն էր հայտնում աջակցել Հայաստանի և քեմալականների միջև ռազմական գործողությունները դադարեցնելու համար[313]:

Դրական պատասխան է ստացվում նաև Բրազիլիայի կառավարությունից: Նոյեմբերի 30-ին Բրազիլիայի արտաքին գործերի նախարար Ազեվեդո Մարկեսը իր պատասխան նամակում գրում է, որ Բրազիլիայի կառավարությունը պատրաստ է կա՛մ մենակ, կա՛մ այլ պետությունների հետ համատեղ աջակցել՝ վերջ դնելու համար Հայաստանում տիրող դաժան իրավիճակին[314]:

Դեկտեմբերի 1-ին պատասխանում է նաև ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը, որը թեև շեշտում է, որ իրավասու չէ տնօրինելու երկրի ռազմական ուժը և ֆինանսները առանց Կոնգրեսի համաձայնության, որն այդ պահին նիստի չէ, սակայն պատրաստ է օգտագործել իր պաշտոնը և անձնական միջնորդությունն իր նշանակած անձի միջոցով վերջ դնելու հայ ժողովրդի դեմ իրականացվող թշնամական ռազմական գործողություններին՝ խաղաղություն հաստատելով տարածաշրջանում: Միևնույն ժամանակ Վիլսոնը խնդրում է, որ Ազգերի լիգայի խորհուրդը ծանոթացնի այն ուղիները, որոնցով իր առաջարկները պետք է փոխանցվեն, և այն կողմերը, որոնց ինքը պետք է դիմի[315]:

---

[313] Տե՛ս LNA, Records of the Assembly. Document de L'Assemblee 155, 20/48/155:

[314] Տե՛ս նույն տեղում:

[315] Տե՛ս Armenia, the Powers, and the United States, *Advocate of Peace through Justice*, Vol. 82, No. 12 (December, 1920), pp. 387-388:

Թեև թուրք-հայկական պատերազմի վերաբերյալ Ազգերի լիգայի հետագա փաստաթղթերում նշվում է, որ Վեհաժողովի կոչին դրական են արձագանքում միայն Իսպանիայի, Բրազիլիայի կառավարություններն ու ԱՄՆ նախագահը, սակայն արխիվների ուսումնասիրությունը փոքր-ինչ փոխում է ընդհանուր պատկերը: Մասնավորապես մեջբերենք Պերուի, Պանամայի և Գվատեմալայի կառավարությունների պատասխանները, որոնք ևս դրական են արձագանքում Վեհաժողովի նոյեմբերի 22-ի բանաձևին՝

«Նոյեմբերի 30, Պերուի կառավարությունը կանի ամեն հնարավորը այլ պետությունների հետ նոյեմբերի 22-ի բանաձևն իրագործելու և Հայաստանում տիրող իրավիճակը դադարեցնելու համար»[316]:

«Դեկտեմբերի 4, Պանամայի Հանրապետությունը, հավանություն տալով նոյեմբերի 22-ի բանաձևին, համաձայն է համագործակցել այլ պետությունների հետ՝ ցանկալի նպատակին հասնելու համար, և պատրաստ է տրամադրել յուրաքանչյուր օգնություն այն առաքելությանը, որը Ազգերի լիգան կուղարկի թուրք-հայկական պատերազմը դադարեցնելու նպատակի իրագործման համար, պայմանով, որ Ազգերի լիգայի մյուս անդամները ևս մասնակցեն՝ իրենց բնակչության թվին համապատասխան զորք տրամադրելով»[317]:

«Գվատեմալայի կառավարությունը համոզված է, որ պետք է որևէ քայլ ձեռնարկել, և տալիս է իր համաձայնությունն Ազգերի լիգայի խորհրդի յուրաքանչյուր որոշմանը»[318]:

Այս պետությունների կառավարությունները նույնիսկ ավելի իրական օգնության հնարավորություններ էին առաջարկում, քան Իսպանիայի, Բրազիլիայի կառավարություններն ու ԱՄՆ նախագահը: Իսկ այդ հեռագրերի չներառվելն Ազգերի լիգայի փաստաթղթերում կարելի է բացատրել նրանով, որ Ազգերի լիգան շտապողականություն էր ցուցաբերում հայկական խնդրում, որպեսզի համոզի աշխարհին, որ ինքը որոշակի քայլեր է ձեռնարկում այդ

---

[316] LNA, Class.11, dossier 3421, doc. 9078.
[317] LNA, Class.11, dossier 3421, doc. 10048.
[318] Նույն տեղում:

ուղղությամբ: Վերոնշյալ հեռագրերը հավանաբար ստացվել են մի փոքր ավելի ուշ և այլևս չեն մտցվել Վեհաժողովին ներկայացված փաստաթղթերի մեջ: Որքան էլ զավեշտալի է, սակայն Հայաստանին օգնելու պատրաստակամություն են հայտնում հիմնականում Հայաստանից հեռու գտնվող փոքր երկրները, որոնք նույնիսկ մեծագույն ցանկության դեպքում չէին կարող միայնակ օգնել հայերին: Մինչդեռ մեծ տերությունները մեկը մյուսի հետևից մերժողական պատասխաններ են ուղարկում Ազգերի լիգա[319]:

Ազգերի լիգայի խորհուրդը, դեկտեմբերի 1-ի նիստում շնորհակալություն հայտնելով Իսպանիայի, Բրազիլիայի կառավարություններին և ԱՄՆ նախագահին, առաջարկում է վերջիններիս անմիջական հարաբերությունների մեջ մտնել միմյանց հետ՝ իրենց հետագա քայլերը համակարգելու համար:

Վերոհիշյալ գրագրության արդյունքները հրապարակվում են դեկտեմբերի 2-ի Վեհաժողովի նիստում, որտեղ կարճ ելույթով հանդես է գալիս Ռ. Սեսիլը: Վերջինս Վեհաժողովին կոչ է անում չթուլացնել քայլերը Հայաստանին օգնելու ուղղությամբ, քանի որ հնարավոր էր համարում, որ միջնորդական առաքելությունը հաջողություն չունենա: Նկատենք, որ Հայաստանին փրկելու Ազգերի լիգայի ջանքերը շարունակվում էին այն ժամանակ, երբ Հայաստանի Հանրապետությունը Թուրքիայի հետ դեկտեմբերի 2-ին կնքել էր Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը, որով ռազմական գործողությունները դադարեցվել էին: Բացի այդ, դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը կնքված մեկ այլ համաձայնագրով էլ Հայաստանում հաստատվել էին խորհրդային կարգեր: Մի պահ նույնիսկ կարող է տպավորություն ստեղծվել, թե Ազգերի լիգան տեղյակ չէր Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Սակայն փաստերը այլ բան են ասում: Նախ, միջազգային թերթերն ամեն օր անդրադառնում էին թուրք-հայկական պատերազմի շուրջ ծավալվող իրադարձություններին[320], տեղեկություններ էին ստացվում նաև արտասահմանում գործող դիվանագիտական և հյուպատոսական հիմ-

---

[319] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1225:

[320] Տե՛ս Արեվելեան մամուլ, դեկտեմբեր 18, 1920թ.:

նարկներից: Այսպես, Թիֆլիսում ամերիկյան հյուպատոսն ԱՄՆ պետքարտուղարին ուղղած իր հեռագրում հաղորդում է Հայաստանում տեղի ունեցած զարգացումների մասին[321]: Նրանց տեղյակ լինելու փաստի մասին է վկայում նաև Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախագահ Լևոն Մեղրդչյանի (Meguerditchian) դեկտեմբերի սկզբի նամակը Ազգերի լիգայի խորհրդի նախագահ Պոլ Հյումանսին. «Թվում է, որ Երևանի հանրապետության տարածքում վերջերս տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները որոշ շփոթմունք են առաջացրել, և քաղաքական շրջանակներում սկսել են հնչել, թե ինչպես օգնենք Հայաստանին, եթե այնտեղ խորհրդային կարգեր են հաստատվել»[322]: Դեմոկրատական կուսակցության ղեկավարը նշում էր նաև, որ խորհրդային վարչակարգը չի համապատասխանում հայ ժողովրդի կամքին և պարտադրված է Մոսկվայից քեմալականների համաձայնությամբ: Սա ևս վկայում է, որ Ազգերի լիգայում տեղյակ էին Հայաստանում տեղի ունեցած փոփոխությունների մասին: 1920 թ. դեկտեմբերի 7-ին Ազգերի լիգայի նախագահ Պոլ Հյումանսին ուղղված իր նամակում Փարիզում Ադրբեջանի պատվիրակության նախագահը ևս տեղեկացնում է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման մասին[323]: Այսինքն՝ անտեղյակության մասին խոսք լինել չէր կարող: Պատասխանը պետք է փնտրել այլ տեղում: Հավանաբար պատճառն այն էր, որ տերությունները և Ազգերի լիգան Հայաստանում կատարված փոփոխությունները համարում էին անկայուն և ժամանակավոր բնույթ ունեցող:

Ավարտելով Հայաստանին օգնություն ցույց տալու հարցի շուրջ ծավալված քննարկումները՝ Ազգերի լիգայի Վեհաժողովը 1920 թ. դեկտեմբերի 16-ին ընդունում է հետևյալ բանաձևը.

*Վեհաժողովը լիահույս է, որ ԱՄՆ-ի նախագահի ջանքերը, որոնք եռանդուն կերպով կպաշտպանվեն Իսպանիայի և Բրազիլիայի կառավարությունների, ինչպես նաև Ազգերի լիգայի*

---

[321] LNA, Class.11, dossier 3421, doc. 8370.

[322] LNA, Class.11, dossier 3421, doc. 9696.

[323] Avakian S. Nagorno-Karabakh: Legal aspects, third ed., Yerevan 2010, pp. 39-41.

*խորհրդի կողմից, կբերեն հայ ժողովրդի փրկությանը և Հայաստանի համար կապահովեն կայուն կառավարություն, որն իր իշխանությունը կիրականացնի պետության ողջ տարածքում, որի սահմանները վերջնականապես կհաստատվեն Սևրի պայմանագրով, և Վեհաժողովը հնարավորություն կստանա իր հաջորդ նստաշրջանում ընդունելու Հայաստանին՝ որպես կազմակերպության լիիրավ անդամ*[324]:

Հայաստանի վերաբերյալ Վեհաժողովի հերթական քննարկումը տեղի է ունենում հաջորդ օրը՝ դեկտեմբերի 17-ին, որտեղ բավական արտառոց և անիրականանալի առաջարկ է անում Ռումինիայի ներկայացուցիչ Թոմա Իոնեսկուն. «*Հայ ժողովրդին արագ և իրական օգնություն ցույց տալու համար, որն իրապես կործանման եզրին է, Ռումինիան առաջարկում է ժնևում հավաքված երկրներին ստեղծել միջազգային էքսպեդիցիոն ուժեր, որոնք կարգուկանոն և խաղաղություն կհաստատեն Հայաստանում: Միջազգային այդ ուժերը պետք է գտնվեն դաշնակցական գլխավոր շտաբի ղեկավարության ներքո և բաղկացած լինեն 40.000 մարդուց, որոնք պետք է հավաքագրվեն Ազգերի լիգայի անդամ պետություններից՝ համապատասխան բնակչության թվի: Ռումինիան պատրաստ է օգնել մարդկային և նյութական ռեսուրսներով, ինչպես նաև գումարով*»[325]:

Մեղմ ասած, Ռումինիայի կառավարության առաջարկը բավական անժամանակ է հնչում, քանի որ պատերազմը, փաստորեն, ավարտված էր, պայմանագիրը քեմալականների հետ՝ կնքված: Ո՞ւմ դեմ պետք է կռվեին միջազգային այդ ուժերը: Հաշվի առնելով Հայաստանում տիրող իրավիճակը՝ պատասխանը մնում է մեկը՝ բոլշևիկների: Այս դեպքում Ռումինիայի պահվածքը հասկանալի է դառնում. որպես հարևան ունենալով խորհրդային Ուկրաինան՝ Ռումինիան խիստ անհանգստացած էր սեփական ճակատագրի համար (վախենում էր բոլշևիկյան առաջխաղացումից), և հենց այստեղ էլ հավանաբար թաքնված էր նման անակնկալ և ուշացած առաջարկի բացատրության բանալին:

---

[324] Եսայան Ա., նշվ. աշխ., էջ 209-210:

[325] LNA, Records of the First Assembly.Twenty-ninth Plenary meeting of the Assembly, pp. 672-673.

Իսկ ինչպիսի՞ն էր Ազգերի լիգայի Վեհաժողովի արձագանքը նման անակնկալ առաջարկին: Այս կապակցությամբ հանդես է գալիս նախագահ Պոլ Հյումանսը, որը անհնարին է համարում Վեհաժողովի կողմից վերոհիշյալ առաջարկի քննարկումը, քանի որ մի քանի օրից Վեհաժողովն ավարտելու էր իր առաջին նստաշրջանի աշխատանքները: Որոշվում է Ռումինիայի առաջարկը ևս հանձնել Հայկական հարցերով նշանակված հատուկ կոմիտեի քննարկմանը, որն իր զեկույցը պետք է ներկայացներ հաջորդ օրը՝ դեկտեմբերի 18-ին: Որոշվում է նաև Ռումինիայի ներկայացուցիչ պրն Թոմա Իոնեսկուին ևս ընդգրկել կոմիտեի կազմի մեջ[326]:

Ինչպես և նախատեսված էր, դեկտեմբերի 18-ին Վեհաժողովը լսեց Հայաստանի հարցերով կոմիտեի զեկույցը: Ցավոք, կոմիտեի հանդիպումների վերաբերյալ տեղեկություններ գտնել չհաջողվեց, ուստի ստիպված ենք ներկայացնել միայն վերջինիս գործունեության արդյունքը, այսինքն՝ զեկույցը[327]: Հայաստանի գործերով կոմիտեի գործունեության մասին որոշ տեղեկություններ հնարավոր եղավ գտնել միայն Փարիզում Վրաստանի ազգային պատվիրակության նախագահ Չուրաբ Ավալովի մոտ: Համաձայն այդ տեղեկությունների՝ դեռ մինչև Հայկական գործերով կոմիտեի ստեղծումը Ֆ. Նանսենը զրույց էր ունեցել վրաց գործիչների հետ (Սումբատով, Ավալով) և փորձել էր պարզել Հայաստանին օգնելու դեպքում Վրաստանի վերաբերմունքը: Իսկ նոյեմբերի 26-ին Հայկական գործերով կոմիտեի քարտուղար Լուիջի Վիլլարին վրացական ազգային պատվիրակությանը հայտնում է անգլիացի գեներալ Ֆրեդերիկ Մորիսի այցի մասին, որը ցանկանում էր խոսել Անդրկովկասին վերաբերող որոշ հարցերի շուրջ: Գեներալը լորդ Ռոբերտ Սեսիլի անունից հարցնում է՝ արդյո՞ք Վրաստանը հնարավորություն կտա Ազգերի լիգային Վրաստանի տարածքից օգնելու հայերին: Չ. Ավալովը պատասխանում է, որ վրացական կառավարությունն ուժերի ներածին չափ օգնել է հայերին, և այժմ ևս Ազգերի լիգան կարող է համոզված և վստահ լինել, որ Վրաստանը կնպաստի Հայաս-

---

[326] Նույն տեղում, էջ 673-674:
[327] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1227:

տանի տառապյալ բնակչությանը Ազգերի լիգայի տրամադրած մարդասիրական օգնությունը հասցնելու գործում (մթերք, պարեն, բուժօգնություն տրամադրելու, ինչպես նաև փախստականներին, որբերին օգնելու և այլ գործողություններում): Իսկ եթե խոսք լինի ռազմական օգնության մասին, թեկուզ քողարկված, այդ դեպքում Վրաստանը պետք է քննարկի հարցը թուրքերի հանդեպ իրենց չեզոքության տեսանկյունից: Անգլիացի գեներալն անգամ հարցրել է. «Իսկ ի՞նչ կասեք, եթե Ազգերի լիգան ապահովի Բաթումի պաշտպանությունը թուրքերի հարձակումից»: «Դա հիանալի կլինի, սակայն հարցը միայն Բաթումը չէ, հարցը ավելի բարդ է ու լայն»[328]: Գեներալը փորձում է շահագրգռել վրացական կողմին, որ Հայաստանի հարցում Ազգերի լիգային օգնելու դեպքում ինքը քայլեր կձեռնարկի հեշտացնելու համար Վրաստանի մուտքը Ազգերի լիգա: Խնդիրն այն է, որ Հայկական գործերով կոմիտեի անդամները տեղյակ չէին, որ մինչև թուրք-հայկական պատերազմը Քեմալը հատուկ պատվիրակություն էր ուղարկել Վրաստան, որոնք համաձայնության էին եկել, որ Վրաստանը պետք է բացարձակ չեզոքություն պահպաներ Հայաստանի վրա Թուրքիայի հարձակման դեպքում[329]: Վերլուծելով այս հանդիպումը՝ Ավալովը գրում է. «Ինչպես երևում է այս այցելությունից, Հայաստանին օգնելու համար ընտրված կոմիտեն հույս ուներ նաև ռազմական աջակցություն ցուցաբերել Հայաստանին, հնարավոր է նույնիսկ պարտիզանական ձևով: Սակայն առանց մեծ տերությունների և ԱՄՆ-ի, Ազգերի լիգան անկարող էր որևէ քայլ ձեռնարկել»[330]: Սակայն այս հարցում Ավալովը, իհարկե, սխալվում էր: Ազգերի լիգան բոլորովին էլ նպատակ չուներ ռազմական աջակցություն ցուցաբերել Հայաստանին, ինչն այդ դեպքում նշանակում էր պատերազմ բոլշևիկների հետ: Անգլիացի գեներալի այցը կարելի է մեկնաբանել որպես տարածաշրջանում տիրող իրավիճակին ծանոթանալու քայլ, իսկ Ազգերի լիգայի կոմիտեի այս գործունեությունը

---

[328] Авалов З., նշվ. աշխ., էջ 143:

[329] Տե՛ս Զոհրաբյան Է., նշվ. աշխ., էջ 150-151:

[330] Авалов З., նշվ. աշխ., էջ 145:

կարելի է բացատրել նրա որոշ անդամների, հատկապես Նանսենի՝ հայ ժողովրդին օգնելու մեծ ցանկությամբ:

Ինչ վերաբերում է Հայկական գործերով կոմիտեի զեկույցին, ապա դրանից պարզ է դառնում, որ կոմիտեն հանդիպել էր 6 անգամ՝ քննարկելու Հայաստանում տիրող իրավիճակը և գտնելու հայերին օգնելու համար որոշ ելքեր: Զեկույցը, նախ, անդրադառնում էր ռազմաճակատում տիրող իրավիճակին՝ նշելով, որ հայերին չի հաջողվել հետ շպրտել թուրքական զորքերին: Եվ որպես պատճառ մատնանշվում էր ոչ թե հայկական զորքի քիչ լինելը, այլ կազմակերպվածության լիակատար բացակայությունը (թե՛ քաղաքական և թե՛ ռազմական առումով): Կոմիտեն հանգել էր նաև այն եզրակացության, որ համոզված չէր թուրքական ուժերի գերակշռության մեջ: Ելնելով այս հանգամանքից՝ կոմիտեն այն կարծիքին էր, որ հայերին օգնելու համար բոլորովին էլ անհրաժեշտ չէ ուղարկել ռազմական էքսպեդիցիա, այլ պետք է պարզապես հայերին տրամադրել ինքնապաշտպանության միջոցներ: Կոմիտեն համոզված էր, որ համապատասխան անձ գտնելու դեպքում (որը կկարողանար կազմակերպել ողջ գործընթացը) կարելի էր համեմատաբար քիչ գումարով հասնել լավ արդյունքի (Հայկական գործերով կոմիտեի այս առաջարկի ուղղությամբ որոշակի քայլեր է ձեռնարկում Ֆ. Նանսենը, որը նույնիսկ գտնում է մի անձնավորության (պրն Ֆրիկին, որը բավական մեծ հեղինակություն էր վայելում և կարող էր հանդես գալ կազմակերպչի դերում[331]): Կոմիտեն առաջարկում է նաև ստեղծել հատուկ ֆոնդ (որի գումարները պետք է գոյանային դոնորների նվիրատվությունների հաշվին), որի միջոցների ղեկավարումը պետք է իրականացներ դոնորների վստահությունը վայելող մեկը: Քանի որ Վեհաժողովը շուտով ավարտելու էր իր առաջին նստաշրջանը, կոմիտեն առաջարկում էր, որ Վեհաժողովի փակումից հետո գործի որևէ մարմին, որը տեղյակ կլինի հայկական գործերից, ինչպես նաև իրավասու՝ միջամտելու այդ ուղղությամբ իրականացվող քայլերին: Հետևաբար կոմիտեն խնդրում էր, որ Վեհաժողովը դիմի Ազգերի լիգայի խորհուրդ՝ կրկին նշանակելու Հայկական գործերով հատուկ

---

[331] Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 9814:

կոմիտե, որը պետք է զբաղվի հայկական խնդրով և իրավասու լինի որոշելու իր անդամների հանդիպումների հաճախականությունը և այլ ընթացակարգային ու բովանդակային հարցեր: Ընդ որում, առանց Ազգերի լիգայի անդամ պետությունների համաձայնության, վերջինիս վրա որևէ պարտավորություն չէր կարող դրվել[332]: Զեկույցը ներկայացնող Բելգիայի ներկայացուցիչ Հ. Լաֆոնտենն անդրադառնում է նաև ԱՄՆ-ի Սենատի կողմից Հայաստանին 25մլն դոլարի վարկ բացելու հարցին, ինչպես նաև շնորհակալություն է հայտնում Ռումինիայի կառավարությանը իր առաջարկի համար, և հայտարարում, որ խաղաղ միջոցների սպառումից հետո Ազգերի լիգան կդիմի ռումինական առաջարկի օգնությանը:

Ուրեմն ի՞նչ է ստացվում. դեկտեմբերի 18-ին Ազգերի լիգան դեռ խոսում է խաղաղ միջամտության հնարավորության մասին, որին կարող էր փոխարինել ռազմական օգնությունը (խոսքը շաքաթների, գուցե և ամիսների մասին է), մինչդեռ դեկտեմբերի 2-ին Հայաստանի համար այլևս իրական վտանգը մնացել էր հետևում. հայերի և թուրքերի միջև կնքվել էր Ալեքսանդրապոլի պայմանագիրը,[333] և հայերին թուրքերից փրկելու անհրաժեշտություն այլևս չկար:

Ահա այսպիսին էր Հայկական գործերով կոմիտեի զեկույցը. ոչինչ չասող, ոչինչ չհուսադրող, ոչինչ չենթադրող: Նույնիսկ զեկույցում նշված տեղեկությունները արժանահավատ չէին (խոսքը հայկական զորքերի քանակի մասին է[334]):

Սակայն Հայկական գործերով մշտական կոմիտե ստեղծելու առաջարկը չի ստանում Վեհաժողովի աջակցությունը, քանի որ վերջինս կարծում էր, որ նման կոմիտեի ստեղծումը նախ, նախադեպ կլիներ և, երկրորդ, կհարվածեր Ազգերի լիգայի խորհրդի հեղինակությանը, քանի որ վերջինս, ըստ էության, կարող էր հանդես գալ նման մարմնի դերում: Ֆրանսիայի

---

[332] Տե՛ս LNA, Class.11, dossier 3421, doc. 10065.

[333] Պայմանագրերի համար տե՛ս Ազատյան Հ., Բախտորոշ պայմանագրեր, Ե., 2002:

[334] Տե՛ս Զոհրաբյան Է., նշվ. աշխ., էջ 166-171:

պատվիրակ Ռենե Վիվիանին անում է հետևյալ առաջարկությունը.

*Վեհաժողովը, հիշեցնելով 1920 թ. նոյեմբերի 22-ի իր որոշումը, կշարունակի համագործակցել խորհրդի հետ, որին վստահված է ապահովել Հայաստանի ապագան՝ անհրաժեշտության դեպքում դիմելով Ազգերի լիգայի անդամներին: Վեհաժողովն ընդգծում է, որ Ազգերի լիգայի ձեռնարկած նախաձեռնությանը ի պատասխան՝ արդեն համընդհանուր համակրանք կա Հայաստանի հանդեպ, և որ Հայաստանին միջնորդություն է առաջարկված ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի, ինչպես նաև Իսպանիայի և Բրազիլիայի կառավարությունների կողմից*[335]:

Նիստի ընթացքում կրկին անդրադարձ է լինում Ռումինիայի ներկայացուցչի առաջարկին, որը քննարկել էր նաև Հայկական հարցերով կոմիտեն: Կոմիտեն թեև շատ ժամանակ չէր ունեցել քննարկելու (ընդամենը մեկ օր) Հայաստան 40 000-անոց էքսպեդիցիա ուղարկելու ռումինական առաջարկը, սակայն օբյեկտիվորեն եկել էր այն եզրակացության, որ հարցն աղերսվում է բազմաթիվ դժվարությունների հետ: Ազգերի լիգայի ներկայացուցիչները կարծում էին, որ հարցը պետք է քննարկեն գիտակ մարդիկ, որոնք ծանոթ են երկրին և գիտեն ինչպես կազմակերպել նման ռազմական արշավախմբեր: Բացի դա, Ազգերի լիգայի ներկայացուցիչները համոզված էին, որ նույնիսկ եթե սկզբունքի շուրջ համաձայնություն կայացվի, անհրաժեշտ կլինի, որ բոլոր անդամ պետությունները տան իրենց համաձայնությունը: Ռումինական առաջարկի դեմ բավական երկար ելույթ է ունենում էմիր Զոկա-էդ-Դովլեհը (Պարսկաստան), որը հայտարարում է, որ առավել արդյունավետ կլինի ուղղակի կապի մեջ մտնել Հայաստան ներխուժած քեմալականների և խորհրդային զորքի հետ՝ խաղաղ ճանապարհով հարցը լուծելու համար: Պարսկաստանի ներկայացուցիչը իր հերթին նշում է, որ իր երկիրն անում է ամեն ինչ՝ հարևան Հայաստանին մարդասիրական օգնություն տրամադրելու համար: Զոկա-էդ-Դովլեհի ելույթը բուռն ծափա-

---

[335] Վէմ հանդէս մշակոյթի և պատմության, Զ Յուլիս-օգոստոս, Բ տարի, թիվ 4, Փարիզ, 1934, էջ 56:

հարությունններ է առաջացնում, որից հետո Վեհաժողովը քվեարկում է պրն Ռ. Վիվիանիի առաջարկի օգտին, այսինքն՝ հայկական խնդիրը կրկին վերադարձվում է Ազգերի լիգայի խորհուրդ: Ինչ վերաբերում էր միջնորդությանը, ապա ԱՄՆ-ն, Իսպանիան և Բրազիլիան պետք է իրականացնեին իրենց միջնորդական առաքելությունը՝ ի պատասխան Վեհաժողովի նախաձեռնության[336]:

Նույն օրը՝ դեկտեմբերի 18-ի երեկոյան, տեղի է ունենում Վեհաժողովի առաջին նստաշրջանի փակման արարողությունը: Իր ելույթում նախագահ Պոլ Հյումանսը վերջին անգամ անդրադառնում է հայկական խնդրին. «*Երկար ժամանակահատված մեծ տերությունները զբաղված էին Հայկական հարցով, սակայն ի վիճակի չեղան լուծելու այն: Քաղաքագետները, վերջին հաշվով, միշտ չէ, որ ղեկավարվում են զգացմունքներով, անհրաժեշտ է հաշվի առնել ուղիները և միջոցները: Մենք չգտանք մանդատար պետություն, սակայն գոնե կարողացանք միջնորդներ գտնել: Մեր բախտը բերել է, որ Ազգերի լիգայի հիմնախնդիրներից մեկը որոշակի լուծում ստացավ. ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը համաձայնեց ստանձնել միջնորդի դերը, որին այդ հարցում կցակցեն Իսպանիան և Բրազիլիան: Հայաստանն անընդհատ մեր մտքերում է, և մենք անկեղծորեն ուզում ենք օգնել նրան: Մեր պարտքն է աշխատել հանուն այդ նպատակի իրագործման: Ազգերի լիգայի խորհուրդն այս հարցում բավական համառ կգտնվի՝ օգտագործելով մեր ունեցած ողջ ներուժը և միջոցները: Մենք առանց բացառության միահամուռ ենք այդ տառապյալ ժողովրդին թշնամիներից փրկելու հարցում, որոնք երկար տարիներ մերժում էին գթասրտություն ցուցաբերել հայերի հանդեպ*»[337]:

Այսպիսի «մարդասիրական ոգով» էլ Վեհաժողովը փակում է Հայկական հարցի էջն իր առաջին նստաշրջանում: Ինչպես համոզվեցինք, խոսքով Ազգերի լիգան բոլորովին չէր թերանում: Հայաստանի օգտին հնչեցրած բոլոր ելույթները լի էին գթասրտության և աջակցության կոչերով, սակայն ինչպես իր փակման

---

[336] Տե՛ս LNA, Records of the First Assembly Plenary Meetings, էջ 730-731:
[337] **Барсегов Ю.**, նշվ աշխ., էջ 623-624:

խոսքում ճիշտ նկատում է Ազգերի լիգայի Վեհաժողովի նախագահ Պոլ Հյումանսը, քաղաքագետները միշտ չէ, որ ղեկավարվում են զգացմունքներով: Իսկ ավելի ճիշտ կլիներ ասել, որ երբեք էլ չեն ղեկավարվում զգացմունքներով:

## 3.2. Հայկական հարցի քննարկումները Ազգերի լիգայում Վեհաժողովի առաջին նստաշրջանի ավարտից հետո (1920 թ. դեկտեմբեր- 1921 թ. փետրվար)

Ազգերի լիգայի Վեհաժողովն իր առաջին նստաշրջանի փակման օրը՝ 1920 թ. դեկտեմբերի 18-ին, Հայկական հարցի հետ կապված ընդունել էր հետևյալ եզրափակիչ բանաձևը. *«Վեհաժողովը, հիշեցնելով 1920 թ. նոյեմբերի 22-ի իր որոշումը, կշարունակի համագործակցել խորհրդի հետ, որին վստահված է ապահովել Հայաստանի ապագան՝ անհրաժեշտության դեպքում դիմելով Ազգերի լիգայի անդամներին: Վեհաժողովն ընդգծում է, որ Ազգերի լիգայի սկսած նախաձեռնությանն ի պատասխան՝ արդեն համընդհանուր համակրանք կա Հայաստանի հանդեպ, և որ Հայաստանին իր միջնորդական ծառայություններն են առաջարկել ԱՄՆ նախագահ Վիլսոնը, Իսպանիայի և Բրազիլիայի կառավարությունները»*[338]: Սրանով Ազգերի լիգայի Վեհաժողովն ավարտում է հայկական խնդրի քննարկումներն իր առաջին նստաշրջանի ընթացքում, և, ինչպես երևում է բանաձևից, Հայկական հարցի հանդեպ վերահսկողությունը հանձնարարում է Ազգերի լիգայի խորհրդին[339]: Իսկ ի՞նչ հետագա քայլեր է ձեռնարկում Ազգերի լիգայի խորհուրդը վերոնշյալ բանաձևի իրականացման ուղղությամբ:

Թեև թուրք-հայկական պատերազմն արդեն բավական վաղուց ավարտվել էր (1920 թ. դեկտեմբերի 2-ին), և հայերի ու թուրքերի միջև հաշտություն էր կնքվել, սակայն Ազգերի լիգայի

---

[338] Վէմ հանդէս մշակույթի և պատմության, Զ Հուլիս-օգոստոս, Բ տարի, թիվ 4, Փարիզ, 1934, էջ 56:

[339] Տե՛ս Ալ. Մարտունի, Կուսակցությունները գաղութահայության մեջ, Ե., 1924, էջ 21:

խորհուրդը շարունակում էր քայլեր ձեռնարկել ավարտված պատերազմի հարցում միջնորդություն կազմակերպելու ուղղությամբ: Միջնորդության առաջարկի ընդունումից հետո՝ դեռ 1920 թ. դեկտեմբերի առաջին օրերին, ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը Ազգերի լիգայի խորհրդից խնդրել էր մատնանշել այն ուղիները և միջոցները, որոնցով հնարավոր էր կապ հաստատել թուրքական կառավարության հետ՝ իր միջնորդական առաքելությունն իրականացնելու համար[340]: Հենց հաջորդ օրը Ազգերի լիգայի նախագահ Պոլ Հյումանսը և Գլխավոր քարտուղար Էրիկ Դրամոնդը հեռագրեր են հղում Իտալիա և Մեծ Բրիտանիա, որով տեղեկացնում են Վուդրո Վիլսոնի միջնորդական առաքելության մասին և ցանկանում են իմանալ Կոստանդնուպոլսում և Թիֆլիսում բրիտանական և իտալական ներկայացուցիչների կարծիքն այն հարցի շուրջ, թե ինչպես և ում միջոցով է հնարավոր ծրագրել բանակցություններ քեմալականների հետ[341]: Սակայն բրիտանական և իտալական կառավարությունները բավական ուշ են արձագանքում Ազգերի լիգայի նշյալ նամակին (1921 թ. սկզբին), և, բացի դա, նրանց տրամադրած տեղեկությունները ավելի շատ տեղեկատվական բնույթ էին կրում և չէին մատնանշում այն ուղիները կամ անձանց, որոնց միջոցով կարելի էր իրականացնել Վուդրո Վիլսոնի առաջարկած միջնորդական բանակցությունները: Նույնաբովանդակ մի նամակ էլ Ազգերի լիգան ուղարկում է Ֆրանսիա: 1920 թ. դեկտեմբերի 10-ին ստացվում է Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի հանձնակատարի հեռագիրը, որով վերջինս իր պատրաստակամությունն էր հայտնում հնարավորինս աջակցել միջնորդության գործընթացին: Այս հեռագիրը նույնպես ուղարկվում է ԱՄՆ նախագահին:

1920 թ. դեկտեմբերի 15-ին Ազգերի լիգայում ստացվում է ԱՄՆ-ի պետքարտուղար Նորման Դևիսի նամակը, որով վերջինս հայտնում էր, որ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը Հենրի Մորգենթաուին նշանակել է որպես իր անձնական ներկայացուցիչ, որը պետք է որքան հնարավոր է շուտ անցնի իր «բարի ծա-

---

[340] Տե՛ս LNA, Class. 11, doc. 3241, dossier 9038:

[341] Տե՛ս Եսայան Ա., նշվ. աշխ., էջ 211:

ռայության» և Հայաստանի հարցով անձնական միջնորդության իրականացմանը: Նամակում նաև նշված էր, որ նախագահ Վիլսոնը շարունակում է Ազգերի լիգայի խորհրդից տեղեկություններ սպասել այն ուղիների մասին, որոնց միջոցով նախագահի ներկայացուցիչը պետք է կապի մեջ մտնի հակառակ կողմի հետ, ինչպես նաև հավաստիացումներ Ազգերի լիգայի խորհրդի անդամ գլխավոր տերությունների դիվանագիտական և բարոյական աջակցության վերաբերյալ[342]: Նշանակումից հետո ամերիկյան թերթերից մեկին տված իր հարցազրույցի ժամանակ Հենրի Մորգենթաուն մատնանշում է, որ Հայաստանի ճակատագիրը հիմնականում կախված է դաշնակիցների բարոյական և դիվանագիտական օգնությունից, ինչպես նաև Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի հետ շփման որևէ միջոց գտնելու կարողությունից: Որպես Հայաստանին օգնելու տարբերակ՝ ամերիկյան հանձնակատարը առաջարկում էր դաշնակիցներին ճանաչել Խորհրդային Ռուսաստանը[343]: Վերլուծելով Հ. Մորգենթաուի հարցազրույցը՝ «Նյու-Յորք Թայմսը» գրում է. «Վիլսոնի և Մորգենթաուի գործը շատ բարդ է: Մեծ տերությունները լվացին իրենց ձեռքերը Հայաստանից՝ այն հանձնելով Վուդրո Վիլսոնին: Թուրքական վայրագություններից հետո Հայաստանն այժմ բոլշևիկների ձեռքերում է՝ սահմանափակված մի փոքր տարածքում, առանց անկախության հույսի: Իսկ Խորհրդային Ռուսաստանը ճանաչելու Մորգենթաուի առաջարկը մեծ վտանգ է պարունակում Եվրոպայի համար»[344]:

ԱՄՆ պետքարտուղարի նամակին ի պատասխան՝ Ազգերի լիգայի խորհուրդը Վուդրո Վիլսոնին է ուղարկում Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջի հեռագիրը, որով վերջինս ԱՄՆ նախագահին առաջարկում էր իր հրահանգներն ուղղել Կոստանդնուպոլսի ամերիկյան բարձրաստիճան կոմիսարին, որն էլ կապ կհաստատեր իր գործընկերների հետ՝ հարցի լուծման ուղղությամբ համատեղ քայլեր մշակելու համար: Ազգերի լիգայի

---

[342] Տե՛ս LNA, Class. 11, doc. 3241, dossier 10693:

[343] Տե՛ս Armenia and the United States, *Advocate of Peace through Justice*, Vol. 83, No. 1 (January, 1921), էջ 33:

[344] Նույն տեղում, էջ 34:

խորհուրդն իր այս նամակում Վուդրո Վիլսոնին տեղեկացնում էր նաև, որ, ըստ կազմակերպության տվյալների, Հայաստանի և Թուրքիայի միջև կնքվել էր հաշտության պայմանագիր, և, բացի այդ, «Հայաստանը գտնվում է Խորհրդային Ռուսաստանի, այլ ոչ թե առաջադեմ Դաշնակցական կուսակցության ղեկավարության ներքո»[345]: Բավական հետաքրքրական է, որ հենց այս նամակագրության օրերին ԱՄՆ պետքարտուղարը հեռագիր է ստանում նաև մեծ տերություններից, որով վերջիններս խնդրում էին ԱՄՆ նախագահին ժամանակավորապես հետաձգել Հայաստանի սահմանների վերաբերյալ իր որոշման հրապարակումը, իսկ, ինչպես գիտենք, Վուդրո Վիլսոնը նոյեմբերի 22-ին արդեն կայացրել էր Հայաստանի սահմանների վերաբերյալ իր վճիռը[346]: Այս զգուշավորությունը, անկասկած, կապված էր Հայաստանի հետագա ճակատագրին հետևելու անհրաժեշտության, ինչպես նաև Թուրքիայի հանդեպ իրենց որդեգրած նոր «բարիդրացիական» քաղաքականության հետ: Սահմանների հարցի հետ կապված՝ մեծ տերությունները խնդրում էին հետաձգել Հայաստանի սահմանների վերաբերյալ Վիլսոնի վճռի հրապարակումը՝ պատճառաբանելով, որ դաշնակից տերությունները հնարավորություն չեն ունեցել համատեղ քննարկելու Վուդրո Վիլսոնի որոշումը: Դաշնակիցները խնդրում էին նախագահ Վիլսոնին հետաձգել վճռի հրապարակումը մինչև մեծ տերությունների ղեկավարների հերթական հավաքը[347]: Հասկանալի էր տերությունների այն մտահոգությունը, որ բոլշևիկները, Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո, կարող էին շարունակել առաջխաղացումը և գրավել նաև Վիլսոնի արբիտրաժային վճռի արդյունքում Հայաստանին տրվելիք հողամասերը:

ԱՄՆ նախագահը մտադրություն չուներ Հայաստանի հետ կապված իր հարցերը լուծել Կոստանդնուպոլսում ամերիկյան կոմիսարի միջոցով: Վուդրո Վիլսոնն արդեն նշանակել էր Հենրի

---

[345] LNA, Class. 11, doc. 3241, dossier 10527, նաև՝ Ю. Барсегов, նշվ. աշխ., էջ 624:

[346] Մանրամասն տե՛ս Լազյան Գ., Հայաստան և հայ դատը հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Ե., 1991, էջ 213-224:

[347] Տե՛ս Барсегов Ю., նշվ. աշխ., էջ 624:

Մորգենթաուին որպես իր անձնական միջնորդ և մինչև վերջինիս որևէ հրահանգ տալը հստակ երաշխիքներ էր սպասում հարցում ներգրավված բոլոր գլխավոր տերությունններից, որոնք պետք է սահմանեին այն պայմանները, որոնց շրջանակում Մորգենթաուն պետք է գործեր[348]: Ընդհանրապես ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնն այն կարծիքին էր, որ Հայկական հարցին որևէ լուծում չի կարող լինել՝ առանց խնդրի աղբյուրը բացահայտելու: Հունվարի սկզբին (18-ին) Ազգերի լիգայի նախագահ Պոլ Հյումանսին ուղղված իր նամակում Վ. Վիլսոնը հայկական խնդրի հիմնական պատճառ էր մատնանշում Սևրի պայմանագիրը, որը նախագծել էին դաշնակիցները, իսկ հիմնական խնդիրը, ըստ նախագահի, պայմանագիրը չընդունելու և ուժի մեջ չդնելու մեջ էր[349]: Սա այն հարցն էր, որի հանդեպ ԱՄՆ նախագահը որևէ վերահսկողություն չուներ, և այս ուղղությամբ որևէ քայլ ձեռնարկելու համար անհրաժեշտ էր դաշնակից տերությունների համագործակցությունն ու աջակցությունը:

Ինչ վերաբերում էր Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման վերաբերյալ Մեծ Բրիտանիայի վարչապետի տեղեկությանը, ապա Վուդրո Վիլսոնը նշում էր, որ նման իրավիճակի նկատմամբ ինքը որևէ վերահսկողություն չունի և որևէ միջոց չի տեսնում՝ առանց դաշնակից տերությունների դիվանագիտական և բարոյական աջակցության Հայաստանի հանդեպ ստիպողական քայլ ձեռնարկելու ուղղությամբ: Իր նամակում Վիլսոնը բավական երկար և հանգամանալից անդրադառնում է նաև ռուսական հեղափոխությանը: ԱՄՆ նախագահը այն կարծիքին էր, որ բոլշևիկները Ռուսաստանում փոքրամասնություն են և ոչ մի ձևով չեն արտահայտում ռուս ժողովրդի իրական նպատակներն ու ցանկությունները: Միաժամանակ համոզված էր, որ հարցը հնարավոր չի լինի լուծել արտաքին ռազմական միջամտությամբ: Որպես ապացույց՝ ամերիկյան նախագահը բերում էր լեհական սահմանում և Ղրիմում տեղի ունեցած զինված ներխուժումները, որոնք որևէ դրական արդյունքի չհան-

[348] Տե՛ս նույն տեղում, նաև International conciliation. Documents of the American Association for international conciliation 1920, pp. 263-275.

[349] Տե՛ս LNA, Class. 11, doc. 3241, dossier 10527:

գեցրին: Այսինքն՝ ռազմական ներխուժումն այն ճանապարհը չէր, որով, ըստ ԱՄՆ նախագահի, պետք է խաղաղություն բերվեր ռուս ժողովրդին, և լուծվեր ռուսական հարցը: Նախագահը գտնում էր, որ Հայաստանի հարցը ռուսական խնդրի մի մասն է, և Հայկական հարցի լուծումը կապված էր ողջ ռուսական խնդրի լիակատար և խոր ուսումնասիրության հետ[350]: Վիլսոնը առաջարկում էր նաև հասարակական միասնության համաձայնագիր կնքել մեծ տերությունների միջև՝ պայմանավորվելով չօգտվել Ռուսաստանի ծանր իրավիճակից, չխախտել վերջինիս տարածքային ամբողջականությունը, չհարձակվել Ռուսաստանի վրա և թույլ չտալ դա նաև մյուսներին: Սրանով Ռուսաստանի սահմանների վրա ծագած յուրաքանչյուր պատերազմի պատասխանատվության հարցը, ըստ Վիլսոնի, հստակ կորոշվեր: Ինչ վերաբերում էր Հայկական հարցին, ապա, ըստ նախագահի հավատմամբ, մեծ տերությունների բարոյական և դիվանագիտական աջակցության դեպքում Հենրի Մորգենթաուն անմիջապես կանցներ իր առաքելության կատարմանը[351]:

Սրան ի պատասխան՝ Ազգերի լիգայի խորհրդի նորընտիր նախագահ Բ. Կունիան հայտնում է, որ գլխավոր տերությունները արձագանքել են Վիլսոնի առաջարկին և շուտով պատրաստվում են կոնֆերանս գումարել՝ Սևրի պայմանագրի հետ կապված: Վիլսոնի նամակը բաժանվում է նաև Ազգերի լիգայի խորհրդի անդամ բոլոր երկրների ներկայացուցիչներին:

·Հայկական հարցում իրեն հանձնարարված առաքելությունն իրականացնելու համար Ազգերի լիգայի խորհուրդը հայ և թուրք ժողովուրդների միջև թշնամությունը դադարեցնելու ուղղությամբ Բրազիլիայի, Իսպանիայի և ԱՄՆ-ի կառավարություններից իրենց ձեռնարկած քայլերի մասին տեղեկություններ հավաքելուց բացի, իրավիճակին տիրապետելու համար պետք է տեղեկատվություն հավաքեր նաև Հայաստանում տիրող կացության մասին: Այս նպատակով Ազգերի լիգայի քարտուղա-

---

350 Տե՛ս Davis H. Russia, Armenia and United States, *Advocate of peace through Justice*, Vol. 83, N 2 (February, 1921), էջ 67-68:

351 Տե՛ս Andranik Masis, The question of the American Mandate over Armenia, Nicosia 1980, էջ 168-169:

րությունը նամակներ է հղում Ազգերի լիգայի անդամ պետությունների կառավարություններին, որոնք իրենց գործակալներն ունեին արևելքում՝ խնդրելով տեղեկություններ տրամադրել Հայաստանի և այնտեղ տիրող իրավիճակի վերաբերյալ:

Քարտուղարության այս կոչին արձագանքում է Մեծ Բրիտանիայի կառավարությունը, որը 1921 թ. հունվարի սկզբին բավական հանգամանալից զեկույց է ներկայացնում Հայաստանում տիրող իրավիճակի վերաբերյալ[352]: Զեկույցը մանրամասն ներկայացնում էր Հայաստանի քաղաքական պատմությունը, աշխարհագրական դիրքը և դրա ազդեցությունը Հայաստանի քաղաքական պատմության վրա: Առանձին գլխով բրիտանական կողմն անդրադարձել էր նաև հայ ժողովրդի դիրքորոշմանը, դրա փոփոխմանն աղերսվող խնդիրներին: Այս ուղղությամբ զեկույցը շեշտում էր, որ իրականում հայ ժողովրդի զգալի մասը հակաբոլշևիկյան տրամադրություններ ունի, և այն կարծիքը, որ հայ ժողովուրդը բոլշևիկյան կողմնորոշում ունի, չի համապատասխանում իրականությանը: «Սակայն անցյալը վերադարձնելու հայերի ձգտումը նրանց մղում է Ռուսաստանի գիրկը: Արևմուտքից որևէ օգնություն չստանալով՝ հայերն իրենց փրկությունը տեսնում են ռուսների մեջ (թուրքերից պաշտպանվելու համար): Հայերը մտածում են, որ բոլշևիկյան իշխանությունն անցողիկ է և ավելի լավն է, քան թուրքականը»[353]: Ահա այսպիսի մակերեսային և սխալ կարծիք ունեին մեծ տերությունները բոլշևիզմի մասին: Իսկ իրականում ամեն ինչ ավելի խորն էր ու երկարատև: Իսկ որ Ազգերի լիգայում ևս շատերը համոզված էին, որ Հայաստանում (և ընդհանրապես) բոլշևիզմը ժամանակավոր բնույթ է կրում, ապացուցում են Ազգերի լիգայի ձեռնարկած հետագա քայլերը: Բրիտանական զեկույցն անդրադառնում էր նաև Հայաստանի տնտեսական և արդյունաբերական կյանքին, ինչպես նաև երկրի ռազմական վիճակին: Զեկույցը ամբողջությամբ գրված էր այն համոզմունքով, որ Հայաստանում խորհրդային իշխանությանը շատ շուտով վերջ է տրվելու: Այսպես, ռազմական վիճակի մասին գրված էր. «Ռուսական զորքերի դուրսբերումից

---

[352] Տե՛ս LNA, Class. 11, doc. 3241, dossier 10770:
[353] Նույն տեղում:

հետո ամենահրատապ հարցը լինելու է ազգային բանակի ստեղծումը»[354]:

Ակնհայտ է, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը համոզված էր, որ ռուսական զորքերը շատ շուտով դուրս են բերվելու Հայաստանից, որով և բացատրվում էր տերությունների և Ազգերի լիգայի՝ Հայաստանի նկատմամբ շարունակվող հետաքրքրությունը:

Բավական տխուր գույներով էր ներկայացված Հայաստանի ֆինանսական վիճակը: Թեև նշված էր, որ Հայաստանը, ավելի քան որևէ այլ երկիր, կարիք ունի փոխառության, սակայն, ըստ բրիտանական կողմի, երկու արգելք խոչընդոտում են վարկի տրամադրումը նույնիսկ արտասահմանի հայերի կողմից: Առաջինն անապահովությունն է (քաղաքական վիճակը խիստ անապահով և անկայուն է), երկրորդը՝ կառավարության հանդեպ վստահության բացակայությունը, այսինքն՝ հավատ չկա, որ երկրի կառավարությունն ազնիվ, ճիշտ և անկաշառ կծախսի տրամադրված գումարները: «Միայն իրավիճակի կայունացման, քաղաքական և ֆինանսական վիճակի բարելավման դեպքում հնարավոր կլինի մասնավոր կապիտալի մուտքը Հայաստան»[355]: Նույն ոգով էր ներկայացված նաև տրանսպորտի վիճակը, որը, հասկանալի պատճառներով, մեծ հետաքրքրություն էր ներկայացնում և առանձնահատուկ նշված էր զեկույցում: Համաձայն ներկայացված տվյալների՝ տրանսպորտային համակարգը չէր կարող բավարար համարվել, քանի դեռ լուծված չէին «ազատ տրանզիտի» և դեպի ծով ելք ունենալու հարցերը:

Ինչ վերաբերում էր ժողովրդի տրամադրություններին և սպասելիքներին, ապա այստեղ ևս ոչինչ հուսադրող չէր՝ կոտրած, սով, հուսալքություն: Բրիտանական վերոնշյալ զեկույցին կցված էր նաև Հայաստանի և Թուրքիայի միջև 1920 թ. դեկտեմբերի 2-ին կնքված Ալեքսանդրապոլի պայմանագրի տեքստը[356]:

---

[354] Նույն տեղում:

[355] Նույն տեղում:

[356] Տե՛ս LNA, Class. 11, doc. 3241, dossier 10771:

Ինչպես Ազգերի լիգայում Հայկական հարցի քննարկման ողջ ընթացքում, այս փուլում ևս մեծ ակտիվություն են դրսևորում հայկական սփյուռքը և հայասերների միջազգային կազմակերպությունները: Հունվարի 7-ին Ազգերի լիգայի Վեհաժողովի նախագահ Պոլ Հյումանսը նամակ է ստանում «Հայաստանի ամերիկյան միությունից»[357]: Վերջինս իր խոր հիասթափությունն էր հայտնում Հայկական հարցով ամերիկյան կառավարության ներգրավվածության ցածր մակարդակից: Միությունն իրավամբ գտնում էր, որ հայկական տարածքների մեծ մասը, ներառյալ՝ Սևրի պայմանագրով նախատեսված հատվածը, խորհրդային իշխանության հսկողությունից դուրս են, և պնդում էր, որ միջնորդական առաքելությունն իր գործունեությունը պետք է իրականացնի թուրք ազգայնականների և հայերի միջև խորհրդային իշխանությունից դուրս: Միության տվյալների համաձայն՝ միլիոնավոր հայեր համոզված էին, որ Հայաստանի Հանրապետության հետ տեղի ունեցածը չի կարող կործանել միջնորդական առաքելության պլանները, և կոչ էին անում եվրոպական երկրներին անհրաժեշտ քայլեր ձեռնարկել՝ միջնորդության ծրագիրն իրականացնելու համար: «Ռուսական Հայաստանի խորհրդայնացումը չի կարող հանգեցնել նրան, որ հայերը կորցնեն Սևրի պայմանագրով իրենց հասանելիքը: Կարող է անհրաժեշտություն լինի ժամանակավոր հայկական ազգային կառավարություն ստեղծել Ժնևում կամ Կոստանդնուպոլսում, սակայն ամեն դեպքում հայերը պետք է ստանան եվրոպայից իրենց ակնկալիքները»[358]: Այսպիսով՝ միությունը պահանջում էր տարանջատել հայկական խնդիրը՝ ռուսականի և թուրքականին և միայն բոլշևիկների հաղթանակով չպայմանավորել ողջ հայկական հարցի ծախողումը: Հայաստանին աջակցել ցանկացող կազմակերպությունների խնդրանքով կազմվում է նաև մի հուշագիր, որը պետք է ներկայացվեր ԱՄՆ կառավարությանը, սենատորներին և կոնգրեսականներին. *«Քանի որ հայերի համար չեն ստեղծվել անվտանգության և ապահովության երաշխիքներ, քանի որ հայերը վերջին պատերազմի ժամանակ կռվել են*

---

[357] Տե՛ս LNA, Class. 11, doc. 3241, dossier 10547:

[358] Նույն տեղում:

*գերմանացիների ու ավստրիացիների դեմ հանուն ազատության և մեծ զոհեր են տվել, քանի որ համաշխարհային խաղաղությունը պահանջում է, որ հատուկ քաղաքականություն որդեգրվի Տավրոսի շրջանի նկատմամբ, և քանի որ հայերն ավելի շատ նախընտրում են ամերիկյան, քան որևէ այլ երկրի օգնությունը, կազմակերպությունները միահամուռ եկել են այն որոշման, որ խնդրեն ԱՄՆ կառավարությանը անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել (միայնակ կամ այլ պետությունների հետ համատեղ)՝ պաշտպանելու համար հայկական այն տարածքները, որոնք կազմել էին նախկին Օսմանյան կայսրության մաս՝ նպատակ ունենալով այդ մասերում ստեղծել Հայկական Տուն (Օջախ), որը ժամանակի ընթացքում կարող է վերածվել հայկական պետության»*[359]:

Մինչև Ազգերի լիգայի խորհրդում փորձում էին ի մի բերել Հայաստանի հետ կապված տեղեկությունները և հասկանալ, թե իրականում ինչ է կատարվել Հայաստանում և ինչու, հունվարի 20-ին ստացվում է Հայկական ազգային պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանի նամակը[360]: Մեկնաբանելով հայկական կողմից ստացված տվյալները՝ Ազգերի լիգայի խորհուրդը նամակը որակում է որպես Հայաստանում ստեղծված կացության վրա լույս սփռող հանգամանք: Ավ. Ահարոնյանը բացատրում էր, որ բոլշևիկյան շարժումը Հայաստանում առաջացել էր ոչ թե երկրի ներսում, այլ պարտադրվել էր դրսից և Խորհրդային Ռուսաստանի և ազգայնական Թուրքիայի միջև համաձայնության արդյունք էր: Այնուհետև Ավ. Ահարոնյանը ներկայացնում էր թուրք-հայկական պատերազմի ընթացքում թուրքերի և բոլշևիկների հարձակումները, նրանց համատեղ գործողությունները, որոնք ուղեկցվել էին Հայաստանի վրա քաղաքական ճնշումներով: Հայկական կողմի համար հատկապես ծանր և անընդունելի էին Սևրի պայմանագրից և դաշնակիցների հետ համագործակցությունից հրաժարվելու թուրք-բոլշևիկյան պահանջները: Հետևաբար, Հայաստանի կառավարությունը բնակչությանը փրկելու նպատակով պարտադրված էր եղել ընդունել առաջարկված ծանրագույն պայմանները, այդ թվում՝ հրաժարվել

---

[359] LNA, Class.11, doc. 3421, doss. 10547.

[360] Տե՛ս LNA, Class. 11, doc. 3241, dossier 10780:

Սևրի պայմանագրից: Սակայն այս նամակով հայկական կողմը կոչ էր անում դաշնակիցներին իրականացնել Սևրի պայմանագիրը՝ հաշվի չառնելով այն գործողությունները, որոնք Երևանի կառավարությունը, հակառակ իր կամքի, ստիպված էր իրականացնել: Փաստորեն, դաշնակցականները Հայաստանում ստեղծված իրավիճակը որակում էին ժամանակավոր և հորդորում աչք փակել իրենց իսկ կատարած քայլերի վրա: Դաշնակիցներին ներգրավելու համար (և ինչ-որ տեղ նույնիսկ վախեցնելու համար) հայկական կողմն այն կարծիքն էր առաջ քաշում, որ «Սևրի պայմանագրից յուրաքանչյուր շեղում Փոքր Ասիայում կբերի թուրք-բոլշևիկյան համագործակցության լիակատար հաղթանակի»[361]: Իսկ այսպիսի ավարտը, ինչպես հայկական կողմը ճիշտ հասկացել էր, բոլորովին էլ Արևմուտքի շահերին չէր համապատասխանում:

Հունվարի 25-ին Ազգերի լիգայի անդամներին է ներկայացվում Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությունից՝ Հայաստանի վերաբերյալ ստացված տվյալները[362]: Այս տեղեկությունները միաժամանակ ուղարկվում են նաև ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին: Պետք է նշել, որ ֆրանսիական կողմի ներկայացրած տվյալները ևս խիստ մտահոգիչ էին և բացասական տպավորություն էին ստեղծում Հայաստանի շուրջ: Տեղեկությունները հիմնականում վերաբերում էին Երևանի հետ հաղորդակցությանը, որը ֆրանսիական կողմը որակել էր որպես անհնարին, բացառությամբ երկաթգծի (որն էլ, սակայն, ցուրտ ձմեռվա և ձյան հետևանքով դժվարանցանելի էր): Իսկ ստեղծված քաղաքական և տարածքային իրավիճակի հետևանքով Թիֆլիսի և Երևանի միջև երկաթգիծը, ըստ ֆրանսիական աղբյուրի, ղեկավարում էին չորս տարբեր իշխանություններ (Վրաստանի իշխանությունները, բոլշևիկները, թուրքերը և Երևանի բոլշևիկները): «Երևան հասնելու համար պետք է անցնել երեք իշխանությունների միջով»[363]: Դժվար է հստակ ենթադրություններ անել տերությունների՝ Հայաստանի վերաբերյալ նման տեղեկություն-

---

[361] Նույն տեղում:

[362] Տե՛ս LNA, Class. 11, doc. 3241, dossier 10606:

[363] Նույն տեղում:

ներ հավաքելու իրական շարժառիթները, սակայն մեկ բան հստակ է. Ազգերի լիգայի քաղաքականությունը չէր կարող տարբերվել մեծ տերությունների որդեգրած ուղեգծից: Համանաբար, նման գործունեությունը պայմանավորված էր Բոլշևիկյան Ռուսաստանի գործունեության և տարածաշրջանում տիրող իրավիճակի հանդեպ վերահսկողության անհրաժեշտության հետ:

Ստացված տեղեկությունների հիման վրա Ազգերի լիգայի գլխավոր քարտուղար էրիկ Դրամմոնդը Հայաստանի վերաբերյալ նախապատրաստում է տեղեկատվական մի փաստաթուղթ՝ «Հուշագիր Հայաստանի մասին»: Հուշագիրը նախ ներկայացնում էր հայերի և թուրքերի միջև 1920 թ. դեկտեմբերի 2-ին կնքված Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագրի հետևանքով առաջացած Հայաստանի սահմանները, որոնք, պայմանագրի համաձայն, բավական կրճատվել էին: Անդրադարձ կար, որ Կարսի գավառը և Սուրմալուի շրջանը հայտարարվել են վիճելի, և որ վերջիններիս հետագա ճակատագիրը որոշելու համար Հայաստանի Հանրապետության ցանկությամբ երեք տարվա ընթացքում պետք էր անցկացնել հանրաքվե: Ալեքսանդրապոլի պայմանագրի 14-րդ հոդվածի համաձայն՝ Շարուրն ու Նախիջևանը ժամանակավորապես անցնում էին թուրքական իշխանության տակ, որոնց հետագա ճակատագիրը որոշվելու էր ինքնորոշման սկզբունքի հիման վրա: Հուշագիրը նշում էր նաև ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի գծած Հայաստանի սահմանները՝ հայկական չորս վիլայեթների շրջանում, որոնք «դեռևս շարունակում են օկուպացված մնալ թուրքական ուժերի կողմից»[364]: Իսկ ավարտվում էր հուշագիրը այն տեղեկատվությամբ, որ փետրվարի 22-ին Գերագույն խորհուրդը հանդիպելու է Լոնդոնում՝ քննարկելու Սևրի պայմանագրի վերանայման հարցը, որին ներկա են լինելու ինչպես Կոստանդնուպոլսի, այնպես էլ Անգորայի կառավարությունների ներկայացուցիչները[365]: Մինչդեռ գնալով ավելի ակնհայտ էր դառնում, որ մեծ տերությունները ոչ միայն մտադիր չէին կռվել թուրքերի դեմ հանուն

---

[364] Барсегов Ю., նշվ. աշխ., էջ 628:
[365] Նույն տեղում:

Հայաստանի, այլև նույնիսկ առանձին-առանձին սկսել էին պայմանագրեր կնքել և հաշտվել նրանց հետ՝ վերջիններիս ընդգրկելով «հակաբոլշևիկյան իրենց պայքարում»:

«Osservatore Romano» թերթը գրում էր. «Ազգերի լիգայի առաջնահերթ պարտավորություններից մեկը հին քաղաքակրթություն ունեցող քրիստոնյա ազգերի կյանքի ու զարգացման պաշտպանությունն է, այլ ոչ թե նրանց պատերազմի հորձանուտում լքելը: Ավելին, հայերին ոգեշնչել և ստիպել են կռվել բոլշևիկների և քեմալականների հետ, իսկ այնուհետև թողել են մենակ, առանց որևէ օգնության: Շուրջ կես դար Օսմանյան կայսրության՝ քրիստոնյաների դեմ կատարած բռնությունները ու կոտորածները զայրույթ են առաջացնում քաղաքակիրթ աշխարհում, սակայն հայ ժողովրդի կացության, նրա թափած արյան համար ոչ մի ձայն չի բարձրացվում՝ փրկելու հայության վերջին մնացորդներին»[366]:

Իսկ Հայաստանում դաշնակցական կառավարությունը դեռևս չէր համակերպվում իր պարտության հետ և օգտագործելով Արևմուտքի հակաբոլշևիկյան տրամադրվածությունը՝ փորձում էր որոշակի քայլեր ձեռնարկել: Ազգերի լիգա հասած անգլիացի գեներալ Սթոքսի հեռագրից երևում էր, որ ինքը հանդիպել էր Հայաստանի Հանրապետության նախկին վարչապետ Ալ. Խատիսյանի հետ: Վերջինս պնդել էր, որ իրենց (դաշնակցների) ազդեցությունը Հայաստանում դեռևս բավարար ուժեղ է, և եթե հնարավոր լինի գրավել Դիլիջանը, Կարակլիսը և Երևանը, ապա հնարավորություն կստեղծվի հիմնելու հակաբոլշևիկյան կառավարություն: Գեներալը հաղորդում էր նաև, որ Ալ. Խատիսյանը ցանկանում էր իմանալ, թե արդյո՞ք մեծ տերությունները դեռևս հետաքրքրված են հայկական խնդրով, և երկրորդ, ըստ Արևմուտքի՝ ի՞նչ պետք է անեն դաշնակները, և արդյո՞ք հնարավոր է կազմակերպել հայ-թուրքական մերձեցում, որի դեպքում դաշնակները ազատ կլինեն գործելու ընդդեմ բոլշևիկների[367]: Մինչ արտասահմանի հայասերների կազմակերպությունները փորձում էին դաշնակիցներին և Ազգերի լիգային

---

[366] LNA, Class. 11, doc. 3421, doss. 11002:

[367] Տե՛ս LNA, Class. 11, doc. 3421, doss. 11167:

ներգրավել թուրքերի դեմ պայքարում, դաշնակցական գործիչները նույն Ազգերի լիգայի և դաշնակիցների միջոցով ցանկանում էին կապ հաստատել թուրքերի հետ և պայքարել բոլշևիկների դեմ: Փետրվարի 16-ին Ազգերի լիգայի խորհուրդը նոր նամակ է ստանում Հայկական ազգային պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանից: Իր նամակում Ավ. Ահարոնյանն անդրադառնում էր թուրք-բոլշևիկյան ուժերի դեմ հայ ժողովրդի մղած պայքարին և շեշտում էր դաշնակիցների հանդեպ Հայաստանի հավատարմությունը: Այնուհետև հայկական պատվիրակությունը Ազգերի լիգայի ուշադրությունն էր հրավիրում հետևյալ կետերի վրա.

1. Հայաստանին պարտադրված բոլշևիկյան ռեժիմն ունի ոչ կայուն և ժամանակավոր բնույթ: Բոլշևիկյան իշխանությունն ընդգրկում է Հայաստանի տարածքի մի փոքր մասը (այն էլ ռազմական ուժի օգնությամբ), և հենց որ քեմալական ուժերը դուրս բերվեն հայկական տարածքներից, բոլշևիկների իշխանությունը մեխանիկորեն կվերանա:

2. Հայկական նախկին կառավարությանը պարտադրված բոլոր փաստաթղթերն արժեք չունեն:

3. Թուրք ազգայնականները կօգտվեն նախկին դաշնակցական կառավարության ստորագրած պայմանագրերից՝ բուլացնելու համար Սևրի պայմանագիրը, մինչդեռ Հայաստանը ինքը դաշնակիցներից մեկն է, որի հետ թուրքերը դե ֆակտո և դե յուրե պատերազմի մեջ են[368]:

Այնուհետև Ավ. Ահարոնյանը ներկայացնում է Հայաստանում տիրող իրավիճակը՝ սովը, կոտորածները: Ազգերի լիգային ուղղված այս կոչով հայկական պատվիրակությունը խնդրում էր միջամտել՝ վերջ տալու համար երկրում տիրող ծանր վիճակին, հատկապես խնդրում էր ուշադրություն դարձնել Ռումինիայի ներկայացուցչի առաջարկին՝ Հայաստան ռազմական առաքելություն ուղարկելու վերաբերյալ: Ռազմական այդ առաքելությանը կաջակցեր ոչ միայն ժողովուրդը, որն արդեն իսկ պատերազմում էր հանուն իր անկախության, այլև կաջակցեին կամավորական ջոկատները, որոնք հեշտությամբ կհավաքագրվեն արտասահ-

---

[368] Տե՛ս LNA, Class. 11, doc. 3421, doss. 10801:

մանի հայերից, հատկապես ԱՄՆ-ում: Ավ. Ահարոնյանը տեղեկացնում էր նաև, որ կռվող հայկական ուժերը (մոտ 10 000) զենքով և զինամթերքով կենտրոնացել են Զանգեզուրում: Երկրամասն իրեն հռչակել է հանրապետություն՝ խորհրդային Հայաստանից անկախ ստեղծելով Պառլամենտ, որը բաղկացած է Զանգեզուրում ապաստանած երևանի նախկին պառլամենտի պատգամավորներից:

Ավ. Ահարոնյանն իր նամակն ավարտել էր մի կոչով, որով Ազգերի լիգայի անդամ պետություններին խնդրում էր փրկել Հայաստանը. *«Երբ մեկը մի կողմից ընդունում է այն վիթխարի զոհողությունները, որոնք արվել են հայ ժողովրդի կողմից Առաջին համաշխարհային պատերազմից առաջ և հետո, իսկ մյուս կողմից ընդունում է Սևրի պայմանագրով հայ ժողովրդին տրված իրավունքները, կասկած չկա, որ արդարության և հավասարության ձայնը Ազգերի լիգայի անդամներին կմղի անվերապահորեն ճանաչել Սևրի պայմանագրով հայերին տրված իրավունքների ապահովումը»*[369]:

Փետրվարի 16-ին Ազգերի լիգայի խորհրդին իր հերթական նամակն է ուղղում Հայասերների լիգան, որում որպես Հայաստանին օգնելու միակ միջոց էր առաջարկվում ստիպել Քեմալին էվակուացնել Վուդրո Վիլսոնի վճռով Հայաստանին վերապահված տարածքները: Այդ տարածքները պետք է միացվեին Հայաստանի Հանրապետության տարածքին, ուր կվերադառնային փախստական հայերը Սիրիայից, Միջագետքից և Անատոլիայից: Նրանց խնդիրն էր լինելու ստեղծել սեփական կառավարություն, որը երկրից դուրս կհաներ խորհրդային իշխանությանը: Հայասերների լիգան Ազգերի լիգայի խորհրդի ուշադրությունն էր հրավիրում նաև Անատոլիայի և Կիլիկիայի հայության ծանր վիճակի վրա: «Մենք խնդրում ենք Ազգերի լիգայի խորհրդին որոշակի գործողություններ ձեռնարկել Լոնդոնի կոնֆերանսի ընթացքում, որպեսզի արևելքում խաղաղություն և արդարություն հաստատող պետությունները ոչ միայն անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն հայերի կյանքը և անվտանգությունն ապահովելու համար, այլև հայերին տան տարածք, որի վրա

[369] Նույն տեղում:

կկազմավորվի հայկական պետությունը, և որտեղ հայերը հնարավորություն կունենան խաղաղ և հանգիստ ապրելու»[370]:

Ազգերի լիգայի խորհրդին Հայաստանի հետ կապված նյութեր է տրամադրում նաև Իտալիայի կառավարությունը, որոնք բավական ուշագրավ և հետաքրքրական տեղեկություններ էին ներառում: Նախ, աղբյուրը նշում էր, որ մոտ 2 մլն հայերից միայն 135-ն են բոլշևիկ, թեև մյուսները դեմ չեն բոլշևիկյան իշխանությանը, քանի որ հուսով են, որ վերջիններս կփրկեն իրենց թուրքերից: Աղբյուրը նշում էր նաև, որ ռուսական զորքերը թվով շատ քիչ են Հայաստանում (մոտ մի քանի հազար) և չեն կարողանում դիմադրել թուրքերին, այնպես որ երկիրը դեռ քաոսի մեջ է: Իտալական աղբյուրը համոզվածություն էր հայտնում նաև, որ մոտակա ամիսներին ռուսներին չի հաջողվի վերակազմավորել իրենց բանակը Հայաստանում: Իսկ ամենաուշագրավն այն էր, որ իտալական կողմի համաձայն, Հայաստանը «զոհ»էր, որը ո՛չ ընտրել էր, ո՛չ էլ ցանկացել էր դառնալ բոլշևիկյան, այլ ամեն ինչ պարտադրվել էր դրսից[371]:

Փետրվարի 23-ին որոշ տեղեկություններ են ստացվում նաև Իսպանիայի կառավարությունից: Ազգերի լիգայում Իսպանիայի ներկայացուցիչը տեղեկացնում է, որ, իր կառավարության հաղորդման համաձայն, Հայաստանը և հարևան երկրները բոլշևիկների ձեռքերում են (բացի Վրաստանից, որտեղ, սակայն, նույնպես իրադարձությունները ընթանում են այդ ուղղությամբ): Հայաստանի տնտեսական և քաղաքական վիճակը ներկայացված էր շատ տխուր երանգներով (սով, ավերածություններ): Թեև, ըստ աղբյուրի, երկրում իրականացվում էին հակակոմունիստական շարժումներ, սակայն դրանք հաջողության հասնել չէին կարողանում և դաժանաբար ճնշվում էին բոլշևիկյան ուժերի կողմից: Թիֆլիսից ստացված վերջին լուրերի համաձայն՝ բոլշևիկներն էքսպեդիցիա են ուղարկում Հայաստան, և խորհրդային

---

[370] LNA, Class. 11, doc. 3421, doss. 10816:

[371] Տե՛ս Dr. Nercessian V., նշվ. աշխ., էջ 218-221, նաև LNA, Class. 11, doc. 3421, doss. 11264:

կառավարությունը նպատակ ունի անել ամեն ինչ՝ Կովկասը խորհրդային Ռուսաստանի ձեռքերում պահելու համար[372]:

Ակնհայտ է, որ ստացված տեղեկությունները հիմնականում վերաբերում էին բոլշևիկյան կառավարության վիճակին, Հայաստանում վերջինիս դիրքերի ամրությանն ու կայունությանը, ինչպես նաև բոլշևիկյան իշխանության նկատմամբ հայ ժողովրդի վերաբերմունքին: Փոքր-ինչ հակասական էին հատկապես ռուսական ուժերի հետ կապված տվյալները, սակայն ամեն ինչ փաստում և ապացուցում էր ԱՄՆ նախագահի ճշմարտացիությունը՝ կապված «ռուսական հարցի» հետ: Իհարկե, դաշնակների փետրվարյան ապստամբությունը որոշ աշխուժություն էր առաջացրել Ազգերի լիգայի խորհրդում հայկական խնդրի առնչությամբ, սակայն ամեն ինչ ժամանակավոր և մակերեսային բնույթ էր կրում[373]: Ակնհայտ էր, որ Ռուսաստանի քաղաքականությունը Հարավային Կովկասի հարցում միանշանակ էր և անդրդվելի: Իհարկե, Ազգերի լիգան ջանասիրաբար նյութեր էր հավաքում Հայաստանի մասին, սակայն այդ ամենը զուտ տեղեկատվական բնույթ էր կրում, և ակնհայտ էր, որ Ազգերի լիգան չէր պատրաստվում որևէ քայլ ձեռնարկել Հայաստանում իրավիճակը շտկելու ուղղությամբ:

Դաշնակցականների փետրվարյան ապստամբությունն ակտիվացրեց նաև վերջիններիս գործողությունները՝ կապված Ազգերի լիգայի հետ: Հայկական ազգային պատվիրակության գլխավոր քարտուղար Հանեմյանը 1921 թ. փետրվարի 23-ին Ազգերի լիգայի խորհրդի հերթական նիստից առաջ հանդիպում է խնդրում է. Դրամմոնդի հետ: Այն տեղի է ունենում փետրվարի 25-ին հայկական պատվիրակության անդամներ Գ. Նորատունկյանի, Վ. Փափազյանի և Ազգերի լիգայի գլխավոր քարտուղարի միջև: Պատվիրակությունն Ազգերի լիգայի խորհրդի ուշադրությանն է ներկայացնում հետևյալ կետերը.

1. Ինչպես նշված էր 1921 թ. փետրվարի 16-ի հայկական պատվիրակության նոտայում, հայերը պատրաստ են աջակցել

---

[372] Տե՛ս LNA, Class. 11, doc. 3421, doss. 11020:

[373] Մանրամասն տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետությունը, Ե., 1993:

միջազգային էքսպեդիցիայի ձևավորմանը, որը, ռումինական կառավարության առաջարկի համաձայն, ձեռնամուխ է լինելու Սևրի դաշնագրով և Վուդրո Վիլսոնի գծած՝ Հայաստանի տարածքների վերահսկողությանը: Այս աջակցությունն ավելի հեշտ կլինի իրականացնել, քանի որ 1921 թ. փետրվարի 19-ին Երևանում վերահաստատվել է օրինական վարչակարգը, որը տապալել էին թուրք-բոլշևիկյան ուժերը: Հայկական բանակի մի մասն այժմ ազատ է (ռազմական գործողությունների մեջ ներգրավված չէ), չհաշված այն 10 հազար զինվորներին, որոնք անցել են Զանգեզուրը և միացել տեղի զորախմբերին: Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում հայերը կստեղծեն կամավոր արշավախմբեր, որոնք կհավաքագրվեն ԱՄՆ-ի, Բալկանների և Միջագետքի հայերից: Այս էքսպեդիցիան կստիպի թուրք ազգայնականներին ենթարկվել դաշնակիցների պահանջներին և խաղաղություն կհաստատի երկրում, երբ թուրքերը հետ քաշվեն Հայաստանից:

2. Ինչ վերաբերում էր Հայաստանին տրամադրվելիք ֆինանսական օգնությանը, ապա պատվիրակությունը նշում էր, որ ԱՄՆ-ն պատրաստվում է Հայաստանին տրամադրել 25 մլն դոլար: Եթե Ազգերի լիգան նախաձեռնություն հանդես բերի և դաշնակիցներին առաջարկի ձևավորել միջազգային էքսպեդիցիա, կարելի է ենթադրել, որ ԱՄՆ Սենատը հավանություն կտա վերոնշյալ ֆինանսական օժանդակության առաջարկին:

3. Հայկական կողմը գտնում էր, որ ռազմական և ֆինանսական հարցերի միաժամանակյա լուծումը ավելի կդյուրացնի Հայաստանի համար մանդատար երկիր գտնելու խնդիրը:

4. Ինչ վերաբերում էր Ռուսաստանի դիրքորոշմանը Հայաստանի սահմանների հարցում, որոնք, ըստ հայկական կողմի, արդեն իրավաբանորեն և վերջնականապես որոշել էին դաշնակիցները, ապա այդ հարցը բազմիցս քննարկվել է, և Հայաստանի սահմանները ճանաչել են Ռուսաստանի՝ 1918 թվականից ի վեր փոփոխվող տարբեր իշխանությունները: Ռուսաստանը խորհրդային իշխանության հաստատումից հետո դեկրետով ճանաչել է Կովկասում ստեղծված Հայաստանի Հանրապետության անկախությունը: Դա բազմիցս վերահաստատել էր Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի նախարար

Չիչերինը: Նույն կերպ Ռուսաստանի հակաբոլշևիկյան տարբեր կառավարություններ նույնպես Երևանում իրենց ներկայացուցիչների միջոցով տեղեկացրել են, որ իրենք ճանաչում են Հայաստանը՝ որպես ազատ և անկախ պետություն: Սրանով հայկական կողմը փորձ էր կատարում տարանջատել Հայկական հարցը Ռուսաստանից՝ մանրամասնելով, որ ռուսական տարբեր իշխանություններ ճանաչել են Հայաստանի անկախությունը: Սակայն դրանից հետո շատ բան էր փոխվել. խորհրդային իշխանությունը բավականաչափ ամրացրել էր իր դիրքերը և վերականգնել «զավթողական նկրտումները»:

5. Հայաստանում վերականգնվել է օրինական իշխանությունը: Օրինական կառավարությունն ամուր հիմքերի վրա է և կարող է պայքարել բուրք ազգայնականների ճնշումների դեմ: Ահա թե ինչու Հայաստանը կարիք ուներ Ազգերի լիգայի աջակցությանը և օգնությանը՝ դիմակայելու համար բոլոր դժվարություններին և ապահովելու ռեժիմի կայունությունը:

6. Հայկական միացյալ պատվիրակությունը պատրաստ է Ազգերի լիգային ներկայացնել բոլոր անհրաժեշտ լուսաբանումները վերոնշյալ դրույթների վերաբերյալ[374]: Սակայն, ինչպես ցույց են տալիս հետագա իրադարձությունները, Ազգերի լիգայում որևէ արձագանք չեն տալիս հայկական կողմի հետ այս հանդիպմանը:

Նույն օրը՝ փետրվարի 25-ին, Ազգերի լիգայի խորհրդի անդամների հանդիպման ժամանակ Գլխավոր քարտուղար է. Դրամմոնդը ներկայացնում է մի զեկույց, որն անդրադառնում էր Ազգերի լիգայում «Հայկական հարցի» պատմությանը և հատկապես 1920 թ. դեկտեմբերի 18-ի և 22-ի որոշումներին: Այնուհետև Գլխավոր քարտուղարը առանձնացնում է մի քանի կետ.

1. Հայկական կառավարությունը, որի հետ Ազգերի լիգան հարաբերությունների մեջ էր, դադարել է գոյություն ունենալ. դեկտեմբերի վերջին այն փոխարինվել է մի կառավարությամբ,

[374] Տե՛ս LNA, Class. 11, doc. 3421, doss. 10054:

որը քիչ թե շատ կապված է ռուս բոլշևիկների հետ[375]: Ըստ հայկական կողմի՝ սա միակ միջոցն էր հայ ժողովրդի և երկրի մնացորդները փրկելու համար: Սակայն այս գործողությունների անմիջական հետևանքը եղավ Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի միջև հարաբերությունների հաստատումը, որն է՛լ ավելի բարդացրեց Հայաստանի և Արևմուտքի հարաբերությունները:

2. Հայաստանի կառավարությունը ստիպված էր դեկտեմբերի 2-ին կնքել Ալեքսանդրապոլի պայմանագիրը թուրք ազգայնականների հետ: Դրա հետևանքով է, որ Հայաստանի տարածքն այժմ ընդգրկում է ռուսական Հայաստանի տարածքն առանց Կարսի և հարակից մի շարք շրջանների, որոնց ճակատագիրը որոշվելու էր ավելի ուշ՝ հանրաքվեի միջոցով: Թուրքերի ձեռքին էր մնում ողջ թուրքական Հայաստանը, ինչպես նաև հայկական այն տարածքները, որոնք մինչև 1878 թվականը Ռուսահայաստանի բաղկացուցիչ մասն էին: Իտալական աղբյուրների համաձայն՝ Հայաստանի նոր կառավարությունը բողոքել է այս պայմանագրի դեմ և խնդրել Ռուսաստանի միջամտությունը: Ռուսական իշխանությունները Մոսկվայում կոնֆերանս են գումարել, որին հրավիրվել են թուրք ազգայնականները, Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչները: Ակնհայտ է, որ քեմալականները մտադիր են պահպանել Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

3. ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնը Հայաստանի մասին իր վճիռը հայտարարել էր հունվարի 2-ին: Ըստ որի՝ Հայաստանին էին միացվելու Տրապիզոնի, Էրզնկայի, Էրզրումի, Մուշի, Բիթլիսի և Վանի վիլայեթները, սակայն թուրք ազգայնականները չեն ճանաչում Սևրի պայմանագիրը: Բացի այդ, Սևրի պայմանագիրը վերանայվում է նաև դաշնակիցների՝ Լոնդոնում գումարած կոնֆերանսում:

4. Միջնորդական իր առաքելության հետ կապված՝ Վիլսոնը մատնանշում է երկու դժվարություն. Սևրի պայմանագրի

---

[375] Իրականում Հայաստանում հաստատված խորհրդային իշխանությունը անմիջական և ամուր կապերի մեջ էր Ռուսաստանի բոլշևիկյան կառավարության հետ:

իրականացված չլինելու և Հայկական հարցի՝ ռուսական խնդրի մի մաս կազմելու հանգամանքները:

Ակնհայտ էր, որ Ազգերի լիգայի խորհուրդը չէր կարող որևէ ուղեգիծ ընտրել, որը կտրականապես կտարբերվեր դաշնակից պետությունների՝ Հայաստանի հանդեպ որդեգրած քաղաքականությունից: Անհրաժեշտ էր սպասել մինչև պարզ կդառնային Լոնդոնում ընթացող բանակցությունների արդյունքները, որին, բացի դաշնակիցներից և Թուրքիայից, մասնակցում էին նաև քեմալականները, ինչպես նաև Մոսկվայում ընթացող բանակցություններին: Անհրաժեշտ էր սպասել և հետևել Սևրի պայմանագրի հետագա ճակատագրին: Ազգերի լիգայի խորհուրդը որոշում է հանձնարարել Գլխավոր քարտուղարին և վերջինիս օգնականներին՝ հետևելու դեպքերի ընթացքին և շարունակելու տեղեկություններ հավաքել Հայաստանի մասին: Այդ տեղեկատվությունը պետք է անմիջապես հաղորդվեր Ազգերի լիգայի խորհրդի նախագահին[376]: Նույն օրը Գլխավոր քարտուղարը հեռագրեր է հղում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարություններին: Մասնավորապես նշվում է. *«Հայաստանում և հարևան երկրներում տեղի ունեցած փոփոխությունները և Լոնդոնում ընթացող բանակցությունները նոր իրավիճակ են ստեղծում, որը Ազգերի լիգայի խորհրդի համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում, և որի վերաբերյալ Ազգերի լիգան պետք է տեղեկացված լինի: Ավելին, առանց ձեր կառավարությունների հետ խորհրդակցելու՝ Ազգերի լիգայի խորհուրդը չի կարող որոշել գործողությունների իր ոլորտը: Խորհուրդը պատրաստ է քննարկումներ կազմակերպել, որոնք ձեր կառավարություններն օգտակար կհամարեն»*[377]:

Նույնաբովանդակ մի նամակ էլ ուղարկվում է ԱՄՆ նախագահին: Հանդիպման ընթացքում որոշվում է նաև, որ Ազգերի լիգայի խորհուրդը կշարունակի հետևել Հայաստանում և ընդհանրապես Կովկասում ընթացող իրադարձություններին, ինչպես ամրագրված էր Ազգերի լիգայի Վեհաժողովի1920 թ. նոյեմբերի 22-ի բանաձևում:

---

[376] Տե՛ս Барсегов Ю., նշվ. աշխ., էջ 628-629:
[377] Նույն տեղում:

1920 թ. դեկտեմբերին Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները (Ալեքսանդրապոլի պայմանագիրն ու Հայաստանի խորհրդայնացումը) դեռ որոշ ժամանակ չմարեցին Ազգերի լիգայի «քաղաքական» հետաքրքրությունները Հայաստանի հանդեպ: Փետրվարին Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները և դաշնակցականների ժամանակավոր իշխանության գալն որոշ աշխուժություն արթնացրին Ազգերի լիգայում, որոնք դեռ մինչև այդ հավատացած էին, որ բոլշևիզմը Հայաստանում և ընդհանրապես ժամանակավոր բնույթ է կրում: Սակայն շատ շուտով համոզվելով, որ դաշնակների հաջողությունները ժամանակավոր և անցողիկ բնույթ են կրում, ինչպես նաև հավաստիանալով խորհրդային կարգերի ամրության մեջ՝ Ազգերի լիգան փոխում է այն ձևաչափը, որով քննարկում էր Հայկական հարցը[378]: Արդյունքում, Ազգերի լիգայի Վեհաժողովի երկրորդ նստաշրջանի օրակարգ Հայկական հարցը ներառվում է զուտ մարդասիրական համատեքստով:

---

[378] Մանրամասն տե՛ս Թորիկեան Շ., Հայկական հարցը և միջազգային օրէնքը, Պէյրութ, 1976, էջ 139-140:

# ՎԵՐՋԱԲԱՆ

Ամփոփելով 1920 թվականին Ազգերի լիգայի և Հայաստանի Հանրապետության առնչությունների հարցը՝ պետք է նշել, որ առաջին միջազգային կազմակերպությանն անդամակցելու խնդիրը, որն անմիջականորեն կապված էր նաև երկրի միջազգային ճանաչման հետ, կարևոր տեղ է զբաղեցրել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության օրակարգում: Ուսումնասիրված նյութը հանգեցնում է հետևյալ եզրակացությունների.

1. Թեև Հայաստանի Հանրապետությունը որպես դաշնակից պետություն ստորագրել էր Ազգերի լիգայի կանոնադրությունը և նշված էր Ազգերի լիգայի անդամների նախնական ցուցակում, սակայն չդարձավ Ազգերի լիգայի անդամ, որովհետև Թուրքիայի հետ Սևրի հաշտության պայմանագիրը կազմակերպության ստեղծման պահին դեռևս կնքված չէր: Առաջին համաշխարհային պատերազմից հետո միջազգային հարաբերությունների համակարգում հայտնվել էր մի նոր գործիք՝ ի դեմս մանդատային համակարգի, որը ենթադրվում էր կիրառել նաև Հայաստանի համար: Այս հանգամանքի առկայությունը հետ պահեց Հայաստանի Հանրապետությանը 1919 թվականին Ազգերի լիգային անդամակցության դիմում ներկայացնելուց:

2. Ազգերի լիգան, ելնելով քաղաքական, տնտեսական և իրավական մի շարք դրդապատճառներից, մերժեց Գերագույն խորհրդի՝ Հայաստանի մանդատն ընդունելու վերաբերյալ 1920 թ. մարտի 12-ի առաջարկը: Մերժման հիմքերն էին.

ա) Նախ, Հայաստանի մանդատն ընդունելու Գերագույն խորհրդի առաջարկը և՛ իրավական, և՛ քաղաքական առումներով հակասում էր կազմակերպության որդեգրած սկզբունքներին: Կանոնադրության 22-րդ հոդվածը ենթադրում էր, որ մանդատի կիրառման դեպքում Ազգերի լիգան պետք է հանդես գար որպես վերահսկող մարմին, այլ ոչ թե ստանձներ որևէ երկրի մանդատը:

բ) Ազգերի լիգայի անդամ պետությունների շարքում էին նաև այն պետությունները, որոնք արդեն իսկ մերժել էին ընդունել Հայաստանի մանդատը: Եվ բնական էր, որ նման պայ-

մաններում Ազգերի լիգան չէր կարող հակադիր որոշում ընդունել:

գ) Հայաստանի մանդատի հարցը բավական բարդ էր և խճճված, քանի որ հստակ պատկերացում չկար, թե Հայաստանը աշխարհագրական ինչ տարածքներ էր ընդգրկելու: Բացի Հայաստանի նորանկախ հանրապետությունից նախատեսվում էր նաև Արևմտյան Հայաստանի որոշ երկրամասերի ներառումը մանդատի մեջ: Նախևառաջ, անհրաժեշտ էր ազատագրել Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող այն բոլոր տարածքները, որոնք պետք է մտնեին մանդատի տակ: Սրան ավելանում էր նաև այն հանգամանքը, որ տեղի հայ բնակչության թիվը ջարդերից ու կոտորածներից հետո մեծապես կրճատվել էր: Ակնհայտ էր, որ Հայաստանի մանդատն իրականացնելու համար անհրաժեշտ էին խոշոր ռազմական ուժեր՝ տարածքներն ազատագրելու և միավորելու համար, ինչպես նաև հսկայական ֆինանսական միջոցներ՝ միասնական հայկական պետության քայքայված տնտեսությունը վերականգնելու համար: Իսկ իրականությունն այն էր, Ազգերի լիգան չուներ ո՛չ ռազմական ուժ, ո՛չ էլ անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ Հայաստանին իրական օգնություն ցուցաբերելու համար: Հետևաբար, Ազգերի լիգային առաջարկված Հայաստանի մանդատը հենց սկզբից անիրականանալի էր և դատապարտված ձախողման:

3. Մերժելով Հայաստանի մանդատը ընդունելու Գերագույն խորհրդի առաջարկը՝ Ազգերի լիգան, այնուհանդերձ, որոշ քայլեր ձեռնարկեց հայկական մանդատի հարցի լուծման ուղղությամբ: Ազգերի լիգայի քարտուղարության իրավական բաժնի ջանքերով պատրաստվեց Հայաստանի մանդատի վերաբերյալ մի նախագիծ, որի նպատակն էր ստեղծել մասնավոր մի ընկերություն, որն իր վրա կվերցներ Հայաստանի մանդատի իրականացման խնդիրը: Պետք է նշել, որ մշակված նախագիծը բավական իրատեսական և գործնական բնույթ էր կրում, սակայն ծավալված հետագա դեպքերն ի դերև հանեցին նաև Ազգերի լիգայի այս ձեռնարկը:

Հայաստանի մանդատի հարցը մասնավոր ընկերության միջոցով լուծելու Ազգերի լիգայի շահագրգռվածությունը պայմանավորված էր հետևյալ գործոններով.

ա) Ազգերի լիգան նորաստեղծ կառույց էր, որն իր վրա էր վերցրել համաշխարհային խաղաղության պահպանման, ազգերի միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատման, արդարադատության պաշտպանի ու նմանատիպ մի շարք գործառույթներ, ինչպես նաև դրանցից բխող պատասխանատվությունը: Ուստի անհեռատես քայլ կլիներ ստեղծման գրեթե առաջին իսկ պահից հրապարակայնորեն հրաժարվել հայկական խնդրից՝ հատկապես հաշվի առնելով վերջինիս լայն ժողովրդականությունը, Ազգերի լիգայի առանձին գործիչների կողմից Հայաստանի վերաբերյալ հնչեցրած խոսքերն ու խոստումները: Մերժումը կարող էր խիստ բացասաբար անդրադառնալ կազմակերպության հեղինակության վրա:

բ) Ինչպես արդեն նշվեց, Հայկական հարցը մեծ ժողովրդականություն էր վայելում ողջ աշխարհում: Միջազգային հանրությունն ու լրատվամիջոցները հետևում էին Հայաստանի շուրջ տեղի ունեցող քննարկումներին ու դեպքերի զարգացումներին՝ տալով իրենց գնահատականները: Ըստ այդմ՝ շատերը մեղադրում էին Ազգերի լիգային մարդասիրությունից շեղվելու, նաև դաշնակիցների ձեռքին գործիք լինելու մեջ: Բնականաբար, Ազգերի լիգան չէր կարող անտեսել նաև այս կարևոր հանգամանքը:

գ) Մեծ էր նաև հայասեր միջազգային կազմակերպությունների և միությունների ու, ընդհանրապես, հայկական համայնքի ազդեցությունը Ազգերի լիգայում հայկական խնդրի քննարկումների վրա: Վերջիններիս իրականացրած լայնածավալ քարոզչական և այլ նախաձեռնությունները հանդես եկան ոչ միայն մանդատի, այլև Ազգերի լիգայում Հայաստանի անդամության, թուրքհայկական պատերազմի քննարկումների և այլ հարցերում:

4. Մանդատի հարցի ձախողումից հետո հայկական կողմը ձեռնամուխ եղավ Ազգերի լիգային անդամակցելու գործընթացի իրականացմանը, որը ժամանակավորապես մի կողմ էր դրվել: Հատկանշական է, որ անդամության խնդրի բարձրացման սկզբնական փուլում Ազգերի լիգայի անդամ պետություններից շատերը դրական էին վերաբերվում Հայաստանի Հանրապետության անդամակցությանը: Սակայն Հայաստանի շուրջ դեպքերի արմատական շրջադարձը փոփոխություն բերեց նաև այս հարցում, և Հայաստանի անդամակցության դիմումը մերժվեց:

Անփոփելով Ազգերի լիգային Հայաստանի անդամակցության հարցը՝ գալիս ենք հետևյալ եզրահանգումների.

ա) Հայաստանի Հանրապետության՝ Ազգերի լիգային անդամակցելու համար կատարված դիմումը լիովին բավարարում էր Կանոնադրության՝ նոր անդամների ընդունելության հարցերը կարգավորող առաջին հոդվածի առաջադրած բոլոր պահանջները: Սրա օգտին են խոսում Հայաստանի Հանրապետության անդամակցության վերաբերյալ Ազգերի լիգայի Գլխավոր քարտուղարի զեկույցը և 5-րդ հանձնաժողովի երրորդ ենթահանձնաժողովի դրական եզրակացությունը:

Թեև Ազգերի լիգայում որպես Հայաստանի Հանրապետության անդամակցության մերժման պատճառ նշվում էր, որ Սևրի պայմանագիրը, որով Հայաստանը հռչակվում էր ազատ և անկախ պետություն, վավերացված չէ, ուստի Հայաստանի Հանրապետությունը դե յուրե ճանաչված չէ պետությունների կողմից ու, հետևաբար, չի կարող դառնալ Ազգերի լիգայի անդամ, սակայն նշյալ փաստարկը լիովին անհիմն էր: Սևրի պայմանագրի 88-րդ հոդվածը ենթադրում էր Թուրքիայի կողմից Հայաստանի՝ որպես ազատ և անկախ պետության ճանաչում, ինչն արդեն արել էին դաշնակից պետությունները: Այսինքն՝ Հայաստանի՝ որպես ազատ և անկախ պետության գոյությունը որևէ կերպ չէր խարսխվում Սևրի պայմանագրի վրա: Բացի այդ, 1920 թ. օգոստոսի 10-ին Հայաստանի Հանրապետությունը կնքել էր փոքրամասնությունների վերաբերյալ միջազգային պայմանագիրը, ինչը նույնպես վկայում էր այն մասին, որ Հայաստանը հանդիսանում էր անկախ պետություն: Հայաստանը ստորագրել էր նաև Ազգերի լիգայի կանոնադրությունը, ինչը նույնպես լուրջ փաստարկ է վերոնշյալ պնդման համար:

բ) Թեև Հայաստանի Հանրապետության անդամության մերժման հարցում արծարծվում էր Ազգերի լիգայի կանոնադրության 10-րդ հոդվածը, որը, ըստ որոշ հեղինակների, Հայաստանի ընդունելության մերժման պատճառն էր, սակայն, աշխատանքում դիտարկված նյութը ապացուցում է, որ 10-րդ հոդվածն անմիջական ազդեցություն չի ունեցել Հայաստանի, ինչպես նաև Կովկասյան և Բալթյան պետությունների անդամակցության մերժման վրա: Թեև 10-րդ հոդվածը մեկնաբանվում

էր որպես պաշտպանական երաշխիք, որը Ազգերի լիգայի անդամ պետություններին պետք է «փրկեր» արտաքին ագրեսիաներից և վտանգներից, սակայն հոդվածի գործնական բովանդակությունն այլ էր: Ազգերի լիգայի իրավաբանների կողմից հոդվածի հետագա մեկնաբանություններն այն որակում են որպես պետության տարածքային ամբողջականության գաղափարն ամրագրող և պաշտպանող գործիք՝ միտված դատապարտելու արտաքին ագրեսիաները, որոնք նպատակ էին հետապնդում խախտել պետությունների տարածքային ամբողջականությունը և քաղաքական անկախությունը: Ազգերի լիգայի անդամ պետությունները 10-րդ հոդվածի խախտման արձանագրման դեպքում կարող էին կոչ հղել Ազգերի լիգայի խորհուրդ, որը պետք է միջոցներ ձեռնարկեր ագրեսիաներին դիմակայելու համար: Այսինքն՝ 10-րդ հոդվածը ավելի հռչակագրային բնույթ էր կրում: Մինչդեռ Կանոնադրության համաձայն՝ Ազգերի լիգան պարտավորություններ ուներ նաև ոչ անդամ պետությունների հանդեպ, որոնք գրեթե չէին տարբերվում անդամ պետություններին վերապահված «արտոնություններից»: Մերժելով պետության անդամակցությունն Ազգերի լիգային՝ կազմակերպությունը չէր հրաժարվում ընդունել վերջինիս տարածքային ամբողջականության հարգման անհրաժեշտությունը: Նշյալ պարտավորության կատարումն ապահովելու նպատակով Կանոնադրությունը որոշ միջոցներ էր առաջարկում, որոնք ձևակերպված էին 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 19-րդ հոդվածներում: Սակայն պետք է նշել, որ Կանոնադրության հոդվածներից և ոչ մեկը, այդ թվում նաև 10-րդ հոդվածը, պարտադիր ռազմական գործողություններ չէր ենթադրում, և պաշտպանության բնագավառում միջոցների ընտրության հարցը թողնում էր Ազգերի լիգայի խորհրդի հայեցողությանը: Այսինքն՝ Հայաստանին (և ընդհանրապես որևէ այլ պետության) ընդունելով որպես անդամ՝ Ազգերի լիգան չէր պարտավորվում պարտադիր ռազմական գործողություններ իրականացնել և պաշտպանել վերջինիս տարածքային ամբողջականությունը: Այսպիսով՝ 10-րդ հոդվածի պարտավորություններից ելնելով չէր, որ Ազգերի լիգան մերժեց Հայաստանի ընդունելության հարցը:

գ) Ազգերի լիգայում Հայաստանի անդամության հարցին զուգահեռ ընթացած թուրք-հայկական պատերազմի վերաբերյալ Ազգերի լիգայում տեղի ունեցած քննարկումների ուսումնասիրությունը հիմք է տալիս ենթադրելու, որ թուրք-հայկական պատերազմը և Թուրքիան չէին Հայաստանի Հանրապետության անդամության մերժման հարցում գլխավոր պատճառները: Թուրք-հայկական պատերազմի վերաբերյալ քննարկումները Ազգերի լիգայի Վեհաժողովում ընթանում էին անդամության հարցից տարանջատված՝ պահպանելով լոկ փոխկապակցվածության արտաքին տպավորությունը: Թուրք-հայկական պատերազմը սկսվել էր դեռ սեպտեմբերի 24-ին, և պատերազմական գործողությունները սկզբից ևեթ ընթանում էին հօգուտ Թուրքիայի: Անդամության հարցի քննարկման օրերին (նոյեմբեր–դեկտեմբեր) Թուրքիայի հաղթելու հավանականությունը շատ մեծ էր և հնարավոր, որ պատերազմից հետո Հայաստանի Հանրապետությունը կարող էր դադարել գոյություն ունենալուց: Հետևաբար, եթե Հայաստանի ընդունելության հարցի մերժումը կապված լիներ Թուրքիայի հետ, ապա 5-րդ հանձնաժողովը հենց սկզբից բացասական պատասխան կտար Հայաստանի՝ անդամության համար ներկայացրած դիմումին: Մինչդեռ նույնիսկ պատերազմի ամենածանր օրերին Ազգերի լիգայի գործիչները հավաստիացնում էին, որ Հայաստանի անդամության հարցը դրական է լուծվելու: Թեև Թուրքիան մեծ դեր ուներ հայկական հարցում, սակայն անդամակցության հարցը վերաբերում էր 1918 թվականին նախկին ռուսական Հայաստանի հողերի վրա ստեղծված Հայաստանի Հանրապետությանը, որը երկար ժամանակ գտնվել էր Ռուսական կայսրության իշխանության տակ և դիտվում էր որպես ռուսական աշխարհաքաղաքական գոտի:

դ) Ուսումնասիրությունը հիմքեր է տալիս եզրակացնելու, որ Հայաստանի Հանրապետության անդամության հարցի մերժման գլխավոր պատճառը Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումն էր: Ազգերի լիգայի անդամ պետությունները քաջ գիտակցում էին, որ Խորհրդային Ռուսաստանը մտադիր չէր հրաժարվել իր ազդեցության գոտիներից: Այդ պատճառով բավական զգուշավորությամբ էին անդրադառնում նախկին Ցարական Ռուսաստանի մաս կազմած պետությունների անդա-

